2904

206.4
Л2-43

6/12

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека

23 SEP 2009

ԷՌՆԵՍՏ ՌԸՆԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ

Թարգմ. Վ. Վարդանեանի

LIBRAIRIE "LA CILICIE,,
N. 37 ... PERA
CONSTANTINOPLE

57 La Belle Ave., H.P.
Detroit, Mich.
"CILICIA,, BOOK STORE

ԹԻՖԼԻԶ
Տպարան «ԷՊՈԽԱ» Գանովսկայա № 3.
1907

24 JUL 2013

2904

901
39

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՑԱՆԿ

Յառաջաբան			երես.
Ձօն			
Գլուխ	Ա.	Յիսուսի մանկութիւնն ու պատանեկութիւնը։—Նրա կեանքի առաջին տարիները	1
»	Բ.	Յիսուսի դաստիարակութիւնը . .	7
»	Գ.	Յիսուսի զարգացման գլխաւոր պայմանները	14
»	Դ.	Յիսուսի առաջին աֆօրիզմները։—Նրա գաղափարները Հայր Աստուծոյ և մաքուր կրօնի մասին։—Առաջին աշակերտները.	28
»	Ե.	Յովհաննէս Մկրտիչ, Յիսուսի ճանապարհորդութիւնը Յովհաննէսի մօտ։—Նա մկրտւում է Յովհաննէսի ձեռքով. .	40
»	Զ.	Աստուծոյ թագաւորութեան մասին Յիսուսի ունեցած գաղափարների զարգացումը	49
»	Է.	Յիսուս Կափառնայումի մէջ . . .	60
»	Ը.	Յիսուսի աշակերտները. . . .	70
»	Թ.	Յիսուսի քարոզը լճի վրայ . . .	78
»	Ժ.	Աստուծոյ թագաւորութիւնը հասկացւում է որպէս աղքատների թագաւորութիւն.	87
»	ԺԱ.	Յովհաննէսը բանտից դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ։—Յովհաննէսի մահը։—Նրա և Յիսուսի աշակերտների յարաբերութիւնը	97
»	ԺԲ.	Առաջին փորձը Երուսաղէմում . .	103
»	ԺԳ.	Յիսուսի վերաբերմունքը դէպի կռապաշտներն ու սամարացիները . . .	114
	ԺԴ.	Յիսուսի մասին կազմուած առասպելի ծագումը, Նրա անձնական գաղափարը իր գերբնական դերի մասին . . .	121

երես.

Գլուխ ԺԵ. Յիսուսի գաղափարներն Աստուծոյ թագաւորութեան մասին վերջնականապէս ձեւակերպուած 131
» ԺԶ. Յիսուս հիմնում է եկեղեցին 137
» ԺԷ. Յիսուսի հակառակորդները 144
» ԺԸ. Յիսուսի վերջին ուղեւորութիւնը Երուսաղէմ 151
» ԺԹ. Յիսուսի թշնամիների արարքները . . 162
» Ի. Յիսուսի վերջին շաբաթը . . . 168
» ԻԱ. Յիսուսի բանտարկուելն ու դատումը . 179
» ԻԲ. Յիսուսի մահը 192
» ԻԳ. Յիսուսի վարդապետութեան հիմնական բնոյթը 199

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի նկատի առնելով որ Յիսուսի իմ նկարագրած կերպարանքը որոշ ուշադրութիւն գրաւեց, պարտք համարեցի այդ կերպարանքը համապատասխան փոփոխութիւնների ենթարկել ու առաջադրել աշխարհիս այն զրկուածներին ու տանջուածներին, որոնց Յիսուսն ամենից աւելի էր սիրում։ Շատերը ցաւել են, որ Յիսուսին վերաբերեալ այս երկը իր ծաւալով ու գնով հանրամատչելի չէր, այդ պատճառով ես այս անգամ դուրս եմ ձգել նախաբանը, ծանօթութիւններն ու նիւթի մի մասը, որոնք այս երկի առաջին հրատարակութեան մէջ գրուած էին մասնագիտական-քննադատական հետազօտութիւններին բաւակարաչափ ծանօթ անձերի համար։ Այդ մասերը դուրս ձգելով հասանք երեք նպատակի։ Նախ՝ գիրքը ծաւալով այնքան փոքրացաւ, որ իւրաքանչիւր ցանկացող կարող է հեշտութեամբ իւրացնել։ Երկրորդ՝ ինձ թւում է, որ նրա մէջ չկայ ոչ մի խօսք, ոչ մի նախադասութիւն, որ հասկանալի լինելու համար նախնական ուսումնասիրութիւն պահանջէր։ Վերջապէս այդ կրճատումն ինձ թանկագին մի հետեւանքի է հասցրել։ Գիրքս գրել եմ պատմաբանի բացարձակ սառնասրտութեամբ, նպատակ ունենալով պարզաբանել ճշմարտութեան ամենանուրբ ու ամենաանխախտ կողմերը։ Այս պարզասրտութիւնը չէր կարող գայրոյթ չպատճառել մի քանի լաւագոյն մարդկանց, որոնք իրանց կեանքի նեցուկն ու մխիթարութիւնը քրիստոնէութեան մէջ են տեսնում։ Ցաւելով նկատել եմ յաճախ, որ այն մարդիկ, որոնց բարի տրամադրութիւնը կը կամենայի

գրաւել, չեն ուզում կարդալ այս երկը, չնայելով որ նրա էջերից շատերը կարող էին օգտակար լինել և հաճոյք պատճառել նրանց։ Կարծում եմ, որ ճշմարիտ քրիստոնեաներն այս կրճատ հրատարակութեան մէջ ոչ մի խրտնեցնող բանի չեն հանդիպիլ։ Ինձ ղեկավարող միտքն առանց փոփոխելու, ես կարողացայ մի քանի այնպիսի հատուածներ դուրս ձգել, որոնք հաւանականօրէն կամ թիւրիմացութիւնների պատճառ կը լինէին և կամ երկար բացատրութիւններ կը պահանջէին։

Պատմութիւնն էլ քիմիայի ու երկրաբանութեան նման գիտութիւն է։ Այդ գիտութիւնն էլ, որպէս զի կարողանայ բոլորովին դիւրըմբռնելի լինել, պահանջում է խոր ուսումնասիրութիւն, և այդ ուսումնասիրութեան ամենամեծ արգասիքն այն կարողութիւնն է, որով մարդիկ գտնում են դարաշրջանների, երկիրների, ազգերի ու ցեղերի միջև եղած տարբերութիւնները։ Ներկայումս այն մարդը, ով հաւատում է կախարդութեան ու տեսիլքների, չի կարող զարգացած համարուել։ Բայց հին ժամանակներում ամենքից յարգուած մարդիկ էլ հաւատում էին դրանց, և շատ հաւանական է, որ այժմ էլ մի քանի երկիրներում այդ մոլորութիւնները մարդկանց խելօքութիւնը չեն ժխտում։ Այն մարդիկ, որոնք իրենց կեանքում քիչ են ճանապարհորդել, քիչ կարդացել և կամ աչքի չեն ընկել իրենց խոր մտածողութեամբ, և հէնց դրա համար էլ այդ տարբերութիւնների վրայ գլուխ չեն յոգնեցրել, — անցեալի պատմութեան մէջ վիրաւորական բան են գտնում յաճախ։ Անցեալը՝ որքան էլ նա հերոսական, մեծ և ինքնուրոյն լինի՝ նշանաւոր շատ բաներում մեզ գաղափարակից չէ։ Բայց պատմութիւնն այդ դժուարութիւնների առաջ չի կարող նահանջել, առանց վախենալու որ կարող է այդպիսով ամենածանր մոլորութիւնների ենթարկուել։ Գիտնական անկեղծութիւնը երբեք բարեմիտ սուտ չի թոյլատրում։ Աշխարհում չկայ այնքան ուժեղ մի պատճառ, որ գիտնականին ստիպէր չասել այն, ինչ որ ինքը ճշմարտութիւն է համարում։ Բայց ճշմարիտ, կարելի կամ թոյլատրելի համարուող մի բան երբ առանց յետին մտքերի արտայայտուի, այդ դէպքում միթէ թոյլատ-

րելի չէ ուշադրութիւն դարձնել միայն մեծ գործերի էութեան վրայ, մի կողմ թողնելով այնպիսի չնչին տարբերութիւններ, որ ամեն մարդ կարող է ըմբռնել և պէտք է ըմբռնէ։ Արդեօք պատմիչը իրաւունք չունի՞ անհարթութիւնները շտկել ու միմիայն այն բանաստեղծական դէմքերի մասին խորհել, որոնցով այնքան լի են այդ հին պատմութիւնները։ Քիմիկոսը գիտէ, որ ալմազը ածուխ է. գիտէ և այն, թէ բնութիւնն ինչ ճանապարհով է կատարում իր այդ խորհրդաւոր կերպարանափոխութիւնները։ Բայց միթէ իր այդ գիտութեան պատճառով նա այդ գեղեցիկ ու թանկագին քարի մասին չպիտի խօսի միւս մարդկանց նման, այլ պարտաւոր է նրա վրայ նայել այն աչքով, ինչպէս նայում է հասարակ ածխի կտորի վրայ։

Ուրեմն սա նոր գիրք չէ։ Սա նոյն «Յիսուսի կեանքն» է, միայն այստեղ յաւելումներ ու մութ կողմեր չկան։ Պատմաբան լինելու համար՝ պարտաւոր էի աշխատել նկարագրելու Յիսուսին իր ցեղի յատկանիշներով ու գծերով։ Այս անգամ իմ ներկայացրած Քրիստոսը սպիտակ մարմարիոնից է կերտուած, խնամքով տաշած փայտից, պարզ ու մաքուր, ինչպէս նրան ստեղծող զգացումն էր։ Բայց, Աստուած իմ, գուցէ և հէնց այդ է իսկական Քրիստոսը։ Ո՛վ գիտէ, մարդկային կեանքում թերևս լինում է այնպիսի ժամանակամիջոց, երբ մարդուց բղխած ամեն ինչ անբիծ ու անարատ է լինում։ Այդ ժամանակամիջոցը թէև կարճատև, բայց անպայման լինում է։ Այդպիսի ժամանակում երևեցաւ Յիսուսը ժողովրդին։ Ժողովուրդը նրան այդ կերպարանքով տեսաւ ու սիրեց, և նա մարդկանց սրտերում այդպէս էլ մնաց։ Այդ անարատութիւնը, որ բնակւում էր նրա մէջ, հիացրեց աշխարհը և անմահացրեց Յիսուսին։

Էլ չեմ հերքիլ քանիերորդ անգամ ինձ ուղղուած այն մեղադրանքը, թէ ես կրօնը քանդում եմ։ Ընդհակառակը՝ կարծում եմ, որ կրօնին ծառայութիւն եմ մատուցանում։ Մի քանիսը ենթադրում են, թէ համեստ լռութիւնը կարող է պատճառ դառնալ, որ հասարակութեան դէպի գերբնականն ունեցած հաւատքը պահպանուի։ Ընդունենք, թէ այդ զգուշութիւնն ազնիւ զգացումներից է դրդուած. բայց այնուա-

մենայնիւ դա անօգուտ զգուշութիւն է։ Ժողովուրդն արդէն այդ հաւատը կորցրել է։ Այդ կողմից նա համամիտ է դրական գիտութիւններին և չի հաւատում գերբնականին, ինչպէս և չի ընդունում նրա մասնաւոր դիպուածը՝ հրաշքը։ Կարելի՞ է արդեօք այս բանից եզրակացնել, որ ժողովրդին մատչելի չեն այն բարձրագոյն հաւատալիքները, որոնք մարդկանց վեհութիւն են տալիս։ Այդպէս կարծել՝ նշանակում է մեծ սխալ գործել։ Ժողովուրդն իր որոշ կրօնասիրութիւնն ունի։ Ի՞նչը կարող է աւելի սրտաշարժ լինել, քան այն յարգանքը, որ նա տածում է մահուան նկատմամբ։ Ժողովրդի առնականութիւնը, հոգու պայծառութիւնը, ուսման ծարաւը, նրա անտարբերութիւնը դէպի ծիծաղելին, նրա հակումը դէպի հերոսութիւնը, սէրը դէպի գեղարուեստի ու բանաստեղծութեան արտադրութիւնները, որոնք խոր յոյզեր ու ազնիւ զգացումներ են առաջ բերում,—այդ յաւիտենական երիտասարդութիւնը, որ ժողովրդի սրտում վառւում է, հէնց որ խօսքը հայրենիքի փառքին է վերաբերում,—այդ ամենը կրօն է և ամենալաւ կրօններից մէկը։ Ժողովուրդը նիւթապաշտ չէ բնաւ։ Գաղափարական մարդը նրան դուր է գալիս։ Նրա պակասութիւնը, եթէ այդ բանը կարելի է պակասութիւն համարել, այն է, որ՝ երբ գործը գաղափարին է գալիս՝ նա մոռանում է իր շահերը։ Կորստաբեր կը լինէր նրան անհաւատութիւն քարոզելը. բայց միևնոյն ժամանակ բոլորովին անօգուտ են այն ջանքերը, որոնք թափւում են նրան դէպի գերբնականի հին հաւատը առաջնորդելու համար։ Մնում է միմիայն մի բան, այն է՝ ճշմարտութիւնը նրան լիովին յայտնել։ Ժողովուրդն արագօրէն, կարծես թէ բնազդմամբ, իւրացնում է գիտութեան ամենաբարձրագոյն եզրակացութիւնները։ Նա տեսնում է, որ մինչև այժմ գոյութիւն ունեցող կրօններից ոչ մէկը չի կարող պարծենալ իր բացարձակ արժանաւորութիւններով. բայց նա զգում էլ է, որ դրանով դեռ կրօնի հիմքերը չեն խախտւում։ Անցողական ձևերի նկատմամբ ժողովրդին յարգանք ներշնչել, պատմութեան մէջ ցոյց տալ այդ ձևերի վեհութիւնը, բոլորովին պարզել թէ ո՞րն է այդ ձևերի մէջ լաւն ու սուրբը—այդ ամենը մի՞թէ արդար գործ կատարել

չի նշանակում։ Գալով ինձ, ես կարծում եմ, որ ժողովուրդն իր ազատութիւնից երես կը դարձնէր, եթէ մի գեղեցիկ օր ցնորք համարէր հաւատը, անձնազոհութիւնը և հաւատարմութիւնը։ Այն ցնորքները, որոնք մի ժամանակ հիւսւում էին թէ կրօնական և թէ քաղաքական մեծ շարժումների հետ, չեն կարող ծառայել որպէս բաւարար հիմք այն բանի, որ մենք հրաժարուենք դէպի այդ շարժումները յարգանք ու համակրութիւն տածելուց։ Կարելի է լաւ ֆրանսիացի լինել և ս. միւռոնին չհաւատալ։ Կարելի է սիրել Ժաննա դ'Արկին և չհաւատալ նրա տեսած տեսիլքներին։

Ահա թէ ինչու ես կարծում եմ, որ ամենազարմանալի ժողովրդական յեղափոխութեան պատկերը, որի մասին յիշողութիւններ են մնացել, օգտակար կը լինէր ժողովրդի համար։ Յիսուսի կեանքը ժողովրդի ամենասիրելի բարեկամի կեանքն է իսկապէս։ Նախնական քրիստոնէութեան այդ դիւցազներգութիւնն ամենախսկական պլեբէյների պատմութիւնն է, պլեբէյներ՝ որոնք երբևիցէ գոյութիւն են ունեցել։ Յիսուսը սիրում էր աղքատներին, ատում քահանաներին, հարուստներին ու աշխարհիկներին, իսկ գոյութիւն ունեցող պետութիւնը համարում էր այն ժամանակուայ պայմաններում առաջացած մի անխուսափելի երևոյթ։ Բարոյական օգուտը նա համարձակօրէն գերադասում էր կուսակցական վիճաբանութիւնից և քարոզում, որ այս աշխարհը ուրիշ բան չէ, եթէ ոչ մի երազ. որ այստեղ ամեն բան նմանութիւն ու ազդանշան է. որ իսկական Աստուծոյ թագաւորութիւնը մի իդէալ է, և այդ իդէալն ամենքի բաժինն է։ Այս առասպելն աղբիւր է յաւիտենական մխիթարութեան։ Նա հիացուցիչ ուրախութիւն է ներշնչում և խրախուսում է անկեղծ բարեպաշտութեամբ ներշնչուող բարքերի կատարելագործումը։ Նա զարթեցնում է սէր դէպի ազատութիւնը, ստիպում է մտածել այն հասարակական հարցերի մասին, որոնք ներկայումս առաջնակարգ տեղ են գրաւում։ Այս վերջինների վերաբերմամբ Յիսուսը զարմանալի խորութիւն ունեցող մի հեռանկար է տալիս։ Ինչ վերաբերում է նրա վարդապետութեան յետագայ վիճակին, շատ պարզ է, որ կեանքի մէջ այդ վարդապետութեան իրագոր-

ծումն այժմ արդէն դատարկ խաղ չի կարող համարուել, և շուտով նրա ամենաէական գործը կը լինի մարդկանց համար ստեղծել երջանկութիւն, լուսաւորութիւն ու առաքինութիւն, իսկ այդ հարցերը վանելու ամեն մի ջանք բոլորովին ապարդիւն կանցնի։

Ո՜վ դուք, Աստուծոյ բարեպաշտ ծառաներ և աղախիններ, որ տանում էք օրուայ հոգսերի լուծը,—դուք, մշակներ, որ ձեր ձեռքով էք աշխատում մեր մտքի համար կառուցանելիք տաճարի շինութեան վրայ. իսկական սուրբ քահանաներ, որ անխօս տքնում էք գռեհիկ սադուկեցիների իշխանութեան տակ. խեղճ կանայք, որ տանջւում էք հասարակական կազմի պատճառով, այն կազմի՝ որի մէջ բարու մասնիկը դեռ ևս շատ փոքր է. դուք, սառը խուցերի՝ անտրտունջ ու բարեպաշտ աշխատաւորուհիներ, խուցերի՝ ուր Արարիչն է ապրում ձեզ հետ, ամենքդ էլ եկէք այն տօնախմբութեանը, որ Աստուած պատրաստել է մաքրակենցաղ մարդկանց համար։ Դուք էք Յիսուսի ճշմարիտ աշակերտները։ Եթէ այդ մեծ ուսուցիչը նորից աշխարհ գար, ի՞նչ էք կարծում, ո՞րտեղ կը գտնէր իր թանկագին ու հաւատարիմ աշակերտների այն խումբը, որ շրջապատում էր նրան Գենեսարէթի լճի ափին։ Նա մի՞թէ իր իսկական աշակերտներին պիտի գտնէր յանձին այն մարդկանց, որոնք հնացած սկզբմունքների համար են կռիւ մղում և պաշտօնական եկեղեցու ծէսերն են միայն պաշտպանում, եկեղեցի՝ որ հովանաւորում է այն ամենը, ինչի դէմ բողոքում էր Յիսուս։ Կը կապէ՞ր արդեօք նա իր գործը նրանց շահերի ու կրքերի հետ։ Ո՛չ, նա այդ յաջորդները կը գտնէր մեր մէջ, որ սիրում ենք ճշմարտութիւնը, յառաջադիմութիւնն ու ազատութիւնը։ Իսկ եթէ նա երբևիցէ խարազան վերցնէր կեղծաւորներին արտաքսելու համար, այդ դէպքում արդեօք ո՞ւմ կընդունէր որպէս փարիսեցի, որին նկարագրել է իր յայտնի առակում։ Նրա՞նց, որոնք ասում են. «Տէ՛ր, շնորհակալ եմ քեզանից, որ այս մեծ մեղաւոր, ողորմելի ու չնչին մարդու նման չեմ», թէ՞ նրանց, որոնք ասում են. «Ո՛վ դու, որին գուցէ և չեմ ճանաչում, բայց որին սիրում եմ, և որը ամենից առաջ որոնում է սրտի անկեղծ զգացումը. արի, որովհետև քեզ տեսնել եմ ուզում»։

Նայեցէք հորիզոնին. արդէն նկատելի է ազատութեան արշալոյսը, որ բացւում է ինքնամոռացութեան, աշխատանքի, բարութեան և փոխադարձ օգնութեան շնորհիւ. ազատութեան՝ որ պիտի տիրէ աշխարհին գիտութեան շնորհիւ, գիտութեան՝ որ, թափանցելով մարդկային զարգացման օրէնքների մէջ և հետզհետէ աւելի ու աւելի հպատակեցնելով իրեն նիւթը, հիմք պիտի դնի բոլոր մարդկանց արժանաւորութեան և պիտի տայ նրանց ճշմարիտ ազատութիւն։ Մեզանից իւրաքանչիւրն իր պարտքը կատարելով թող նախապատրաստէ այս ապագայ դրախտը։ Գալով ինձ, երջանիկ կը լինէի, եթէ կարողանայի անցեալի այս իմ պատմութիւններով ձեզ գոնէ մի վայրկեան մոռացնել տալ ներկան և նորոգել այն հովուերգը, որը տասնևութ դար սրանից առաջ ձեզ նման բարեպաշտների սրտերը ուրախութեամբ էր լցնում։

Իմ քոյր Հանրիէտտի լոյս հոգուն

(Վախճանուած Բիբլոսում 1861 թ. սեպտեմբերի 24-ին)

Աստուծոյ գոգում, ուր այժմ հանգչում ես, յիշում ես արդեօք Խազիրում անցկացրած մեր երկար օրերը, երբ՝ առանձնացած քեզ հետ՝ այս էջերն էինք գրում, ոգևորուած այն տեղերով, ուր միասին ման եկանք։ Մօտս նստած՝ խաղաղ ու անձայն աչքի էիր անցկացնում և իսկոյնևեթ արտագրում ամեն մի թերթ, մինչդեռ ծովը, գիւղերը, ձորերը, լեռները սաւանի նման սփռուած էին մեր ոտքերի տակ։ Երբեմն արևի յոգնեցնող լոյսին փոխարինում էին անհամար աստղերի հոյլերը, և դու զգոյշ ու կտրուկ հարցերով և համարձակօրէն արտայայտած կասկածներովդ ուղղում էիր ինձ դէպի մեր ընդհանուր մտածողութեան բարձրագոյն առարկան։ Յիշում ես, մի անգամ ինձ ասացիր, որ պիտի սիրես այս գիրքը, որովհետև քո ներկայութեամբ է գրուած այն, և հաւանում ես նրան, և եթէ լինում էր, որ երբեմն էլ երկիւղ էիր կրում, որ թեթևամիտ մարդիկ կարճամտութեամբ դէմ կը լինեն այս երկին, այնուամենայնիւ համոզուած էիր, որ ճշմարիտ կրօնասէր ոգիները կը գնահատեն այս գիրքը։ Սոյն սքանչելի ուսումնասիրութեան ժամանակ մենք երկուսս էլ ծանրապէս հիւանդացանք, և տենդային քունը միանգամայն փակեց մեր թերթերունքները։ Ես մենակ զարթնեցի...։ Դու այժմ հիւրընկալուել ես Ադոնիսի երկրում, սրբազան Բիբլոսի և այն ջրերի մօտ, որոնց մի ժամանակ խառնւում էին այս երկի մէջ դեր խաղացող կանանց արցունքները։ Ո՛վ իմ բարի հանճար, բաց քո սիրելիի առաջ այն մեծ ճշմարտութիւնները, որոնց շնորհիւ մարդիկ իշխում են մահուան վրայ և որոնք հրամայում են մարդկանց ոչ թէ նրանից վախենալ, այլ սիրել նրան։

ԳԼՈՒԽ Ա.

Յիսուսի մանկութիւնը եւ պատանեկութիւնը։ — Նրա կեանքի առաջին տարիները։

Համաշխարհային պատմութեան ամենագլխաւոր դէպքն այն յեղաշրջումն է, որի շնորհիւ մարդկութեան ազնուագոյն մասը՝ այսպէս կոչուած հին հեթանոսական կրօններից անցաւ մի կրօնի, որը հիմնուած է միաստուածութեան, երրորդութեան և Աստուածորդու մարմնացման վրայ։

Այս յեղաշրջումը կատարուեց մօտ հազար տարուայ ընթացքում։

Նոր կրօնի ձևակերպումն էլ պահանջեց մօտ երեք-հարիւր տարի։ Բայց այդ յեղաշրջման սկզբնաւորութիւնը, որի մասին խօսում ենք, տեղի ունեցաւ Օգոստոսի և Տիբերիոսի ժամանակ։ Այդ ժամանակ ապրում էր մի տարօրինակ մարդ, որ իր համարձակ ձեռներէցութեան ու հմայիչ անձնաւորութեան շնորհիւ ստեղծեց մարդկութեան ապագայ կրօնի տարրերը և հաստատեց ծիսակատարութեան հիմքերը։

Յիսուսը ծնուեց Նազարէթում, Գալիլիայի մի փոքրիկ քաղաքում, որը մինչև այդ ժամանակ շատ անյայտ մի տեղ էր։ Նրան՝ ամբողջ կեանքում՝ «Նազովրեցի» էին կանչում, և միայն յետագայում կազմուած առասպելներում, այն էլ մեծ փոփոխութիւններով, կարողացան այնպէս ցոյց տալ, թէ Յիսուսը ծնուել է Բեթղեհէմում։ Յետոյ կը պարզենք այդ փոփոխութիւնների պատճառը և ցոյց կը տանք, որ ոչ այլ ինչ էին դրանք, եթէ ոչ հետևանք Յիսուսին վերագրուած դերի։

Նրա ծննդեան ժամանակը ճշտութեամբ չի որոշուած։ Յիսուսը ծնուեց Օգոստոսի թագաւորութեան օրով, Հռով-

մէական 750 թուականի մօտերքը, և հաւանականօրէն մի քանի տարով առաջ քաղաքակիրթ ազգերի ընդունած տարեգլխից, որ համարւում է Նրա ծննդեան օրը։

Գալիլիայի ազգաբնակութիւնը շատ խառն էր։ Այդ նահանգում Քրիստոսի ժամանակ ազգաբնակութիւնը բաղկացած էր և՛ բազմաթիւ ոչ-հրէաներից, որպիսիք են փիւնիկեցիք, ասորիները, արաբները և մինչև անգամ յոյները։ Օտարներն այս նահանգում մովսիսականութիւն էին ընդունում յաճախ։

Այսպիսով անկարելի է ճշտապէս որոշել, թէ ովքեր էին Յիսուսի ծնողները, և պարզել, թէ ինչ արիւն էր հոսում այն մարդու երակներում, որն ամենից շատ նպաստեց մարդկանց մէջ արենական տարբերութիւնների ոչնչացմանը։

Յիսուսը ժողովրդի ծնունդ է։ Նրա հայրը՝ Յովսէփ՝ և մայրը՝ Մարիամ՝ ստորին դասակարգի մարդիկ էին, արհեստաւորներ, և ապրում էին իրենց աշխատանքով ճիշտ այն դրութեան մէջ, որ Արևելքում սովորական է և ոչ աղքատութիւն կարելի է անուանել, ոչ էլ ունևորութիւն։ Այդ երկիրներում կեանքի պարզութիւնը ժխտում է փարթամ ապրուստի պահանջը և հարստութիւնը համարեա աւելորդ է դարձնում ու կամաւոր աղքատութիւն ստեղծում։ Միւս կողմից՝ ժողովուրդը գեղարուեստի ու արտաքին զարդարանքների նկատմամբ սէր չունի, և հետևաբար մինչև անգամ ունևորների բնակարանն էլ աղքատի բնակարանի կերպարանք է կրում։

Նազարէթը Յիսուսի ժամանակ, հաւանականօրէն, շատ քիչ էր տարբերւում իր ներկայ վիճակից։ Մենք հիմա էլ տեսնում ենք այն քարքարուտ արահետները և այն՝ տներն իրարից բաժանող՝ նեղ փողոցները, որոնց մէջ խաղում էր Յիսուս իր մանկութեան շրջանում։ Նրա բնակարանը, հաւանականօրէն, շատ նման էր այն խուճուկ խրճիթներին, որոնք միայն դռնից են լուսաւորուած և ծառայում են միաժամանակ թէ իբրև արհեստանոց, թէ իբրև խոհանոց, թէ իբրև ննջարան և ուր, ամեն տեսակ կարասիների փոխարէն, յատակի վրայ փռուած փսիաթն է երևում, ինչպէս և մի քանի բարձեր, մի կամ երկու կաւէ աման ու մի ներկած

սնտուկ։ Այն ընտանիքը, որի մի անդամն էր Յիսուս, բազմամարդ էր, և յայտնի չէ՝ արդեօք մի՞ թէ՞ մի քանի պսակից էր առաջացել այդ բազմամարդութիւնը։ Յիսուսը քոյրեր և եղբայրներ ունէր, որոնցից ամենամեծը, երևի, ինքն էր։ Նրանք բոլորն էլ անյայտ մնացին։ Չորս անձնաւորութիւն, որոնք կարծեօք Յիսուսի եղբայրներն էին և որոնցից միայն Յակովբոսը քրիստոնէութեան զարգացման առաջին տարիներում նշանակութիւն ստացաւ, ինչպէս ենթադրւում է, Նրա մօրաքրոջ որդիներն էին։

Մարիամը մի քոյր ունէր, նոյնպէս Մարիամ անունով, որ ամուսնացաւ Ալփիայի կամ Կղէոպայի հետ (այս երկու կոչումը կարծեմ մի անձնաւորութեան է պատկանում) և բազմաթիւ որդիներ ունէր, որոնք Յիսուսի առաջին աշակերտների շարքում նշանաւոր դեր խաղացին։ Այդ մօրաքրոջ որդիները երիտասարդ ուսուցչին միացան և կոչւում էին տեառնեղբայրներ, մինչդեռ Նրա հարազատ եղբայրները հակառակ էին Յիսուսին։ Յիսուսի եղբայրները, ինչպէս և մայրը, միայն Նրա մահից յետոյ նշանակութիւն ստացան։ Բայց, կարծեօք, նրանց ստացած այդ նշանակութիւնն այն չէր, ինչ որ ունէին մօրաքրոջ որդիները, որոնց յարաբերութիւնը Յիսուսի հետ աւելի անկեղծ էր և բնաւորութիւններն աւելի ինքնուրոյն։ Նրա քոյրերն ամուսնացան Նազարէթում, որտեղ Յիսուսը անցկացրեց իր երիտասարդութեան առաջին տարիները։

Նազարէթը մի փոքրիկ քաղաք էր և գետեղուած էր ամեն կողմից բաց մի վայրում, որտեղից երևում էին այն լեռնախմբի գագաթները, որ հիւսիսից փակում է Էսդրելոնի հարթութիւնը։ Այժմ Նրա ազգաբնակութիւնը 3—4000 է, և, հաւանականաբար, այդ քաղաքը Յիսուսի օրով էլ մօտաւորապէս նոյնքան բնակիչ ունէր։ Ձմեռը ցուրտ է լինում, բայց կլիման շատ առողջարար է։

Այդ քաղաքը, ինչպէս և այն ժամանակուայ հրէական բոլոր քաղաքները, խրճիթների մի խմբուածք էր, առանց ճարտարապետական որոշ ոճի կառուցուած, և ունէր նոյն խղճալի ու աղքատիկ տեսքը, ինչ որ ունին Արևելքի բոլոր գիւղերը։ Տները, հաւանօրէն, նոյն քարաշէն հիւղերն

էին, առանց ներքին և արտաքին զարդարանքի, որոնցով այժմ էլ ծածկուած են Լիբանանի ամենահարուստ մասերը և, չնայած նրանց շրջապատող արմաւենիներին ու որթատունկերին, ոչ մի գրաւիչ բան չեն ներկայացնում։ Դրան հակառակ՝ շրջակայքն սքանչելի է, և աշխարհում ուրիշ ոչ մի տեղ բացարձակ բաղդաւորութիւնն այնպիսի ներդաշնակութիւն չի կազմում բնութեան փարթամութեան հետ, որքան այստեղ։

Նոյնիսկ մեր օրերում Նազարէթն ամենահմայիչ բնակավայրերից մէկն է, Պաղեստինում միակ տեղը, ուր մարդու հոգին թեթևութիւն է զգում այն ծանր լծից, որը ճնշում է նրան ի տես այդ կողմի անապատների։

Այստեղ ժողովուրդը քաղցրաբարոյ է և ուրախ, այգիները՝ ակնապարար ու կանաչ։ Անտոնինոս նահատակը վեցերորդ դարի վերջերում այդ պտղաբեր շրջակայքը ճարտարօրէն նկարագրելով համեմատեց դրախտի հետ։ Արևմտեան կողմի մի քանի հովիտները բոլորովին հաստատում են այդ նմանութիւնը։ Այն աղբիւրը, որի շուրջն էր կենտրոնանում մի ժամանակ այս փոքրիկ քաղաքի կեանքն ու խնդութիւնը, ոչնչացուած է։ Նրա քանդուած տաշտում այժմ պղտոր ջուր է գտնւում միայն։ Բայց երեկոներն այստեղ ժողովւող կանայք նոյնպէս գեղեցիկ են, ինչպէս իրենց նախորդները, որոնց գեղեցկութիւնը նկարագրուած էր դեռևս վեցերորդ դարում։ Այդ գեղեցկութիւնը, որ մինչև այժմ էլ զարմանալիօրէն պահպանւում է դեռ, այն ժամանակ համարւում էր որպէս պարգև, որը կոյս Մարիամն է շնորհել այդտեղի կանանց։ Դա սիրիական մի տիպ է իր ամբողջ հրաշալի հրապոյրով։

Կասկած չկայ, որ Մարիամն ամենայն օր գալիս էր այդ աղբիւրը, կուժն ուսին, շրջապատուած իւր հայրենակցուհիներով, որոնք անյայտ են մնացել։ Անտոնինոս նահատակը նկարագրում է, որ հրէայ կանայք, որոնք ուրիշ տեղերում քրիստոնեաներին ատելութեամբ են վերաբերւում, այստեղ նրանց հետ շատ սիրալիր են։ Մինչև անգամ այժմ էլ Նազարէթում կրօնական ատելութիւնն աւելի թոյլ է, քան ուրիշ տեղերում։

Քաղաքի հորիզոնը նեղ է, բայց եթէ մի քիչ բարձրանանք և ելնենք այն տափարակը, որ ամենաբարձր տեղից աւելի բարձր է և շարունակ ենթակայ է ծովից փչող քամիներին, այն ժամանակ մեր աչքին մի սքանչելի տեսարան կը պարզուի. արևմուտքից կերևայ գեղատեսիլ Կարմելի հորիզոնը, որ վերջանում է սրածայր գագաթով, որը կարծես ջուրն է մտնում։ Այնուհետև կը տեսնենք Մակգէդլօյին իշխող երկգագաթ բարձրութիւնը. Սիւքեմի լեռները՝ նահապետական ժամանակներից մնացած իրենց սրբատեղիներով. Գելբուէի գեղատեսիլ սարախմբակը, որ լի է մերթ սքանչելի և մերթ սարսափելի յիշողութիւններով Սիւլէմի և Էնդորայի մասին. նոյնպէս Թաւոր լեռը, որը նախկին ժամանակներում, իր գեղեցիկ կլոր ձևի շնորհիւ, նմանեցնում էին կանացի կրծքի. Սիւլեմ և Թաւոր լեռների միջև երևում են Յորդանանի հովիտը և Պերէայի բարձրավանդակը, որոնք արևելեան կողմից մի ամբողջական գիծ են կազմում։ Հիւսիսում Սախեդի լեռները, դէպի ծով իջնելով, ծածկում են Ակր քաղաքը՝ նայողի աչքին պարզելով միայն Կայիֆի ծոցը։ Այսպէս էր Յիսուսին շրջապատող բնութիւնը։ Այս կախարդիչ վայրը, Աստուծոյ թագաւորութեան օրրանը, երկար տարիներ Յիսուսի աշխարհն էր կազմում. նրա ամբողջ կեանքը մանկութեան ժամանակուայ ծանօթութեան շրջանակից դուրս չեկաւ։ Այստեղից դէպի հիւսիս, Հերմոնի փէշերի ուղղութեամբ, համարեա երևում է Փիլիպպեան-Կեսարիան, որը հեթանոսների երկրին հասնող ամենահեռաւոր կէտն է. իսկ հարաւից, Սամարայի՝ այդ ոչ այնքան գրաւիչ լեռների՝ ետևից զգացւում է վշտահար, վերացական մտքի ու մահուան կնիքի շնչից խանձուած Հրէաստանը։

Եթէ երբևիցէ աշխարհը քրիստոնեայ մնալով աւելի լաւ ըմբռնի, թէ ո՛ր տեղերին պիտի յարգանք ընծայի, և կամենայ իսկական սրբութիւններով փոխարինել այն կեղծ ու սխալ ընդունուած սրբավայրերը, որոնք բարեպաշտների յարգանքն էին վայելում կոպիտ դարում,— այն ժամանակ նա իր տաճարը հէնց այդ Նազարէթի բարձրութեան վրայ կը շինէ։ Այնտեղ, որտեղ առաջին անգամ աշխարհ եկաւ քրիստոնէութիւնը, որտեղ գործում էր նրա հիմնադիրը, պիտի հիմնել

մի այնպիսի ընդարձակ տաճար, որտեղ կարողանան աղօթել բոլոր քրիստոնեաները։

Այնտեղ, միայն այն հողի վրայ, որտեղ ննջում են հիւսն Յովսէփը և հազարաւոր մոռացուած նազարէթցիներ, որոնք իրենց հովտի սահմաններից դէնը չեն անցել, փիլիսոփան կարող է գտնել այն արժանաւորագոյն վայրը, ուր կարելի է քննել մարդկային ազգի բաղդի ընթացքը և ուր իմաստասէրն այդ բաղդի անկայունութիւնների դէմ կարող է սփոփուել և ըմբռնել աստուածային այն նպատակը, որին ձգտում է աշխարհը, շրջապատուած անթիւ մոլորութիւններով և ունայնութիւններով։

ԳԼՈՒԽ Բ

Յիսուսի դաստիարակութիւնը

Այս ծիծաղկոտ ու վեհ բնութիւնն էր Յիսուսի միակ դաստիարակիչը։ Նա արևելեան մեթոդով գրել-կարդալ սովորեց։ Իսկ այդ մեթոդը կայանում է նրանում, որ երեխայի ձեռքը գիրք են տալիս, որի բովանդակութիւնը նա ընկերների հետ տակտով կրկնում է, մինչև որ անգիր անի։ Հրէական փոքրիկ քաղաքների դպրոցներում աշակերտներն ուսանում էին սինագոգի ընթերցիկի կամ գասսանի ղեկավարութեամբ։

Յիսուս քիչ էր յաճախում դպիրների բարձրագոյն դըպրոցները (այսպիսի ուսումնարան գուցէ Նազարէթում ամենևին չկար) և չունէր այն կոչումը, որի շնորհիւ ամբոխի աչքում գիտնականի դիրք է վայելում մարդ։ Այսուամենայնիւ մեծ սխալ կը լինէր ասել, որ Յիսուսը տգէտ էր։ Մեզանում, ճիշտ է, դպրոցական կրթութիւնը մեծ տարբերութիւն է դնում ուսումնական և անուս մարդկանց միջև։ Բայց այդպէս չէր Արևելքում և առհասարակ հնագոյն ժամանակները։ Այն կոպտութիւնը, որ յատուկ է մեր՝ առանձնացած ու անհատական կեանքի շնորհիւ՝ դպրոցի երես չտեսած մարդկանց, հին ժամանակներում ապրողներին անյայտ էր։

Բարոյական կրթութիւնը և մանաւանդ ժամանակի տիրապետող ոգին հետզհետէ ընդհանրանում էին շնորհիւ այն բանի, որ մարդիկ իրար հետ մշտական յարաբերութեան մէջ էին։

Արաբը, հակառակ ոչ մի ուսուցիչ չունենալուն, կարողանում էր շատ զարգանալ, որովհետև նրա վրանը բացօդեայ մի ինքնատիպ ճեմարան էր, որտեղ՝ շնորհիւ զարգացած մարդկանց միմեանց շփուելու՝ ծնւում էր ընդարձակ և

մինչև անգամ գրական շարժում։ Արևելքում քաղաքավարական շարժումներն ու նրբամտութիւնն ամենևին կապ չունեն այն բանի հետ, որին մենք ուսում ենք անուանում։ Ընդհակառակը՝ զարգացած մարդիկ այնտեղ բծախնդիր ու վատ դաստիարակուած են համարւում։

Մեզանում կրթութեան պակասութիւնը պատճառ է լինում մարդկանց ստորին դրութեան։ Իսկ հասարակական կեանքի այնպիսի պայմաններում, որպիսին քիչ վերև նկարագրեցինք, կրթութեան պակասութիւնը հանդիսանում էր որպէս մի պայման մեծ գործերի և ինքնուրոյնութեան։ Չի կարելի կարծել, որ Յիսուսը ծանօթ լինէր յունարէնին։ Այդ լեզուն Հրէաստանում քիչ էր տարածուած. գիտէին միայն կառավարչական շրջաններում ու հեթանոսաբնակ քաղաքներում, ինչպէս Կեսարիան էր։

Այն բարբառը, որով խօսում էր Յիսուս, ասորական և հրէական լեզուների մի խառնուրդ էր. այդ լեզուով էին խօսում այն ժամանակ Պաղեստինում։

Նոյնպէս անհաւանական է, որ Յիսուս ծանօթ լինէր յունական քաղաքակրթութեանը։ Այդ քաղաքակրթութիւնը հալածւում էր Պաղեստինի գիտնականներից, որոնք միակերպ անիծում էին թէ նրան, ով խոզ էր պահում, և թէ նրան, ով իր որդուն յունական գիտութիւններ էր ուսուցանում։ Ամենայն դէպս՝ յունական քաղաքակրթութիւնը Նազարէթի նման մի փոքրիկ քաղաքում մուտք չգործեց։ Մինչև անգամ Երուսաղէմում համարեա չէին սովորում յունարէն, իսկ յունական գիտութիւնների վրայ նայում էին իբրև մի վտանգաւոր և ստոր բանի վրայ։ Յունական լեզուն պիտանի էր նկատւում միայն կանանց համար, այն էլ ծառայում էր իբրև զարդարանք։ Իսկ լուրջ մարդու համար արժանաւոր համարւում էր միայն Օրէնքի ուսումնասիրութիւնը։ Մի գիտնական րաբբի իրեն ուղղուած հարցին, թէ երբ պէտք է երեխաներին յունական գիտութիւններ ուսուցանել, պատասխանեց. «Այն ժամանակ, երբ ոչ ցերեկ է և ոչ գիշեր, որովհետև ասուած է, որ գիշեր-ցերեկ պարտաւոր ես օրէնքն ուսումնասիրել»։

Այսպիսով՝ Յիսուս պիղծ ուսման ոչ մի տարր չէր ա-

ցրեց ոչ ուղիղ և ոչ շեղ ճանապարհով։ Նա ոչինչ չգիտէր բացի հրէական օրէնքներից։ Նրա միտքը պահպանեց իր նախնական պարզութիւնը, որը առհասարակ, շնորհիւ բազմակողմանի և ընդարձակ քաղաքակրթութեան, միշտ ենթակայ է պակասելու։ Մինչև անգամ Հրէաստանում ուրիշ գիտունների բազմաթիւ համանման փորձերը նրան անծանօթ էին։ Յիսուս գաղափար անգամ չունէր թէ եսէացիների կամ բըժիշկների աստուածավախ կեանքի և թէ հրէական ալէքսանդրեան շկոլայի կրօնական փիլիսոփայութեան նշանաւոր փորձերի մասին, որոնք Յիսուսի ժամանակ մեկնաբանւում էին Փիլոնի կողմից։

Այն մեծ նմանութիւնը, որ գտնում ենք Յիսուսի վարդապետութեան և Փիլոնի մտքերի միջև,—սէր առ Աստուած, ողորմածութիւն և հանդերձեալ կեանքի նկատմամբ տածուած յոյս,—մտքեր՝ որոնք ալէքսանդրացի նշանաւոր գիտնականի գրուածքներում, կարծես, աւետարանի արձագանքը լինեն, հետևանք է այն ընդհանուր ձգտման, որ յատուկ է այդ շրջանի առաջնակարգ մտածողներին։

Բարեբաղդաբար Յիսուս ծանօթ չէր այն չոր սխոլաստիկային, որ աւանդւում էր և որ, քիչ յետոյ, Թալմուտի երևան գալու պատճառ պիտի լինէր։ Թէպէտ մի քանի փարիսեցիներ այդ վարդապետութիւնը մտցրել էին Գալիլիայում, բայց Յիսուսը նրանց հետ յարաբերութիւն չունէր, իսկ երբ վերջերում ծանօթացաւ այդ չոր դիպուածական բանախօսութեան (казуистика) հետ,—խորին զզուանք զգաց։

Բայց հիմք կայ կարծելու, որ Յիսուս որոշ չափով ծանօթ էր Հիլլէլի մտքերին։

Յիսուսից 50 տարի առաջ՝ արդէն Հիլլէլն աֆորիզմներ էր յայտնել, որոնք շատ էին նմանում նրա աֆորիզմներին։ Հիլլէլն իր հեզ բնաւորութեամբ, աղքատութեամբ, որին համակերպութիւն էր ցոյց տալիս, և այն դիմադրութեամբ, որով վերաբերւում էր դէպի կեղծաւորներն ու քահանաները,—Յիսուսի համար մի իսկական ուսուցիչ հանդիսացաւ, եթէ միայն ուսուցչի մասին կարող է խօսք լինել այդպիսի չափազանց ինքնատիպ մի վարդապետութեան մասին խօսելիս։

Հին Ուխտի գրքերի ընթերցումը Յիսուսի վրայ աւելի

մեծ տպաւորութիւն էր թողնում։ Սուրբ գիրքը բաժանւում էր երկու գլխաւոր մասերի՝ Օրէնքներ, այսինքն Հնգամատեանը, և Մարգարէներ՝ այն ձևով, ինչ ձևով որ այժմ էլ գոյութիւն ունի։ Այլաբանական բացատրութիւնների ընդարձակ մեթոդ էր գործադրւում այդ գրքի վերաբերմամբ, որից իւրաքանչիւր ոք աշխատում էր ժամանակի պահանջի համեմատ եզրակացութիւն հանել։

Բայց Երուսաղէմի գիտունները չկարողացան սբ. գրքի իսկական բանաստեղծութիւնն ըմբռնել, և միայն Յիսուսի հրաշալի հանճարին մատչելի եղաւ նա իր ամբողջութեամբ։

Օրէնքը նրան շատ էլ չէր գրաւում։ Յիսուս զգում էր, որ ինքն աւելի լաւ կարող է կազմել։ Բայց սաղմոսների կրօնական բանաստեղծութիւնը բոլորովին համապատասխանում էր նրա քնարերգակ հոգուն, և միայն դա էր ամբողջ կեանքում նրա կերակուրն ու նեցուկը։

Մարգարէները, մանաւանդ Եսային և նրա՝ գերութեան ժամանակակից՝ յաջորդը, իրենց փայլուն անուրջներով, կրակոտ պերճախօսութեամբ և ցասկոտ ըմբերանումներով, որոնց մէջ փայլում են ապագայի կախարդական պատկերները,— Յիսուսի իսկական ուսուցիչներն էին։ Նա, անկասկած, նոյնպէս կարդում էր Հին Ուխտի բազմաթիւ այնպիսի երկեր, որոնք այժմ քրիստոնէական եկեղեցու կողմից մերժուել են և յօրինուել ժամանակակից գրողների ձեռքով. այս վերջիններս իրենց երկերին հինաւուրց գրուածքների կշիռ տալու համար ծածկւում են մարգարէների ու նահապետների անուան տակ։ Այդ գրքերից մէկը Յիսուսին շատ զարմացրեց. Դանիէլի գիրքն էր դա։ Այդ գիրքը, որը Անտիոքոս Եպիփանի ժամանակ ապրող խանդավառ մի հրէայ էր հեղինակել և հրատարակել վերոյիշեալ հին մարգարէի անուամբ, հանդիսանում էր որպէս համառօտ արտայայտութիւն այն ժամանակի մտքերի։

Նրա հեղինակը, որ փիլիսոփայութեան պատմութեան իսկական ստեղծողն է, առաջինը համարձակուեց նկատել ազգերի շարժման և թագաւորութիւնների փոփոխութեան մէջ իրողութիւնների մի համախմբում, որը հրէական ժողովրդի վիճակից կախում ունի մեծապէս։

Յիսուսը դեռ մատաղ հասակից այդ ակնկալութիւններով էր գրաւուած։ Հաւանական է նոյնպէս, որ նա կարդացած լինի Ենովքի գրքերը, որոնք այն ժամանակ սրբազան մատեանների հետ հաւասարապէս յարգուած էին, ինչպէս և նոյնանման ուրիշ աշխատութիւններ, որոնք ժողովրդի մտքում վառ էին պահում գալիք մեծամեծ դէպքերի յոյսը։ Յիսուսի երևակայութիւնը շարունակ պտտում էր ապագայ այնպիսի դէպքերի շուրջը, ինչպէս են Մեսիայի գալուստը՝ փառքով ու սարսափներով շրջապատուած, ազգերի միմեանց դէմ բարձրանալը և երկնքի ու երկրի կործանումը։ Նրա երևակայութիւնը մշտապէս որոճում էր այդ խառնակութիւնները, քանի որ դրանց իրականացումը մօտիկ ժամանակում էր սպասւում։ Շատերը մինչև անգամ հաշւում էին այն ժամանակը, երբ այդ ամենը պիտի կատարուէր, և հէնց այդ պատճառով էլ շատ բնական ու սովորական էին թւում այդ գերբնական երևոյթները։ Նա աշխարհի ընդհանուր դրութեան մասին ոչ մի գաղափար չունէր. այդ պարզապէս նկատւում է նրա քարոզների ամեն մի խօսքից։ Յիսուսին թւում էր, որ երկիրը բաժանուած է միմեանց դէմ պատերազմող թագաւորութիւնների միջև։ Նա, կարծես, գաղափար անգամ չունէր ոչ «հռովմէական աշխարհի» և ոչ էլ այն ժամանակ գոյութիւն ունեցող հասարակական նորագոյն դրութեան մասին։ Յիսուս նոյն իսկ ճիշտ գաղափար չունէր Հռովմի զօրութեան նկատմամբ. նրան միայն «կեսար» բառն էր յայտնի։ Նա Գալիլիայում և շրջակայքում տեսնում էր Տիբերիադան, Յուլիադան, Կեսարիան ու Դիօկեսարիան, որոնք Հերովդէսի տոհմի փառահեղ ստեղծագործութիւններն էին. այդ տոհմը, կարծես, իր այդ ճոխ շինուածքներով կամենում էր մի կողմից ապացուցանել աշխարհին, որ ինքը երկրպագու է հռովմէական քաղաքակրթութեանը, իսկ միւս կողմից ցոյց տալ Օգոստոսի տոհմին իր հաւատարմութիւնը. (ճակատագրի տարօրինակ քմահաճոյքով՝ այդ քաղաքների անուններն այժմ սարսափելի աղաւաղուած են, և ներկայումս բէդուինների ողորմելի խրճիթներն են կրում այդ անունները)։ Հաւանօրէն Յիսուս եղել է և Սեբաստայում, որը Հերովդէս Մեծի շինած հոյակապ քաղաքն էր և որի աւերակները մեզ վրայ

այն տպաւորութիւնն են թողնում, կարծես թէ այդ քաղաքը շինուած-պատրաստ բերել-դրել են այդտեղ ճիշտ այնպէս, ինչպէս մի մեքենայի մասերը տանում-սարքում ես ցանկացածդ տեղը:

Յիսուսի աչքում «այս աշխարհի թագաւորութիւնն ու նրա փառքն» էին կազմում այդ ցուցադրուած ճարտարապետութիւնը, որը Հրէաստանում կարծես զօռով էր լոյս ընկել, և այդ հարիւրաւոր՝ միևնոյն տրամագիծն ունեցող՝ սիւները, որոնք զարդարում էին քաղաքի լաւագոյն, բայց էապէս խղճուկ փողոցը: Այդ անբնական փարթամութիւնը, այդ վարչական ու պաշտօնական գեղարուեստը նրան զզուանք էին պատճառում: Նա իր կեանքը բնութեան ծոցումն էր անցկացնում: Թագաւորական պալատը մի այնպիսի տեղ էր թւում նրան, ուր մարդիկ գեղեցիկ հագուստներով են շրջում:

Այն անկապութիւնները, որոնք նկատելի են Յիսուսի քարոզների մէջ, երբ նա խօսում է թագաւորների և հարուստների մասին, ապացուցանում են, որ Յիսուսն արիստոկրատ շրջանի վրայ երիտասարդ գիւղացու աչքով էր մտիկ տալիս, գիւղացու՝ որ ամէն բանի վրայ իր պարզամտութեան տեսակէտից է նայում: Նա աւելի քիչ ծանօթութիւն ունէր այն նոր գաղափարի մասին, որ յունական գիտութիւնն է ստեղծել և որ իւրաքանչիւր փիլիսոփայութեան հիմքն է կազմում: Այդ գաղափարը մեր ժամանակի գիտութեան կողմից էլ է ընդունուած և կայանում է նրանում, որ գերբնական ոյժերի գոյութիւնն է ժխտում, ոյժերի՝ որոնց վերագրւում էր տիեզերքի կառավարութիւնը նախնիքների կողմից: Այդ տեսակէտից Յիսուսն իր հայրենակիցներից չէր տարբերւում: Հրաշքը նրա համար ոչ թէ բացառիկ, այլ մի բնական երևոյթ էր: Փորձնական գիտութիւնները հիմնուելուց յետոյ միայն մարդիկ հասկացան գերբնականի անկարելի լինելը: Բնագիտութեան մասին գաղափար չունեցող մարդիկ առհասարակ հաւատում են, թէ աղօթքը կարող է ամպերի ընթացքը փոխել, հիւանդութիւնից և նոյն իսկ մահից փրկել մարդուն. այդպիսի մարդկանց համար հրաշքն անբնական մի երևոյթ չէ, որովհետև իրերի ընթացքն Աստուծոյ ազատ կամքի արդիւնքն է թւում նրանց: Այդպէս էր

Յիսուսի աշխարհահայեացքը: Բայց այդ հայեացքը նրա վեհ հոգու վրայ այն ազդեցութիւնը չարաւ, ինչ որ հասարակ ամբոխի վրայ: Աստուծոյ առանձին միջամտութեան հաւատքն ամբոխի շրջանում աւելորդ մնապաշտութիւն է առաջ բերում ու նրան խաբեբայութեան զոհ դարձնում: Իսկ Աստուծոյ միջամտութեան վերաբերմամբ Յիսուսի հաւատքը, ընդհակառակը, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հետևանք այն բանի, որ նա չափազանց մեծ հաւատք ունէր դէպի՝ Աստուծոյ և մարդկանց մերձեցման կարելիութիւնը, ինչպէս և դէպի մարդկային կարողութիւնը: Յիսուսի այդ հաւատքը մի սքանչելի թիւրիմացութիւն էր, թիւրիմացութիւն՝ որ մեծապէս զօրացրեց նրա հոգեկան կարողութիւնը: Թէև այդ թիւրիմացութիւնն ապագայում պէտք է պակասեցնէր Յիսուսի հմայքը քիմիկոսի ու բնագէտի աչքում, բայց հէնց այդ թիւրիմացութեան շնորհիւ Յիսուս իր ժամանակին այնպիսի մի մեծ ոյժ ստացաւ, որին երբևիցէ չի հասել աշխարհում ոչ մի մարդ:

Նրա բնաւորութիւնը, դեռ մատաղ հասակից սկսած, անկախ էր բոլորովին: Աւանդութիւնից իմանում ենք, որ նա իր այդ անկախութիւնը ձեռք է բերել՝ հէնց մանկութիւնից ըմբոստանալով ծնողական իշխանութեան դէմ և դուրս գալով սովորական շրջանակից, որպէսզի կարողանայ իր կոչմանը հետևել: Գոնէ այն ճիշտ է, որ բարեկամական կապերը նրա վրայ շատ քիչ են ազդել: Ծնողները նրան շատ էլ չէին սիրում, և Յիսուս նրանց հետ երբեմն շատ խիստ էր վարւում: Յիսուսը, ինչպէս և այն բոլոր մարդիկ, որոնք բացառապէս մի միակ գաղափարի են նուիրուած, շատ թոյլ էր գնահատում արենակցական կապերը: Այդպիսի մարդկանց համար միմիայն գաղափարական կապն է որ գոյութիւն ունի: «Ահա իմ մայրն ու իմ եղբայրները,— ասում էր նա մատնացոյց անելով իր աշակերտներին.—ով իմ Հօր կամքն է կատարում, նա է միայն իմ քոյրն ու եղբայրը»: Պարզամիտ մարդիկ չէին հասկանում այդ, և, ասում են, մի անգամ մի կին նրա մօտով անցնելիս աղաղակել էր. «Օրհնեալ լինի այն արգանդը, որ քեզ ծնաւ, և այն ստինքը, որը դու ծծեցիր»: «Երջանիկ է այն մարդը,—պատասխանեց Յիսուս,—ով լսում է Աստուծոյ խօսքը և կատարում»:

ԳԼՈՒԽ Գ.

Յիսուսի զարգացմանը նպաստող գաղափարները

Ինչպէս որ երկրի սառած լինելու պատճառով անկարող ենք ըմբռնել նախնական ստեղծագործութեան հրաշալիքը, որովհետև երկրի երեսը ժայթքող կրակն արդէն հանգել է, այնպէս էլ պատմական բացատրութիւնները թոյլ են այն տեղերում, որտեղ հարկ է լինում՝ մեր վախկոտ գործողութիւնների հիման վրայ՝ գաղափար կազմել այն ստեղծագործող շրջանների մասին, որոնք տնօրինում են մարդկութեան վիճակը։ Բաբելոնի գերութիւնից սկսած մինչև միջին դարերը՝ հրէական ազգն անընդհատ խիստ լարուած դրութեան մէջ էր։ Ահա թէ ինչու ժողովրդական ոգու պահապաններն այդ երկարատև շրջանի ընթացքում այնպէս են գտւում, որ կարծես տենդային զառանցանքի մէջ լինեն, և այդ պատճառով էլ նրանց գրուածքները սովորական դատողութիւնից կամ բարձր են և կամ, ընդհակառակը, ստոր։ Աշխարհում դեռ ևս չի ծնուել մէկը, որ իր ապագայ բաղդի հանելուկին այնքան բուռն և այնքան ծայրայեղ վճռականութեամբ մօտենար, որքան հրէայ ժողովուրդը։

Առանց բաժանելու մարդկութեան բաղդն իրենց փոքրիկ ցեղի բաղդից, հրէայ մտածողները մարդկային ազգի յառաջադիմական շարժման տեսութեան առաջին հիմնադիրներն եղան։ Յունաստանը, կենտրոնանալով իր մէջ և զբաղուած լինելով միայն իր փոքրիկ քաղաքների վէճերով, թէպէտ ունէր լաւ պատմաբաններ, բայց ի զուր կը լինի մեր աշխատանքը, եթէ հռովմէական տիրապետութիւնից առաջ այդ երկրում որոնենք պատմական սիստեմատիքական այնպիսի փիլիսո-

փայութիւն, որ ամբողջ մարդկութեանը վերաբերէր։ Հրէայ ժողովուրդը, ընդհակառակը, իր մտքի մի տեսակ մարգարէական կազմի շնորհիւ, կրօնի մէջ պատմութիւն է տեսնում։ Գուցէ հէնց իր ուղեղի այդ կազմութիւնը նա որոշ չափով պարտական է Պարսկաստանին։ Պարսկաստանը, շատ հին ժամանակներից սկսած, մարդկութեան պատմութեան մէջ տեսնում է բարեշրջումների հետևողականութիւն, որոնցից ամեն մէկն ունի իր մարգարէն։ Իւրաքանչիւր մարգարէ կառավարում է 1000 տարի, և այդ յաջորդաբար հետևող դարերից կազմւում է անցքերի այն թելը, որի շնորհիւ նախապատրաստւում է Որմիզդի թագաւորութիւնը։

Ժամանակների վերջը, երբ յեղաշրջումների շրջանները վերջանան, վերջնականապէս տիրապետելու է դրախտը։

Մարդիկ միայն այն ժամանակ են երջանիկ լինելու։ Երկիրը ամբողջապէս մի հարթութիւն է դառնալու։ Ամենքի համար միայն մի լեզու, մի օրէնք և մի թագաւորութիւն պիտի գոյութիւն ունենայ։ Բայց այդ ժամանակից առաջ սարսափելի դժբաղդութիւններ են տեղի ունենալու։ Դահակը (պարսից չար ոգին) կոտրելու է իր շղթաները և դէպի աշխարհս է խոյանալու։ Մարդկանց մխիթարելու և մեծ իրողութեանը նախապատրաստելու համար երկու մարգարէ են գալու։

Այս գաղափարներն ամեն տեղ պտտելով հասան Հռովմ և այնտեղ մի շարք մարգարէական պօէմաներ ներշնչեցին։ Այդ պօէմաների հիմնական գաղափարն էր պատմութիւնը շրջանների բաժանել, իւրաքանչիւր շրջանը կառավարող աստուծուն փոխել, ինչպէս և տիեզերքի կատարեալ նորոգութիւնն ու ոսկեդարի վերջնական թագաւորութիւնը։

Դանիէլի, Ենովքի գրքերն ու Սիվիլլի գրքի մի մասը նոյն տեսութիւնն էին քարոզում հրէաներին։

Սկզբում այդ գաղափարներն ընդունելութիւն չգտան ամենքի կողմից, և միայն վառ երևակայութեան տէր մարդիկ ընդունեցին, մարդիկ՝ որոնք հակումն էին ցոյց տալիս դէպի բացառիկ վարդապետութիւնները։ Եսթերի գրքի միակողմանի ու չոր հեղինակը եթէ մտածում է մարդկութեան մասին, այն էլ այն դէպքում միայն, երբ ատելութիւն ու

չարութիւն է արտայայտում: Սանձարձակ եպիկուրեանը, որը Էկլեզիաստոն է գրել, ապագայի մասին այնքան քիչ է մտածում, որ մինչև անգամ աւելորդ է գտնում իր որդոց համար հոգս տանել. այս եսասէր ու ամուլի մարդու աչքում իմաստութեան վերջին խօսքը համարւում էր կեանքի բարիքներից օգտուելը:

Բայց մեծ գործերը միշտ էլ իւրաքանչիւր ազգում փոքրամասնութեան ձեռքով են կատարւում: Զօր, եսասէր, հեգնող, խիստ, միակողմանի և խորամանկ հրէական ազգը՝ չնայած իր անհագին պակասութիւններին՝ ստեղծել է ոգևորութեան ամենաանշահասէր մի շարժում, որի նմանը պատմութեան մէջ բնաւ չի յիշատակուած: Ամբոխի կողմից ընդունուած գաղափարների դէմ կռիւ մղողները երկրի փառքն են կազմում միշտ: Որևէ ազգի ամենամեծ մարդիկն իսկապէս նրանք են, որոնց հէնց նոյն ազգը մահուան է դատապարտում: Սոկրատէսը Աթէնքի փառքն էր, մինչդեռ յոյներն անկարող եղան նրա հետ ապրել: Սպինոզան ժամանակակից հրէաներից ամենամեծն էր, և, չնայած այդ բանին, սինագոգը նրան անպատուելով արձակեց: Յիսուսն Իսրայէլի փառքն էր, չնայելով որ այդ ազգը նրան խաչ հանեց:

Դարեր շարունակ մի հոյակապ երազ հետևում է հրէական ցեղին և վերանորոգում նրան:

Հեթանոսական քաղաքակրթութեանն օտար Հրէաստանն իր սիրոյ բոլոր ոյժն ու բոլոր խանդը կենտրոնացրեց միմիայն իր ազգի ապագայի վրայ: Հրէաները հաւատում են, որ աստուածային խոստումները նրանց անսահման ապագայ են գուշակում: Բայց քանի որ դառն իրականութեան շնորհիւ, սկսած 17-րդ դարից, անընդհատ մինչև ներկայ շրջանը հեռզհետէ երկրի իշխանութիւնն անցնում է կոպիտ ոյժի ձեռքը և ոչնչացնում նրանց ամենալաւ յոյսերը, ուստի Հրէաստանն ամենաանիրագործելի գաղափարներից է կպչում և անձնատուր լինում ամենատարօրինակ ձգտումների:

Գերութիւնից առաջ, երբ՝ հիւսիսային տոհմերի բաժանման պատճառով՝ այդ ազգի ամբողջ երկրաւոր ապագան խորտակուեց, հրէաները սկսեցին երազել Դաւթի տան վերականգնումը, երկու բաժանուած մասերի միացումը, ինչպէս և

աստուածային պետութեան և Եհովայի ծիսակատարութեան յաղթանակումն ընդդէմ հեթանոսութեան: Բաբելոնի գերութեան ժամանակ ապրող ոգևորուած բանաստեղծն ապագայ Երուսաղեմի փառքն այնպիսի խաղաղ տեսարաններով է պատկերացնում, որ կարծես թէ Յիսուսի հայեացքների լուսաւոր ճառագայթները թափանցել են այդ վեցդարեան ժամանակամիջոցը և իրեն՝ այդ բանաստեղծին հասել: Նրա ասելով, Երուսաղէմի փառքն է կազմելու այն իրողութիւնը, որ հեռաւոր ազգերն ու երկիրները հարկատու են լինելու այդ քաղաքին: Կիւրոսի յաղթութիւնը, կարծես, մի ժամանակ այդ բոլոր յոյսերն իրագործեց: Զէնդ-Աւեստի աշակերտներն ու Եհովայի երկրպագուները միմեանց ճանաչէին որպէս եղբայր: Պարսկաստանը, կարծես մի տեսակ միաստուածեան դարձաւ: Իսրայէլի ցեղն Աքիմենիդների իշխանութեան տակ շունչ առաւ, իսկ Կսերքսէսի ժամանակ իրանցիներին մինչև անգամ երկիւղ էր ազդում: Բայց յունական ու հռովմէական քաղաքակրթութիւնը երբ յաղթականօրէն և մասամբ էլ կոպտաբար ներս խուժեց Ասիայի սահմանները, այն ժամանակ Իսրայէլի ցեղը կրկին նախկին երազների մէջ խորասուզուեց: Այժմ աւելի, քան երբևիցէ, նա կանչում էր Մեսիային, որպէս զի այս վերջինս դատի բոլոր ազգերին և վրէժխնդիր լինի նրանցից:

Հրէաների համար անհրաժեշտ էին կատարեալ վերանորոգութիւն և արմատական յեղաշրջում, որպէս զի այդ ազգը կարողանար յագեցնել վրէժխնդրութեան այն անսահման ծարաւը, որ առաջանում էր նրա մէջ ինչպէս իր գերազանցութիւնը գիտակցելուց, նմանապէս և ստորացած դրութեան զգացումից: Յիսուսը՝ հէնց որ հասունացաւ՝ ընկաւ Պաղեստինում այդ գաղափարների ստեղծած կրակոտ շրջանը:

Վերոյիշեալ գաղափարները ոչ մի դպրոցում չէին աւանդւում: Բայց նրանցով լի էր մթնոլորտը, և Յիսուսի միտքը հէնց մանկութիւնից էր սնուել այդ գաղափարներով: Նրան երբեք չեն զբաղեցրել մեր մտածութիւններն ու կասկածները: Նազարէթի լեռների բարձրութեան վրայ, ուր մեր ժամանակում ոչ ոք չի կարող նստել և չպաշարուել իր ապագային վերաբերեալ տանջող մտքերով, Յիսուս առանց

որեւէ կասկածի՝ յաճախ է երազել։ Նա ազատ էր այն եսասիրութիւնից, որը ներկայումս մեր տանջանքների աղբիւրն է. Նա մտածում էր միայն իր գործի, իր ցեղի և ամբողջ մարդկութեան մասին։ Այդ լեռները, այդ ծովը, այդ կապուտակ երկինքը, հորիզոնի վրայ երեւացող այդ բարձրութիւնները Յիսուսի համար ոչ թէ մի մելամաղձոտ հոգու տեսիլքներ էին, մելամաղձոտ հոգի՝ որ բնութիւնից տեղեկութիւններ է խնդրում իր բաղդի մասին,—այլ միայն ազդանշանն ու թեթեւ ստուերն էին այն անտեսանելի աշխարհի և նոր երկնքի, որոնց մասին էր երազում Յիսուս։ Նա իր ժամանակի քաղաքական անցքերին մեծ նշանակութիւն չէր տալիս և, հաւանօրէն, նրանց մասին այնքան էլ գաղափար չունէր։

Հերովդէսի տոհմի վարած կեանքի մասին Յիսուս գաղափար էր կազմել միմիայն սրանից-նրանից լսելով և առհասարակ ծանօթ չէր այդ կենցաղավարութեանը։ Հերովդէս Մեծը մեռաւ Յիսուսի ծնուած տարում և, շնորհիւ իր կառուցած շէնքերի, անմահ անուն թողեց։ Այդ թագաւորի նոյն իսկ հակառակորդները յետագայում նրա անունը, շնորհիւ այդ շինութիւնների, Սողոմոնի անուան կարգը դասեցին։ Այսու ամենայնիւ Հերովդէսի սկսած գործը կիսատ մնաց և անկարելի եղաւ շարունակել։ Արտակարգ փառասիրութիւն ունենալով և ստիպուած լինելով կատաղի ֆանատիկոսների դէմ կրօնական կռիւ մղել, այս նենգամիտ իդումէացին յաջողութիւն գտաւ, յաջողութիւն՝ որ միշտ վիճակւում է այնպիսի անձերի, որոնք ինքնավստահ են, խելօք և զուրկ բարոյական զգացումներից։

Բայց նրա՝ իսրայէլական թագաւորութիւն հիմնելու գաղափարը եթէ մինչև անգամ այդ միջոցին անժամանակ չլինէր՝ այնուամենայնիւ հրէաների բնաւորութեանն առանձնայատուկ որոշ գծերի շնորհիւ Հերովդէսի այդ ծրագիրը կարժանանար նոյն բաղդին, որով Սողոմոնի համանման ծրագիրը խորտակուեց։ Նրա երեք որդիները ճիշտ այնպէս էին ծառայում Հերովդէսին, ինչպէս այժմ հնդկական ռաջաներն անգլիացիներին։ Անտիպատրոսը կամ Անտիպասը, որը Գալիլիայի ու Պիրէայի չորրորդապետն էր և որի իշխանութեան տակ էր գտնւում Յիսուսն իր ամբողջ կեան-

քում, Տիբերիոսից սիրուած ու նրան շողոքորթող, մի ծոյլ ու ոչինչ մարդ էր և շատ յաճախ իր երկրորդ կնոջ՝ Հերովդիադայի ազդեցութեանն էր ենթարկւում։

Փիլիպպոսը, որ Գոլոնիայի և Բեթանիայի չորրորդապետն էր և որի երկիրներով Յիսուսը յաճախ էր ճանապարհորդում, աւելի արժանաւոր կառավարիչ էր։ Գալով Արքեղայոսին, որը Երուսաղէմի շրջանապետն էր, Յիսուս չէր կարող նրան ճանաչել։ Նա դեռ ևս 10 տարեկան էր, երբ Օգոստոս կայսրն այդ թոյլ, կամազուրկ և մասամբ էլ բռնակալ իշխանին պաշտօնանկ արաւ և այդպիսով Երուսաղէմի ինքնավարութեանը վերջ դրեց։ Հրէաստանը, Սամարիայի ու Իդումէայի հետ միասին, սիրիական նահանգի մի մասը կազմեց, որտեղ սենատոր Պուբլիս Սուլպիցիս Կվիրինիուսը կայսերական տեղակալ էր կարգուած և, հիւպատոսական աստիճան ունենալով, բաւական յայտնի մի անձնաւորութիւն էր։ Հրէաստանի կառավարիչ նշանակուեցին միմեանց յաջորդող և նշանաւոր հարցերում սիրիական տեղակալին ենթակայ մի կարգ հռովմէական իշխանաւորներ,—Կանոնիուս, Մարկոս Աւիդիոս, Ապիոս Ռուֆոս, Վալերիոս Գրատոս և, վերջապէս (մեր ներկայ տարեհաշուի 26-դ թուականին), Պոնտացի Պիղատոս,—որոնք անընդհատ զբաղուած էին հանդցնելով այն հրաբուխը, որ ամենայն օր նրանց առաջ բռնկւում էր։

Իսկապէս այն խառնակութիւնները՝ որոնք շարունակ առաջանում էին մովսիսական օրէնքի մոլեռանդ պաշտպանների ձեռքով՝ Երուսաղէմն անհանգիստ դրութեան մէջ էին պահում միշտ։ Խառնակիչները պատժւում էին անխուսափելի մահով. բայց երբ խօսքը վերաբերում էր օրէնքի անձեռնմխելիութեանը, այդ մահը համարւում էր որպէս ամենացանկալի վարձատրութիւն, որը մեծ հաճոյքով էին դիմաւորում նրանք։ Այդ խառնակութիւններն արտայայտւում էին նրանով, որ մոլեռանդ ամբոխը ոտնատակ էր տալիս հռովմէական զինանշանը, քանդում-խորտակում էր Հերովդէսեանների՝ մովսիսական օրէնքը երբեմն խախտելով՝ կառուցած շինութիւնները, պոկում էր իշխանաւորի (պրոկուրատոր)՝ պատերից կախ անել տուած՝ դրօշմաւոր վահանները, եթէ դրանց

վրայ գրուած էին լինում ամբոխի աչքում կռապաշտութեան նշոյլ կրող յայտարարութիւններ։ Եւ, այդպիսի դէպքերում, ամբոխի կատաղութեան չափն ինքնապաշտպանութեան զգացման սահմանից էլ էր անցնում։ Արիքէյների որդի Յուդան և Մարգալոտների որդի Մատթէոսը, երկուսն էլ բաւականաչափ յայտնի օրէնուսոյցներ, այդպիսի բողոքող ցոյցեր սարքելով՝ կազմակերպեցին մի կուսակցութիւն, որն իրերի ժամանակակից դրութեան դէմ բաւական զօրեղ դիմադրութիւն էր ցոյց տալիս։ Այդ կուսակցութիւնը, վերոյիշեալ Յուդայի և Մատթէոսի՝ մահուան դատապարտուելուց յետոյ էլ, շարունակեց իր գործունէութիւնը։ Սամարիան էլ միևնոյն տեսարանն էր ներկայացնում։ Կարծեօք՝ Օրէնքը երբէք այնքան բազմաթիւ և անձնուէր պաշտպաններ չի ունեցել, քան այն միջոցին, երբ Յիսուսը յայտնուեց իր հանճարի ամբողջ կարողութեամբ և հոգու բոլոր ուժով փոխելու համար այդ օրէնքը։ Սկսեցին երևան գալ այսպէս կոչուած «զիլոտ»-ները (նախանձախնդիր) կամ «սիկարիա»-ները, աստուածասէր մարդասպաններ, որոնք սպանում էին իրենց ներկայութեամբ օրէնքը խախտող մարդկանց։ Նոյնպէս երևան եկան «տրաումատուրգ»-ները (հրաշագործ), որոնք բոլորովին ուրիշ նպատակ ունէին. նրանք իրենց այնպէս էին ցոյց տալիս, որպէս թէ Աստուծուց ներշնչուած լինեն, և, օգտուելով ժամանակի ոգուց, հասարակութեան ուշադրութիւնը գրաւում էին հրաշքներ գործելով։

Յիսուսի վրայ ամենից աւելի ազդեց Յուդայի շարժումը, Յուդայի՝ որը Գոլոնացի կամ Գալիլիացի էր կոչւում։ Հռովմն իր նոր նուաճած երկիրներից պահանջներ էր անում։ Այդ պահանջներից ամենահակաժողովրդականը՝ այսպէս կոչուած ցենզը կամ կալուածական աշխարհագիրն էր, որը միշտ ապշեցնում էր նոր նուաճուած ժողովուրդներին, որովհետև այս վերջինները սովոր չէին հարկային այն սիստեմներին, որոնց առհասարակ ենթարկւում էին այն ժամանակ առաջին կենտրոնացած պետութիւնների կողմից։ Իսկ հարկահանութեան այդ ձևն առանձնապէս ատելի էր հրէաներին։

Դեռ ևս Դաւթի թագաւորութեան օրով նկատելի էր, որ աշխարհագիրը մարգարէների կողմից խիստ գանգատ-

ներ և սպառնալիքներ է առաջ բերում։

Իսկապէս աշխարհագրի հիմնական պատճառը հարկահանութիւնն է, իսկ հարկահանութիւնն աստուածպետութեան տեսակէտից համարեա հայհոյել էր նշանակում Աստուծուն։ Հրէաների տեսակէտով՝ միակ պետը Աստուած է, որին միայն պէտք է ճանաչեն մարդիկ, ուրեմն աշխարհական թագաւորին հարկ տալը նշանակում է Աստուծոյ տեղ դնել նրան։ Պետութեան գաղափարին բոլորովին խորթ լինելով՝ հրէական աստուածպետութիւնը հետևողականօրէն ժխտում էր ինչպէս քաղաքացիական շրջանը, նոյնպէս և որևէ իշխանութիւն։ Իսկ հասարակութիւնից հարկ հաւաքելը գողութիւն էր համարւում։

Կվիրինիոսի յայտարարած աշխարհագրի (քրիստոնէական տարեթուի 6-րդ տարում) շնորհիւ, այդ գաղափարները յանկարծ վերարծարծուեցին և ամբոխի շրջանում չափազանց մեծ խառնակութիւն առաջ բերին։ Ապստամբութիւնն սկսուեց հիւսիսային նահանգներից։ Յուդան, որ Տիբերական լճի արևելեան ափին գտնուող Գամալի քաղաքից էր, և Սադոկ անունով մի փարիսեցի՝ հարկահանութեան օրինականութիւնը ժխտելով՝ մի մեծ կուսակցութիւն կազմեցին, որը շուտով ապստամբութիւն առաջ բերեց։ Այդ դպրոցի հիմնական սկզբունքը հետևեալն էր. ոչ ոքի չպիտի տէր կոչել, որովհետև այդ տիտղոսը միայն Աստուծուն է պատկանում, և ազատութիւնը պէտք է գերադասել կեանքից։ Անկասկած՝ Յուդան ուրիշ սկզբունքներ էլ ունէր, որոնց մասին Յովսէփ Ֆլաւիոսը՝ որ միշտ մարդկանց առաջ բարձրացնում էր իր հաւատակիցների վարկը՝ դիտմամբ լռում է. այլապէս անհասկանալի կը լինի, թէ ինչպէս է լինում, որ այդպիսի հասարակ սկզբունքի համար հրէայ պատմագիրը նրան իր ազգի փիլիսոփաների կարգն է դասում և յանձին նրա տեսնում է չորրորդ մեծ դպրոցի հիմնադիրը, դպրոց՝ որ համազօր է փարիսեցիների, սադուկեցիների և եսէացիների ուղղութիւններին։ Յուդան, հաւանօրէն, գլուխ էր անցել գալիլիական մի հերձուածի, որը ամբողջովին գրաւուած էր Մեսիայի գալստեան գաղափարով և իրեն նպատակ էր դրել հրէաների քաղաքական շարժումը։ Իշխանաւոր Կանոնիոսը ճըն-

շեց Գոլոնացու ապստամբութիւնը, բայց նրա դպրոցը մնաց և ունեցաւ իր ղեկավարները։ Այդ հերձուածը, Յուդայի որդի Մենաքեմի և ինչ-որ նրա ազգական Եղիազարի առաջնորդութեամբ, եռանդուն գործունէութիւն ցոյց տուեց հրէաների և հռովմայեցիների միջև տեղի ունեցած վերջին կռիւների ժամանակ։

Յիսուս գուցէ տեսած լինի այդ Յուդային, որ հրէական յեղափոխութիւնն իրենից այնքան տարբեր էր ըմբռնում. յամենայն դէպս նրան ծանօթ էր Յուդայի ուղղութիւնը, և, հաւանօրէն, նրա մոլորութիւնների դէմ յարուցուած ռէակցիայից դրդուած՝ Յիսուս արտասանեց իր նշանաւոր ասացուածքը կեսարի դահեկանի մասին։ Խելամիտ Յիսուսը, հեռու լինելով խառնակութիւն առաջացնելու որևէ մտքից, չկրկնեց իր նախորդի սխալները և քարոզեց մի ուրիշ թագաւորութիւն, մի ուրիշ ազատութիւն։

Այսպիսով՝ Գալիլիան ներկայացնում էր մի անհագին հընոց, որի մէջ եռում և ալեկոծւում էին զանազան բազմատեսակ տարրեր։

Այդ շարժումների հետևանքն այն եղաւ, որ ժողովուրդն սկսեց անբնական ատելութիւն տածել դէպի կեանքը, աւելի ճիշտն ասած՝ սկսեց մահուան տարօրինակ ծարաւ զգալ։ Մոլեռանդութեան մեծ շարժումների միջոցին անցեալի փորձերը ոչ մի նշանակութիւն չունեն և երբեք դաս չեն ծառայում։ Այսպէս՝ երբ ֆրանսիացիներն Ալժիրն առաջին անգամ գրաւեցին՝ այդ երկրում իւրաքանչիւր գարնանը յայտնւում էին ամբոխը ոգևորող նորանոր հերոսներ, որոնք իրենց յայտարարում էին թէ անխոցելի և թէ յատկապէս Աստուծոյ ուղարկուած՝ հեթանոսներին իրենց երկրից քշելու համար։ Հետևեալ տարին նրանց մահը մոռացւում էր, իսկ նրանց յաջորդը նոյն հաւատքն էր վայելում ամբոխի շրջանում։

Որքան էլ ծանր լինէր հռովմէական լուծը, այնուամենայնիւ բաւականաչափ ազատութիւն էր տալիս, որովհետև ցանկանում էր փոքրիկ գլխացաւանքներից ազատ մնալ։ Կոպիտ ուժի այս ամենի ներկայացուցիչը՝ որն իր հակառակորդին ընկճելու ժամանակ անչափ սարսափելի էր՝ ամենևին այնքան կասկածոտ չէր, որքան այն կառավարութիւնները,

որոնք ձգտում են պահպանելու վարչական այս կամ այն սկզբունքը։ Նա սանձը թուլացնում էր և գործողութիւնների կատարեալ ազատութիւն էր տալիս մինչև այն ժամանակ, երբ հարկ էր համարում խստութիւն բանեցնել։

Ոչ մի գրքում չի յիշատակուած, թէ ոստիկանութիւնը որևէ տեղ Յիսուսի առաջ խոչընդոտներ յարուցանէր նրա շրջելու ժամանակ։ Բացի այս ազատութիւնից, Գալիլիան վայելում էր և մի ուրիշ առաւելութիւն, որը կայանում էր այն բանում, որ այդ երկիրը Հրէաստանի միւս մասերից աւելի քիչ էր ենթարկւում փարիսեցիական բծախնդրութեանը և այդ տեսակէտից աւելի բարձր էր կանգնած, քան Երուսաղէմը։ Յեղափոխական գաղափարները կամ, ուրիշ խօսքով, մեսիականութիւնն այնտեղ սկսեց վարակել բոլոր ուղեղները։ Ամենքն օրէ ցօր մեծ վերածնութեան էին սպասում։ Սուրբ գրքի այլևայլ տարբեր բացատրութիւններն այդ մեծ ակընկալութեանը նշանաւոր չափով նպաստում էին։

Հրէաները Հին Ուխտի պարզ գրուածքների իւրաքանչիւր տողի մէջ մի-մի խոստում էին տեսնում, մինչև անգամ ապագայ թագաւորութեան այն ծրագիրը, որը պիտի արդարներին խաղաղութիւն պարգևէր և աստուածային գործը մշտապէս հաստատէր։

Այն հանգամանքը, որ հրէական ամբողջ ազգը երկու հակառակ բանակների էր բաժանուած միշտ, այսինքն մտաւոր ու գործնական բանակների, առհաւատչեայ էր նրա բարոյական կազմի բեղմնաւոր լինելուն։ Իւրաքանչիւր ժողովուրդ, որ կոչուած է մի բարձր նպատակ իրագործելու, պէտք է իր մէջ պարունակէ երկու հակառակ բևեռներ։

Յունաստանում մենք տեսնում ենք իրարից ոչ հեռու Սպարտան ու Աթէնքը, որոնք մակերևութապէս դիտողի համար երկու հակադիր, բայց էապէս երկու ախոյեան քոյրեր են և միմեանց վերաբերմամբ համահաւասար անհրաժեշտ։ Նոյնը կատարւում էր Հրէաստանում։ Թէև Հիւսիսային Հրէաստանն այնչափ չզարգացաւ, որչափ Երուսաղէմը, բայց լաւ արդիւնքներն այնտեղից ստացուեցին։ Բնութիւնն ըմբռնելու կատարեալ բացակայութիւնը՝ որ մարդկանց անզգայ և մինչև անգամ վայրենի է դարձնում՝ իսկական երու-

սաղէմական բոլոր արտադրութիւններին հոյակապ, բայց միևնոյն ժամանակ տխուր և վանող տեսք էր տալիս։

Գոռոզ գլտուններ, մոլեռանդ քահանայապետներ, երեսպաշտ և մաղձոտ փարիսեցիներ ունեցող Երուսաղէմը չէր կարող մարդկութիւնը նուաճել։

Իսկ Հիւսիսային Հրէաստանն աշխարհին տուեց միամիտ Սիւղեմացուն, բարեպաշտ քանանուհուն, կրքոտ Մագթաղինացուն, բարի Յովսէփին և կոյս Մարիամին։ Հրէաստանի հիւսիսն էր միայն, որ քրիստոնէութեան օրօրանն եղաւ։ Երուսաղէմը, ընդհակառակը, յամառ հրէութեան խոկական հայրենիքն է, որը, հիմնուած լինելով փարիսեցիների ձեռքով և հաստատուած՝ Թալմուտով, այդպէս անցաւ միջին դարերի շրջանը և հասաւ մինչև մեր օրերը։ Միայն Հիւսիսային Հրէաստանի սքանչելի բնութիւնը կարող էր օժանդակել այդ ոչ այնքան խիստ և, եթէ կարելի է այդպէս ասել, ոչ այնքան միաստուածեան ոգու կազմուելուն, ոգի՝ որը Գալիլիայի բոլոր երազներին սքանչելի հովուերգի նմանութիւն էր տալիս։ Երուսաղէմն իր շրջակայքով, ամենայն համարձակութեամբ, կարելի է աշխարհիս ամենավշտահար երկիրը համարել, իսկ Գալիլիան՝ ընդհակառակը՝ կանաչազարդ, ստուերախիտ, զուարթ, կատարելապէս Երգ-երգոցի սիրահարի երկիրը։

Մարտ և ապրիլ ամիսների ընթացքում այստեղի դաշտերը պատկերացնում են գոյնզգոյն և նրբին ծաղիկներից կազմուած միապաղաղ մի գորգ։ Կենդանիները թէպէտ մանր, բայց հեզ են։ Քնքոյշ ու կայտառ տատրակն ու երկնագոյն կեռնեխներն այնքան թեթև են, որ, թառելիս, խոտն անգամ նրանց ծանրութեան տակ չի ծռւում։ Այստեղ կան և փուփուլաւոր արտոյտներ, որոնք յաճախ անցորդի ոտների մօտով են թռչում, ինչպէս և աշխոյժ ու խելօք նայուածքով փոքրիկ կրիաներ և խորամիտ կռունկներ։ Սրանք ամենքն այնպէս ընտանեբար մօտենում են մարդկանց, որ կարծես թէ վերջիններս իրենց մօտ կանչելիս լինեն նրանց։ Ոչ մի երկրում լեռներն այնպիսի գեղարուեստական դիրք չունեն և այնչափ բարձր մտքեր չեն ներշնչում մարդկանց, ինչպէս այստեղ։ Յիսուս, կարծեօք, ամենից շատ այս լեռներն էր սի-

րում։ Նրա աստուածային կեանքի ամենանշանաւոր դէպքերն այս լեռների վրայ են տեղի ունեցել։ Այստեղ էր նա ոգևորւում, այստեղ էր գաղտնապէս խօսակցում հին մարգարէների հետ և հէնց այստեղ էլ այլակերպուած երևեցաւ իր աշակերտներին։ Այդ գեղատեսիլ վայրը Յիսուսի ժամանակ աւելի առատ էր բարիքներով։ Իսկ այժմ, իսլամական աւերումների պատճառով, վերին աստիճանի խղճալի ու դաժան տեսք է ընդունել։ Բայց՝ չնայած դրան՝ այն ամենը, ինչ որ մարդիկ չկարողացան այլանդակել, ներկայումս էլ հանգստութիւն և վայելք են ներշնչում։ Գալիլիացիք եռանդուն, քաջ և աշխատասէր մարդիկ էին։ Եթէ չհաշուենք հռովմէական ճարտարապետական ոճով կառուցուած Տիբերիադան, որ, ի պատիւ Տիբերիոսի, Անտիպասն էր կառուցել (մօտաւորապէս Քրիստոսի 15-րդ թուականին), այն ժամանակ Գալիլիայում ոչ մի մեծ քաղաք չենք տեսնիլ։

Չնայած դրան՝ երկիրը ծածկուած էր մանր քաղաքներով ու մեծ գիւղերով և լաւ մշակուած էր։ Ներկայումս դեռ գոյութիւն ունեցող աւերակների հիման վրայ կարելի է ասել, որ այդ ազգաբնակութիւնը պարապում էր երկրագործութեամբ և թէև անընդունակ էր արուեստի, չէր սիրում փարթամ ապրել և անտարբեր էր ճարտարարուեստի նկատմամբ, բայց հակուած էր դէպի գաղափարականութիւն։

Երկիրը ջրարբի էր և պտղառատ. ընդարձակ ագարակները շրջապատուած էին խաղողի որթերով և թզենիներով. այգիները ծածկուած էին խնձորենիներով, ընկուզենիներով և նռնենիներով։

Գինին, եթէ համեմատենք այժմեան Սայիդում պատրաստուող գինու հետ, գերազանց էր և շատ էր գործածւում։

Այս ինքնագոհ և դիւրութեամբ գոհացում ստացող կեանքը մեր գիւղացիների նիւթապաշտութեանը ոչնչով չէր նմանում. այդ կենցաղը նման չէր ոչ նորմանդական գիւղերի կոպիտ հաճոյքներին և ոչ էլ ֆլամանդցիների ծանրակշիռ ուրախութեանը։

Այդ կեանքը ոգևորւում էր օդային երազներով և բանաստեղծական միստիքականութեամբ, երկինքն ու երկիրը ի մի ձուլելով։ Թող խստասիրտ Յովհաննէս Մկրտիչն իր անապա-

տում քարոզէ մարդկանց ապաշխարել, ամէն բան՝ քարուքանդ անի և շնագայլների հետ միասին մորեխով կերակրուի։ Մի՞թէ հարսանքի տան զաւակները պիտի սգան, երբ փեսան իրենց հետ է։ Ուրախութիւնն Աստուծոյ Թագաւորութեանն է պատկանելու։

Եւ մի՞թէ այդ նոյն ուրախութիւնը հոգով աղքատների և սրտով հեզերի բաժինը չի լինելու։

Այսպիսով՝ ծնունդ առնող քրիստոնէութեան պատմութիւնը դառնում է մի սքանչելի հովուերգութիւն։

Մեսիան հարսանիքի խնճոյքին ներկայ էր. ճաշկերոյթին հրաւիրուել էին և՛ մեղաւոր կինն ու բարի Զաքէոսը. սրանք էին ահա երկնային Թագաւորութեան հիմնադիրները և ուրախ-զուարթ խնճոյք էին անում։ Ահա ինչ բանի յանդգնեց և ինչ թոյլատրեց Գալիլիան։

Յունաստանը քանդակագործութեան և բանաստեղծութեան միջոցով մարդկային կեանքի զարմանալի պատկերներ է գծել, բայց նրանց մէջ մտքի բաւականաչափ խորութիւն և լայն աշխարհահայեացք չկային։ Դրա համար բաւական չեն մարմարիոն, ճարպիկ բանւորներ և ճոխ ու մշակուած լեզու։

Իսկ Գալիլիան, ժողովրդական երևակայութեան շնորհիւ, ստեղծեց մի հոյակապ իդէալ, որի հովուերգութեան մէջ հեռուից նշմարւում է մարդկութեան ապագան, և այդ պատկերը լուսաւորող լոյսն Աստուծոյ Թագաւորութեան լոյսն է։

Յիսուս ծնուեց և ապրեց այդ կախարդիչ մթնոլորտում։ Փոքր հասակից սկսած՝ ամէն տարի տօներին նա Երուսաղէմ էր գնում։ Գաւառաբնակ հրէաների համար այդ ճանապարհորդութիւնները հանդիսաւոր էին լինում։ Շատ սաղմոսներ էին նուիրուած այդ ճանապարհորդութիւնների սքանչելի նկարագրութեանը, ուր պատմւում էր, թէ ինչպէս ամբողջ ընտանիքներ գարնանային պայծառ եղանակին սար ու ձոր էին ընկնում միմիայն նրա համար, որ Երուսաղէմի փառքը տեսնեն, տաճարի նախադռան առաջ սարսուռ զգան և ազգակիցներով շրջապատուած լինելու ուրախութիւնը ճաշակեն։ Այն ճանապարհը՝ որով ուղևորւում էր Յիսուս՝ անցնում էր, ինչպէս և այժմ, Գինէայի և Սիւքեմի միջով։

Այդ ճանապարհը Սիւքեմից սկսած մինչև Երուսաղէմ շատ մռայլ է։ Բայց՝ շնորհիւ այն հանգամանքի, որ ճանապարհի վրայ ընկած են հին սրբավայրեր, Սիւղեմն ու Բեթելը՝ ուղևորն իր հոգու զուարթութիւնը պահպանում է։ Վերջին կայանը, որ կոչւում է Էյն-էլ-Հարամիէ, մի մելամաղձոտ, բայց գեղատեսիլ վայր է, և շատ քիչ տպաւորութիւն կարող է հաւասարուել այն տպաւորութեանը, որ մարդ այդտեղ, գիշերային հանգստի համար իջևանելիս, զգում է։ Ձորը նեղ ու մռայլ է, թխագոյն ջուրը վազում է ժայռերով, որոնք ծածկուած են գերեզմաններով, իսկ այս վերջինները պատուար են կազմում ջրի առաջ։ Հաւանօրէն սա է ծարող ջրի կամ «արցունքի հովիտը», որի մասին երգուած է Դաւթի սաղմոսի ՁԴ գեղեցիկ գլխում և որը կայաններից մէկն է ու տխուր միջին դարերում կեանքի խորհրդանշան էր դարձել։

Այստեղից ճանապարհ ընկնելով՝ հետևեալ օրը վաղ առաւօտեան կարելի է Երուսաղէմում լինել։ Այդ յոյսի ազդեցութեան տակ՝ կարաւանն այժմ էլ զուարթանում է, իսկ նրա քունը թեթևանում, որովհետև նրան այնպէս է թւում, թէ գիշերը կարճանում է։

Այս ուղևորութիւնների շնորհիւ՝ մտքերի կենդանի փոխանակութիւն էր պահպանւում մարդկանց միջև։ Այդ ճանապարհորդութիւնները հրէական ամբողջ ազգի մեծ շարժման որպէս կենտրոնավայր էին ծառայում, և դրանց շնորհիւ Յիսուս ծանօթացաւ ժողովրդի ոգուն ու, անկասկած, մեծ զզուանք զգաց մոլեռանդութեան պաշտօնական ներկայացուցիչների նկատմամբ։ Ասում են, թէ մատաղ հասակում Յիսուսի երկրորդ դպրոցն անապատն է եղել, ուր նա երկար ժամանակ է ապրել։ Բայց Յիսուսի այնտեղ տեսած Աստուածն իր Աստուածը չէր, այլ աւելի շուտ՝ Յոբի խիստ ու դաժան Աստուածը, որից փրկութիւն չկայ։ Սատանան երբեմն փորձում էր Յիսուսին։ Այն ժամանակ երիտասարդ վարդապետը վերադառնում էր իր սիրելի Գալիլիան և այնտեղ գտնում իր Երկնաւոր-Հօրը կանաչ բլուրների և վճիտ աղբիւրների, երեխաների ու կանանց ամբոխի շրջանում, որոնք ուրախ հոգով և հրեշտակային երգեր երգելով սպասում էին Իսրայէլի ազատութեանը։

ԳԼՈՒԽ Դ

Յիսուսի առաջին աֆորիզմները։—Նրա գաղափարները Հայր-Աստուծոյ եւ մաքուր կրօնի մասին։—Առաջին աշակերտները։

Յովսէփն իր որդու վաստակած ժողովրդականութիւնը չտեսած մեռաւ, և Մարիամը, նրա փոխարէն, իր ընտանիքի գլուխն անցաւ։ Ահա թէ ինչու նրա որդուն, շատ անուանակիցներից տարբերելու համար, «Մարիամի որդի» էին կանչում։ Շատ հաւանական է, որ Մարիամը, ամուսնու մահից յետոյ, իրեն օտար Նազարէթից տեղափոխուեց Կանա, որը գուցէ նրա ծննդավայրն էր։ Կանան՝ որ մի փոքրիկ քաղաք էր՝ Նազարէթից երկու կամ երկու ու կէս ժամուայ հեռաւորութիւն ունէր և գտնւում էր այն լեռների ստորոտին, որոնք հիւսիսից շրջապատում են Ազոխիս կոչուած դաշտավայրը։ Թէպէտ այստեղ տեսարանն այնքան էլ գրաւիչ չէ, ինչպէս Նազարէթում, այնուամենայնիւ դաշտավայրի կողմից բոլորովին բաց է, և, շնորհիւ այն հանգամանքի՝ որ այս բացատանը վերջանում է Նազարէթի գեղատեսիլ լեռներով և Սեֆորիսի շնորհալի բլուրներով, տեսարանը կախարդիչ գեղեցկութիւն է ստանում։ Ինձ թւում է, որ Յիսուս մի առժամանակ այստեղ է ապրել։ Այստեղ է անցել նրա երիտասարդութեան մի մասը և այստեղ է սկսուել նրա փառքը։ Նա էլ, իր հօր նման, արհեստով հիւսն էր։

Այդ զբաղմունքն արհամարհուած չէր բնաւ։ Հրէական սովորութեան համաձայն, մտաւոր աշխատանքով զբաղուող իւրաքանչիւր մարդ պարտաւոր էր սովորել նոյնպէս և մի որևէ արհեստ։ Ամենայայտնի գիտնականներն անգամ մի որևէ արհեստով պարապում էին. այսպէս՝ սուրբ Պօղոսը, որ հիանալի կրթութիւն էր ստացել, վրանագործ էր։

Յիսուս ամուրի էր։ Իր սիրոյ ամբողջ ոյժը նա նուի-

րեց այն բանին, ինչ ինքն իր երկնաւոր կոչումն էր համարում։ Այն չափազանց նուրբ զգացումը, որ Յիսուս տածում էր կանանց վերաբերմամբ, չի բաժանւում այն զգացումից, որով նա բացառապէս նուիրուած է իր գաղափարին։ Յիսուս էլ, Ֆրանչիսկոս Ասսիզացու և Ֆրանչիսկոս Սալիացու նման, իր վարդապետութեամբ գրաւուող կանանց հետ վարւում էր այնպէս, որպէս թէ իր քոյրերը լինէին. նա ունէր իր սուրբ Կլարաները, իր Ֆրանչիսկա Շանտալցիները։ Բայց պէտք է ենթադրել, որ այդ կանայք աւելի Յիսուսին էին սիրում, քան նրա գործը. անկասկած ինքն աւելի սիրուած էր, քան սիրում էր։ Ինչպէս որ յաճախ է պատահում վսեմ բնաւորութեան տէր շատ մարդկանց, Յիսուսի սրտի ամբողջ քնքշութիւնը փոխուեց անսահման հեզութեան և բանաստեղծական ու ամենքին թովող մի ինչ-որ բանի։

Ի՞նչ էր մտածում Յիսուս իր կեանքի այդ մթին շրջանում։ Ի՞նչ էր ուսուցանում նա իր մարգարէական շրջանն սկսելիս։ Ոչ ոք չգիտէր այդ։

Մեզ հասել են միայն հատ ու կտոր պատմութիւններ՝ առանց ժամանակագրական կարգի։ Բայց իւրաքանչիւր կեանք իր զարգացման շրջանում ենթարկւում է միշտ միատեսակ օրէնքների. ուրեմն կասկած չկայ, որ Յիսուսի նման զօրեղ անձնաւորութեան զարգացումն ենթարկուեց նոյն անխախտ օրէնքներին։

Աստուածութեան մասին բարձր գաղափար ունէր Յիսուս։ Նա այդ գաղափարը ոչ թէ մովսիսականութիւնից էր առել, այլ ամբողջապէս իր վսեմ հոգու ստեղծագործութիւնն էր։ Ահա ա՛յդտեղ է նրա ոյժը։

Հայր-Աստուծոյ գաղափարն այն ձայնն է, որ արձագանք է գտնում իւրաքանչիւր հանգիստ խղճի և մաքուր սրտի տէր մարդու մէջ։ Յիսուս տեսիլքներ չէր տեսնում. Աստուած նրանից հեռու չէր, այլ նրա մէջն էր ապրում. նա Աստուծուն իր մէջն էր զգում, և այն ամենը, ինչ որ ասում էր իր Հօր հասցէին, ճիշտ նրա սրտից էին բղխում։ Յիսուս ապրում էր Աստուծոյ գրկում և ամեն րոպէ նրա հետ հաղորդակցութեան մէջ էր. նա նրան չէր տեսնում, չէր լըսում, Մովսէսի նման պահանջ չէր զգում ոչ այրուող մորե-

նու և ոչ կայծակի, ոչ էլ՝ Յոբի պէս՝ փոթորկի. նա՝ հին յունական փիլիսոփաների նման՝ կարիք չունէր ոչ գուշակիչների և ոչ էլ՝ Սոկրատէսի պէս՝ ընտանի հանճարի կամ՝ Մուհամմէդի նման՝ Գաբրիէլ հրեշտակի։ Յիսուս, օրինակ՝ սուրբ Թերեզայի նման, տեսիլքներ ու անուրջներ չէր տեսնում։ Նա չունէր և այն հերձուածողի ոգևորութիւնը, որ իր անձն Աստուծուն հաւասար է հռչակում. Յիսուս մի րոպէ անգամ մտքովը չի անցկացրել այն սրբապիղծ գաղափարը՝ թէ ինքն Աստուած է։ Նա միայն կարծում էր, թէ ինքը գտնւում է Աստուծոյ հետ անմիջական յարաբերութեան մէջ, և հաւատում էր միայն, թէ ինքն Աստուծոյ որդին է։ Այն վեհագոյն գաղափարը, որը երբևիցէ գոյութիւն է ունեցել մարդկանց սրտերում, Յիսուսի յղացած գաղափարն է։

Միւս կողմից՝ բոլորովին պարզ է, որ Յիսուս՝ հոգեկան այդպիսի տրամադրութեան տակ՝ չէր կարող վերացական փիլիսոփայ լինել։ Նա իր աշակերտների հետ փիլիսոփայական ոչ մի խօսակցութիւն չէր ունենում և նրանցից ամենևին չէր պահանջում, որ իրենց ուշադրութիւնը լարեն։

Ի՞նչը կարող է աւելի օտարոտի լինել սխոլաստիքական աստուածաբանութեան համար, քան աւետարանը։

Յոյն եկեղեցական հայրերի դատողութիւններն Աստուծոյ էութեան մասին բոլորովին այլ ոգի են կրում։ Իսկ Յիսուսի ամբողջ աստուածաբանութիւնը հիմնւում էր այն բանի վրայ, որ Աստուած մարդկանց անմիջական Հայրն էր համարւում։ Թէև, ի հարկէ, Յիսուս միանգամից չհասաւ այդ բարձր հաւատքին, բայց կասկած չկայ, որ նա, հէնց առաջին քայլից, իր և Աստուծոյ միջև եղած յարաբերութեան վրայ նայում էր որպէս հօր և որդու յարաբերութեան վրայ։

Ահա թէ որն է նրա մեծ ինքնուրոյնութիւնը և ինչով է նա դուրս եկել իր ցեղակիցների հայեացքների շրջանից։ Ոչ մովսիսականը և ոչ մահմեդականը չէին կարող ըմբռնել այս սիրոյ հրաշալի աստուածաբանութիւնը։ Յիսուսի Աստուածն այն ահեղ պետը չէ, որ մարդկանց կամ սպանում է ըստ իր քմահաճոյքի կամ դատապարտում յաւիտենական տանջանքի և կամ փրկում ըստ իր հայեցողութեան։ Յիսուսի Աստուածը մեր Հայրն է։

Այդ Աստուածը, որպէս թեթև զեփիւռ, զգալի է մեզ ամենիս, զեփիւռ՝ որ զգացնում է մեր սրտերում «հօր» ներկայութիւնը։ Յիսուսի Աստուածն այն աչառու բռնակալը չէ, որ Իսրայէլի ցեղն ընտրել էր իրեն իբրև ժողովուրդ և միշտ հովանաւորում էր նրան ի վնաս ուրիշ ազգութիւնների։ Նա ամբողջ մարդկութեան Աստուածն է։

Յիսուս ոչ Մակաբէի նման հայրենասէր էր և ոչ էլ Յուդա Գալիլեացու պէս աստուածպետական։ Նա համարձակօրէն բարձրը կանգնեց իր ազգի նախապաշարումներից և հաստատեց ընդհանուր Աստուծոյ՝ որպէս Հօր՝ պաշտամունքը։ Գալիլեացու կարծիքով՝ աւելի լաւ է մեռնել, քան որևէ մէկին՝ բացի Աստուծուց՝ «տէր» անուանել։ Ըստ Յիսուսի՝ այդ անունը կարող էին ընդունել այն ամենքը, ովքեր կուզենային. իսկ ինքը՝ երիտասարդ վարդապետն Աստուծուն տալիս էր մի աւելի քնքոյշ անուն։ Նրա կարծիքով՝ երկրաւոր իշխաններին և ույժի ներկայացուցիչներին ցոյց տրուած յարգանքը հեգնանքից զերծ չէ։ Յիսուս միևնոյն ժամանակ հիմնեց մի գերագոյն մխիթարութիւն, այսինքն Հօր օթևանը, որ երկնքումն է, և Աստուծոյ ճշմարիտ թագաւորութիւնը, որն ամեն մարդ կրում է իր սրտում։

«Աստուծոյ թագաւորութիւն» կամ «երկնաւոր թագաւորութիւն» դարձուածքները Յիսուսի սիրած դարձուածքներն էին. նա այդ դարձուածքները գործ էր ածում բացատրելու համար այն յեղաշրջումը, որ ինքն էր կատարում աշխարհում։ Ինչպէս վերոյիշեալ դարձուածքները, նոյնպէս և Մեսիայի մասին եղած համարեա բոլոր խօսքերն առնուած են Դանիէլի գրքից։ Այդ անընական գրքի հեղինակի կարծիքով՝ կործանուելիք չորս ամբարիշտ թագաւորութիւններից յետոյ, գալու է հինգերորդ թագաւորութիւնը, այսինքն սրբերի թագաւորութիւնը, որ յաւիտենական է լինելու։

Աստուծոյ այս երկրաւոր թագաւորութիւնը ենթարկուել է զանազան մեկնութիւնների։

Յիսուս, իր կեանքի վերջին օրերում, հաւատում էր, որ այդ թագաւորութիւնը գործնականապէս պէտք է իրագործուի աշխարհի յանկարծակի նորոգումով։ Բայց նա սկզբում այդպէս չէր մտածում։ Այն զարմանալի վարդապետութիւնը՝ որ հիմնուած է Հօր-Աստուծոյ գաղափարի վրայ՝

ծայրայեղ հիացմունքից խանդավառ մարդկանց վարդապետութիւնը չէ, մարդիկ՝ որոնք հաւատում էին աշխարհի մօտալուտ վախճանին և որոնք պահեցողութեամբ նախապատրաստում էին այդ պատահարը դիմաւորելու. դա աշխարհի վարդապետութիւնն է, այն աշխարհի՝ որ ապրել է և ցանկանում է ապրել։ «Աստուծոյ Թագաւորութիւնը մեր մէջ է», —ասում էր Յիսուս նրանց, որոնք հրաշքների և նշանների էին սպասում։ Աստուծոյ գալստեան իրական պատկերացումը Յիսուսի կողմից՝ մի մթին բիծ կամ անցողական թիւրիմացութիւն էր, որը, նրա մահից յետոյ, պիտի մոռացուէր։

Յիսուս իր վարդապետութեան առաջին օրերում հիմնեց Աստուծոյ ճշմարիտ Թագաւորութիւնը, այսինքն հեզերի և խոնարհների Թագաւորութիւնը։ Այդ օրերը նրա կեանքի ամենապայծառ շրջանն էին կազմում, երբ Հօր ձայնը նրա մէջ աւելի յստակ էր արձագանքում։ Այդ շրջանը մի քանի ամիս, գուցէ նոյն իսկ մի տարի տևեց, երբ Աստուած իսկապէս երկրի վրայ էր ապրում։ Երիտասարդ հիւսնի քարոզներն անընական մտերմութեան շեշտ ստացան յանկարծ։

Յիսուս այդ ժամանակ անչափ գրաւիչ էր դարձել, և նրան այդ շրջանից առաջ տեսնողները հիմա չէին ճանաչում։ Նա դեռ աշակերտներ չունէր և նրան շրջապատող ամբոխը դեռ ևս ոչ հերձուած և ոչ էլ դպրոց (շկոլա) էր կազմել. բայց այդ ամբոխի մէջ նկատելի էր մի ինչ-որ՝ մարդկանց սիրտը թափանցող ու սրտաշարժ՝ ընդհանուր տրամադրութիւն։

Քրիստոս սքանչելի բնաւորութեան տէր էր և, անկասկած, այնպիսի գրաւիչ մի արտաքին ունէր, որի նմանը սակաւ է պատահում հրէական ցեղի մէջ, և այդ կախարդիչ հմայքի առաջ Գալիլիայի միամիտ ու բարեսիրտ ազգաբնակութիւնն ընկճուեց։ Եւ դրախտը, իսկապէս, տեղափոխուած կը լինէր երկրի վրայ, եթէ երիտասարդ ուսուցչի գաղափարներն այն չափաւոր բարութեան մակերևոյթից բարձր չլինէին, որից դէնն այժմ էլ չի կարողացել անցնել մարդկութիւնը։ Մարդկանց եղբայրութեան, նրանց՝ Աստուծոյ որդի լինելու, ինչպէս և այդ երկու հասկացողութիւններից բղխող բարոյական հետևանքների մասին Յիսուսի ունեցած

կարծիքը չափազանց վսեմ զգացման արդիւնք է։ Ինչպէս նրա ժամանակակից բոլոր րաբբիները, այնպէս էլ ինքը Յիսուս հակուած չէր կապակցուած երկար դատողութիւններ անելու. նա իր մտքերը յայտնում էր կարճ, բայց ազդու քարոզներով, որոնք երբեմն առեղծուածային և տարօրինակ բնոյթ էին կրում։

Նա իր ասացուածքներից մի քանիսն առել է Հին Ուխտի գրքերից, միւսները՝ ժամանակակից գիտունների մտքերից, մանաւանդ Անտիգոն Սոկոյից, Սիրաքի որդի Յիսուսից և Հիլլէլից. այդ ասացուածքները նա իւրացրեց ոչ թէ գիտնական պարապմունքներով, այլ այն ժամանակ տարածուած առածներից առնելով։ Սինագոգում կային բազմաթիւ գեղեցիկ ասացուածքներ, որոնք կարծես առածների ժամանակակից գրականութիւնն էին կազմում։ Յիսուս սովորեց այդ ասացուածքները և նրանց կենդանութիւն տուեց իրենց ամենաբարձր նշանակութեամբ։

Յիսուս՝ Օրէնքի և հին օրէնսդիրների սահմանած պարտաւորութիւններից վեր պահանջներ դնելով՝ կատարելութիւն էր պահանջում մարդկանցից։ Հեզութիւնը, ներողամտութիւնը, ողորմածութիւնը, ինքնուրացութիւնն ու ինքնանուաստութիւնն այնպիսի արժանիքներ են, որ համարձակօրէն կարելի է քրիստոնէական առաքինութիւն անուանել, եթէ այդ ամենը հասկանանք այն մտքով, ինչ մտքով որ քարոզել է Քրիստոսը, որի վարդապետութեան նախնական շրջանում դեռ սաղմնային վիճակի մէջ էին արդէն այդ գաղափարները։ Գալով արդարամտութեան՝ Յիսուս բաւականանում էր ժողովրդի մէջ տարածուած առածը կրկնելով. «Մի՛ անիլ ուրիշին այն, ինչ կամենում ես որ չանեն քեզ»։

Բայց այս բաւականին եսական հին առածը նրան չէր գոհացնում։ Յիսուս ծայրայեղութեան էր հասնում ասելով՝ «Եթէ մէկը աջ այտդ ապտակի, դէմ արա նրան և ձախը». «Ով կամենայ քեզ դէմ դատ բանալ և հանի քո շապիկը, տուր նրան և վերարկուդ». «Եթէ աջ աչքդ քեզ գայթակղեցնէ, հանիր և դէն ձգիր». «Սիրեցէք ձեր թշնամիներին, բարիք արէք ձեզ ատողներին, աղօթեցէք ձեզ նեղացնողների և հալածողների համար»։ «Մի՛ դատէք, որպէս զի չդատուէք».

«Ներեցէք, որպէս զի ձեզ էլ ներեն». «Ինչպէս որ ձեր երկնա-
ւոր հայրը ողորմում է ձեզ, այնպէս էլ դուք ողորմած եղէք».
«Աւելի լաւ է տալ, քան առնել». «Ով իր անձը ցածրացնի՝ կը
բարձրանայ և ով իր անձը բարձրացնի՝ կը ցածրանայ»: Ողոր-
մութեան, գթասրտութեան, բարեգործութեան, հեզութեան,
խաղաղասիրութեան և անշահախնդրութեան վերաբերմամբ
ժինագոգի ամբիոնից ոչինչ չէր մնում աւելացնել:
Բայց Յիսուս այդ մտքերն այնպիսի համոզեցուցիչ ձևով քա-
րոզեց, որ վաղուց արդէն տարածուած ասացուածքները նոր
բան էին թւում:

Բարոյագիտութիւնը լաւ կազմուած կանոնների մէջ չի
կայանում միայն: Պատուիրանը սիրելի է դառնում բանաս-
տեղծօրէն արտայայտուած լինելու պատճառով և, շնորհիւ
այդ հանգամանքի, անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն
է ստանում ամբոխի աչքում, քան ինքը՝ պատուիրանի միտ-
քը՝ որպէս վերացական մի ճշմարտութիւն: Աւետարանական
բարոյախօսութիւնն ինքն ըստ ինքեան նուազ ինքնատիպ է,
եթէ ի նկատի առնենք, որ աւելի հին ասացուածքների օգնու-
թեամբ կարելի էր նորից կազմել այն. այսուամենայնիւ այդ
բարոյախօսութիւնը մարդկային գիտակցութեան ամենա-
բարձրագոյն ստեղծագործութիւններից մէկն է, ինչպէս և
որևէ բարոյագէտի՝ կեանքի կատարելագործման մասին կազ-
մած վարդապետութիւններից ամենաքանչելին:

Յիսուս Մովսէսի օրէնքի դէմ ոչինչ չէր առարկում,
բայց ակներև է, որ այդ օրէնքները պակասաւոր էր համա-
րում. այդ բանը նկատելի էր նրա քարոզների մէջ. նա ան-
դադար կրկնում էր, որ հին գիտունների պահանջածից աւե-
լին պիտի անել: Նա թոյլ չէր տալիս խիստ լեզուով խօսել,
արգելում էր ամուսնալուծութիւնն ու երդումը, դատապար-
տում էր վրէժխնդրութիւնն ու կաշառակերութիւնը և ասում
էր, թէ մեղաւոր է այն մարդը, ով վաւաշոտ ցանկութիւն կը
տածէ իր սրտում և կը շնայ: Նա պահանջում էր, որ մար-
դիկ ներողամիտ լինեն այն ամենքի վերաբերմամբ, ովքեր
վիրաւորանք կը հասցնեն իրենց: Այս բոլոր բարձր կանոն-
ների, որոնք մարդկանց պատուիրում են ներողամիտ լինել,
սկզբնապատճառ է եղել միշտ հետևեալը. «... որպէսզի լի-

նէք ձեր երկնաւոր Հօր որդիքը, Որը արևին հրամայում
է թէ բարիներին և թէ չարերին միակերպ լուսաւորել»:
«Ի՞նչ մեծ առաւելութիւն է, եթէ ձեզ սիրողներին սիրէք
միայն: Չէ՞ որ նոյնն են անում և մաքսաւորները: Ի՞նչ
մեծ բան էք անում միայն ձեր եղբայրներին ողջունելով: Մի՞
թէ նոյնը չեն անում և հեթանոսները: Կատարեալ եղէք,
ինչպէս ձեր երկնաւոր Հայրն է կատարեալ»: Այս կանոն-
ների արդիւնքն եղաւ այն, որ հիմնուեց մի մաքուր հաւատք,
առանց քահանաների և արտաքին արարողութիւնների մի
կրօն, որի հիմքն եղան սրտի զգացումը, Աստուծուն նմա-
նուելու ձգտումը, ինչպէս և մարդկային խղճի ու երկնաւոր
Հօր միջև գոյութիւն ունեցող անմիջական յարաբերութիւնը:
Յիսուս այս համարձակ եզրակայութեան գալուց յետոյ այլ-
ևս երբէք յետ չնահանջեց, եզրակացութիւն՝ որ նրան դար-
ձրեց Հրէաստանի առաջին յեղափոխականը:

Մարդու և իր Հօր միջև ինչ կարիք կայ միջնորդի, քա-
նի որ Աստուած մարդկանց միայն սրտին է նայում. էլ ինչ
կարիք կայ ապաշխարութեան և այնպիսի ծէսերի, որոնք
միայն մարմնին են վերաբերում: Յիսուսի կարծիքով՝ մաքուր
զգացումը գերադասելի էր նոյն իսկ այն աւանդութիւնից, որ
այնքան սրբազան նշանակութիւն ունէր մովսիսականութեան
տեսակէտից: Փարիսեցիներն աղօթելու ժամանակ իրենց
շուրջն էին նայում, տեսնելու համար թէ մարդիկ արդեօք ու-
շադրութիւն դարձնում են իրենց վրայ թէ՞ ոչ. նրանք աղ-
քատներին ողորմութիւն տալիս այնպէս էին անում, որ բոլո-
րը տեսնեն. նոյնպէս և՝ ցոյց տալու համար իրենց աստուածսի-
րութիւնը՝ իրենց հագուստների վրայ առանձին նշաններ էին
կրում: Եւ Յիսուս գայրանում էր հէնց այս կեղծ բարեպաշ-
տութեան կապկութիւնների դէմ: «Նրանք իրենց հատուցումն
ստացել են,—ասում էր նա,—իսկ դու երբ ողորմութիւն տաս,
թող ձախ ձեռքդ չիմանայ, թէ ինչ է անում քո աջը. թող
քո ողորմութիւնը ծածուկ մնայ, իսկ Հայրդ ծածուկը տեսնե-
լով քեզ յայտնապէս կը վարձատրի: Աղօթելիս մի նմանուիլ
կեղծաւորներին, որոնք սիրում են սինագոգներում և փո-
ղոցների անկիւններում կանգել ու աղօթել, որպէս զի ամեն-
քը տեսնեն նրանց աղօթելը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ

Նրանք իրենց վարձատրութիւնն արդէն ստացել են։ Բայց դու աղօթելիս սենեակդ մտիր և դուռը փակելով ծածուկ աղօթիր քո Հօրը, որ ծածուկն էլ տեսնում է և քեզ յայտնապէս կը վարձատրի։ Աղօթելիս մի՛ ունայնաբանիլ հեթանոսների նման, որոնք կարծում են, թէ շատախօսութեամբ իրենց աղօթքը լսելի կանեն։ Քո Հայր-Աստուածը մինչև անգամ խնդրելուցդ էլ առաջ գիտէ, թէ ինչ կարիք ունես դու»։

Յիսուս պահեցողութեան ոչ մի արտաքին նշան չէր ցոյց տալիս, բաւականանալով աղօթելով կամ՝ աւելի շուտ՝ լեռների վրայ և առանձնացած տեղերում խորհելով, տեղեր՝ ուր մարդ Աստուծուն է որոնում։ Մարդու և Աստուծոյ հաղորդակցութեան այս գերազանց ըմբռնումը, որին՝ Յիսուսից յետոյ էլ՝ շատ քիչ մարդ կարողացաւ հասնել, արտայայտուեց հետևեալ աղօթքով, որ Քրիստոս իր աշակերտներին սովորեցրեց.

«Մեր Հայր, որ երկնքումն ես, քո անունը թող սուրբ լինի, քո Թագաւորութիւնը թող գայ. քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրիս վրայ. մեր ամենօրեայ հացն այսօր տուր մեզ. մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում. մի՛ ձգիլ մեզ փորձանքի մէջ, այլ չարիցն ազատիր»։

Յիսուս գլխաւորապէս պնդում էր այն միտքը, թէ մեր երկնաւոր Հայրը մեզանից լաւ գիտէ մեր կարիքը, հետևաբար մարդիկ նրան անպատուած կը լինեն, եթէ մի որևէ որոշ բան խնդրեն նրանից։ Յիսուս իր այս միտքը քաղել էր մովսիսական կրօնի մեծ սկզբունքներից, որոնք հետզհետէ մոռացութեան էին տրուած հրէական ազգի ղեկավարող դասակարգի կողմից։ Հեթանոս քուրմը դեռ երբէք չի ասել հաւատացեալին. «Եթէ քո նուէրը սեղանի վրայ դնելու ժամանակ մտաբերես, որ եղբայրդ քեզ որևէ բանում դէմ է, թող նուէրդ սեղանի վրայ և նախ գնա հաշտուիր եղբօրդ հետ ու այնուհետև արի և քո նուիրաբերութիւնը կատարիր»։ Հին ժամանակները միայն հրէայ մարգարէներն են եղել, մանաւանդ Եսային, որ, ատելով քրմական դասակարգը, նախատեսել են այն իսկական պաշտամունքը, որ մարդ պարտաւոր է ցոյց տալ իր Աստուծուն։

«Կարիք չունեմ ձեր բազմաթիւ զոհաբերութիւններին. ես յագեցայ նրանցով. ձեր գառների ճարպն ինձ զզուեցրեց.

ձեր կնդրուկն ինձ ձանձրացրեց, որովհետև ձեր ձեռքերն արիւնոտ են։ Մաքրեցէք ձեր մտքերը, դադարեցէք չարութիւն անելուց, բարի լինել սովորեցէք, արդարասէր եղէք և ապա եկէք ինձ մօտ»։

Յետագայում մի քանի գիտնականներ, ինչպէս են Սիմէօն Ճշմարտասէրը, Սիրաքի որդի Յիսուսը, Հիլլէլը, համարեա նոյն եզրակացութեան եկան և յայտարարեցին, որ Օրէնքի միակ նպատակն արդարութիւնն է։ Եգիպտական հրէաներից Փիլոնը Յիսուսի հետ միաժամանակ հասաւ բարձրագոյն բարոյագիտութեան գաղափարին, որի շնորհիւ և շատ չնչին նշանակութիւն էր տալիս ընդունուած ծէսերին։ Շեմայիան և Աբթալիօնն էլ յաճախ ներկայանում էին որպէս ծայրայեղ ազատամիտ դիպուածական-բարոյախօսներ։ Հէնց այդ ժամանակները՝ Յօխան ռաբբին յայտարարեց, թէ ողորմածութեան սկզբունքներն աւելի բարձր են, քան Օրէնքի ուսումնասիրութիւնը։ Հակառակ այդ ամենին՝ միայն Յիսուսն էր, որ այդ միտքն աւելի մատչելի դարձրեց հասարակութեան համար։ Ոչ ոք այնքան հակառակ չէր քահանաներին և արտաքին ծիսակատարութիւններին, որքան Յիսուս, արարողութիւններ՝ որոնք կրօնը պաշտպանելու պատրուակով ճնշում են հէնց նոյն կրօնը։ Արտաքին ձևերից հրաժարուելու շնորհիւ էր, որ մենք ամենքս դարձանք Յիսուսի աշակերտներ և հետևողներ, հրաժարումն՝ որ դարձաւ ճշմարիտ կրօնի յաւիտենական հիմքը. իսկ եթէ ընդունենք, որ կրօնը մարդու համար անհրաժեշտ մի բան է, այդդէպքում պիտի ասենք, որ Յիսուս հէնց այդ միակ պատճառով արժանացաւ աստուածային կոչմանը, որ նրան վիճակուեց։ Նրա շնորհիւ՝ աշխարհ եկաւ մի բոլորովին նոր գաղափար, այն կրօնի գաղափարը, որը հիմնուած է սրտի մաքրութեան և մարդկանց եղբայրութեան վրայ։ Այդ գաղափարն այնքան բարձր է, որ քրիստոնէական եկեղեցին վերոյիշեալ կէտում ստիպուած էր հիմնովին քանդել նրա մտադրութիւնները, և, այդպիսով, մեր օրերում միայն մարդկանց փոքր մասն է ընդունակ այդ գաղափարն ըմբռնելու կամ համամիտ լինելու նրան։

Յիսուս, խորապէս ծանօթ լինելով բնութեանը, կարողանում էր պատկերաւոր օրինակներ առաջ բերել։ Այն նշա-

նաւոր նրբամտութիւնը, որը սովոր ենք սրամտութիւն անուանելու, նրա ասացուածքների յարգն երբեմն բարձրացնում էր. երբեմն էլ այդ ասացուածքներին կենդանութիւն էր տալիս ժողովրդականացած առածների այն յաջող գործածութիւնը, որ իրեն Յիսուսին էր յատուկ. «Ինչպէ՞ս ես համարձակւում եղբօրդ ասել՝ թոյլ տուր աչքիցդ շիւղը հանեմ, մինչդեռ քո աչքում գերան կայ։ Կեղծաւո՛ր, նախ քո՛ աչքից գերանը հանի՛ր և ապա մտածի՛ր եղբօրդ աչքի շիւղը հանելու մասին»։ Այս մտքերի շնորհիւ, որոնք վաղուց արդէն կուտակուել էին երիտասարդ ուսուցչի սրտում, սկսեցին նրա շուրջը ժողովուել մի քանի աշակերտներ։

Այն ժամանակներում ընդունուած էր փոքրիկ հոգևոր ժողովներ անել. դա եսէացիների և բժիշկների ժամանակաշրջանն էր, երբ հետզհետէ երևան էին գալիս Շեմայիան, Աբթալիօնը, Հիլլէլը, Շամայը, Յուդա Գոլոնացին, Գամաղիէլը և ուրիշ շատ րաբբիներ՝ իւրաքանչիւրն իր վարդապետութեամբ, և դրանց ասացուածքներից կազմուեց Թալմուտը։ Նրանք սակաւ էր պատահում որ գրէին։ Հրէական այդ շրջանի գիտունները գրքեր չէին հեղինակում, այլ միայն ամբոխին մատչելի լեզուով զրոյցներ և հասարակական քարոզութիւններ էին անում։ Այն հանգամանքը, որ Նազարէթցի երիտասարդ հիւսնը հասարակութեան առաջ սկսեց իր քարոզութիւնները, որոնք մեծ մասամբ արդէն ծանօթ էին, բայց՝ նրա շնորհիւ՝ պիտի վերանորոգէին աշխարհը,—այնքան էլ նշանաւոր մի դէպք չպիտի համարել։ Յիսուս մի նոր րաբբի էր (բայց իսկապէս ամենալաւը), մի քանի երիտասարդներով շրջապատուած, որոնք ագահաբար նրա խօսքերն էին լսում և անծանօթն էին որոնում։ Մարդկանց ուշադրութիւնը գրաւելու համար ժամանակ է հարկաւոր։ Դեռ ևս քրիստոնեաներ չկային, բայց ճշմարիտ քրիստոնէութիւնն արդէն հիմնուել էր, և այդ վարդապետութիւնը երբէք այնչափ կատարեալ չի եղել, քան իր այդ նախնական շրջանում։ Յիսուս այլևս ոչ մի բան չէր կարող աւելացնել իր՝ առաջին օրուայ ասածի վրայ։ Ի՞նչ եմ ասում։ Նա, աւելի շուտ, իր յայտնած մտքերի արժանիքը կը պակասեցնէր, որովհետև իւրաքանչիւր գաղափար, յաջողութիւն ունենալու համար, որոշ

զոհաբերութիւն է անում։ Կեանքի պայքարից ոչ ոք անբիծ չի կարող դուրս գալ։ Իսկապէս՝ բարուն հասնելը բաւական չէ, այլ հարկաւոր է, որ այդ գաղափարը մարդկանց շրջանում յաջողութիւն ունենայ։ Իսկ այդ բանն իրագործելու համար անհրաժեշտ են նուազ մաքուր ճանապարհներ։ Ի հարկէ, եթէ աւետարանը սահմանափակուէր Մատթէոսի կամ Ղուկասի մի քանի գլուխներով, այդ դէպքում աւելի կատարեալ կը լինէր և ներկայումս այսչափ հակաճառութիւնների պատճառ չէր լինիլ։ Բայց երիտասարդ վարդապետը մի՞թէ կարող էր առանց հրաշքների նուաճել աշխարհը։ Եթէ Յիսուս մեռնէր իր կեանքի մեր նկարագրած շրջանում, անկասկած նրանից վիրաւորուելու տեղիք չէինք ունենալ. բայց այդ դէպքում՝ նա, Աստուծոյ առաջ շատ արժանաւոր լինելով հանդերձ, մարդկանց համար անյայտ կը մնար և կը կորչէր մեծ հոգիների՝ մեզ անյայտ բազմութեան մէջ, որոնցից գուցէ և արժանաւորագոյնը լինէր։ Իսկ նրա վաղաժամ մահուան պատճառով ճշմարտութիւնը չէր տարածուիլ, և աշխարհն այլևս չէր կարող օգտուել այն առաւելութիւններից, որ Յիսուս ստացել է իր Հօրից։ Սիրաքի որդի Յիսուսը և Հիլլէլը համարեա նոյնքան բարձր մտքեր են յայտնել, որքան Յիսուս, բայց՝ չնայած դրան՝ Հիլլէլը երբէք չի կարող քրիստոնէութեան հիմնադիր համարուել։

Թէ բարոյագիտութեան և թէ ճարտարարուեստի մէջ խօսքը մեծ նշանակութիւն չունի. իսկ գործն ամէն բան է։ Ռաֆայէլի նկարի գաղափարը մեծ նշանակութիւն չունի, բայց ինքը նկարն ամէն ինչ է։ Նոյնը կարելի է ասել և բարոյագիտութեան մասին։ Ճշմարտութիւնը միայն այն ժամանակ նշանակութիւն ունի, երբ զգացման է փոխւում ու հասնում իր կատարեալ ոյժին և երբ գործնականապէս իրականանում է։ Միջակ բարոյականի տէր մարդիկ շատ լաւ մտքեր են յայտնել երբեմն։ Միւս կողմից՝ շատ բարոյական մարդիկ էլ ոչ մի բան չեն արել բարոյական սկզբունքների օգտին։ Պատիւ նրան, ով ուժեղ է եղել թէ խօսքով և թէ գործով, ով զգացել է բարին և իր արեան գնով յաղթութիւն է պարգևել այդ գաղափարին։

Այս երկու հայեցակէտերից Յիսուս իր հաւասարը չունի. նրա փառքը միայն իրեն է պատկանում, և այդ փառքը յաւիտեան թարմ կը մնայ։

ԳԼՈՒԽ Ե

Յովհաննէս Մկրտիչ:—Յիսուսի ճանապարհորդութիւնը Յովհաննէսի մօտ, նրա կեանքը Յուդայի անապատում:—Նա մկրտւում է Յովհաննէսի ձեռքով:

Այդ ժամանակներում մի տարօրինակ մարդ յայտնուեց, որի դերը՝ տեղեկութիւններ չլինելու պատճառով՝ մեզ համար մի փոքր անորոշ է մնում, և Յիսուսի հետ յարաբերութեան մտաւ: Այդ յարաբերութիւնն աւելի շուտ պատճառ եղաւ, որ երիտասարդ Նազարէթցի մարգարէն իր ընտրած ճանապարհից մի փոքր շեղուի. բայց նա, շնորհիւ այդ յարաբերութեան, շատ անհրաժեշտ կրօնական սովորութիւններ իւրացրեց, և նրա աշակերտները մեծ հեղինակութիւն ստացան հրէական որոշ դասակարգի աչքում: Մօտաւորապէս մեր տարեթուի 28-դ թուականին (Տիբերիոսի թագաւորութեան 15-դ տարին) ամբողջ Պաղեստինում ձայն տարածուեց, թէ մի ինչ-որ Յոհան կամ Յովհաննէս անունով երիտասարդ, կըրքոտ և կրակոտ ճգնաւոր է յայտնուել: Յովհաննէսը քահանաների ցեղից էր և ծնուել էր, կարծեմ, Իւտտում, Քեբրոնի մօտերքը, կամ հէնց Քեբրոնում: Քեբրոնը մի նահապետական քաղաք էր Յուդայի անապատին շատ մօտիկ և արաբական մեծ անապատից մի քանի ժամուայ հեռաւորութիւն ունէր: Այդ քաղաքն, այսօրուայ նման, այդ դարումն էլ ամենախիստ ձևով պահպանում էր միաստուածութեան ոգին: Յովհաննէսը մանուկ հասակից նազիր էր, այսինքն ուխտել էր խստակեաց լինել:

Մատաղ հասակից նրան գրաւում էր իր չորս կողմը փռուած անապատը: Յովհաննէսը հագնում էր գազանի մորթի կամ ուղտի բրդից գործուած հագուստ և այս անապատում հնդկական եօգայի կեանք էր վարում. կերակրւում էր

մորեխով և վայրի մեղրով: Նա իր շուրջը հաւաքեց որոշ թըւով աշակերտներ, որոնք նրա նման էին ապրում և աշխատում էին ըմբռնել նրա արտասանած դաժան խօսքերը:

Նրան տեսնողը կը կարծէր, թէ ինքը Գանգէսի ափերումն է գտնւում, եթէ այդ ճգնաւորը չկրէր մի քանի այնպիսի բնորոշ գծեր, որոնք յատուկ են հրէական ցեղի մեծ մարգարէների վերջին ներկայացուցչին: Այն ժամանակից, երբ հրէական ազգը՝ յուսակտրոյս՝ սկսեց մտածել իր վիճակի մասին, ժողովուրդը յաճախ կարօտով էր յիշում իր հին մարգարէներին: Բայց անցեալի բոլոր դէմքերից ամենանշանաւորը Եղիան էր, դէմքեր՝ որոնց յիշատակը, խռովայոյզ երազի նման, ալեկոծում էր ժողովրդի հոգին: Այդ հսկայ մարգարէն, որ ապրում էր Կարմելում՝ վայրենի գազանների հետ՝ խիստ առանձնութեան մէջ, ժայռերի ծերպերում, որտեղից կայծակի նման յանկարծակի յայտնւում էր թագաւորներին գահ բարձրացնելու կամ գահընկէց անելու նպատակով,—մի կարգ այլաձև փոփոխութիւններից յետոյ, մերթ տեսանելի ու մերթ անտեսանելի մի գերբնական էակ համարուեց և մինչև անգամ կենդանի երկինք տարուեց: Հրէաները ընդհանրապէս հաւատում էին, որ Եղիան գալու է և Իսրայէլի ցեղը վերականգնեցնելու: Նրա անցկացրած խիստ կեանքն ու թողած ահեղ յիշողութիւնները՝ որոնց տպաւորութեան տակ Արևելքը մինչև այժմ էլ ապրում է, այն մռայլ պատկերը՝ որ այսօր էլ ահ ու երկիւղ*) է ազդում, այս՝ վրէժխնդրութեամբ և սարսափով լի դիցաբանական անձնաւորութիւնը խիստ ազդում էր մտքերին և իր կնիքը դնում ազգային բոլոր հաւատալիքների վրայ: Եթէ մէկն ուզէր ժողովրդի վրայ ազդել, պարտաւոր էր նմանուել Եղիային: Եւ որովհետև առանձնութիւնն այդ մարգարէի կեանքի բնորոշ գիծն էր կազմում, ուստի ժողովուրդը բոլոր ճգնակեացների վրայ նայում էր որպէս «Աստուծոյ մարդկանց» վրայ:

Ժողովուրդը կարծում էր, որ իւրաքանչիւր սուրբ մարդ պարտաւոր է ապաշխարել, ճգնել և խստակեաց լինել:

Այսպիսով՝ անապատ քաշուելն ի վերուստ ներշնչուե-

*) Ժողովուրդը Եղիա մարգարէին պատկերացնում էր կտրուած գըլուխներով շրջապատուած:

յու անհրաժեշտ պայման և նշան համարուեց։ Կասկած չկայ, որ այդ նոյն կարծիքին էր և Յովհաննէսը, որին շատ էր գրաւում այդ միտքը։ Ճգնաւորական կեանքը, որ այնքան օտար էր հին հրէական ոգուն, ամեն կողմից սկսեց Հրէաստան մտնել։

Եսէացիները կամ բժիշկները ժողովւում էին Յովհաննիսի բնակավայրի մօտերքը, Մեռեալ ծովի արևելեան ափերում։

Այդ հերձուածի հիմնադիրը, ինչպէս կարծւում է, ճգնաւոր էր, ունէր իր որոշ կանոնները և՝ իբրև հիմնադիր կրօնական միութեան՝ իր սեպհական հաստատութիւնները։ Երիտասարդների ուսուցիչներն էլ, բրահմայական անապատականների (գուրու) նման, երբեմն ճգնաւոր էին լինում։

Յովհաննիսի հերձուածի բնորոշ գիծն էր կազմում մկրտութիւնը կամ ամբողջապէս ջրի մէջ ընկղմելը։ Հենց այդ հիմնական արարողութեան շնորհիւ՝ ժողովուրդն այդ անապատականին «Մկրտիչ» անուանեց։ Մովսիսական, ինչպէս և բոլոր արևելեան կրօններն արդէն գործադրում էին լուացման արարողութիւնը։ Եսէացիներն առանձնապէս ընդհանրացրին այդ բանը։ Մկրտութիւնը հիմնական արարողութիւն դարձաւ մովսիսականութիւն ընդունողների վերաբերմամբ և միտեսակ սրբագործութիւն համարուեց։ Այսուամենայնիւ՝ մինչև Մկրտչի յայտնուելն այդ արարողութեանը ոչ այնքան նշանակութիւն և ոչ էլ այդպիսի ձև էին տալիս։

Յովհաննէսը որպէս քարոզութեան տեղ ընտրեց Յուդայի անապատի այն մասը, որ կից է Մեռեալ ծովին։ Մկրտութեան արարողութիւն կատարելիս՝ նա տեղափոխւում էր Բեթանիա կամ Բիֆարար, որ Յորդանանի արևելեան ափի վրայ էր գտնւում և՝ հաւանօրէն՝ Երիքովի դիմաց, և կամ Սաղեմին մօտիկ գտնուող այն ջրառատ վայրը, որ կոչւում է Էնօն՝ որն «ակունք» է նշանակում։ Այդտեղ մեծ բազմութիւն էր գալիս նրա մօտ մկրտուելու, գլխաւորապէս Յուդայի ցեղից։ Նա, այսպիսով, մի քանի ամսուայ ընթացքում Հրէաստանի ամենաազդեցիկ մարդկանցից մէկը դարձաւ, և ամենքն ստիպուած էին նշանակութիւն տալ նրան։

Ժողովուրդը Յովհաննիսին որպէս մարգարէ էր ընդունում, և շատերը կարծում էին, որ դա յարութիւն առած

Եղիան է։ Այդ յարութեանը շատերն էին հաւատում։ Կարծւում էր, որ Աստուած հին մարգարէներից մի քանիսին յարութիւն կը տայ, որպէս զի սրանք Իսրայէլի ցեղն իր վերջնական նպատակին առաջնորդեն։ Ոմանք մինչև անգամ Մեսիա էին համարում նրան, թէև ինքը երբէք այդպիսի յաւակնութիւն չունէր։

Բայց քահանայապետները և դպիրները, որպէս մարգարէների այդպիսի վերակենդանութեան հակառակորդներ և ոգևորութեան թշնամիներ, ատում էին նրան։ Չնայած դրան՝ Մկրտչի ժողովրդականութիւնից ակնածում էին և չէին համարձակւում նրա դէմ խօսել։ Դա՝ ամբոխի հասարակական կարծիքի տարած յաղթանակն էր հոգևոր ազնուականութեան դէմ։ Այդ մասին քահանայապետներին ուղղուած ամեն մի հարցում մեծ շփոթութիւն էր պատճառում նրանց։

Յովհաննիսի համար մկրտութիւնը խորհրդանշան էր միայն՝ ազդեցութիւն գործելու և մտքերը պատրաստելու համար ապագայ մեծ իրողութեանը։ Ոչ մի կասկած չկայ, որ Յովհաննէսը բոլորովին գրաւուեց Մեսիայի գալստեան յոյսով, և ինքը գլխաւորապէս այդ մտքով էր գործում։ «Ապաշխարեցէք,—ասում էր նա,—որովհետև Աստուծոյ թագաւորութիւնը մօտենում է»։ Նա նախագուշակում էր «մեծ բարկութիւն», այսինքն սարսափելի աղէտներ, որոնք պիտի տեղի ունենային, և յայտարարում էր, որ կացինը ծառի արմատին է դրուած և որ ծառը շուտով պիտի կրակը ձգուի։ Նրա կարծիքով, Մեսիան գալու էր հեծանոցը (հոսելի) ձեռքին՝ լաւ հատիկները ժողովելու, իսկ յարդն այրելու համար։

Յովհաննիսի կարծիքով, ապաշխարութիւնը՝ որի արտաքին նշաններն էին մկրտութիւնը, ողորմելն ու բնաւորութեան փոփոխութիւնը՝ մի զօրեղ միջոց էր, որով մարդիկ պիտի նախապատրաստուէին ապագայ դէպքերի համար։ Որոշակի յայտնի չէ, թէ ապագայ դէպքեր ասելով ինչ էր հասկանում նա։ Պարզ է միայն այն, որ նա մեծ ոգևորութեամբ էր քարոզում նոյն այն հակառակորդների դէմ, որոնց դէմ քարոզում էր և Յիսուսը, այն է՝ հարուստների, քահանաների, փարիսեցիների և դպիրների, մի խօսքով՝ մովսիսականութեան պաշտօնական ներկայացուցիչների։ Յովհաննէսն

ձը, Յիսուսի նման, միայն ստորին դասակարգերի յարգանքն էր վայելում։ Նա «Աբրահամի որդի» կոչումը բանի տեղ չէր դնում և ասում էր, որ Աստուած ճանապարհի վրայ ընկած քարերից էլ կարող է Աբրահամի որդիներ ստեղծել։ Թէև, ինչպէս պէտք է ենթադրել, նա տարրական հասկացողութիւն անգամ չունէր Յիսուսի փառքը կազմող այն մեծ գաղափարների մասին, որոնք կարող են իբրև հիմք ծառայել իւրաքանչիւր մաքուր կրօնի համար, բայց, չնայած դրան, մեծապէս նպաստեց այդ գաղափարների տարածմանը՝ մի ազատ ծէսի վերածելով այն օրինական արարողութիւնները, որոնց կատարման համար անհրաժեշտ էին քահանաներ։ Յովհաննէսի նման վարուեցին միջնադարեան ֆլագելլանտները (խարազանողներ), որոնք, շնորհիւ այն հանգամանքի՝ որ պաշտօնական հոգևորականութեան ձեռքից խլեցին սրբագործութեան և մեղքերի թողութիւն տալու մենաշնորհը, կրօնական վերանորոգութեան կարապետներն եղան։

Յովհաննէսն ընդհանրապէս քարոզում էր խիստ ու կոպիտ շեշտով։ Նա իր հակառակորդների դէմ, կարծես, գործ էր դնում խիստ կծու դարձուածքներ։ Այդ դարձուածքները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ՝ շարունակական ու վայրագ հայհոյանքներ։ Կարծւում է, որ Յովհաննէսը ծանօթ էր իր ժամանակի քաղաքականութեանը։ Դա հաստատւում է ինչպէս այն մի քանի անորոշ ակնարկներով, որ անում է Յովսէփ պատմագիրը, որը՝ իր ուսուցիչ Բանուսի շնորհիւ՝ մօտիկ ծանօթ էր Մկրտչին, նոյնպէս և այն օրհասական պատահարով, որ այդ ճգնաւորի գլխատման պատճառ եղաւ։

Յովհաննէսի աշակերտները շատ խիստ կեանք էին վարում, յաճախ պահք պահում և շատ թախծոտ ու հոգատար մարդու կերպարանք ունէին։ Մի ժամանակ նրանց մէջ յղացաւ ստացուածքի համայնացման գաղափարը, միտք ծագեց, որ հարուստը պարտաւոր է իր կայքն աղքատների հետ բաժանել։ Նրանց կարծիքով՝ ամենից առաջ աղքատն է մտնելու Աստուծոյ արքայութիւնը։

Չնայած որ Յովհաննէսը Յուդայի երկրում էր քարոզում, բայց նրա փառքը շուտով հասաւ Գալիլիա՝ Յիսուսին, որի շուրջը, նրա առաջին քարոզութիւններից յետոյ, արդէն

ունկնդիրների մի խումբ էր հաւաքուել։ Դեռ ևս բաւականաչափ հեղինակութիւն չունենալով և, անկասկած, ցանկանալով տեսնել այն ուսուցչին, որի քարոզութիւնները մեծապէս նմանում էին իր գաղափարներին, Յիսուս թողեց Գալիլիան և իր աշակերտների հետ գնաց Յովհաննէսի մօտ։ Նորեկները մկրտուեցին, ինչպէս և ամեն եկող։ Յովհաննէսը շատ լաւ ընդունելութիւն ցոյց տուեց գալիլեացիների այս խմբակին, և այն հանգամանքը, որ նրանք առանձին խումբ էին կազմել, նրա վրայ ոչ մի վատ ազդեցութիւն չունեցաւ։

Երկու ուսուցիչն էլ համանման շատ գաղափարներ ունէին։ Նրանք սիրում էին իրար և ամբոխի առաջ միմեանց յարգանք էին մատուցանում։ Երիտասարդութիւնն ընդունակ է ամեն տեսակ ինքնուրացութեան, ուստի կարող է պատահել, որ այդ երկու ոգևորուած երիտասարդները՝ լի միատեսակ յոյսերով և միևնոյն տեսլութեամբ՝ ընդհանուր գործի համար միանային և փոխադարձաբար միմեանց պաշտպանէին։ Այս սիրալիր յարաբերութիւնը յետագայում դարձաւ հիմնաքարը մի ամբողջ սիստեմի, որ զարգացրին աւետարանիչները։ Այդ սիստեմի շնորհիւ՝ Յիսուսի աստուածային առաքելութեան գլխաւոր հիմքը համարւում էր Յովհաննէսի վկայութիւնը։ Այնքան մեծ էր Յովհաննէսի հեղինակութեան ոյժը, որ՝ թւում է թէ՝ անկարելի էր գտնել աւելի լաւ ահաւատչեայ։ Բայց Մկրտիչը չէր խոնարհւում Յիսուսի առաջ. ընդհակառակը՝ Յիսուս, Յովհաննէսի մօտ գտնուած ամբողջ ժամանակ, նրան իրենից բարձր էր համարում և իր հանճարը շատ անհամարձակ կերպով էր ցոյց տալիս։

Ինչպէս երևում է, Յիսուս, չնայած իր խորին ինքնուրոյնութեան, Յովհաննէսին նմանուեց։ Այդ նմանողութիւնն առնուազն մի քանի շաբաթ տևեց։ Դեռ այնքան էլ պարզ չէր նրան իր կոչումը։ Եւ որովհետև մկրտութեան ծէսը, Յովհաննէսի շնորհիւ, ընդհանրացել էր, ուստի Յիսուս պարտաւորուեց հետևել Մկրտչի՝ օրինակին։ Այսպէս՝ Յիսուս և իր աշակերտները նոյնպէս սկսեցին մկրտել։ Հաւանօրէն՝ մկրտութեան արարողութիւնը վերջանալուց յետոյ քարոզում էին։ Այսպիսով Յորդանանը ծածկուեց մկրտողներով, որոնք միևնոյն ժամանակ, աւելի կամ պակաս յաջողութեամբ քա-

րող էին խօսում։ Բայց շուտով աշակերտը հաւասարուեց իր ուսուցչին, և շատ շատերն աշխատում էին Յիսուսի ձեռքով մկրտուել։ Այդ հանգամանքի պատճառով՝ Յովհաննէսի աշակերտներն սկսեցին նախանձել և իրենց ուսուցչին գանգատուեցին երիտասարդ գալիլիացու յաջողութեան համար։ Նրանք վախենում էին, թէ մի գուցէ Յիսուսի՝ մկրտութեան ձեռնարկելը վերջ դնի Յովհաննէսի մկրտելուն։ Բայց ուսուցիչներն աւելի բարձր էին կանգնած այս մանր զգացումներից։

Ի նկատի պիտի առնել մանաւանդ այն հանգամանքը, որ Յովհաննէսի առաւելութիւնները շատ աւելի անվիճելի էին, քան Յիսուսինը, և այս վերջինս էլ դեռ այնքան ժողովրդականութիւն չէր ստացել, որպէս զի յուսար, թէ, Յովհաննէսի դէմ մրցելիս, կը կարողանար նրան յաղթել։ Միայն թէ՝ Յիսուս կամենում էր Յովհաննէսի ստուերում աճել և, ամբոխը գրաւելու համար, զգում էր, որ ինքն էլ պարտաւոր է այն նոյն արտաքին միջոցներին դիմել, որոնց շնորհիւ Յովհաննէսն այդ գործում այնքան զարմանալի յաջողութիւն ունեցաւ։

Յովհաննէսի բանտարկութիւնից յետոյ՝ երբ Յիսուս նորոգեց իր քարոզութիւնը, նրա արտասանած առաջին խօսքերը Յովհաննէսի սիրած դարձուածքներն եղան։ Նմանապէս՝ Յիսուս իր քարոզների մէջ բառացի գործ էր ածում Յովհաննէսի ուրիշ շատ նախադասութիւնները։ Այդ երկու դպրոցներն երկար ժամանակ, ըստ երեւոյթին, միմեանց հետ հաշտ էին ապրում, և Յովհաննէսի մահից յետոյ Յիսուս, իբրև մօտիկ ընկեր, նրա գլխատման գոյժն առաջին լսողներից մէկն եղաւ։

Յովհաննէսի մարգարէական գործունէութեանը շուտով վերջ տուեց, որովհետև նա էլ, հրէական հին մարգարէների նման, չափազանց շատ էր կշտամբում իշխանաւորներին։

Այն չափազանց կծու լեզուն, որ գործ էր ածում Յովհաննէսեան իշխանաւորների մասին խօսելիս, չէր կարող անպատիժ մնալ։ Յուդայի երկրում, որի կառավարիչն էր Պիղատոսը, նա, կարծեօք, ոչ մի անախորժութեան չէր հանդիպում. բայց, Յորդանանի միւս կողմն անցնելով, Պիրէայում

Յովհաննէսը առաջ կոխեց Անտիպասի սահմանները։ Այդ բռնակալը երկիւղ էր կրում այն քաղաքական խմորումից, որ ակներև նկատելի էր Յովհաննէսի քարոզների մէջ։ Այն ահագին ամբոխը, որ կրօնական և ազգասիրական զգացումից գրգռուած՝ նրա շուրջն էր ժողովւում, կասկած յարուցեց։ Յովհաննէսը չքաշուեց իր քարոզութիւնների միջոցին, բացի քաղաքական խնդիրներից, շօշափել և վիրաւորել իշխանաւորների անձնականը, և այս վերջին հանգամանքը պատճառ եղաւ այդ խստասիրտ ըմբերանողի անխուսափելի կորստեանը։

Հերովդիադան՝ որ Հերովդէս Մեծի թոռն էր՝ Հերովդէսի եղեռնագործ ընտանիքի ամենանշանաւոր բնաւորութիւններից մէկն էր։ Այդ կինը դիւրազրգիռ էր, փառասէր ու կրքոտ և ատում էր մովսիսական կրօնն ու նրա պատուէրները։

Հերովդիադան, հաւանօրէն, իր կամքի հակառակ էր ամուսնացել իր հօրեղբօր՝ Հերովդէսի հետ, որ Մարիամի որդին էր և, Հերովդէս Մեծի կարգադրութեամբ, զրկուել էր ժառանգութիւնից և ոչ մի դեր չէր խաղում։ Այդ կինը չէր կարողանում հաշտուել այն իրողութեանը, որ իր ամուսինն այդ իշխանական գերդաստանում ոչ մի ազդեցութիւն չունէր։ Նա ինչ պայմանով էլ լինի, ցանկանում էր իշխել, իր մտադրութիւնն իրագործելու համար, Անտիպային որպէս գործիք ընտրեց։ Այդ թոյլ անձնաւորութիւնը խելայեղօրէն սիրահարուեց Հերովդիադայի վրայ և խոստացաւ ամուսնանալ նրա հետ՝ բաժանուելով իր առաջին կնոջից, որ Պետրայի թագաւոր և հարևան պիրէական ցեղերի իշխան Գարէտի աղջիկն էր։ Արաբական արքայադուստրն, այս ծրագիրն իմանալով, վճռեց փախչել։ Նա, իր մտադրութիւնը թագցնելով, այնպէս ցոյց տուեց, որ իբր թէ ուզում է ճանապարհորդել դէպի Մաքերոն, իր հօր երկիրը, և ուղևորուեց Անտիպասի ստորադրեալ զօրապետների հետ։ Մաքերը կամ Մաքերոնը մի մեծ ամրոց էր, որ Ալէքսանդր-Եանն (Jannee) էր շինել և յետագայում Հերովդէսը նորոգել։ Այդ ամրոցը գտնւում էր Մեռեալ ծովի արևելեան կողմի ամենաահեղ տեղը։ Դա մի ամայի անապատ էր, որ դևերի բնակավայր էր համարւում և որի մասին շատ տարօրինակ հրաշավէպեր (լեգենդա) էին պատմւում։ Այդ ամրութիւնը գտն-

ւում էր Անտիպասի և Գարետի երկիրների հէնց սահմանում, իսկ այդ ժամանակ Գարետի իշխանութեան տակ էր: Գարետը, որին արդէն յայտնի էր իր աղջկայ մտադրութիւնը, միջոցներ էր ձեռք առել յաջողութեամբ պսակելու համար նրա փախուստը: Եւ Անտիպասի կինը, մի ցեղից միւսը ճանապարհուելով, հասաւ Պետրա:

Այն ժամանակ իրագործուեց Անտիպասի և Հերովդիադայի արիւնապիղծ ամուսնութիւնը: Ամուսնութեան վերաբերմամբ մովսիսական կրօնի օրէնքները յաճախ թիւրիմացութեան պատճառ են եղել Հերովդէսի ամբարիշտ գերդաստանի ու խստապահանջ հրէաների միջև: Այս բազմանդամ և բաժան-բաժան եղած տոհմի անդամներն ստիպուած էին միմեանց հետ ամուսնանալ, և, շնորհիւ այդ բանի, յաճախ օրինազանցութիւններ էին յառաջանում: Յովհաննէսը, Անտիպասին դատապարտելով, հասարակական զգացման արձագանքը հանդիսացաւ: Իսկ Անտիպասը, այդ բանից դրդուած, սկսեց կասկածանքով վերաբերուել Յովհաննէսին: Նա հրամայեց, որ Յովհաննէսին ձերբակալեն ու բանտարկեն Մաքերոնի ամրոցում, որին՝ հաւանօրէն՝ Գարետի աղջկայ փախուստից յետոյ էր տիրացել:

Անտիպասը, որ աւելի թուլամորթ էր՝ քան խստասիրտ, Յովհաննէսի մահը չէր ցանկանում: Մի քանի պատմիչների ասելով՝ նա ժողովրդական ապստամբութիւնից էր վախենում: Իսկ ուրիշ աղբիւրների համաձայն՝ այդ թուլամորթ իշխանաւորը մեծ հաճոյքով էր ունկնդրում Յովհաննէսի քարոզներին, որոնք խորապէս յուզում էին նրան: Իրողութիւնն այն է, որ Յովհաննէսի բանտարկութիւնը բաւական երկար տևեց, և նա բանտում ազատութիւն էր վայելում:

Յովհաննէսը յարաբերութեան մէջ էր իր աշակերտների հետ, և յետագայում կը տեսնենք, որ նա Յիսուսի հետ էլ յարաբերութիւն է ունեցել: Մեսիայի մօտալուտ գալստեան վերաբերմամբ նրա ունեցած հաւատքը բանտում աւելի ամրացաւ. նա մեծ ուշադրութեամբ հետևում էր արտաքին աշխարհի շարժումներին, որոնց մէջ աշխատում էր իր յոյսերի համար բարեյաջող նշաններ գտնել:

ԳԼՈՒԽ Զ

Աստուծոյ թագաւորութեան մասին Յիսուսի ունեցած գաղափարների զարգացումը:

Մինչև Յովհաննէսի բանտարկուելը, որ՝ ըստ մեզ՝ մօտաւորապէս տեղի ունեցաւ Քրիստոսի 29-դ թուականին, Յիսուս Մեռեալ ծովի ու Յորդանանի շրջակայքից չհեռացաւ: Յուդայի անապատը քաշուել՝ նշանակում էր առհասարակ մեծ գործերի պատրաստուել. դա մի տեսակ առանձնացում էր հրապարակական քարոզներ խօսելուց առաջ: Յիսուս, ուրիշների նման, ենթարկուեց այդ բանին և անապատում 40 օր մնաց՝ վայրի գազաններին ընկերակցելով և խիստ պահք պահելով: Նրա աշակերտների երևակայութիւնն ի նպաստ այդ առանձնացմանը շատ բան ստեղծեց: Ժողովուրդն այնպէս էր հաւատացած, թէ անապատը դևերի բնակավայր է: Աշխարհում շատ սակաւ են պատահում այնպիսի երկիրներ, որոնք Մեռեալ ծովի արևմտեան ժայռոտ ափերից աւելի անապատային, Աստուծուց լքուած և կենդանութիւնից զուրկ լինեն: Կարելի է կարծել, որ Յիսուս՝ այդ մռայլ վայրում բնակուած ժամանակ՝ սոսկալի փորձութիւնների ենթարկուեց, սատանան սարսափեցրեց նրան ուրուականներով և գրաւեց փայլուն խոստումներով, որից յետոյ հրեշտակները մօտեցան և, որպէս վարձատրութիւն այն բանի՝ որ Յիսուս յաղթեց սատանային, ծառայեցին նրան:

Հաւանօրէն՝ Յիսուս Յովհաննէս Մկրտչի բանտարկութիւնն անապատից դուրս գալուց յետոյ իմացաւ: Նա, այլևս պատճառ չունենալով իր համար օտար այդ երկրում թափառելու, վերադարձաւ Գալիլիա՝ իր իսկական հայրենիքը՝ օժտուած անհրաժեշտ փորձառութեամբ և վստահ իր ինքնուրոյնութեան վրայ, որի մասին արդէն համոզուել էր այն

օրից, երբ յարաբերութեան մէջ էր մտել իրենից խիստ տարբերուող մեծ մարդու հետ։

Յովհաննէսն, իսկապէս, Յիսուսի վրայ աւելի շուտ վընասակար, քան օգտակար ազդեցութիւն ունեցաւ։ Դրանով նրա զարգացումը կանգ առաւ. հիմք կայ կարծելու, որ Յիսուս Յորդանան իջնելուց առաջ աւելի բարձր գաղափարներ ունէր, քան Յովհաննէսը, և որ, համաձայնուելով մկրտութեան ծէսն ընդունել, նա զիջեց Յովհաննիսին։ Յովհաննէսը, որի հեղինակութեան դէմ դժուար էր կռուել, եթէ չբանտարկուէր, այդ դէպքում, ամենայն հաւանականութեամբ, Յիսուս չէր կարող ազատուել ծիսակատարութիւնից ու աստուածպաշտութեան արտաքին ձևականութիւններից և, ուրեմն, մեզ համար, հաւանօրէն, կը մնար որպէս մովսիսական կրօնի մի անյայտ հերձուածող, որովհետև հազիւ թէ մարդկութիւնը ցանկանար մի ծիսակատարութեան փոխարէն մի ուրիշն ընդունել։

Միայն արտաքին ձևականութիւններից ազատ կրօնի հմայքի շնորհիւ էր, որ քրիստոնէութիւնը կարողացաւ վեհ հոգիներ գրաւել։ Յովհաննիսի բանտարկութիւնից յետոյ՝ նրա աշակերտների թիւն զգալի կերպով պակասեց, իսկ Յիսուս ազատուեց իր զարգացումը կաշկանդող պայմաններից. Յիսուս միայն քարոզութեան և ամբոխի վրայ ազդելու արուեստը պարտական էր Յովհաննիսին։ Եւ ճիշտ որ՝ այդ րոպէից սկսած՝ նա աւելի մեծ եռանդով էր քարոզում և ինքնավստահօրէն էր դուրս գալիս ամբոխի առաջ։ Նոյնպէս հիմք կայ ենթադրելու, որ նա, Յովհաննիսի մօտ լինելով, Աստուծոյ թագաւորութեան մասին իր ունեցած գաղափարն աւելի զարգացրեց, թէև այս վերջին հանգամանքը հետևանք էր ոչ այնքան Յովհաննիսի ազդեցութեան, որքան իր սեփհական մտքի բնական ընթացքի։

Այնուամենայնիւ նրա սիրած խօսքն էր «բարի համբաւ» դարձուածքը, որ նշանակում էր, թէ մօտեցել է Աստուծոյ թագաւորութիւնը։

Յիսուս ոչ միայն մի հմայիչ բարոյագէտ էր և ձգտում էր կարճ ու կենդանի քարոզներով վեհ գաղափարներ յայտնել, այլև մի յեղափոխական էր և աշխատում էր աշխարհը

հիմնովին վերանորոգել ու երկրի վրայ հաստատել իր ձեռք բերած գաղափարների թագաւորութիւնը։ «Աստուծոյ թագաւորութեանն սպասել» և «Յիսուսի աշակերտը լինել» դարձուածքները համանիշ դարձան։ Այս՝ «Աստուծոյ թագաւորութիւն» և «երկնից թագաւորութիւն» դարձուածքները, ինչպէս ասել ենք, Հրէաստանում վաղուց էին յայտնի. բայց Յիսուս նրանց տուեց այն բարոյական միտքն ու հասարակական նշանակութիւնը, որոնք մինչև անգամ Դանիէլի գրքի հեղինակն իր մարգարէական խանդավառութեան մէջ հազիւ կը համարձակուէր գուշակել։

«Աշխարհում, ներկայ դրութեամբ, չարութիւնն է թագաւորում։ Այս աշխարհի իշխանը սատանան է, և ամեն ինչ նրան է նպաստակւում։ Թագաւորներն սպանում են մարգարէներին։ Քահանաներն ու դպիրները չեն անում այն, ինչ որ իրենք են ուրիշներին հրամայում անել։ Արդարները հալածւում են, և բարի մարդկանց արցունք է վիճակւում միայն։ Այսպիսով «աշխարհն» Աստուծոյ և Նրա սրբերի թըշնամին է. բայց Աստուած կը բարկանայ և սրբերի փոխարէն վրէժխնդիր կը լինի։ Ժամանակը մօտենում է. ամբարըշտութիւնն իր գագաթնակէտին է հասել, բարու թագաւորութեան ժամանակն էլ է գալու։ Բարու թագաւորութեան գալուստը յանկարծական և մեծ յեղափոխութեամբ է կատարուելու։ Այն ժամանակ աշխարհը պիտի քանդուի. որովհետև ներկայ դրութիւնը շատ վատ է, ուստի ապագան պատկերացնելու համար բաւական է ներկայի հակապատկերը երևակայել։ Եւ առաջինները վերջին կարգն են դասուելու։ Մարդկութիւնը նոր կարգերով պիտի կառավարուի։ Ներկայումս չարն ու բարին խառն են, ինչպէս արտում՝ որոմն ու բարի սերմը։ Տէրը թոյլ է տալիս, որ այդ սերմերը միասին աճեն, բայց կը գայ այն ահեղ ժամը, երբ նրանք միմեանցից կը ջոկուեն։

Աստուծոյ թագաւորութիւնն ուռկանի է նման, ուռկանի՝ որ ծովը ձգուելով հանում է թէ լաւ և թէ վատ ձկներ. լաւերն ամանների մէջ են դրուելու, իսկ վատերը՝ դէն ձըգուելու։ Այդ մեծ յեղաշրջումն սկզբում աննկատելի է լինելու։ Նա ճիշտ մանանեխի հատիկի նման կը լինի, հատիկ՝

որը բոլոր սերմերից փոքր է, բայց հողի մէջ ցանուելուց յետոյ մի այնպիսի ծառ է դառնում, որի տերեւների տակ թռչուններն էլ կարող են պատսպարան գտնել. կամ կը նմանուի խմորի մէջ դրուող խաշի, որի շնորհիւ խմորը բարձրանում է և ամանը լցնում:

Մի կարգ քարոզներով, որոնք բաւականաչափ մութ չէին լինում յաճախ, բացատրում են ինչպէս այդ անտեսանելի յեղաշրջման յանկարծակի կատարուելը, Նրա անխուսափելի ու վերջնական նշանները, նմանապէս և ըստ երեւոյթին կատարուելիք այն անարդարութիւնները, որոնք այդ նոյն ժամանակամիջոցում պիտի տեղի ունենան:

Աստուծոյ այս թագաւորութիւնն ով պիտի իրագործէ կեանքի մէջ: Մտաբերենք, որ Յիսուսի առաջին միտքն այն էր, թէ ինքն Աստուծոյ որդի է, իր Հօր մտերիմ բարեկամը և Նրա կամքի կատարողը: Այդ միտքը չափազանց խոր էր և ամենայն հաւանականութեամբ՝ ոչ ոքից փոխ չէր առնուած, այլ, կարծես, արմատացել էր նրա էութեան մէջ:

Այդ պատճառով՝ վերոյիշեալ հարցին Յիսուսի տուած պատասխանը պարզ է: Նա անպայման համոզուած էր, թէ ինքն է լինելու երկրի վրայ Աստուծոյ թագաւորութեան հիմնադիրը:

Նա իրեն համարում էր որպէս համաշխարհային բարենորոգիչ: Երկինքը, երկիրը, ամբողջ բնութիւնը, խելագարութիւնը, հիւանդութիւնը և մահը՝ այդ ամենը նրա ձեռքին ծառայում էին որպէս գործիք: Նա, հերոսական կամքով յափշտակուած միջոցին, իրեն ամենակարող էր զգում: Եթէ երկիրը չհպատակուի այս բարձրագոյն վերանորոգութեանը՝ կոչնչանայ և կրակով ու Աստուծոյ շնչով կայրուի: Նոր երկինք կը ստեղծուի և ամբողջ աշխարհն Աստուծոյ հրեշտակների բնակավայր կը դառնայ:

Յիսուսի հիմնական նպատակն էր այնպիսի արմատական մի յեղաշրջում, որ ընդգրկէր նոյն իսկ ամբողջ բնութիւնը:

Այդ նպատակն ընդունելուց յետոյ՝ նա, անկասկած, հրաժարուեց քաղաքականութիւնից. Յուդա Գալիլեացու օրինակը ցոյց տուեց նրան ժողովրդական ապստամբութեան

անօգուտ լինելը: Նա երբեք չէր մտածում հռովմայեցիների ու չորրորդապետների դէմ ըմբոստանալ:

Յիսուս չէր ընդունում Գալիլեացու անսանձ ու անիշխանական սկզբունքները:

Նա արտաքուստ կատարելապէս հպատակւում էր գոյութիւն ունեցող իշխանութեանը, բայց ներքուստ հեգնում էր այն: Կեսարի հարկը վճարում էր, որպէսզի չզայրացնի նրան: Ըստ Յիսուսի՝ ազատութիւնն ու իրաւունքն այս աշխարհի համար չեն. ուրեմն էլ ինչու մեր ամբողջ կեանքը մթագնենք մի այդպիսի աւելորդ բծախնդրութեամբ: Երկիրն ատելով և համոզուած լինելով որ գոյութիւն ունեցող աշխարհը հոգացողութեան արժանի չէ, Յիսուս խորասուզւում է իր գաղափարական թագաւորութեան մէջ, հիմնում է խորին արհամարհանքի այս մեծ սկզբունքը և հոգու ազատութեան իսկական վարդապետութիւնը, որը միայն կարող է հոգեկան անդորրութիւն պարգեւել:

Բայց Յիսուս դեռ եւս չի ասել, թէ «իմ թագաւորութիւնն այս աշխարհի թագաւորութիւնը չէ»: Նրա ամենաճիշտ հայեացքներն անգամ անորոշութիւններից զուրկ չէին: Երբեմն նրա մտքով տարօրինակ գայթակղութիւններ էին անցնում: Յուդայի անապատում սատանան նրան երկրային թագաւորութիւն էր խոստանում: Յիսուս ճիշտ չէր իմանում հռովմէական իշխանութեան ոյժը և, օգտուելով ժողովրդական ժամանակակից այն ծայրայեղ ոգեւորութիւնից, որը քիչ յետոյ այնքան սարսափելի զինուորական ապստամբութիւն յառաջ բերեց,—կարող էր թագաւորութիւն հիմնելու յոյս ունենալ, եթէ լինէին բազմաթիւ ու խիզախ կուսակիցներ:

Հաւանօրէն՝ Յիսուս յաճախ է զբաղուել այն կարեւոր հարցով թէ՝ Աստուծոյ թագաւորութիւնն արդեօք ուժո՞վ թէ հեզութեամբ, ապստամբութեամբ թէ՞ համբերելով պիտի իրագործել:

Ասում են, որ մի անգամ Գալիլիայի հասարակ դասակարգը կամեցել է նրան փախցնել և թագաւոր յայտարարել: Բայց Յիսուս լեռները քաշուեց և այնտեղ մի որոշ ժամանակ առանձնացաւ: Նա, շնորհիւ իր բնական գեղեցիկ յատկութիւնների, ազատուեց այդ սխալ քայլից, որ կարող էր

նրան ապստամբութեան գլուխ կամ խռովարար մի Թէոդաս կամ Բար-Կոխբա դարձնել:

Այն յեղափոխութիւնը, որ Յիսուս կամենում էր առաջ բերել, բարոյական յեղափոխութիւնն էր. բայց նա այդ յեղափոխութիւնն իրագործելու յոյսը հրեշտակների կամ վերջին փողհարութեան վրայ չէր դրել տակաւին: Նա դեռ կամենում էր մարդկանց վրայ և մարդկանց միջոցով ազդել: Մի երազող՝ որ բացի վերջին դատաստանի մօտաւորութիւնից ուրիշ ոչ մի գաղափար չէր ճանաչում՝ չէր կարող այդ աստիճան հոգածու լինել մարդկանց կատարելագործութեան վերաբերմամբ, ինչպէս և անկարող էր աշխարհին տրուած բարոյական վարդապետութիւններից ամենագեղեցկի հիմնադիրը հանդիսանալ:

Անկասկած՝ Յիսուսի մտքերը շատ անորոշ կէտեր ունէին, և նրան դէպի այդ մեծ գործը մղողն աւելի շուտ ազնիւ զգացումն էր, քան իր կայացրած վճիռը, չնայած որ այդ գործը գլուխ եկաւ նրա ձեռքով, բայց իր կարծածից բոլորովին տարբեր եղանակով:

Եւ ճշմարիտ՝ Յիսուս իսկապէս հիմնեց Աստուծոյ թագաւորութիւնը, այսինքն հոգու թագաւորութիւնը. և եթէ ներկայումս նա Հօր գրկից տեսնէր իր գործի՝ մարդկային պատմութեան մէջ տուած արդիւնքը, կարող էր ասել. «Ահա հէնց այս էր իմ ուզածը»: Հոգու ազատութեան սկզբունքի հիմնողը Յիսուս եղաւ: Այդ գաղափարի հիմունքը Յիսուսի յաւիտենական յիշատակն է կազմում, եթէ ի նկատի չառնենք մի քանի պակասաւոր կողմեր, որոնք յատուկ են մարդկային իւրաքանչիւր գործի:

Դեռ Յիսուսից առաջ՝ Յունաստանում այդ ուղղութեամբ գեղեցիկ մտքեր էին յղացել: Շատ ստոյիկեանների յաջողուեց այնպիսի միջոց գտնել, որով կարողացան բռնակալների լծի տակ էլ ազատ զգալ իրենց: Բայց հին աշխարհն առհասարակ կարծում էր, թէ ազատութեան գաղափարը կապուած է քաղաքական այս կամ այն ձևի հետ: Ազատախոհ էին համարւում Հարմոդիոսները, Արիստոգիտոնները, Բրուտոսները և Կասիոսները: Միայն ճշմարիտ քրիստոնեան է ազատ որևէ կաշկանդումից. նա աշխարհում աքսորական է

միայն. նրա համար ինչ նշանակութիւն ունի այս երկրէ ժամանակաւոր իշխանը, քանի որ երկիրը ճշմարիտ քրիստոնեայի հայրենիքը չէ: Նրա ազատութիւնը ճշմարտութիւնն է միայն:

Յիսուս պատմութիւնն այնչափ լաւ չէր իմանում, ուստի չէր կարող գիտենալ, թէ իր վարդապետութիւնը որ աստիճան անհրաժեշտ էր այդ ժամանակ: Դա այն շրջանն էր, երբ հասարակապետական ազատութիւնը նոր էր վերջացել և հին քաղաքային փոքրիկ ինքնավարութիւնները ընկճւում էին հռովմէական կայսրութեան միահեծան թաթի տակ:

Բայց նա, շնորհիւ իր հրաշալի առողջ մտքի և իսկական մարգարէական բնազդի, զարմանալի ճշտութեամբ էր ղեկավարում իր առաքելութիւնը:

«Կայսրինը կայսրին տուէք և Աստուծունն Աստուծոյն» դարձուածքով նա ստեղծեց քաղաքականութիւնից հեռու այնպիսի մի ապաստան, ուր մարդկային հոգին կոպիտ ոյժի իշխանութեան տակ անգամ կարող էր իրեն ազատ զգալ:

Այդ վարդապետութիւնն, ի հարկէ, ունէր իր վտանգաւոր կողմերը: Հաստատել այն սկզբունքը, թէ օրինական իշխանութիւնը ճանաչելու համար բաւական է նայել դրամի երեսին. յայտարարել, որ կատարեալ մարդը հարկը պիտի վճարէ արհամարհանքով և առանց վիճաբանութեան,—նշանակում է ոչնչացնել նախկին հասարակապետութիւնը և քաջալերել ամեն մի բռնակալութիւն:

Քրիստոնէութիւնը, շնորհիւ իր այդ սկզբունքի, մեծապէս նպաստեց քաղաքացիական պարտաւորութիւնների զգացման թուլանալուն և պատճառ եղաւ, որ աշխարհս գոյութիւն ունեցող իրողութիւնների բացարձակ իշխանութեանը ենթարկուի: Բայց ստեղծելով ահագին կրօնական ազատ ընկերակցութիւններ, որոնք երեք-հարիւր տարի շարունակ հեռու էին քաղաքականութիւնից, քրիստոնէութիւնը կատարելապէս հատուցեց այն վնասը, որ ինքը հասցրել էր քաղաքացիական արժանիքներին: Նրա շնորհիւ՝ պետական իշխանութիւնը սահմանափակուեց երկրաւոր գործերով, հոգին ազատուեց կամ, գոնէ, հռովմէական ամենակարողութեան ահեղ զինանշանը ընդմիշտ ընկճուեց:

Հասարակական կեանքի պայմանաւորութիւններին ամբողջապէս նուիրուած մարդու տեսակէտից՝ բոլորովին անհնարելի է որևէ բան բարձր դասել կուսակցական ձգտումներից: Այդ տեսակէտից՝ աւելի դատապարտելի է նա, ով քաղաքական հարցերն ստոր է դասում հասարակական խնդիրներից կամ քաղաքական հարցերի վերաբերմամբ փոքր ինչ անտարբեր է: Եւ այս սկզբունքներով ղեկավարուող մարդը որոշ տեսակէտից իրաւացի է, որովհետև ամեն մի բացառիկ ուղղութիւն արգելք է հանդիսանում մարդկային գործերի յաջող ընթացքին: Բայց այդ կուսակցութիւնները մարդկանց բարոյականը բարձրացնելու համար ինչ են արել: Եթէ Յիսուս երկնային թագաւորութիւնը հիմնելու տեղ գնար Հռոմ և գրաւէր Տիբերիոսի դէմ դաւեր լարելով կամ Գերմանիկի վշտով, ինչ օգուտ կունենար մարդկութիւնը: Յիսուս նոյն իսկ եթէ մոլեռանդ հասարակապետական կամ անձնուրաց հայրենասէր լինէր, դարձեալ չէր կարող իր դարի մեծ իրողութիւնների ընթացքը փոխել, մինչդեռ քաղաքականութեանը երկրորդական նշանակութիւն տալով մարդկութեան առաջ պարզեց այն ճշմարտութիւնը, թէ գոյութիւն ունեցող հասկացողութիւնների թւում հայրենիքի գաղափարը չէ միակ արժանաւորը, այլ մարդը քաղաքացուց աւելի բարձր և վեհ է:

Թէև մեր դրական գիտութեան հիմունքները չեն հաշտւում Յիսուսի երևակայութիւնների հետ, թէև մեզ յայտնի է երկրի պատմութիւնը, և գիտենք, որ Յիսուսի սպասած յեղաշրջումները կարող են տեղի ունենալ միայն երկրաբանական ու տիեզերագրական պատճառներից և բարոյագիտական սկզբունքների հետ ոչ մի կապ չունեն, բայց, մեծ յեղափոխականների նկատմամբ աւելի արդարացի լինելու համար, պէտք չէ կանգ առնել նրանց արտայայտած նախապաշարմունքների վրայ:

Կոլոմբոսն Ամերիկան գտաւ սխալ ենթադրութիւնների վրայ հիմնուելով: Նիւտոնը Յովհաննու Յայտնութեան մասին գրած իր անմիտ բացատրութեանը նոյնքան էր հաւատում, որքան ձգողական ույժի տեսութեանը: Մի՞թէ մեր ժամանակում միջակ զարգացման տէր մարդկանցից որևէ

մէկին կարող ենք Ֆրանչիսկոս Ասսիզացուց, սուրբ Բերնարից, Ժաննա դ'Արկից և Լութերից բարձր դասել միայն նրա համար, որ նա ազատ է այն նախապաշարմունքներից, որոնց ենթակայ էին այդ մարդիկ: Մարդկանց արժանիքը գնահատելու համար մի՞թէ հարկ կայ իմանալու, թէ բնագիտութեան մասին նրանց ունեցած հասկացողութիւնը կամ տիեզերական սիստեմի նկատմամբ նրանց կազմած գաղափարը ճի՞շտ է արդեօք թէ՞ սխալ: Աւելի լաւ է աշխատենք ըմբռնել Յիսուսի դրութիւնը և իմանալ, թէ ինչումն էր կայանում նրա ույժը: Տասնութերորդ դարում ծնունդ առած դէիզմը և բողոքականութեան մի ճիւղը մեզ սովորեցրին քրիստոնէութեան հիմնադրին մեծ բարոյագէտ և մարդկութեան մեծ բարերարը համարել:

Աւետարանում բարոյական գեղեցիկ օրէնքներ ենք գտնում միայն, իսկ այդ օրէնքները կազմողի մտաւոր տարօրինակ դրութեան վրայ մատների արանքով ենք նայում: Մարդիկ կան, որոնք ափսոսում են, որ ֆրանսիական յեղափոխութիւնը յաճախ է դուրս եկել բարոյական օրէնքների սահմանից և չափաւոր ու խելացի մարդկանց ձեռքով չի կատարուել: Աւելի լաւ է՝ մեր բուրժուական ճղճիմ ծրագիրների տեսակէտից չդատենք մեզնից այնքան բարձր կանգնած անցեալ բացառիկ շարժումները:

Սքանչանանք աւետարանի բարոյագիտութեամբ և մեր կրօնական դաստիարակութիւնից ջնջենք նրա հիմքը կազմող ցնորքը, բայց և չմոռանենք՝ կարծելով որ աշխարհս կարող է կառավարուել միմիայն այն պարզ գաղափարներով, որոնք երջանկութեան և անհատի կատարելագործմանն են վերաբերում:

Յիսուսի գաղափարը շատ աւելի խոր և շատ աւելի յեղափոխական էր, քան՝ մարդկային մտքում երբևիցէ ծագած՝ որևէ հասկացողութիւն: Այդ գաղափարն իր ամբողջութեան մէջ վախկոտ զգուշաւորութեամբ չպիտի քննել, որովհետև այդպիսով կորչում է այն առաւելութիւնը, որ նրա ույժն է կազմում մարդկութեան վերածնութեան գործում: Իսկապէս՝ ամեն մի իդէալ անիրագործելի է: Ներկայումս, երբ կամենում ենք, ըստ ժամանակակից գիտակցութեան, պատ-

կերացնել Քրիստոսին իբրև նոր ժամանակների մի մխիթարիչ ու դատաւոր, ինչ ենք անում։ Մի՞թէ նոյնը չենք անում, ինչ որ Յիսուս է արել 1830 տարի սրանից առաջ։ Մենք գոյութիւն ունեցող աշխարհի պայմաններն այնպէս չենք վեր առնում, ինչպէս կան. մենք Փրկչին ընդունում ենք որպէս մի մարդ, որ առանց զէնքի խորտակում է Նեգրի շղթաները, բարւոքում պրոլետարիատի դրութիւնը և ազատութիւն տալիս ճնշուած ազգերին։ Մենք մոռանում ենք, որ այդ ամենը կատարել՝ նշանակում է խորտակել աշխարհում գոյութիւն ունեցող ներկայ պայմանները։ Այն բոլոր բարենորոգումները, որ ցանկանում էր կատարել Յիսուս, վերոյիշեալից աւելի դժուար չէին։ Յիսուսի ակնարկած նոր երկիրը, նոր երկինքն ու երկնքից իջնող նոր Երուսաղէմը, ինչպէս և այն բացականչութիւնը թէ՝ «Ես կը վերաստեղծեմ ամեն ինչ»,— ամեն ժամանակների բարենորոգիչներին յատուկ ընդհանուր գծեր են։ Իդէալի և ցաւալի իրականութեան մշտական հակադրութիւնը մարդկանց մէջ միշտ բողոք պէտք է յարուցանի սառն իմացականութեան դէմ, և միջին դատողութեան մարդիկ մինչև իդէալի յաղթանակելն անմտութիւն կանուանեն այդ բողոքը, իսկ այնուհետև նա, ով այդ իդէալի դէմ մարտնչում էր անցեալում, առաջինը կը յայտարարէ նորա ճշմարիտ լինելը։ Կատարեալ գաղափարականութեան տեսակէտից է որ Յիսուս բարձր է կանգնած թէ իր ժամանակակից և թէ բոլոր ժամանակների քարոզիչներից։ Որոշ տեսակէտից նայած՝ Յիսուս մինչև անգամ անիշխանական է, որովհետև նրա քարոզներում քաղաքացիական իշխանութեան մասին ոչինչ չենք գտնում։ Նրան այնպէս էր թւում, թէ կառավարութիւնն իր գոյութեամբ մի չարիք է պարզապէս։ Այդ առթիւ նա, որպէս հասարակ ժողովրդի մի ներկայացուցիչ, շատ անորոշ է խօսում, ներկայացուցիչ՝ որ քաղաքականութեան մասին ոչ մի գաղափար չունի։ Յիսուսի կարծիքով՝ իւրաքանչիւր կառավարիչ Աստուծոյ մարդկանց բնական թշնամին է։

Յիսուս գուշակում էր, որ իր աշակերտները պիտի ընդհարուեն իշխանութեան հետ, և մի րոպէ անգամ չէր մտածում, որ այդ ընդհարումները դատապարտելի են։ Բայց

նա երբէք չի փորձել հարուստների և ուժեղների տեղը բռնելու։ Յիսուս կամենում էր ոչնչացնել հարստութիւնն ու իշխանութիւնը, այլ ոչ թէ տիրանալ նրանց։ Նա գուշակում էր, որ իր աշակերտները պիտի հալածուեն և մահուան դատապարտուեն, բայց երբէք էլ չի խօսել զինուած դիմադրութեան մասին։ Այն միտքը, թէ միայն հեզութեամբ ու տանջուելով կարելի է ամենակարող լինել, ինչպէս և միայն մաքուր հոգով կարելի է յաղթանակել կոպիտ ուժի դէմ,— Յիսուսի իսկական գաղափարն էր կազմում։ Յիսուս հոգեպաշտ չէր, որովհետև նրա մէջ ամեն ինչ շօշափելի իրականութեան էր հասնում։ Բայց նա կատարեալ իդէալիստ էր. նիւթը նրա համար գաղափարի խորհրդանշանն էր, իսկ իրականը՝ միայն անտեսանելիի կենդանի ձևակերպութիւնը։

Աստուծոյ թագաւորութիւնը հիմնելու համար ում պիտի դիմել, ում վրայ յոյս դնել։ Այդ հարցի վերաբերմամբ Յիսուսի միտքը երբէք չէր տատանւում։ Այն, ինչ որ մարդկանց տեսակէտից բարձր է, Աստուծոյ համար չնչին բան է։ Աստուծոյ թագաւորութեան հիմնադիրները հասարակ մարդիկ պէտք է լինեն միայն։ Այդ արքայութիւնը պէտք է հիմնուի ոչ թէ հարուստների, դպիրների ու քահանայապետների ձեռքով, այլ կանանց և հասարակ մարդկանց, սրտով հեզերի և փոքրերի ձեռքով։ Մեսիայի մեծ նշանը՝ «աղքատներին աւետիք տալն է»։ Յիսուսի բնական փափկասրտութիւնն այստեղ էլ յաղթող է հանդիսանում։ Նրա երազն էր ժողովրդի բոլոր դասակարգերը վերափոխող ընդարձակ հասարակական յեղափոխութիւնը, ինչպէս և իշխանութեան գլուխ կանգնած մարդկանց ընկճումը։ Աշխարհը նրան չի հաւատալ ու կը սպանի։ Բայց նրա աշակերտներն այս աշխարհից չեն։ Նրանք հեզ ու հասարակ մարդկանց մի խումբ են կազմում, խումբ՝ որ իր հեզութեամբ պէտք է յաղթանակէ։ Այսպիսով «աշխարհի մարդ» և «քրիստոնեայ» հասկացողութիւնների հակադրութիւնն ուսուցչի մտքում իր արդարացուցիչ հիմքերն ունէր կատարելապէս։

Գ Լ Ո Ւ Խ Է

Յիսուսը Կափառնայումի մէջ

Յիսուս, վեհ և բացառիկ գաղափարով ոգևորուած, այնուհետև որոշ սառնասրտութեամբ առաջ գնաց իր կեանքի անբնական պայմանների և զարմանալի հանճարի գծած շաւղով։ Մինչև այդ ժամանակ՝ նա իր գաղափարները յայտնում էր գաղտնապէս իր մօտ ժողովուող մի քանի մարդկանց միայն. բայց այնուհետև նա սկսեց քարոզել շարունակաբար և բազմաթիւ ունկնդիրների առաջ։ Յիսուս այդ ժամանակ մօտ 30 տարեկան էր։ Աշակերտների այն փոքրիկ խումբը՝ որ նրա հետ Յովհաննէս Մկրտչի մօտ էր գընացել՝ անկասկած ստուարացել էր, և, ամենայն հաւանականութեամբ, նրանց միացել էին և Յովհաննիսի աշակերտներից մի քանիսը։ Ու ապագայ եկեղեցու հէնց այս փոքրիկ սաղմով նա Գալիլիա վերադարձաւ և սկսեց համարձակօրէն «բարի լուր» տալ Աստուծոյ արքայութեան մասին, թէ այդ թագաւորութիւնը մօտենում է, և ինքը Յիսուսն է այն «մարդու որդին», որ տեսիլքում երևացել էր Դանիէլին աստուածային այն համբաւաբերի տեսքով, որ պէտք է յայտնէր վերջին և ամենամեծ յայտնութիւնը։

Նոր մարգարէի քարոզների յաջողութիւնն այս անգամ վճռական էր։ Տղամարդկանց և կանանց մի բազմութիւն, որ աչքի էր ընկնում իր երիտասարդական մաքուր սրտով և անկեղծ պարզասրտութեամբ, շրջապատեց նրան և գոչում էր. «Դու Մեսիան ես»։ Որովհետև Մեսիան Դաւթի որդի պիտի լինէր, այդ պատճառով Յիսուսին տուին «Դաւթի որդի» տիտղոսը, որ հոմանիշ է «Մեսիա» բառին։ Յիսուս ուրախութեամբ ընդունեց այդ կոչումը, թէև այդ բանն իրեն

անյարմար դրութեան մէջ էր դնում, որովհետև իր ծագումն ամենքին յայտնի էր։

Նա գերադասում էր «մարդու որդի» կոչումը, որ՝ ըստ երևոյթին՝ բոլորովին համեստ էր, բայց անմիջական կապ ունէր մեսիական ակնկալիքների հետ։ Յիսուս, իր մասին խօսելիս, միշտ այդ դարձուածքն էր գործ դնում, և նրա համար «մարդու որդի»-ն հոմանիշ էր «ես» դերանունին, որ նա խուսափում էր գործածելուց։ Բայց ուրիշները երբեք նրան այդպէս չէին անուանում, հաւանօրէն կարծելով որ այդ կոչումը պատշաճ է նրան տալ երկրորդ գալստեան ժամանակ։

Յիսուսի գործունէութեան ասպարէզը, նրա կեանքի այդ շրջանում, Կափառնայումն էր, որ մի փոքրիկ քաղաք էր և գտնւում էր Գենեսարէթի լճի ափին։ Կափառնայում անունը, որ ծագում է առել կաֆար կամ կապար (գիւղ) բառից, կարծեօք հին գիւղ է նշանակում, համեմատած այն մեծ քաղաքների հետ, որոնք, Տիբերիադայի նման, կառուցուել են հռովմէական քաղաքների ոճով։ Կափառնայումի անունն այնքան քիչ էր ծանօթ, որ Յովսէփ պատմագիրն իր երկի մի տեղում նրան աղբիւր է անուանում, ի նկատի առնելով որ աղբիւրն աւելի յայտնի է, քան նրա մերձակայ գիւղը։ Թէ Կափառնայումն և թէ Նազարէթն անցեալ չեն ունեցել. նրանց մէջ դեռ ևս չէր մտել այն աշխարհային ամբարիշտ ուղղութիւնը, որ խրախուսւում էր Հերովդէսի տոհմի կողմից։ Յիսուս այդ քաղաքը սիրեց, և Կափառնայումը դարձաւ նրա երկրորդ հայրենիքը։ Նա, իր վերադարձից անմիջապէս յետոյ, Նազարէթում փորձեց քարոզել, բայց յաջողութիւն չունեցաւ։ Յիսուս այդտեղ ոչ մի հրաշք չկարողացաւ գործել, ինչպէս միամտաբար վկայում է նրա կենսագիրներից մէկը։ Այն հանգամանքը, որ Նազարէթում ճանաչում էին նրա գերդաստանը որպէս անյայտ մի ընտանիք, —Յիսուսի հեղինակութեանը վնասեց։

Դժուար էր Դաւթի որդի համարել այն մարդուն, որի քրոջը, եղբօրը կամ փեսային ամեն օր տեսնում էին։ Մանաւանդ նշանաւորն այն է, որ Յիսուսի ընտանիքն ակներև թշնամութեամբ էր վերաբերւում նրան և նրա առա-

քելութեանը չէր հաւատում։ Իսկ Նազարէթի ազգաբնակու-
թիւնն աւելի եւ թշնամացել էր Յիսուսին և, ինչպէս ասում
են, կամենում էր սպանել նրան ապառաժուտներից վայր
գլորելով։ Յիսուս այդտեղ սրամտօրէն նկատեց, որ առ հա-
սարակ մեծ մարդկանց հետ են այդպէս վարւում, և այդ
դէպքի առթիւ ասաց հետևեալ առածը. «Մարգարէն իր գա-
ւառում պատիւ չունի»։

Այս անյաջողութիւնը նրան չշփոթեցրեց, և նա վերա-
դարձաւ Կափառնայում, որտեղ նրան աւելի սիրով ընդու-
նեցին։ Յիսուս այդտեղից շրջակայ բոլոր քաղաքները քարո-
զութեան էր գնում։ Այդ գեղատեսիլ և պտղաւէտ երկրի ազ-
գաբնակութիւնը միայն շաբաթ օրերն էր ժողովւում։ Այդ
պատճառով երիտասարդ վարդապետը հէնց այդ օրն էլ ընտ-
րեց որպէս իր քարոզութեան օր։

Այդ ժամանակ իւրաքանչիւր քաղաք իր սինագոգը կամ
ժողովատեղին ունէր։ Դա մի փոքրիկ քառանկիւն ու կամա-
րակապ սենեակ էր և կառուցուած էր յունական ճարտարա-
պետական ոճով։ Հրէաները սեպհական ճարտարապետութիւն
չունէին և չէին սիրում իրենց շինութիւններն ինքնատիպ
ոճով զարդարել։ Գալիլիայում այժմ էլ կան հին սինագոգ-
ների աւերակներ։ Այդ աղօթատները բոլորն էլ շինուած են
եղել ամուր և լաւ նիւթից, բայց ոճի գեղեցկութեան կող-
մից աչքի չեն ընկնում, որովհետև նրանց ճարտարապետու-
թեան մէջ ամենից աւելի գերադասութիւն է տրուած բու-
սական թագաւորութեան պատկանող զարդարանքներին։ Այդ
զարդարանքների բնորոշ գիծն են կազմում գլխաւորապէս
ճիւղերն իրենց տերևներով, ինչպէս և խաղողները։ Սինա-
գոգներում կային աթոռներ, հասարակական ընթերցանու-
թեան համար պատուանդան, ինչպէս և մի պահարան՝ սըր-
բազան փաթեթներ պահելու համար։ Այս շինութիւնները,
որոնք ոչնչով նման չեն տաճարների, ներկայանում էին հը-
րէական կեանքի որպէս կենտրոնատեղի։ Շաբաթ օրերն այս-
տեղ ժողովւում էին աղօթելու և Օրէնքն ու Մարգարէները
կարդալու համար։ Որովհետև հրէաները Երուսաղէմից դուրս
հոգևորականներ չունէին, այդ պատճառով առաջին պատա-
հողն ամբիոն էր բարձրանում, օրուայ յարմար հատուածը

կարդում և բացատրում՝ չմոռանալով այդ բացատրութեանը
կցել և իր սեպհական մտքերը։

Այս այն «զրոյցների» սկիզբն էր, որոնց կատարելա-
տիպը տեսնում ենք Փիլոնի գիտնական փոքրիկ դատողու-
թիւնների մէջ։ Այդ զրոյցների ժամանակ իւրաքանչիւրն ի-
րաւունք ունէր ընթերցիկի հետ վիճաբանութեան մտնելու
և հարցեր առաջարկելու. այսպիսով հաւաքուած մարդկանց
այդ խմբակը շուտով դառնում էր մի ազատ ժողով։ Այդ խըմ-
բակն ունենում էր նախագահ, «աւագներ», դասսան, ըն-
թերցիկ, շամաշ կամ զգեստապահ, ինչպէս և «սուրհանդակ-
ներ»։ Այս վերջիններս մի տեսակ քարտուղարներ կամ լրա-
բերներ էին, և դրանց շնորհիւ հաղորդակցութիւն էր պահ-
պանւում սինագոգների միջև։ Այսպիսով սինագոգները մի-
մի փոքրիկ անկախ հասարակապետութիւն էին կազմում։
Նրանք ընդարձակ վարչութիւններ ունէին այն քաղաքային
ինքնավարութիւնների նման, որոնք իրենց գոյութիւնը պահ-
պանեցին մինչև հռոմէական տիրապետութեան վերջին շըր-
ջանները. նրանք իրաւունք ունէին պատուաւոր կարգադ-
րութիւններ անելու և որոշումներ կայացնելու, իսկ այդ ո-
րոշումները համայնքի շրջանում օրէնքի ոյժ ունէին. սինա-
գոգները մարմնական պատիժների վճիռ էլ էին կայացնում,
և այդ վճիռը սովորաբար գործադրւում էր դասսանի ձեռքով։

Եթէ ի նկատի առնենք մտքի այն կենսունակութիւնը,
որ հրէաների առանձնայատկութիւնն է կազմել միշտ, այդ
դէպքում մեզ համար պարզ կը լինի, թէ ինչու այդ հաստա-
տութիւնը, հակառակ իր վճիռների խստութեան, չէր կարող
կենդանի վիճաբանութեան կենտրոն չդառնալ։ Սինագոգնե-
րի շնորհիւ էր որ մովսիսականութիւնը կարողացաւ շարու-
նակ 18 դար տևող հալածանքները կրել առանց ոչինչ կոր-
ցնելու։ Դրանք ներկայանում էին որպէս առանձին փոքրիկ
աշխարհներ, որտեղ պահպանւում էր ազգային ոգին։ Այդ-
տեղ մարդիկ մեծ ոգևորութեամբ ու կրքով վիճում էին ի-
րար հետ կրօնական ներքին հարցերի վերաբերմամբ։ Հրէա-
ների մէջ նախանձի ու վէճերի առիթ էր ծառայում սինա-
գոգում պատուաւոր տեղեր գրաւելը, և այդ տեղերը որպէս
վարձատրութիւն վիճակւում էին այն մարդկանց, որոնք ա-

մենից բարեպաշտ կամ ամենից հարուստ մարդու համբաւ էին վայելում: Միւս կողմից՝ իւրաքանչիւր ցանկացողի թոյլատրւում էր սինագոգում սուրբ գիրքը կարդալ ու բացատրել ժողովականներին, և այդ ազատութեան շնորհիւ ընդարձակ ասպարէզ էր բացւում նոր հայեացքներ քարոզելու համար: Ահա այստեղ էր Յիսուսի մեծ ուժի աղբիւրներից մէկը, և սա էր ամենասովորական եղանակը, որ նա գործ էր դնում իր վարդապետութիւնը քարոզելիս:

Յիսուս մտնում էր սինագոգ և բարձրանում ամբիոն. գասսանը նրան տալիս էր գիրքը, նա բաց էր անում և, կարդալով այդ օրուայ համար նշանակուած գլուխը, կարդացածից հանում էր իր գաղափարներին համապատասխանող մի հատուած և ընդարձակում: Գալիլիայում փարիսեցիներ քիչ կային. այդ պատճառով Յիսուս նրանց հետ այնքան էլ տաք վիճաբանութիւն չէր ունենում և լարւում. ընդհակառակը՝ եթէ Երուսաղէմում լինէր և վիճաբանէր, առաջին քայլից իսկ խոչընդոտներ կը յարուցանէին նրա առաջ: Բարեսիրտ գալիլիացիներն իրենց ուրախ ու պայծառ երևակայութեանը լիովին համապատասխանող խօսքեր չէին լսել դեռ ևս. այդ պատճառով Յիսուս նրանց գուրգուրանքի առարկան դարձաւ, և նրանք զմայլւեցին նրանով ու նրա պատճառաբանութիւններն հիմնաւոր և խօսելու ձևը գեղեցիկ գտան: Նա ինքնավստահօրէն էր պատասխանում նրանց նոյն իսկ ամենադժուար առարկութիւններին: Նրա քարոզների բանաստեղծական լեզուն ու շեշտը թովում էին այդ երիտասարդ մտքերը, որոնք դեռ չէին վարակուել գիտնականներին յատուկ բծախնդրութեամբ:

Երիտասարդ ուսուցչի հեղինակութիւնն օրէ ցօր մեծանում էր, և, ի հարկէ, որքան շատ հաւատային նրան, այնքան էլ նրա՝ իրեն նկատմամբ ունեցած հաւատքը կաւելանար:

Նրա գործունէութիւնը սահմանափակ էր: Նա գործում էր միայն Տիբերիական լճի սահմաններում, և մինչև անգամ այդ շրջանում իր սիրելի վայրն ունէր: Լիճն ունի 5—6 մղոն երկարութիւն ու 3—4 մղոն լայնութիւն, և նրա շըրջագիծը կանոնաւոր ձուաձև է: Այդ լիճը՝ Տիբերիադայից

սկսած մինչև Յորդանան գետի բերանը՝ ծոցի նման մի բան
է կազմում, որի կորագիծը հաւասար է 3 մղոնի: Ահա հէնց
այդ կորագծի շրջանն էր այն ասպարէզը, ուր Յիսուսի ձըգած սերմը պարարտ հող գտաւ: Քայլ առ քայլ անցնենք
այդ տեղով, աշխատելով բարձրացնել ամայութեան ու աւերման այն քողը, որով իսլամական դևը ծածկել է այդ
վայրը:

Տիբերիադայից դուրս գալով՝ մենք նախ տեսնում ենք
նեպաձև ժայռեր և մի սար, որ կարծես թէ ծովն ընկած լինի: Այնուհետև լեռներն անհետանում են և՝ համարեա լճի
մակերևոյթին հաւասար՝ մի հարթութիւն (Էլ-Ղուէյր) է բացւում: Այդ սքանչելի ձորակը ծածկուած է բարձր խոտերով
և, շնորհիւ յորդառատ ջրերի, զանազան մասերի է բաժանւում: Այդ հոսուն գետերի մի մասը դուրս է սահում անյիշատակ ժամանակում կառուցուած մեծ ու կլոր աւազանից (Այն-
Մէդաւարա): Հասնելով այդ հարթութեանը, որ միևնոյն ժամանակ և Գենեսարէթի երկիրն է, նախ հանդիպում ենք մի
խղճուկ գիւղի, որ Մէջդէլ է կոչւում: Այդ տափաստանի միւս
ծայրում (եթէ շարունակ լճափով առաջանանք) կը պատահենք
այն տեղին, ուր մի ժամանակ քաղաք կար (Խան-Մինիէ), ինչպէս և կը տեսնենք մի գեղեցիկ գետ (Այն-էտ-Տին) ու ժայռերի միջով անցնող մի սքանչելի ու խոր շաւիղ: Հաւանօրէն՝ Յիսուս յաճախ է անցել այդ ճանապարհով, որ Գենեսարէթի հարթութիւնն ու Տիբերիական լճի հիւսիսային զառիվայրն իրար միացնող ճանապարհն է: Այդտեղից քառորդ
ժամ հեռու գտնւում է աղի ջրի մի գետակ (Այն-Թաբիղա), որ
բազմաթիւ լայն ակունքների ձևով բղխում է գետնից և՝ կանաչ ու խիտ բոյսերի միջով՝ լիճն է թափւում. վերջապէս՝
այդտեղից էլ մօտ 40 րոպէ հեռու տեսնում ենք Այն-Թաբիղայից մինչև Յորդանանի բերանը ձգուող խոպան թեքութեան վրայ մի քանի հիւղակներ և լաւ պահպանուած աւերակների մնացորդներ, որոնք կոչւում են Թէլ-Խում:

Այն հինգ փոքրիկ քաղաքները, որոնց մասին մարդկութիւնը յաւիտեան պէտք է խօսի այնպէս, ինչպէս Հռովմի
ու Աթէնքի մասին, Յիսուսի ժամանակ սփռուած էին Մէջդէլ գիւղի և Թէլ-Խումի միջև ընկած տարածութեան վրայ:

Այդ հինգ քաղաքները կոչւում էին՝ Մագդալա, Դալմանու-
տա, Կափառնայում, Բեթսայիդա և Քորազին։ Դրանցից միայն
առաջինը կարելի է ճշտութեամբ գտնել։ Խղճուկ Մէջդէլ
գիւղը, անկասկած, գտնւում է նախկին այն շէնի տեղը, որ
Յիսուսի ամենահաւատարիմ ընկերուհու ծննդավայրն էր և
որի անունը մի փոքր նմանւում է Մէջդէլի անուանը։ Դալ-
մանուտան, երևի, այդ գիւղին մօտիկ էր գտնւում։ Ամե-
նայն հաւանականութեամբ՝ Քորազինը գտնւում էր մի փոքր
դէպի հիւսիս։ Իսկ ինչ վերաբերում է Բեթսայիդային և Կա-
փառնայումին, կարծւում է, որ այդ հին քաղաքները գտնը-
ւում էին այժմեան կամ Թէլ-Խում, կամ Այն-էտ-Տին, կամ
Խան-Մին և կամ Այն-Մէդաւարա անուն գիւղերի տեղե-
րում։ Այսպիսով՝ ճակատագիրը, կարծես, դիտմամբ ցանկա-
ցել է թագցնել կրօնի մեծ ուսուցչի կեանքի թէ աշխար-
հագրական և թէ պատմական հետքերը։ Դժուար թէ երբ-
ևիցէ կարելի լինի ցոյց տալ այս անընակ երկրի այն վայրե-
րը, ուր մարդկութիւնը կարողանար գալ և կրօնի մեծ հիմ-
նադրի ոտքի հետքերը համբուրել։

Լիճը, երկնակամարը, թփերն ու ծաղիկները—ահա
այն ամենը, ինչ մնացել է այն 3—4 մղոն տարածութեան
վրայ, որտեղ Յիսուս սկսեց իր աստուածային քարոզու-
թիւնները։

Ծառերը բոլորովին անհետացել են։ Այն երկիրը, որ
մի ժամանակ այնքան հարուստ էր բուսականութեամբ և, ըստ
Յովսէփ պատմագրի, հրաշալիք էր համարւում (նրա ասելով՝
բնութիւնն այդտեղ կողք-կողքի տեղաւորել էր ցուրտ եր-
կիրների թփերը, տաք երկիրների բոյսերը և բարեխառն կլի-
մայի ծառերը, և այդ ամբողջ բուսականութիւնը տարին տաս-
ներկու ամիս պտուղներով ու ծաղիկներով էր ծածկուած),
—այժմ այնպէս խոպանացել է, որ հանգստանալուց առաջ
պէտք է կանխապէս որոշել, թէ որտեղ կարելի է մի փոքր
ստուեր գտնել։ Լիճն ամայացել է։ Ներկայումս մի ողոր-
մելի մակոյկ է միայն ակօսում նրա ալիքները, որոնք մի
ժամանակ լի էին կեանքով ու աշխոյժով։ Բայց հէնց հիմա
էլ նրա ջրերը թեթև են ու թափանցիկ։

Ժայռերից ու աւազակոյտերից կազմուած լճեզրը՝ Հուլէ-

լի լճափի նման՝ աւելի շուտ ծովակի ափի, քան լճեզրի է նը-
մանւում։ Ափերը մաքուր են և տղմից զուրկ. ալիքների թե-
թև յորձանքն այդ ափերի միշտ միևնոյն կէտին է ընդհար-
ւում։ Ամեն տեղ երևում են փոքրիկ հրուանդաններ, որոնք
ծածկուած են դափնու, մորենու թփերով և փշոտ նոճինե-
րով։ Այդ շրջանում տեսարանը վերին աստիճանի սքանչելի
է մանաւանդ երկու կէտում, ուր ալիքները ծեծում են խիտ
կանաչն ու ծաղիկները. մէկ՝ այն տեղը, ուր Յորդանանը՝
Տարիքէի մօտ՝ սկիզբ է առնում, և երկրորդ՝ այն վայրը, որ-
տեղից սկսւում է Գենեսարէթի տափաստանը։ Այն-Թաբիղա
գետակը մի փոքրիկ ծոց է կազմում, որ լի է գեղեցիկ խը-
խունջներով։ Ջրային թռչունների ամպը յաճախ ծածկում
է լիճը։ Հորիզոնը ողողուած է լոյսով։ Կապոյտ-երկնագոյն
ջուրը պարփակուած է շիկացած ու սեպ ափերում, և եթէ
դիտենք Սաֆեդի լեռների բարձունքից, մեզ այնպէս կը
թուայ, թէ այդ ջուրը ոսկէ պնակի մէջ է ածուած։

Հիւսիսում՝ Հերմոնի ձիւնապատ գագաթները երկնա-
կամարի վրայ սպիտակին են տալիս. արևմուտքում՝ լեռնոտ
ու բոլորովին անբերրի լեռնադաշտերն արևի ազդեցութեան
տակ թեթև մշուշով են շղարշւում. այդ լեռները կազմում
են մի ամբողջական սար կամ՝ աւելի լաւ է ասել՝ մի եր-
կար բարձրավանդակ, որ սկսւում է Փիլիպպեան-Կեսարիա-
յից և անվերջ դէպի հարաւ է տարածւում։

Ներկայումս նրա ափերում անտանելի տօթ է լինում.
լճի տաշտը 200 մետր ցածր է Միջերկրական ծովի մակե-
րևոյթից և, այսպիսով, ունի տաք կլիմայի այն բոլոր յատ-
կութիւնները, որոնք յատուկ են Մեռեալ ծովի ափերին։ Բայց
անցեալում, առատ բուսականութեան շնորհիւ, կլիմայի տա-
քութիւնը որոշ չափով պակասում էր. դժուար է կարծել, որ
այնպիսի չափազանց տաք մի երկիր, որպիսին այդ լճի ա-
ւազանն է ներկայանում, այժմ մայիս ամսից սկսած՝ բեղմ-
նաւոր գործունէութեան ասպարէզ կարողանար դառնալ։
Մանաւանդ Յովսէփ պատմագիրն էլ է վկայում, որ այդ եր-
կիրը բարեխառն կլիմայ ունէր։ Անկասկած՝ այստեղ էլ, ինչ-
պէս և Հռոմի հովտում, պատմական պատճառների շնոր-
հիւ կլիմայական փոփոխութիւններ են կատարուել։ Իսլամը,

մանաւանդ մահմեդական ռէակցիան խաչակրաց արշաւանքների դէմ՝ մահուան շնչի նման չորացրին Յիսուսի սիրած այս վայրը։ Գեղատեսիլ Գենեսարէթի երկիրը բնաւ չէր կարծում, որ իր վիճակն այդ համեստ թափառականի ձեռքով է տնօրինուելու և որ այդ վտանգաւոր հայրենակից Յիսուսը ճակատագրական նշանակութիւն պիտի ունենար այն երկրի համար, որ պատիւ էր ունեցել նրա բնակավայրը լինելու։ Գալիլիան, ոմանց համար սիրոյ և ոմանց համար ատելութեան առարկայ դառնալով ու քայքայուելով երկու ախոյեան կրօնների մոլեռանդութիւնից, պիտի իր փառքի գնով անապատ դառնար։ Բայց ո՞վ կը համարձակուի պնդել, թէ Յիսուս իր գիւղում մինչև խոր ծերութիւն անյայտութեան մէջ ապրելով՝ աւելի երջանիկ կը լինէր։ Այդ ապերախտ նազարէթցիներին ո՞վ կը ճանաչէր, եթէ նրանցից մէկը, իր հայրենի քաղաքի ապագան զոհ բերելով, չը ճանաչէր իր Հօրը և իրեն Աստուծոյ որդի չյայտարարէր։

Այն ժամանակաշրջանում, որի մասին խօսում ենք այստեղ, Յիսուսի փոքրիկ աշխարհը կազմում էին միայն չորս կամ հինգ գիւղեր, որոնք միմեանցից կէս ժամուայ հեռաւորութիւն ունէին։ Նա, կարծեօք, Տիբերիադա երբէք չէր գնում։ Դա մի հեթանոսական քաղաք էր, Անտիպասի մըշտական բնակավայրը, և նրա ազգաբնակութիւնը մեծ մասամբ կռապաշտ էր։ Իսկ երբ Յիսուս երբեմն իր սիրած շըրջանից դուրս էր գալիս, այդ դէպքում մակոյկով անցնում էր արևելեան ափը, օրինակ՝ Գերգեսա։ Հիւսիսային կողմերը ման գալիս՝ նա, առհասարակ, Պանէայում էր լինում կամ Փիլիպպեան-Կեսարիայում, որ գտնւում էր Հերմոն լեռան ստորոտին։ Վերջապէս մի անգամ նա ճանապարհորդեց դէպի Տիւրոս և Սիդոն։ Այս վերջին ճանապարհորդութիւնը, կարծեօք, այն ժամանակ տեղի ունեցաւ, երբ յիշեալ երկիրները ծաղկած դրութեան մէջ էին։ Այս բոլոր տեղերում նա կռապաշտներով էր շրջապատւում։ Յիսուս Կեսարիայում այցելեց Պանիումի քարայրը, որտեղ, ինչպէս ենթադրւում էր, գտնւում էին Յորդանանի ակունքները. ժողովրդական աւանդութիւնն այս քարայրի մասին տարօրինակ առասպելներ է հիւսել։ Յիսուս կարող էր զմայլուել այս քարայրի

մօտին կառուցուած այն մարմարեայ տաճարով, որ՝ ի պատիւ Օգոստոսի՝ շինուել էր Հերովդէսի կողմից։ Նա, հաւանօրէն, կանգ է առել այն բազմաթիւ անդրիների առաջ, որոնք նուիրուած էին Պանին, յաւերժահարսներին և քարայրի Արձագանքին։ Այդ անդրիները ջերմեռանդ կռապաշտների ձեռքով էին բերուել-ժողովուել այս գեղատեսիլ վայրում։ Հրէաները սովոր էին հեթանոսական աստուածների մէջ տեսնել կամ աստուածացրած մարդ և կամ դևեր։ Եւ Յիսուս, որպէս հրէայ, չէր կարող այդ տեսանելի անդրիներն ուրիշ բան համարել, բայց եթէ սոսկ կուռքեր։ Բնապաշտութեանն ընծայուած յարգանքի պատրանքները, որոնք արբեցնում են աւելի զգայուն ցեղերին, նրա վրայ չէին ազդում։ Անկասկած է, որ Յիսուս ոչինչ չգիտէր այն նախնական աստուածպաշտութեան տարրերի մասին, որոնք քիչ-շատ համապատասխանում էին մովսիսական աստուածպաշտութեանը և, հաւանօրէն, դեռ ևս գոյութիւն ունէին Տիւրոսում գտնուած Մելկարտի հին տաճարում։ Կռապաշտութիւնը, որ Փիւնիկէում իւրաքանչիւր բլրի վրայ տաճար ու սրբազան անտառակ էր կառուցանում, ինչպէս և զարգացած արդիւնաբերութեան ու աշխարհային հարստութեան տեսքը դուր չէին գալիս նրան։ Միաստուածութեան պատճառով՝ մարդիկ կռապաշտական կրօններն ըմբռնելու ընդունակութիւնից զրկւում են. բազմաստուածեանների երկիրն ընկած մահմեդականը, կարծես, կորցնում է տեսնելու ընդունակութիւնը։ Անկասկած՝ այս ճանապարհորդութիւնների ընթացքում Յիսուս ոչինչ չսովորեց։ Նա շարունակ վերադառնում էր Գենեսարէթի իր սիրած ափերը։ Այստեղ էր նրա մտքի առարկան, այստեղ էին նրա հաւատն ու սէրը։

ԳԼՈՒԽ Ը

Յիսուսի աշակերտները

Այդ երկրաւոր դրախտում, ուր մինչև այդ ժամանակ քիչ էին թափանցել պատմական յեղափոխութիւնները, ապրում էր ուրախութեամբ և նուրբ զգացումներով լի ազնիւ մի ժողովուրդ, որ կատարելապէս սազում էր իր երկրին։

Տիբերիական լճին աշխարհիս ամենաձկնառատ աւազանն էր։ Ընդարձակ ձկնորսութիւնը ծաղկած էր մանաւանդ Բեթսայիդայում և Կափառնայումում, և ազգաբնակութիւնը, շնորհիւ այդ բանի, բարեկեցիկ կեանք էր վարում։ Ձկնորսների ընտանիքները լուռ ու խաղաղ մի համայնք էին կազմել, որ, բազմաթիւ ազգակցական կապերի շնորհիւ, բռնել էր լճի մեր նկարագրած ամբողջ շրջանը։ Այդ մարդիկ, շնորհիւ այն հանգամանքի՝ որ թեթև զբաղմունքն ազատ ժամեր շատ էր պարգևում նրանց, կարողանում էին ժամանակ գտնել՝ նուիրուելու համար իրենց երևակայութեանը։ Աստուծոյ թագաւորութեան գաղափարն այս բարի մարդկանց փոքրիկ շրջանում աւելի մեծ համակրանքի արժանացաւ, քան որևէ ուրիշ տեղում։ Քաղաքակրթութիւն ասուած բանը, ոչ յունական և ոչ էլ ընդհանուր մտքով, դեռ ևս մուտք չէր գործել այնտեղ։ Դա ոչնչով նման չէր մեր գերմանական կամ կելտական լրջութեանը. թէև երբեմն նրանց բարութիւնը սնահաւատութեան էր հասնում և այնքան էլ խոր չէր, բայց այդ մարդկանց բարքերը մեղմ էին, իսկ իրենք՝ խելացի ու հարցասէր։ Մենք նրանց կարող ենք նմանեցնել այժմեան Լիբանանի ամենալաւ ազգաբնակութեանը, միայն այն տարբերութեամբ՝ որ այս վերջինս զուրկ է այն շնորհից, որ ունի առաջինը. այդ շնորհը մեծ մարդիկ արտադրելու առաւելութիւնն է։ Յիսուս այստեղ գտաւ իր իսկական ընտանիքը։ Նա այդ ձկնորսների մէջ հաստատուեց։

Կափառնայումը նրա քաղաքը դարձաւ, և երիտասարդ ուսուցիչն իրեն պաշտող այդ փոքրիկ շրջանում մոռացաւ իր թերահաւատ եղբայրներին, ապերախտ Նազարէթն ու նրա հեգնող անհաւատութիւնը։

Կափառնայումում մանաւանդ մի տուն Յիսուսի հաճելի օթևանն էր, և այդ ընտանիքը նրան տուեց և՛ անձնուէր աշակերտներ։ Այդ տունը պատկանում էր Յովնանի որդիներին, որոնք երկու եղբայր էին. նրանց հայրը, հաւանօրէն, վախճանուել էր այն ժամանակ, երբ Յիսուս տեղափոխուեց այդ լճի ափը։ Այդ երկու եղբայրն էին Սիմէոնը, որ Կեփաս (Վէմ) կամ Պետրոս կոչուեց, և Անդրէասը։ Նրանք ծնուել էին Բեթսայիդայում, բայց Յիսուսի քարոզութիւնների ժամանակ բնակւում էին Կափառնայումում։ Պետրոսն ամուսնացած էր և զաւակներ ունէր. նրա զոքանչն իր մօտ էր ապրում։ Յիսուս սիրում էր այդ տունը և սովորաբար այդ տեղ օթևանում։ Անդրէասը, կարծեօք, Յովհաննէս Մկրտչի աշակերտներից մէկն էր և, հաւանօրէն, Յիսուսի հետ ծանօթացել էր Յորդանանի ափերում։ Երկու եղբայրն էլ շարունակ ձկնորսութեամբ էին պարապում, մինչև անգամ այն ժամանակ՝ երբ, թւում է թէ, պիտի զբաղուած լինէին իրենց ուսուցչի գործով։

Յիսուս, որ շատ էր սիրում բառախաղով խօսել, երբեմն ասում էր, թէ նրանց «մարդորս» պէտք է շինի։ Բոլոր աշակերտներից ամենահաւատարիմը, իսկապէս, սրանք էին։

Նոյնպէս և մի ուրիշ ընտանիք Յիսուսին լաւ ընդունելութիւն ցոյց տուեց։ Դա Զաբդիայի կամ Զեբեդիայի ընտանիքն էր։ Զեբեդիան՝ որ հարուստ ձկնորս էր և բազմաթիւ մակոյկների տէր՝ ունէր երկու որդի, որոնցից անդրանիկի անունն էր Յակոբ, իսկ կրտսերը կոչւում էր Յովհաննէս։ Այս վերջինիս վիճակուեց յետագայում վճռական դեր խաղալ աճող քրիստոնէութեան պատմութեան մէջ։ Այդ երկու եղբայրն էլ անձնուէր աշակերտներ էին։ Զեբեդիայի կինն էլ, որի անունը Սաղոմէ էր, նուիրուեց Յիսուսին և մինչև մահը հետևում էր նրան։

Իսկապէս՝ կանայք նրան մեծ հաճոյքով էին ընդունում։ Նա գիտէր կանանց հետ այնպէս զսպուած վարուել, որ կարելի էր լինում երկու սեռերի միջև գաղափարական նուրբ

կապ պահպանել։ Կանանց և տղամարդկանց միմեանցից անջատումը, որ արևելեան ազգերի մէջ արգելք է հանդիսանում բարքերի մեղմացման, անկասկած՝ այն ժամանակ, ինչպէս և այժմ, գիւղերում և աւաններում աւելի թոյլ էր, քան մեծ քաղաքներում։

Գալիլիացի 3—4 անձնուէր կանայք միշտ հետևում էին երիտասարդ ուսուցչին և յաճախ վիճում էին միմեանց հետ, Յիսուսին լսելու և ծառայելու բաղդը վայելելու համար։

Այդ կիները նոր աղանդի մէջ մտցնում էին այն ոգևորութեան և հրաշքների տարրը, որոնց անհրաժեշտութիւնն արդէն զգալի էր դառնում։

Նրանցից մէկը, Մարիամ Մագթաղենացին, որի շնորհիւ նրա հայրենի խեղճ գիւղն այնպէս հռչակ ստացաւ, — կարծեօք, շատ շուտով յուզուող մի անձնաւորութիւն էր։

Այն ժամանակուայ բացատրութեան համեմատ՝ նա եօթն դևով էր բռնուած, այսինքն նեարդային հիւանդութիւն ունէր, մի հիւանդութիւն՝ որ արտաքուստ անբացատրելի է։

Յիսուս իր մաքուր ու նուրբ գեղեցկութեամբ հանդարտացրեց այս վրդովուած հոգին։ Մագթաղենացին նրան հաւատարիմ մնաց մինչև Գողգոթա, իսկ նրա մահուան հետևեալ օրն առաջնակարգ դեր խաղաց՝ որպէս գլխաւոր աղբիւր, որի շնորհիւ, ինչպէս յետոյ կը տեսնենք, զարգացաւ Յիսուսի յարութեան նկատմամբ ստեղծուած հաւատքը։ Յոհաննան, որ Անտիպասի տնտես Քիւզայի կինն էր, ինչպէս և Շուշանն ու անյայտ մնացած ուրիշ կանայք նոյնպէս շարունակ հետևում և ծառայում էին նրան։ Այդ կանանցից ոմանք հարուստ էին և միջոց էին տալիս երիտասարդ մարգարէին, որպէսզի վերջինս՝ առանց իր նախկին արհեստին դիմելու՝ կարողանայ ապրել։

Յիսուսին հետևում և աշակերտում էին շատ ուրիշ անձեր, որոնց թւում էին Փիլիպպոս Բեթսայիդացին, Տողմայի կամ Պտղոմէոսի որդի Նաթանայէլ Կանացին, ինչպէս և Մատթէոսը։ Դրանցից Նաթանայէլն էլ՝ կարծեօք՝ առաջին աշակերտներիցն էր, իսկ Մատթէոսը՝ հաւանօրէն՝ այն անձն էր, որ աճող քրիստոնէութեան Քսենոֆոնը դարձաւ յետագայում։ Նա մաքսաւոր էր և, շնորհիւ այդ բանի, միւս աշա-

կերտներից աւելի վարժ էր գրում։ Այդ մարդը, հաւանօրէն, հէնց այդ ժամանակից էլ մտածել է գրի առնել այն իրողութիւնները, որոնք Յիսուսի վարդապետութեան մասին մեր գիտեցածի հիմքն են կազմում։ Այդ աշակերտների թւումն էին նոյնպէս և հետևեալները. Թովմասը կամ Դիդիմը, որ երբեմն կասկածում էր, բայց այնուամենայնիւ զգայուն սրտի և ազնիւ ձգտումների տէր մարդ էր. Ղեբէոսը կամ Թադէոսը. Սիմէօն Նախանձայոյզը (Զիլոտ), որ, կարծեօք, Յուդա Գոլոնացու աշակերտներից էր և պատկանում էր կենտրիստների խմբին, որ մինչև այժմ էլ գոյութիւն ունի և շուտով խիստ աչքի ընկնող դեր պէտք է խաղար հրէական ազգի շարժման գործում. վերջապէս Յուդա Կերիոտացին (Իսկարիովտացին), որ Սիմէօնի որդին էր և որ յետոյ հաւատարիմների խմբում բացառութիւն կազմեց ու այնպիսի քստմնելի անուն ստացաւ։ Յիսուսի աշակերտները, բացի Յուդայից, բոլորն էլ գալիլիացի էին։

Կերիոտը Յուդայի երկրի հարաւային քաղաքներից մէկն էր և Քեբրոնից մի օրուայ ճանապարհ հեռու էր գտնւում։

Մենք տեսանք, որ Յիսուսի ընտանիքն առհասարակ չէր համակրում նրան։ Մինչդեռ նրա մօրաքրոջ՝ Մարիամ Կղէոպայի որդի Յակովբոսն ու Յուդան վաղուց նրա աշակերտների թւումն էին. ինքը Մարիամ Կղէոպան էլ այն կանանցից էր, որոնք մինչև Գողգոթա հետևեցին երիտասարդ վարդապետին։ Այդ միջոցին Յիսուսի մայրը նրա մօտ չէր։ Մարիամը Յիսուսի մահից յետոյ միայն մեծ նշանակութիւն ստացաւ, և աշակերտներն աշխատեցին նրան իրենց հետ կապել։ Այն ժամանակ կրօնի հիմնադրի ընտանիքի անդամները «տեառնեղբայրներ» անունով մի ազդեցիկ խումբ կազմեցին և երկար ժամանակ երուսաղէմական եկեղեցու գլուխն անցան, իսկ նրա աւերումից յետոյ գնացին Բեթանիա։

Յիսուսին մօտիկ լինելն անգամ մի մեծ առաւելութիւն էր՝ ապագայում աչքի ընկնելու համար։ Այդպէս է եղել և՛ Մուհամմէդի մահից յետոյ, որի կանայք ու աղջիկները, հակառակ մարգարէի կենդանութեան ժամանակ ոչ մի նշանակութիւն չունենալուն, մեծ հեղինակութիւն վայելեցին։

Յիսուս մտերիմների այս խմբի անդամներից մի քանիսին, երևի, առաւելութիւն էր տալիս և այդ պատճառով

նրանցից կազմեց մի աւելի սերտ խմբակ։ Զեբեդիայի երկու որդին՝ Յակոբն ու Յովհաննէսը՝ կարծեօք այդ խմբակում առաջին տեղն էին բռնում։ Նրանք լի էին զգացումով ու կրակով։ Յիսուս այդ երկու եղբօրը սրամտաբար «շանթի որդիներ» էր անուանում. և նա այդ դարձուածքը գործ էր ածում այն պատճառով, որ նրանք չափազանց եռանդուն էին և, եթէ շանթը նրանց իրաւասութեան տակ լինէր, շանթով էլ կօգտուէին յաճախ։

Մանաւանդ Յովհաննէսը շատ մօտիկ էր Յիսուսին։ Այն բազմանդամ և գործունեայ դպրոցը, որ յետոյ միացաւ այս աշակերտին և մեզ հաղորդեց նրա անցեալը, ամենայն հաւանականութեամբ մի փոքր աւելի է մեծացրել Յիսուսի՝ նրա նկատմամբ տածած զգացումները։

Աւելի մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ, ըստ համատես աւետարանիչների, Յովնանի որդի Սիմէօնը կամ Պետրոսը, Զեբեդիայի որդի Յակոբն ու նրա եղբայր Յովհաննէսը կազմում էին մի մտերմական խորհուրդ, որին Յիսուս յաճախ էր դիմում որոշ րոպէներում, երբ կասկածում էր միւսների հաւատքի ու հասկացողութեան վրայ։

Բացի դրանից, կարծեօք, այդ երեքը ձկնորսական մի ընկերութիւն էին կազմել։ Յիսուս շատ մօտիկ ու մտերիմ էր Պետրոսին։ Այս վերջինիս ուղիղ, անկեղծ ու յախուռն բնաւորութիւնը Յիսուսին դուր էր գալիս, և վարդապետը յաճախ էր ծաղրում նրա վճռական արարքները։ Պետրոսը՝ որ հակուած չէր դէպի խորհրդաւորութիւն՝ ուսուցչին յայտնում էր իր պարզամիտ կասկածները, զայրոյթն ու մարդկային պակասութիւններն այնպիսի ազնիւ անկեղծութեամբ, որպիսին պատահում ենք ս. Լուդովիկոսի նկատմամբ ունեցած՝ Ժուանվիլի վարմունքի մէջ։ Յիսուս բարեկամաբար կշտամբում էր Պետրոսին՝ միևնոյն ժամանակ հաւատալով ու յարգելով նրան։ Իսկ ինչ վերաբերում է Յովհաննէսին՝ նրա երիտասարդութիւնը, մեծ ու տաք սիրտը և վառ երևակայութիւնը պէտք է որ շատ գրաւիչ լինէին։ Նախնական քրիստոնէութեանն այնպիսի յաղթական թռիչք տուող այս նշանաւոր անձի բնաւորութիւնն աւելի ուշ կազմակերպուեց։

Անող հերձուածը, բառացի առումով, ոչ մի աստիճան

չէր ընդունում։ Ամենքը պիտի «եղբայրներ» կոչուէին։ Եւ Յիսուս չէր ընդունում ոչ մի պատուանուն, օրինակ՝ «րաբբի», որ ուսուցիչ է նշանակում, կամ «հայր», որովհետև միակ ուսուցիչն ինքն էր և միակ հայրը՝ Աստուած։ Ամենամեծը պէտք է բոլորի սպասաւորը լինի։ Զնայած դրան՝ Յովնանի որդի Սիմէօնը, շնորհիւ իր ձեռք բերած առանձին նշանակութեան, իր ընկերների շրջանում չափազանց մեծ յարգանք էր վայելում։

Յիսուս Սիմէօնի մօտ էր ապրում և նրա մակոյկից էր ուսուցանում. Սիմէօնի տունն աւետարանի քարոզութեան կենտրոնն էր։ Հասարակութիւնը նրան համարում էր որպէս համայնքի գլխաւոր, և հարկահաւաքները, համայնքից հասանելի տուրքն ստանալու համար, նրան էին դիմում։ Սիմէօնն էր, որ առաջին անգամ Յիսուսին Մեսիա անուանեց։ Մի անգամ, երբ Յիսուսի ժողովրդականութիւնը վտանգուել էր, վարդապետը հարցրեց իր աշակերտներին. «Գուցէ դո՞ւք էլ էք կամենում ինձ թողնել»։ Սիմէօնը պատասխանեց. «Ո՞ւմ մօտ գնանք, Տէ՛ր, միայն դու գիտես յաւիտենական կեանքի խօսքերը»։ Յիսուս իր եկեղեցում Սիմէօնին որոշ առաջնութիւն էր տալիս յաճախ և նրան անուանում Կեփաս (որ ասորերէն նշանակում է վէմ), կամենալով յայտնել որ նա է իր նոր շինութեան անկիւնաքարը։

Յիսուս նոյն իսկ մի անգամ, կարծես թէ, Սիմէօնին խոստացաւ յանձնել «երկնից թագաւորութեան բանալիները» և իրաւունք տալ նրան երկրի վրայ վճիռներ կայացնելու, որոնք երկնքումն էլ հաստատուէին։

Պետրոսի այս առաջնութիւնը, անկասկած, որոշ նախանձ առաջացրեց։ Այդ նախանձն աւելի ապագայի համար էր, այսինքն Աստուծոյ թագաւորութեան համար, ուր բոլոր աշակերտները պիտի Յիսուսի աջ և ձախ կողմերում գահերի վրայ բազմեն՝ Իսրայէլի 12 ցեղերը դատելու համար։ Աշակերտները հարց էին տալիս միմեանց, թէ ո՞վ պէտք է «մարդու որդուն» աւելի մօտիկ բազմի և մի տեսակ նրա հաւատարմատարը կամ առաջին նախարարը լինի։

Զեբեդիայի երկու որդիներն էին կամենում այդ տեղը։ Այս մտքով գրաւուած, նրանք իրենց մօրը, Սաղոմէին դի-

մեցին, և այս վերջինս մի անգամ վարդապետին մի կողմ տա-
նելով իր որդիների համար երկու պատուաւոր տեղ խնդրեց։
Յիսուս խոյս տուեց այդ խնդիրքից՝ իր սովորական դար-
ձուածքով պատասխանելով, թէ ով իր անձը բարձրացնի՝ կը
ցածրանայ և թէ երկնքի թագաւորութիւնը միայն փոքրերին
պիտի պատկանի։ Այս դէպքի պատճառով՝ աշակերտների մէջ
Յակոբի և Յովհաննէսի դէմ դժգոհութիւն և գայրոյթ ծագեց։

Նոյն մրցումն է նկատւում Յովհաննէսին վերագրուած
աւետարանում, ուր հեղինակը, իրեն «սիրելի աշակերտ» ա-
նուանելով միշտ,—որին, իբր թէ՝ մեռնելու ժամանակ՝ յանձ-
նել էր իր մայրը,—աշխատում է Սիմէօն Պետրոսի կողքին,
իսկ երբեմն էլ նրանից առաջ դասել իրեն։ Իսկ այս վերջին
իրողութիւնը տեղի է ունենում այն դէպքերում, երբ միւս
աւետարանիչները նրա մասին չեն գրում։

Ալփիայի որդի Ղևին կամ Մատթէոսն էր միայն որ
ստորին դասակարգի չէր պատկանում, որովհետև մաքսաւոր
(հարկահան) էր։ Բայց մաքսաւորները Հրէաստանում գլխա-
ւոր հարկահաններ (որոնք հասարակական բարձր դիրք էին
վայելում միշտ, այսինքն հռովմէական քաղաքացի էին հա-
մարւում և Հռովմում «պուբլիկան» էին կոչւում) չէին։ Նրանք
գլխաւոր հարկահանների ներկայացուցիչ էին միայն, աւելի
ցածր աստիճանի պաշտօնեայ կամ հասարակ վերակացու։
Ակրից Դամասկոս տանող մեծ ճանապարհն աշխարհիս ամե-
նահին ուղիներից մէկն է և այն ժամանակ անցնում էր
Գալիլիայի միջով ու հասնում լճին. այդ պատճառով՝ բազ-
մաթիւ այդպիսի պաշտօնեաներ էին գալիս այդտեղ։ Կափառ-
նայումում, որ՝ հաւանօրէն՝ գտնւում էր այդ ճանապարհի
վրայ, այդ տեսակ հարկահաններ շատ կային։ Այդ պաշտօնը
ոչ մի տեղ յարգանք չի վայելում, իսկ հրէաներն ուղղակի
յանցանք էին համարում։ Հարկատուութիւնը հրէաների հա-
մար նորութիւն էր և հպատակութեան նշան։ Յուդա Գոլո-
նացու դպրոցն այն կարծիքին էր, թէ հարկ վճարելը հեթա-
նոսութիւն է։ Այդ պատճառով էլ՝ օրինապահներն ատում էին
հարկահաններին, մարդասպանների, ճանապարհ կտրողների
և անառակ կեանք վարողների կարգն էին դասում նրանց։
Այս պաշտօնն ստանձնող հրէաները տաճարի կողմից բանադ-

րանքի էին ենթարկւում և զրկւում էին կտակ անելու իրա-
ւունքից։ Նրանց գանձանակն անիծուած էր համարւում։ Օ-
րէնսգէտներն արգելում էին նրանց մօտ փող մանրել։ Հա-
սարակութիւնից վռնտուած այս խեղճ մարդիկ միմեանց հետ
էին միայն տեսնւում։ Յիսուս ընդունեց Ղևիի առաջարկած
հացկերոյթը, որին մասնակցում էին՝ այն ժամանակուայ
դարձուածքով ասած՝ շատ մաքսաւորներ ու մեղաւորներ։ Դա
մի գայթակղութիւն էր։ Այդպիսի լաւ վարկ չվայելող տնե-
րում կարելի էր վատ շրջանի հանդիպել։

Այսպիսով՝ մենք յաճախ կը տեսնենք, որ Յիսուս, ամե-
նախիստ անարգանքի ենթարկուելով և առանց ուշադրութիւն
դարձնելու թէ ինչ են ասում բարեմիտ մարդկանց նախապա-
շարումները, աշխատում է հոգեպէս բարձրացնել ուղղափառ-
ների կողմից արհամարհուած դասակարգերը։ Յիսուս իր բազ-
մաթիւ յաղթութիւնները պարտական էր միմիայն իր անձ-
նաւորութեան և իր լեզուի անսահման թովքին։ Թափանցող
մի խօսք, պատահմամբ ընկած մի ակնարկ բաւական էին, որ
պարզ թեցնեն քնած խիղճը և նրան անձնուէր հետևողներ պար-
գևեն։ Յիսուս յաճախ մի անմեղ խորամանկութիւն էլ, բանեց-
նում, խորամանկութիւն՝ որից օգտւում էր և Ժաննա դ'Արկը։

Նա, երբ կամենում էր մէկին իր կողմը գրաւել, այն-
պէս էր ցոյց տալիս, թէ նրա մասին մի ծածուկ բան գիտէ
կամ թէ յիշեցնում էր նրա սրտին մօտիկ մի գիպուած։ Յի-
սուս անհա հէնց այդ միջոցով կարողացաւ գրաւել Նաթանա-
յէլին, Պետրոսին ու Սամարացի կնոջը։

Յիսուս իր ոյժի իսկական պատճառը, այսինքն իր՝ շրր-
ջապատողներից բարձր լինելը ծածկում էր և չէր արգելում,
որ մարդիկ կարծեն, թէ ի վերուստ իրեն տրուած շնորհն է
պատճառը, որ ինքը կարողանում է ուրիշների մտքի խոր-
հուրդն իմանալ և սիրտը կարդալ։ Ամենքը կարծում էին, թէ
մարդկանց համար անմատչելի մի մթնոլորտում է ապրում
նա։ Ասում էին նոյնպէս, թէ լեռների կատարներին Յիսուս
խօսակցում էր Մովսէսի ու Եղիայի հետ. հաւատում էին, թէ՝
առանձնութեան ժամանակ՝ հրեշտակները գալիս էին նրան
ծառայելու և գերբնական յարաբերութիւն էին հաստատում
նրա ու երկնքի միջև։

ԳԼՈՒԽ Թ

Յիսուսի քարոզը լճի վրայ

Յիսուս հէնց այս խմբով էր շրջապատուած Տիբերիական լճի ափերին։ Եւ այդ մի խումբ մարդկանց մէջ բարձր դասակարգի ներկայացուցիչներն էին մաքսաւորն ու տընտեսի կինը միայն։ Իսկ մնացեալները ձկնորսներ ու հասարակ մարդիկ էին։ Նրանց ազնուութիւնը կատարեալ էր. Յիսուսին շրջապատող այս խումբը՝ մտքով անզարգացած՝ հաւատում էր ուրուականների և ոգիների գոյութեանը։ Հելլենական քաղաքակրթութեան ոչ մի տարր չթափանցեց քըրիստոնէութեան այս առաջին սաղմը. հրէական գիտութիւնից էլ շատ տեղեակ չէին բայց՝ դրա փոխարէն՝ մարդիկ այստեղ խիստ զգայուն ու բարի կամքի տէր էին։ Գալիլիայի սքանչելի կլիմայի շնորհիւ՝ կեանքն այս ազնիւ ձկնորսների համար մի կատարեալ վայելք էր։ Լինելով հասարակ, բարի ու երջանիկ՝ նրանք Աստուծոյ Թագաւորութեան իրական կարապետներն էին դառնում իրենց այս գեղածիծաղ ծովակի վրայ, երբ լողում էին հեզասահ ալիքներից օրօրուելով, կամ քնում էին նրա ափերի մօտ։ Աննկարագրելի է բաց երկնքի տակ անցկացրած այդ կեանքի ամբողջ հըմայքը, ինչպէս և մարդու հոգին տաքացնող հեզ ու պայծառ բոցը, որ զգալի է լինում բնութեան հետ հաղորդակցելիս, նմանապէս և այն անուրջները, որոնցով լիքն են աստղազարդ գիշերները՝ անսահման խոր կապոյտի տակ։ Այդպիսի մի գիշեր՝ Յակոբը, գլուխը քարին դնելով, տեսաւ երկնային լուսատուների մէջ այն անհամար սերունդները, որ խոստացուել էին իրեն, ինչպէս և այն խորհրդաւոր սանդուղը, որ ձգուած էր երկնքի ու երկրի միջև և որով ելևէջում էին հրեշտակները։ Յիսուսի ժամանակ դեռ ևս երկին-

քը փակ չէր և ոչ էլ երկիրը սառած։ Դեռ ևս ամպերը բացւում էին «մարդու որդու» գլխին ու հրեշտակները ելևէջում էին նրա գլխի վերև։ Աստուծոյ Թագաւորութեան տեսիլքն ամէն տեղ գոյութիւն ունէր, որովհետև մարդիկ իրենց սրտումն էին կրում այն։ Այս պարզ հոգիներն իրենց հեզ ու պայծառ հայեացքով տիեզերքի գաղափարական կողմն էին տեսնում միայն։ Աշխարհն իր աստուածային մաքուր խղճի գաղտնիքը գուցէ միայն այս երջանիկ երեխաների առաջ է բաց արել, որովհետև նրանք իրենց մաքուր սրտով Աստուծոյ տեսութեանն են արժանացել։ Յիսուս իր աշակերտներով բնակւում էր շարունակ բաց երկնքի տակ։ Երբեմն նա մակոյկ էր մտնում և այնտեղից քարոզում ափին ժողովուած բազմութեանը։

Պատահում էլ էր, որ լճի շրջակայ լեռներից մէկն էր բարձրանում և նստում մաքուր օդում ու պայծառ երկնակամարի տակ։ Այսպիսով՝ ուսուցչին հաւատարիմ ամբոխը, ուրախ ու անգործ, մի տեղից միւսն էր շրջում նրա հետ և մասնակցում նրա ոգևորութեանը։ Երբեմն այս ամբոխի անդամներից մէկն ու մէկի սրտում միամիտ կասկածներ էին ծագում և կամ մի թերահաւատ հարց էր ուղղւում Յիսուսին։ Այդպիսի դէպքերում վերջինիս մի ժպիտը կամ հայեացքը բաւական էր լռեցնելու թերահաւատին։ Իւրաքանչիւր քայլափոխում՝ անցնող ամպի, դեղնող հասկի կամ աճող սերմի մէջ նրանք տեսնում էին Աստուծոյ Թագաւորութեան մերձեցման նշանը և հաւատում էին, որ մօտեցել է այն ժամանակը, երբ Աստուծուն պիտի տեսնեն և տիեզերքի տէրը պիտի դառնան. հոգսն ուրախութեան էր փոխւում. դա մի ընդհանուր մխիթարութիւն էր, որ աշխարհ էր եկել։

«Երանի հոգով աղքատներին,—ասում է Ուսուցիչը,—որովհետև նրանցն է երկնքի Թագաւորութիւնը։

«Երանի սգաւորներին, որովհետև նրանք են մխիթարուելու։

«Երանի հեզերին, որովհետև նրանք են ժառանգելու աշխարհը։

«Երանի նրանց, ովքեր քաղցած ու ծարաւ են արդարութեան, որովհետև նրանք են կշտանալու։

«Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք են ողորմութիւն գտնելու։

«Երանի՜ մաքրասիրտներին, որովհետև նրանք են տեսնելու Աստուծուն։

«Երանի՜ տանջուողներին, որովհետև նրանք են Աստուծոյ որդիներ կոչուելու։

«Երանի՜ նրանց, ովքեր հալածւում են արդարութեան համար, որովհետև նրանցն է երկնքի Թագաւորութիւնը»։

Յիսուսի քարոզը քաղցր ու մեղմ էր և լի՝ դաշտերի անոյշ բուրմունքով։

Նա սիրում էր ծաղիկները և նրանցից սքանչելի օրինակներ էր առաջ բերում։ Երկնքի թռչունները, լեռները, ծովը, երեխաների խաղը՝ այդ ամենը նրա քարոզների մէջ էին մտնում։ Նրա ոճը նման չէր յունականին, այլ աւելի մօտիկ էր հրէական առակախօսների ոճին, մանաւանդ նրան ժամանակակից հրէայ գիտնականների ոճին, որի օրինակը կարող ենք տեսնել Պիրկէ Աբոթի մէջ։

Նրա դատողութիւնները երկար չէին, այլ աւելի նման էին ղուրանի «սուրաթներին», և այդ հատուածները յետագայում միացնելով կազմեցին այն երկար զրոյցները, որ արձանագրել է Մատթէոսը։ Այս հատուածները ոչ մի կապով չէին միացած իրար. բայց՝ չնայած դրան՝ նրանք մեծ մասամբ լի էին և շաղկապուած միևնոյն ոգևորութեամբ։ Ուսուցիչն աննման էր մանաւանդ իր քարոզներում։

Յիսուս քարոզութեան իր այդ ոճը մովսիսականութիւնից փոխ չի առել, այլ ինքն է ստեղծել։ Ճիշտ է, բուդդայական գրքերումն էլ միևնոյն շեշտով ու նոյն կազմութեամբ գրուած քարոզներ կան, ինչ որ քրիստոնէական աւետարաններում, բայց շատ դժուար է կարծել, որ Յիսուս բուդդայական ազդեցութեան է ենթարկուել։ Այդ նմանութիւնը գուցէ կարելի լինի բացատրել այն հանգամանքով, որ թէ քրիստոնէութիւնը և թէ բուդդայականութիւնը հաւասարապէս համակուած էին հեզութեան ոգով և զգացումների խորութեամբ։

Գալիլիայի ժողովուրդը պարզ ու հանգիստ կեանք էր վարում և հէնց այդ պատճառով էլ կատարելապէս անտարբեր էր դէպի արտաքին դատարկ պճնասիրութիւնն ու կենցաղական յարմարութիւնները, որոնք այժմ մեզ համար, շնորհիւ մեր անբարեխառն կլիմայի, անհրաժեշտ են դարձել։

Սառը կլիմայում ապրող մարդը՝ ստիպուած լինելով շարունակ կռիւ մղել բնութեան դէմ՝ մեծ նշանակութիւն է տալիս իր ձեռք բերած բարօրութեանը։ Ընդհակառակը՝ տաք երկիրները, աւելի քիչ հոգսեր ունենալով, մի տեսակ գեղարուեստի ու գաղափարականութեան երկիր են դառնում։ Այդ երկիրներում կեանքի կողմնակի պահանջերը շատ չնչին են, եթէ համեմատութեան դնենք ձեռք բերուած ուրախութիւնների հետ։ Այդ տեղերում տնային զարդարանքներն աւելորդ են, որովհետև ազգաբնակութիւնն աշխատում է շարունակ բաց օդում ապրել։ Կանոնաւոր և առատ ուտելը, որ մեր բարեխառն կլիմայի տակ անհրաժեշտ պահանջ է դարձել, ծանր ու անհաճոյ կը լինէր այդ երկիրներում։ Իսկ ինչ վերաբերում է պճնուելուն՝ մարդ ինչպէս կարող է զարդարանքներով մրցել երկնքի թռչունների ու երկրի հետ։ Տաք կլիմայում աշխատելն անօգուտ է, որովհետև աշխատանքն այդտեղ այնքան չի արտադրում, որքան ծախսւում է նրա վրայ։ Դաշտի կենդանիներն ամենահարուստ մարդուց էլ լաւ են հագնուած, մինչդեռ ոչ մի աշխատանք չեն կատարում։ Աշխատանքի վերաբերմամբ տածուած այս արհամարհանքը, եթէ այդ զգացումը ծուլութեան արդիւնք չէ միայն, մարդկանց անհամեմատ բարձրացնում է հոգեպէս։ Հէնց այդ արհամարհանքն էր ոգևորում Յիսուսին՝ ամենասքանչելի դատողութիւններ անելու։

«Ձեր գանձերը երկրի վրայ մի՛ հաւաքէք,—ասում էր նա,—ուր ցեցն ու ժանգն են ուտում և ուր գողերն անցք բաց անելով գողանում են. այլ ձեզ համար երկնքում գանձ հաւաքեցէք, ուր ոչ ցեցը, ոչ ժանգը կուտեն և ոչ էլ գողերը կը գողանան։ Ուր ձեր գանձերն են հաւաքուած, այնտեղ էլ ձեր սիրտը կը լինի»։ «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև կամ մէկին կատի ու միւսին կը սիրի և կամ մէկին կը պատուի, իսկ միւսին կարհամարհի։ Չէք կարող միաժամանակ Աստուծուն և մամոնային ծառայել։ Ահա թէ ինչու եմ ասում ձեզ, թէ ձեր կեանքը պահպանող

կերակրի մասին մի՛ հոգաք և ոչ էլ ձեր մարմինը ծածկող
հագուստի մասին։ Մի՞թէ կեանքը կերակրից ու մարմինը՝ հա-
գուստից բարձր չեն։ Նայեցէք երկնքի թռչուններին. նրանք
ոչ ցանում են և ոչ հնձում, ոչ ամբարներ ունեն և ոչ բնա-
կարաններ. ձեր երկնաւոր Հայրն է կերակրում նրանց։ Մի՞-
թէ դուք նրանցից մի քիչ աւելի չէք։ Եւ վերջապէս ձեզնից
ո՞վ կարող է այդ հոգսերով իր հասակը մի կանգուն բարձ-
րացնել։ Հագուստի համար ի՞նչ էք հոգում։ Նայեցէք դաշտի
շուշաններին. նրանք ոչ աշխատում են և ոչ գործում։ Բայց,
ճիշտն եմ ասում, Սողոմոնն էլ իր ամենափառաւոր ժամա-
նակը նրանցից մէկն ու մէկի նման չհագնուեց։ Եթէ վայրի
խոտը, որ այսօր կայ և վաղը կրակը պէտք է ձգուի, Աս-
տուած այնպէս է հագցնում, ապա որքա՜ն աւելի ձեզ համար
կը հոգայ, թերահաւատնե՛ր։ Ուրեմն այսուհետև այլևս հոգս
մի՛ անէք ու մի՛ ասէք թէ՝ «Ի՞նչ ուտենք, ի՞նչ խմենք կամ
ի՞նչ հագնենք». այդ ամենը կռապաշտներն են փնտռում։
Ձեր երկնաւոր Հայրը ձեզնից աւելի լաւ գիտէ, թէ ինչ է
հարկաւոր ձեզ։ Ամենից առաջ Աստուծոյ թագաւորութիւնն
ու նրա արդարութիւնը որոնեցէք, իսկ մնացածն առանց
խնդրելու կը ստանաք։ Այսուհետև մի՛ մտածէք վաղուայ
մասին, որովհետև վաղուայ օրն ինքը կը հոգայ իր մասին։
Իւրաքանչիւր օրուայ համար իր ունեցած հոգսերն էլ բա-
ւական են»։

Այս խօսքը գալիլիական սկզբունքներն աճող հերձուածի
վրայ վճռական ազդեցութիւն ունեցան։ Այդ երջանիկ ամ-
բոխն՝ իր կարիքները հոգալու գործն երկնաւոր Հօր վրայ
ձգելով իր համար օրէնք ընդունեց կենսական հոգսերը չարիք
համարել, մի այնպիսի չարիք՝ որ արմատախիլ է անում մար-
դու մէջ եղած բարու ծիլերը։

Ամեն օր նա Աստուծուց վաղուայ հացն էր խնդրում։
Էլ ինչու համար գանձ ժողովէր։ Աստուծոյ թագաւորութիւ-
նը մօտենում էր. «Վաճառեցէք ձեր ունեցածները և բաժա-
նեցէք աղքատներին,—ասում էր Յիսուս։—Ձեզ համար եր-
կնքում այնպիսի քսակներ պատրաստեցէք, որոնք չեն մաշ-
ւում, և այնպիսի գանձեր, որոնք անսպառ են»։ Ի՞նչ բան
կարող է աւելի անմիտ լինել, քան գոյութիւն չունեցող ժա-

ռանգների համար խնայողութիւն անելը. չէ՞ որ երբէք չենք
տեսնելու նրանց։ Մարդկային անմտութիւնը ցոյց տալու հա-
մար՝ Յիսուս, որպէս օրինակ, հետևեալ առակը պատմեց։
Մի հարուստ մարդ հրամայեց ընդարձակել իր ամբարները
և շատ տարիների համար պաշար հաւաքել, բայց շուտով ին-
քը մեռաւ ու չկարողացաւ այդ հաւաքածից օգտուել։ Այդ հա-
յեացքը Գալիլիայում ընդունելութիւն գտաւ շնորհիւ այն բա-
նի, որ այդ երկրում յաճախ էին կրկնւում աւազակութեան ու
կողոպուտի դէպքերը։ Աղքատը՝ որ աւազակութեան չէր
ենթարկւում՝ իրեն Աստուծոյ սիրելին էր համարում. մինչ-
դեռ հարուստը՝ ստացուածքի ապահովութիւն չունենալով՝ ի-
րեն զրկուած էր համարում։ Մեր հասարակական կազմը, որ
հիմնուած է խիստ կարգաւորուած մասնաւոր սեփականու-
թեան սկզբունքի վրայ, խեղճերի դրութիւնն անտանելի է
դարձնում. նրանք, բառի բուն նշանակութեամբ աշխարհում
տեղ չունին։ Ծաղիկը, խոտն ու ստուէրը հողատիրոջ համար
են միայն։ Արևելքում դրանք Աստուծոյ պարգևներն են և ոչ
ոքի չեն պատկանում։ Սեփականատէրը սահմանափակ առաւե-
լութիւններ է վայելում միայն, իսկ բնութիւնն ամէնքինն է։

Ասենք՝ նորածին քրիստոնէութիւնը հետևում էր եսէ-
ացիներին կամ բժիշկներին, և հրէական միւս աղանդներին,
որոնց հիմքն էր հանրակեցութիւնը։

Կոմմունիզմի սկզբունքները մտնում էին այդ բոլոր հեր-
ձուածների մէջ, որոնց վրայ թէ փարիսեցիները և թէ սա-
դուկեցիները խէթ աչքով էին նայում։

Մեսիականութիւնը՝ որ ուղղափառ հրէաների համար
քաղաքական մի սկզբունք էր հանդիսանում բացառապէս՝ այդ
հերձուածների տեսակէտից հասարակական բնաւորութիւն
էր կրում։

Այս փոքրիկ եկեղեցիներն ապրում էին համեստ, չա-
փաւոր ու կանոնաւոր կեանքով, իւրաքանչիւրին տալիս էին
պատշաճ անձնական ազատութիւն և աշխատում էին երկըն-
քի թագաւորութիւնն իրագործել երկրի վրայ։

Երջանիկ կեանքի այն երազները՝ որոնք հիմնուած էին
մարդկանց եղբայրութեան ու ճշմարիտ Աստուծոյ պաշտա-
մունքի վրայ՝ գրաւում էին այս վեհ սրտերը և ամեն կողմից

համարձակ ու անկեղծ փորձեր էին առաջ բերում, փորձեր՝ որոնք, չնայած այս ամենին, չէին կարող ապագայի վրայ մեծ յոյսեր դնել։

Յիսուս, որ դժուար թէ եսէացիների հետ կապ ունենար (որովհետև՝ պատմութեան մէջ՝ նմանութիւնը կապ ունենալու հետևանք չի նկատւում միշտ), այս բանում նրանց շատ էր նմանւում։ Այս նոր համայնքի մէջ ստացուածքի համայնացումը մի որոշ ժամանակ օրէնք էր դարձել։ Ժըլատութիւնն ամենագլխաւոր մեղքն էր համարւում. բայց պէտք է նկատել, որ «ժլատութիւն» ասուած մեղքը, որին քրիստոնէութիւնն այնչափ խիստ էր վերաբերւում, ոչ այլ ինչ էր այն ժամանակ, բայց եթէ այն զգացումը, որով մարդ կապւում է իր սեպհականութեանը։ Յիսուսին աշակերտելու առաջին պայմանն էր՝ ծախել ստացուածքը և փողերը բաժանել աղքատներին։ Ով այս ծայրայեղութիւնից խոյս էր տալիս, չէր կարող Յիսուսի համայնքին անդամակցել։ Ուսուցիչը յաճախ կրկնում էր, թէ ով ուզում է երկնքի թագաւորութիւնը ձեռք բերել՝ պետք է իր ամբողջ ստացուածքը վաճառի և փողն աղքատներին բաժանի. ու այդպէս վարուողն անպայման կօգտուի։ «Մի մարդ դաշտում գանձ գըտաւ,—ասում էր նա,—անմիջապէս ծախեց իր բոլոր ստացուածքը և գնեց այդ արտը»։ Մի վաճառական թանկագին մարգարիտ գտնելով իր բոլոր ունեցածը փողի է վերածում և գնում այդ մարգարիտը։ Բայց, դժբաղդաբար, այդ կարգերի անյարմարութիւնը շուտով նկատելի եղաւ։ Գանձապահի կարիք զգացուեց։ Այդ պաշտօնի համար ընդունուեց Յուդա Իսկարիովտացին։ Ճշմարիտ էր թէ անհիմն՝ յայտնի չէ, նրան մեղադրեցին, որ խլացրել է այդ համայնքի փողերը բայց ակնյայտնին այն է, որ նա ողբալի վախճան ունեցաւ։

Յիսուս, որ երկնային գործերով աւելի էր զբաղուած, քան երկրայինով, իր աշակերտներին երբեմն ուսուցանում էր մի ինքնատիպ քաղաքատնտեսութիւն։ Տարօրինակ մի առակում մի կառավարիչ գովաբանւում է նրա համար, որ, ի հաշիւ իր տիրոջ, աղքատների շրջանում բարեկամներ է գտել որպէսզի դրանք իրեն երկնքի արքայութիւնը մտցնեն։

Քանի որ այդ թագաւորութեան կարգադրիչներն աղ-

քատները պէտք է լինեն, ուրեմն, ըստ երևոյթին, նրանք կը ընդունեն միայն այն ամենքին, ովքեր նրանց ողորմել են։ Աւետարանն ասում է, որ «Փարիսեցիները լսում և, իրենց ժլատութեան պատճառով, ծիծաղում էին վարդապետի վրայ»։ Նրանք լսեցի՞ն արդեօք հետևեալ ահեղ առակը. «Մի հարուստ մարդ կար, որ միշտ ծիրանի ու բեհեզ էր հագնում և ամեն օր համեղ կերակուրներ էր ուտում։ Ղազարոս անունով մի աղքատ մարդ էլ կար, որ հարստի դրանն էր ընկած, վէրքերով ծածկուած և կերակրւում էր նրա սեղանի փշրուքներով։ Շները երբեմն գալիս էին ու նրա վէրքերը լիզում։ Աղքատը մեռաւ, ու հրեշտակները նրան տարան Աբրհամի գոգը։ Հարուստը նոյնպէս մեռաւ ու թաղուեց։ Դժոխքի տանջանքների մէջ ընկնելով՝ նա աչքերը բարձրացրեց և տեսաւ Ղազարոսին Աբրահամի գոգում նստած և ներքևից լալով կանչեց. «Հա՛յր Աբրահամ, խղճա՛ ինձ, ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը ջրի մէջ թրջի ու իմ պապակած լեզուն զովացնի, որովհետև այս բոցում սաստիկ տանջւում եմ»։ Բայց Աբրահամը նրան պատասխանեց. «Որդեակ, յիշիր, որ դու կենդանութեանդ միջոցին բոլոր երկրային բարիքները վայելել ես, իսկ Ղազարոսը չարաչար տանջուել է։ Այժմ էլ նա է մխիթարւում, իսկ դու տանջւում ես»։ Մի՞թէ կատարեալ արդարութիւն չէ այս։

Յետագայում այս առակը անուանուեց «Չար հարուստի» առակ։ Բայց իսկապէս, սա «հարուստի» առակ է։ Հարուստը դժոխք է ընկնում այն պատճառով որ հարուստ է և իր հարստութիւնից բաժին չի հանում աղքատներին, ինքը լաւ կերակրւում է, մինչդեռ ուրիշները նրա դռներում կիսաքաղցած են մնում։ Վերջապէս՝ մի անգամ Յիսուս, նոյնիսկ առանց ծայրայեղութեան հասնելու, առաջարկեց մի խորհուրդ։ Այդ խորհուրդը կայանում էր նրանում, որ ով կամենում է կատարեալ լինել՝ պիտի ծախի իր ստացուածքը և բաժանի աղքատներին. բայց յետոյ էլի այս խիստ վճիռն աւելացրեց թէ՝ «աւելի շուտ ուղտն ասեղի ծակով կանցնի, քան հարուստն երկնքի արքայութիւն կը մտնի»։

Բոլոր այս դէպքերում Յիսուս, ինչպէս և իրեն հետևող ուրախ ու զուարթ երեխաների ամբոխը, ղեկավարւում էր

չափազանց խոր զգացումով։ Այդ զգացումը պատճառ եղաւ, որ Յիսուս հոգեկան անդորրութեան յաւիտենական արարիչը և կեանքի մեծ ուսուցիչը դառնայ։ Յիսուս մարդկանց ազատեց այն բանից, ինչ ինքը անուանում էր «աշխարհի հոգսեր». այդպիսով նա կարող էր ծայրայեղութեան հասնել ու հարուածել մարդկային ընկերութեան ամենաէական պայմանները։ Բայց նա հիմնեց իր մեծ հոգեգիտութիւնը, որ մարդկային կեանքի ողբալի շրջանում դարեր շարունակ հոգիներին ուրախութիւն էր պատճառում։ Յիսուս շատ արդարացի կերպով նկատեց, որ մարդկանց դէպի բարոյական փիլիսոփայութիւնն անուշադիր լինելու և արհամարհանքով վերաբերուելու պատճառն աւելի յաճախ այն հաճոյքներն են, որոնց անձնատուր են լինում մարդիկ իրենց պաշարող հոգսերը մոռանալու համար, հոգսեր՝ որ անչափ բազմանում են քաղաքակրթութեան շնորհիւ։ Ահա թէ ինչու աւետարանն ամենօրեայ կեանքի վէրքերի դէմ մի դեղ դարձաւ, ինչպէս և աշխարհային հոգսերը վանող մի միջոց և սիրոյ ու եղբայրութեան մի հեզ կոչ, որ մի անգամ Յիսուս ուղղեց Մարթային. «Մարթա՛, Մարթա՛, շատ բանի համար ես հոգում, մինչդեռ անհրաժեշտ է միայն մէկը»։ Նոյնիսկ ամենադժգոյն կեանքը, որ լի է ցաւալի ու ստորացուցիչ պահանջներով, երկնքի մի անկիւնում կարող է ապաստան գտնել։ Մեր գործունեայ և քաղաքակրթուած երկիրներում՝ Գալիլիայի ազատ կեանքի վերյուշումը մի այլ աշխարհից բուրած անուշահոտութեան կամ «Հերմոնի ցողին» է նման, որ քարասրտութեան ու կոպտութեան առաջն առնելով, թոյլ չի տալիս նրանց Աստուծոյ դաշտը մտնել։

ԳԼՈՒԽ Ժ

Աստուծոյ թագաւորութիւնը հասկացւում է որպէս աղքատների թագաւորութիւն

Այդ ճշմարտութիւնները պիտանի են միայն այն երկիրներում, որտեղ կեանքը առատ օդ ու լոյս է վայելում։ Աստուծոյ որդիների այդ նուրբ համայնականութիւնը (կոմունիզմ), որդիների՝ որ իրենց հօր գրկում հաւատով են ապրում, կարող է գոհացնել միամիտ հերձուածողների մի փոքրիկ շրջան միայն, որ ամեն րոպէ սպասում է իր ցնորքների իրագործման։ Պարզ է, որ այդ սկզբունքներով չէր կարելի գրաւել ողջ հասարակութիւնը։

Եւ իսկապէս, Յիսուս շուտով համոզուեց, որ աշխարհի տիրող մասը երբէք չի հետևելու իր քարոզած թագաւորութեանը։ Այդ եզրակացութեանը գալուց յետոյ, նա արեց մի չափազանց վճռական քայլ։ Մի կողմ թողնելով մարդկային այդ քարասիրտ ու նախապաշարումների նեղ շրջանով սահմանափակուած մասը, դիմեց հասարակ ժողովրդին։ Ժողովուրդը պիտի կատարելապէս վերանորոգուի։ Աստուծոյ թագաւորութիւնը պատրաստուած է միայն. 1) Երեխաների ու երեխաների նման մարդկանց համար, 2) Այս աշխարհում կուածների, հասարակական հպարտութեան զոհերի համար, հպարտութիւն՝ որ հալածում է բարի ու հեզ մարդկանց և 3) հերետիկոսների, հերձուածողների, մաքսաւորների, սամարացիների և Տիւրոսում ու Սիդոնում բնակուող հեթանոսների համար։ Յետագայ ազգու առակով Յիսուս բացատրում է ու նուիրագործում ժողովրդին ուղղած իր այդ կոչը։ Մի թագաւոր պատրաստում է հարսանեկան խնճոյք և ուղարկում է իր ծառաներին կանչելու հրաւիրեալներին։ Բայց հրաւիրեալները, ամենքն էլ, հրաժարւում են. մի քանիսը

մինչև անգամ, անպատւում են Թագաւորի ծառաներին։ Այդ իմանալով, Թագաւորը ձեռք է առնում հետևեալ վճռական միջոցը։ Օրինաւոր մարդիկ չկամեցա՞ն նրա հրաւէրն ընդունել, վնաս չունի՛, թող գան առաջին պատահողները՝ հրապարակներում ու փողոցների անկիւններում ժողովուող աղքատները, մուրացկանները, կաղերը—ով որ էլ լինի, միայն թէ դահլիճը լցուի. «Երդւում եմ,—ասաց Թագաւորը,— որ նախկին հրաւիրուածներից ոչ ոք չի ճաշակի իմ ընթրիքը»։

Այդպիսով Յիսուսի վարդապետութիւնը դարձաւ կատարեալ էբիոնիզմ, մի վարդապետութիւն՝ որ քարոզում է աղքատների Թագաւորութիւնը և հաստատում, որ միայն նրանք կարող են փրկուել։

«Վա՜յ ձեզ հարուստներ,—ասում է նա,—որովհետև դուք արդէն ստացել էք ձեր մխիթարութիւնը։ Վա՜յ ձեզ, որ այժմ յագեցած էք, որովհետև դուք կը քաղցէք։ Վա՜յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք, որովհետև կը լաք ու կողբաք»։

«Երբ խնճոյք ես կազմում—աւելացնում է Յիսուս,— մի՛ կանչիր բարեկամներիդ, ազգականներիդ և հարուստ հարևաններիդ, որովհետև փոխարէնը նրանք էլ քեզ կը կանչեն, և դու վարձատրուած կը լինես։ Բայց երբ խնճոյքի ես հրաւիրում, հրաւիրի՛ր աղքատներին, անդամալոյծներին, կաղերին, կոյրերին, և դու երանելի կը լինես, որովհետև նրանք չեն կարող տալ քեզ փոխարէնը և դու կը վարձատրուես երբ յարութիւն կառնեն արդարները»։ Թւում է, թէ նոյն մտքով, նա ասել է յաճախ. «Եղէք լաւ վաճառական», այսինքն, ձեր գանձերը դրէք վստահելի տեղ։ Ի նկատի ունեցէք Աստուծոյ արքայութիւնը և բաժանեցէք ձեր ստացուածքները աղքատներին, որովհետև հին առածի համաձայն՝ «Աղքատին ողորմողը Տիրոջն է փոխ տալիս»։

Այդ ամենը նորութիւն չէր։ Դեռ շատ վաղուց ժողովրդապետական (դեմոկրատական) մի շարժում համակում էր հրէական ազգը, մի շարժում՝ որ իր ոգևորութեամբ գերազանց էր պատմութեան մէջ յիշատակւող բոլոր շարժումներից (նա աչքի է ընկնում նոյնպէս և իր տարած յաղթանակով, որովհետև միակն էր, որ դուրս չեկաւ մաքուր գաղափարի շրջանակից)։ Հին կտակարանի իւրաքանչիւր էջում դրօշմուա

է այն միտքը, թէ Աստուած աղքատի ու տկարի փոխարէն
հարուստից ու կարողից վրէժխնդիր է լինում։ Ժողովրդա-
պետական ոգին, բոլոր պատմութիւններից աւելի, Իսրայէլի
պատմութեան մէջ է գերակշռող հանդիսանում։ Մարգարէ-
ները, այդ ճշմարիտ և՝ կարելի է ասել՝ ամենահամարձակ
հռետորները անընդհատ ու անխնայ մտրակում էին իշխող
դասակարգը։ Նրանց շնորհիւ մի կողմից՝ «հարուստ, ամբա-
րիշտ, խստասիրտ ու չար», և միւս կողմից՝ «աղքատ, հեզ,
բարեպաշտ ու խոնարհ» բառերը հոմանիշ դարձան։ Գաղա-
փարների այդ կերպ ըմբռնումը աւելի հիմնաւոր դարձաւ երբ,
Սելևկեանների իշխանութեան ժամանակ, ողջ հրէայ ազնուա-
կանութիւնը դաւանափոխ լինելով՝ յունական կրօնն ընդու-
նեց։ Ենովքի գրքում հարուստների և ուժեղների հասցէին
ուղղուած անէծքները աւելի խիստ են, քան գտնում ենք ա-
ւետարանի մէջ։ Այդ գիրքը փարթամ ապրուստը ոճիրների
կարգն է դասում։ Այդ առեղծուածային մարգարէութեան
համաձայն «մարդու որդին» հեշտասէր Թագաւորների Թա-
գերը պիտի խլէր և գահավիժէր նրանց դժոխքը։ Երբ մուտք
գործեցին Հրէաստան փարթամ կեանքի ու վայելչութեան աշ-
խարհիկ տարրերը, այդ երևոյթը մի ուժեղ ըէակցիա առաջ
բերեց յօգուտ նահապետական պարզութեան։
«Վա՜յ ձեզ, որ ատում էք ձեր հայրերի Թողած խրճիթ-
ներն ու ժառանգութիւնը. վա՜յ ձեզ որ ձեր պալատները ու-
րիշների քրտինքով էք շինում. նրանց ամեն մի քարը, ամեն
մի աղիւսը մի մի մեղք է»։ «Աղքատ» բառը ստացաւ «սուր-
բի» ու «Տիրոջ բարեկամի» նշանակութիւն։ Իրանց «աղքատ»
էին անուանում Յիսուսի գալիլիացի աշակերտները, ինչպէս և
Հրէաստանի այն քրիստոնեաները, որ բնակւում էին Բաթա-
նիայում ու Հօրանում (Նազարէթցի այն հրէաները, որ հաւա-
տարիմ մնացին իրենց լեզուին ու Յիսուսի առաջին քարո-
զութեանը և պարծենում էին, որ իրենց մէջ կան մարդիկ,
որոնք Յիսուսի սերունդից են։)
Երկրորդ դարի վերջերից այս բառի հերձուածողնե-
րին, որոնք միւս եկեղեցիները գրաւող մեծ շարժումներից
հեռու էին մնացել, անուանեցին հերետիկոս (էբիոնիտներ),
իսկ այդ անուան ծագումը բացատրելու համար հնա-

ընւեցաւ Էբիոն անունով մի հերետիկոս։

Դժուար չէ գուշակել, որ աղքատութեանը նուիրուած այդ ծայրայեղ փառաբանութիւնը երկարատև չէր կարող լինել։ Դա այն ցնորքներից մէկն էր, որոնցից ազատ չի մնում ոչ մի մեծ շարժում, բայց որոնց վրայ, յետոյ, ժամանակը կարդում է իր դատավճիռը։ Հետզհետէ հասարակութեան աւելի լայն խաւեր գրաւելուց յետոյ, վերջ ի վերջոյ քրիստոնէութիւնը ստիպուեց իր մէջ ընդունել և հարուստներին։ Բուդդայականութիւնը, որ սկզբում ընդունում էր միայն կուսակրօններին, երբ իր հետևողների թիւը բազմացաւ, ստիպուած եղաւ և աշխարհականներին ընդունել։ Ամէն մի երևոյթ միշտ կրում է իր ծագման հետքերը։ Թէպէտ էբիոնիզմը շուտով մոռացութեան տրուեց, բայց քրիստոնէական հաստատութիւնների պատմութեան մէջ նրա հետքերն անջնջելի մնացին։ Յիսուսի քարոզների ժողովածուն Բաթանէայի էբիոնիտներն են կազմել։ Այնուամենայնիւ աղքատութիւնը մնաց իբրև մի իդէալ, որից իսկական քրիստոնեաները երբէք չէին շեղւում։

Աւետարանի ճշմարիտ հետևողը պիտի ոչինչ չունենար։ Աղքատութիւնը դարձաւ առաքինութիւն, սրբութեան նշանը։

ԺԳ դարի ումբրիական մեծ շարժումը նոր կրօն հիմնելու մի փորձ էր։ Այդպիսի փորձերի մէջ նա նմանում էր ամենից աւելի գալիլիականին, որովհետև գործում էր նոյն աղքատութեան անունով։

Ֆրանցիսկ Ասսիզացին, որ աշխարհական էր և իր չափազանց բարի, կարեկից ու հեզ բնաւորութեամբ շատ էր նմանում Յիսուսին՝ մի աղքատ էր։

Միջնադարեան մուրացիկ միաբանութիւններն ու բազմաթիւ կոմմունիստական աղանդները (Լիոնի աղքատները, բէգարները, բարի մարդիկ, անարգուածները, աւետարանական աղքատները, «յաւիտենական աւետարանի» հերձուածին հետևողները) իրենց անուանում էին Յիսուսի աշակերտներ, և իրաւունք ունէին, որովհետև նրա ճշմարիտ հետևողներ էին։ Կրկին պատահեց այն, որ ամենաանիրագործելի կրօնական ցնորքները պտղաբեր հանդիսացան։ Բարեպաշտ մուրացիկները, որոնք ներկայումս մեր արդիւնաբերող դասակարգերին այնքան անհանգստութիւն են պատճառում,

այդ ժամանակ շատ հմայիչ էին։ Ինքնազրկումը միակ միջոցն էր, որ բաւարարութիւն էր տալիս բազմաթիւ հեզ ու երազող հոգիներին։ Սիրելիու ցանկալի դարձնել աղքատութիւնը, պատուանդան բարձրացնել աղքատին ու երկրպագել խեղճի ցնցոտիներին,—ահա երևոյթներ, որ քաղաքատնտեսն անկարող է բացատրել. իսկ ճշմարիտ բարոյագէտը երբէք անուշադիր չի թողնի։ Մարդկութեան համար անհրաժեշտ էր այն հաւատը, թէ մարդուվարձքը միայն հացը չպիտի լինի, որպէս գի նա կարողանար հեշտութեամբ տանել իր բեռը։ Եւ եթէ կամենում էք մեծ ծառայութիւն մատուցած լինել մարդկանց, պիտի կրկնէք շարունակ թէ նա միայն հացով չի ապրում։

Բոլոր մեծ մարդկանց նման Յիսուսն էլ սիրում էր ժողովուրդը և իրան լաւ էր զգում միայն նրա շրջանում։ Աւետարանը, նայելով նրա մտքին, խեղճերի համար է յօրինուած։ Յիսուս նրանց է տալիս ազատութեան բարի աւետիքը։ Բոլոր նրանք, որոնք հալածուած էին մովսիսականութեան կողմից Յիսուսի ընտրեալներն էին։ Նա իր գործողութիւնների ու քարոզների մէջ ամէն րոպէ անգիտակցաբար երևան է հանում իր սէրը դէպի ժողովուրդը ու կարեկցութիւնը՝ դէպի նրա տկարութիւնը։ Այդ ազնիւ զգացումները յատուկ են իւրաքանչիւր ճշմարիտ ժողովրդապետի, որ զգում է իր մէջ ժողովրդական ոգին ու համարում իրեն այդ ոգու բնական արտայայտիչը։

Նրա շրջապատողները ներկայացնում էին բաւական խառն շրջան և այդ հանգամանքը, ի հարկէ զարմացնում էր օրինապահներին։ Այդ շրջանի մէջ կային այնպիսի մարդիկ, որոնց հետ երբէք չէր խօսի իրեն յարգող հրէան։ Շատ հաւանական է, որ օրէնքից դուրս դրուած այս մարդկանց մէջ Յիսուս աւելի մեծ արժանաւորութիւն ու զգացում էր տեսնում, քան բծախնդիր ու ձևականութիւնների հետամուտ օրէնսգէտների մէջ, որ պարծենում էին իրենց կեղծ բարեպաշտութեամբ։ Փարիսեցիները՝ մոլեռանդ հետևողներ Մովսիսական օրէնքի՝ բանը մինչև այն տեղը հասցրին, որ նոյնիսկ պղծուած էին զգում իրենց, երբ նրանց դիպչում էր իրենցից նուազ խստապահ մարդը։ Կերակրի վերաբերմամբ, նրանք, հնդկական կաստաների ծիծաղելի ու երեխայական խտրութիւններն էին դնում։ Ատելով կրօնական զգացմունքի այդ

ողորմելի աղաւաղումները, Յիսուս սիրում էր ճաշել թիւրիմացութիւնների այդ զոհերի հետ։ Յաճախ էին տեսնում նըրան նստած այնպիսի անձերի հետ, որոնք վարկաբեկ էին միայն այն պատճառով, որ չէին հետևում կեղծ բարեպաշտների ծիծաղելի սովորութիւններին։ Փարիսեցիներն ու դըպիրները յաճախ այդ բանի համար զայրանում էին նրա դէմ. «Տեսէք, ասում էին, թէ ինչ մարդկանց հետ է ճաշում»։ Այդպիսի դէպքերում, Յիսուս կատաղեցնում էր այդ կեղծաւորներին կտրուկ պատասխաններով։ Նա պատասխանում էր. «Բժիշկը հիւանդներին է հարկաւոր, և ոչ թէ առողջներին» կամ՝ «Ձեզնից ո՞րը, եթէ հարիւր ոչխար ունենայ ու մէկը կորցնի, չի թողնի իննըսունը-իննը անապատում ու չի գնայ այդ մէկն որոնելու. իսկ երբ գտնի, մի՞թէ ուրախութիւնից նրան ուսերի վրայ չի՞ առնի» կամ թէ՝ «Մարդու որդին եկաւ, կորածներին փրկելու համար» և կամ՝ «Ես եկայ ապաշխարութեան հրաւիրելու ոչ թէ արդարներին, այլ մեղաւորներին». վերջապէս պատմեց անառակ որդու սքանչելի առակը, ուր դարձի եկող անառակ որդուն նախապատւութիւն է տուած այն որդուց, որը միշտ արդար է եղել։ Թոյլ ու մեղսալի կանայք, Յիսուսի գթասրտութեան վրայ ապշած ու առաջին անգամ զգալով ճշմարիտ առաքինութեան քաղցր շունչը, համարձակ մօտենում էին նրան։ Շատերը զարմանում էին թէ ինչո՞ւ Յիսուս նրանց յետ չի մղում։ «Այս մարդը մարգարէ չէ, ասում էին մաքրակրօնները, եթէ սա մարգարէ լինէր, կը զգար որ իրեն մօտեցող կինը մեղաւոր է»։ Յիսուս այդ առարկութեան դէմ պատմեց այն պարտապանի առակը, որ ներել է իր պարտատէրերի զանազան գումարի պարտքերը և վերջում համարձակօրէն յայտնեց, որ ինքը գերադասում է այդ դէպքում այն պարտապանի դրութիւնը, որի պարտքի գումարը ամենամեծն էր։ Յիսուսի կարծիքով, հոգիները այնչափ արժանաւոր են, որչափ մեծ է նրանց սիրոյ ոյժը։ Մեղաւոր կանայք, որ արտասուալից աչքերով հակուած են դէպի ապաշխարութիւն, աւելի մօտ էին նրա Թագաւորութեանը քան իրենց հաւասարակշռութիւնը պահած այն անձերը, որոնց անմեղութիւնը արժանիք չի կարելի համարել։ Հասկանալի է, որ այն քնքուշ, հեզ հոգիները, իրենց ընկած պա-

տիւը վերականգնելու այդ հեշտ միջոցը գտնելով՝ բոլորանուէր անձնատուր էին լինում այդ նոր կրօնին։

Յիսուս ամենևին չէր աշխատում լռեցնել տրտունջները, որ ծագել էին այն ատելութեան պատճառով, որ տածում էր ինքը դէպի ժամանակակից նախապաշարումները. ընդհակառակը այդ տրտունջները կարծես թէ բաւականութիւն էին պատճառում նրան։ Դեռ ոչ ոք այդչափ համարձակօրէն չէ յայտնել «աշխարհին» իր ատելութիւնը. և այդ հանգամանքը անհրաժեշտ պայման է ամեն մի մեծ գործի ու մեծ ինքնուրոյնութեան։ Նա ներողամտութեամբ էր վերաբերւում դէպի հարուստը միայն այն դէպքում, երբ այս վերջինիս հալածում էր հասարակութիւնը որևէ նախապաշարումից դրդուած։ Նա բացարձակապէս նախադասութիւն էր տալիս կասկածելի վարք ունեցող և ուղղափառների շրջանում անարգուած մարդկանց։ «Մաքսաւորներն ու անառակ կանայք ձեզանից առաջ կը մտնեն երկնքի Թագաւորութիւն, —ասում էր նա, —որովհետև երբ Յովհաննէսը եկաւ, մաքսաւորներն ու մեղաւոր կանայք միայն հաւատացին նրան, իսկ դուք այդ բանը տեսնելուց յետոյ էլ Յովհաննէսին չհաւատացիք»։ Շատ հասկանալի է, թէ որքան կը կատաղեցնէր անառակ կանանց բարի օրինակին չհետևելու յանդիմանութիւնը այն մարդկանց, որոնք արժանապատւութիւնն ու խիստ բարոյականութիւնը իրենց արհեստ էին շինած։

Յիսուս կեղծաւոր չէր, չունէր շինծու խստապահութիւն։ Նա բաւականութիւնից չէր փախչում և մեծ հաճոյքով էր ընդունում հարսանեկան հրաւէրները։ Նա, մինչև անգամ, փոքր քաղաքի մի հարսանիքում, պարզապէս հիւրերին հաճոյք պատճառելու համար, մի հրաշք գործեց։ Արևելքում հարսանեկան արարողութիւնները կատարւում են գիշերը։ Ամեն մարդ հետը տանում է իր ջահը և այդ մերթ մերձեցող մերթ հեռացող լոյսերը դիւթիչ տպաւորութիւն էին գործում։ Յիսուս սիրում էր այդ զուարթ հանդէսները և յաճախ իր քարոզների նիւթ էր դարձնում։ Մարդիկ համեմատելով Յովհաննէսի ու Յիսուսի կեանքը իրար հետ, սարսափում էին։ Մի օր, երբ փարիսեցիներն ու Յովհաննէսի աշակերտները պաս էին պահում, Յիսուսին հարց տուին. «Ինչո՞ւ Յովհաննէսի

աշակերտներն ու փարիսեցիները պաս են պահում ու աղօթում, իսկ քո աշակերտները ուտում են ու խմում»: «Թողէք, պատասխանեց Յիսուս, մի՞թէ հարսանեատան պատանիները ծոմ պիտի պահեն, երբ փեսան նրանց հետ է... Կը գան օրեր, փեսան նրանցից կը հեռանայ, և այնուհետև նըրանք էլ կը պահեն»: Նրա հոգեկան մեղմ ու ուրախ տրամադրութիւնը յաճախ էր արտայայտւում իր սիրալիր հանաքների ու զուարթ նկատողութիւնների մէջ: «Ո՞ւմ նմանեցնեմ այս ցեղը, բացականչում էր Յիսուս. այն երեխաներին են նմանում, որ փողոցում նստած՝ ասում են իրենց ընկերներին. Մենք սրինգ ածեցինք, դուք պար չեկաք, մենք տխուր երգեր երգեցինք, դուք լաց չեղաք. Յովհաննէսը եկաւ. ո՛չ ուտում էր, ո՛չ խմում. ասում էին թէ նա խելագար է: Մարդու որդին եկաւ, ուտում ու խմում է, ասում են այս մարդը ուտող ու խմող է և մաքսաւորների ու մեղաւորների ընկերը: Իմաստութիւնն արդարացաւ իր գործերով:»

Նրա Գալիլիայով ճանապարհորդելը մի կատարեալ տօնախմբութիւն էր: Յիսուս, այդ դէպքերում ջորի էր նստում, որ արևելքում ճանապարհորդելու ամենասովորական ու անվտանգ եղանակն է: Ջորիի սև ու մեծ աչքերը իրենց երկայն արտևանունքներով հեզութիւն են արտայայտում: Երբեմն աշակերտները նրա համար պարզ հանդէսներ էին պատրաստում իրենց հագուստները տարածելով ճանապարհի վրայ ու նրանցով ծածկելով այն ջորին, որի վրայ նստում էր Յիսուս: Երբ նա մի տուն էր մտնում, նրա հետ այդ տունն էր մտնում և՛ ուրախութիւնն ու բարօրութիւնը: Նա փոքր քաղաքներում կամ մեծ գիւղերում, ուր կանգ էր առնում, ամեն տեղ լաւ ընդունելութիւն էր գտնում: Արևելքում, այն տունը, ուր իջևանում է օտարականը, դառնում է մի ժողովարան: Այդ տեղ ժողովւում է ամբողջ գիւղը, թափւում են երեխաները և որքան ծառաները դուրս են քշում վերջիններիս, նրանք այնուամենայնիւ նորից գալիս են: Յիսուս չէր հանդուրժում բնաւ, երբ վատ էին վարւում այդ անմեղ ունկնդիրների հետ. նրանց քաշում էր իր մօտ, փայփայում, փաղաքշում: Մայրերը՝ խրախուսուած՝ բերում էին իրանց ծծկեր երեխաները, որպէսզի Յիսուս իր ձեռքը դնի նրանց

գլխին: Կանայք օծում էին նրա մազերն ու ոտքերը անուշահոտ իւղերով: Երբեմն աշակերտները ձանձրանալով դուրս էին անում, բայց Յիսուս, որ յարգում էր հին սովորութիւններն ու ամեն բան, ինչ մարդկանց սրտից է բղխում, շտապում էր ուղղել իր չափազանց կրակոտ աշակերտների սխալը: Յիսուս պաշտպանում էր իր բոլոր յարգողներին: Կանայք ու երեխաները նրան պաշտում էին: Յիսուսի թըշնամիները նրան մեղադրում էին, ի միջի այլոց, և, այն բանում, որ նա ընտանիքի գրկից խլում էր այդ քնքոյշ ու դիւրութեամբ հրապուրուող արարածներին:

Այսպիսով նորածին կրօնը աւելի շուտ կանանց ու երեխաների շարժում էր: Այս վերջինները նրա շուրջը մատաղ թիկնապահների մի գունդ էին կազմել, որ հռչակում էին իրենց ուսուցչի անմեղ թագաւորութիւնը ու նրա համար ցոյցեր սարքում: Այդ ցոյցերը միշտ բաւականութիւն էին պատճառում Յիսուսին: Երեխաները նրան «Դաւթի որդի» էին անուանում ու «Ովսաննա» [1]) կանչում, առաջից տանելով արմաւենու ճիւղեր: Յիսուս հաճոյքով էր նայում այդ փոքրիկ առաքեալներին, որ երբէք նրա վարկը չէին գցում, այլ ընդհակառակը, առջևից վազելով այնպիսի ածականներ էին տալիս, որ ինքը երբեք չէր համարձակւում ընդունել: Նա թոյլատու էր դէպի երեխաները. իսկ երբ հարցնում էին, թէ լսու՞մ է արդեօք ինչ են աղաղակում երեխաները, նա հարցից շեղուելով պատասխանում էր, որ մատաղ շրթունքներից դուրս թռածը աւելի հաճելի է Աստուծուն:

Յիսուս յաճախ կրկնում էր, թէ երեխաները սուրբ են, նրանցն է Աստուծոյ թագաւորութիւնը, որի մէջ մտնողը պիտի երեխայի նման մաքուր լինի. թէ երկնաւոր հայրը իր խորհուրդները իմաստուններից ծածկելով երեխաներին է յայտնում: Յաճախ նրա խօսակցութեան ժամանակ աշակերտ ու երեխայ գաղափարները խառնւում են: Մի անգամ, երբ աշակերտների մէջ վէճ ծագեց առաջնութեան մասին, Յիսուս մի մանուկ բերեց, կանգնեցրեց նրանց մէջ ու ասաց. «Ահա ձեր մէջ առաջինը. ով այս երեխայի նման արդար կը լինի,

[1]) Այդպէս են աղաղակում Տաղաւարահարաց տօնին, երբ արմաւենու ճիւղերով թափօր են կատարում:

նա էլ կը դասուի երկնքի թագաւորութեան մէջ առաջինը»:

Եւ իսկական մանկութիւնը թագաւորեց երկրի վրայ իր Աստուածային անմեղութեան ու իր միամիտ զուարթութեան հետ: Ամեն րոպէ սպասւում էր, որ այդ ցանկալի թագաւորութեան արևը պիտի ծագի: Ամեն մէկը նրանցից իրան տեսնում էր ուսուցչի կողքին, գահի վրայ բազմած: Արդէն տեղերն էին բաժանում ու օրերը հաշւում: Այդ ակնկալութիւնը և ամբողջ վարդապետութիւնը բարի համբաւ, «աւետիք» կոչուեցաւ: Հին «դրախտ» խօսքը ամենքի ըղձանքն էր արտայայտում: Պատկերացնում էին մի սքանչելի այգի, որտեղ յաւիտեան շարունակւելու է երկրային ամենաբարեբաստիկ կեանքը: Յայտնի չէ թէ այս յափշտակութիւնը որքան տևեց: Այդ դիւթիչ կեանքի շրջանում ժամանակի հաշիւը մոռացուած էր, ճիշտ այնպէս, ինչպէս նա կորչում է անուրջի մէջ: Ժամանակը կանգ էր առել, շաբաթը կարող էր թուալ յաւիտենականութիւն: Թէ այդ մտապատրանքը որքան տևեց, այդ միևնոյն է. նա այնքան սքանչելի էր, որ մարդկութիւնը յետագայում էլ նրանով էր ապրում, դեռ հիմա էլ մեծ մխիթարութիւն է մարդու համար, եթէ կարողանայ ձեռք բերել այդ ճաճանչագեղ լոյսի ամենաթոյլ շողը: Մարդկութիւնը երբէք չէ հրապուրուել այդ առաիճանւ Երբէք մարդկութիւնը չի գործ դրել այդչափ ոյժ իր մոլորակից բարձր կանգնելու նպատակով: Այդ ժամանակն էր, որ մարդկութիւնը մի վայրկեան մոռացաւ այն կապարեայ ծանրութիւնը, որ մարդուն չէր թոյլ տալիս բաժանուել երկրից, այդ ժամանակն է, որ մարդկութիւնը մոռացաւ երկրային տանջանքներն ու հոգսերը: Երջանիկ է այն մարդը, որ տեսել է իր աչքերով աստուածային վերածնութեան այդ շրջանը ու գոնէ մի օր ժամանակից է եղել այդ նոյն ցնորքներին: Բայց Յիսուս մեզ կասէր. աւելի բաղդաւոր է այն մարդը, որ հրաժարուելով բոլոր այդ ցնորքներից, ինքը իր մէջ կը հաստատէ այդ լուսաւոր դրախտը. այն ժամանակ էլ հարկաւոր չեն ոչ հազարամեայ երազները, ոչ ցնորական եդեմը. առանց երկնային նշանների էլ մարդ կարող է իր սրտում հաստատել Աստուծոյ իսկական թագաւորութիւնը. բաւական է, որ նա ունենայ բարի կամք ու բանաստեղծական հոգի:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

Յովհաննէսը բանտից դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ: — Յովհաննէսի մահը: — Նրա եւ Յիսուսի աշակերտների յարաբերութիւնը:

Մինչդեռ Գալիլիան ցնծութեամբ ու հանդէսներով տօնում էր իր սիրելի Յիսուսի երեւումը, դժբաղդ Յովհաննէսը զանազան յոյսերով ու ակնկալութիւններով, տանջւում էր Մաքերոն ամրոցում: Նա լսել էր վարդապետի յաջողութեան աւետիսը, վարդապետի՝ որ մի քանի ամիս առաջ իր աշակերտների շարքումն էր: Պատմում էին, թէ եկել է մարգարէների գուշակած Մեսիան, որ պիտի վերականգնէ Իսրայէլի թագաւորութիւնը և հրաշքներով հաստատում է իր գալուստը: Յովհաննէս կամենում էր ստուգել այդ լուրը. ուստի նա ընտրեց իր աշակերտներից երկուսին, որոնց հետ ազատ հաղորդակցութիւն ունէր, և ուղարկեց նրանց Յիսուսի մօտ:

Նրանք գնացին Յիսուսի մօտ նրա փառքի ամենածաղկած շրջանում: Նրանց զարմացրեց այն տօնական տրամադրութիւնը, որ տիրում էր իրենց շուրջը: Պահքի, անընդհատ աղօթքի ու հայեցողական կեանքի ընտելացած՝ յանկարծ ընկան խրախճանքների մէջ ու ապշեցին: Իրենց այցելութեան նպատակը այսպէս բացատրեցին. «Դո՞ւ ես նա, որ պիտի գայ աշխարհ, թէ ուրիշին սպասենք»: Յիսուս՝ որ որոշ ժամանակից ի վեր բոլորովին համոզուած էր, որ ինքն է իսկական Մեսիան, թուեց այն բոլոր նշանները, որ պիտի տեղի ունենային Աստուծոյ թագաւորութեան հաստատման ժամանակ. հիւանդների բժշկութեան, աղքատներին աւետարանումը՝ նրանց մօտալուտ փրկութեան մասին: Ի վերջոյ յայտ-

նեց, որ ինքը այդ ամենը իրագործել է։ «Երջանիկ է նա,— աւելացրեց Յիսուս,—ով չի կասկածում իմ մասին»։ Կենդանի՞ էր արդեօք Յովհաննէսը, երբ ստացաւ այս պատասխանը և եթէ կենդանի էր, ի՞նչ տպաւորութիւն թողեց արդեօք լուրը այդ խստակեաց ճգնաւորի վրայ։ Արդեօք նա մեռա՞ւ մխիթարուած ու համոզուած, որ արդէն աշխարհ է եկել Մեսիան, թէ՞ տարակուսեց Յիսուսի վրայ՝ —այդ մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։ Այն հանգամանքը, որ Յովհաննիսի ու Յիսուսի դպրոցները շարունակեցին զուգընթացաբար գոյութիւն ունենալ, ցոյց է տալիս, որ չնայած Յովհաննիսի դէպի Յիսուսը տածած յարգանքին, նա կասկածում էր Յիսուսի Մեսիա լինելու մասին։ Շուտով մահը փարատեց այդ կասկածը։ Անապատականի անհանգիստ ու տանջալից կեանքը, նրա խիզախ համարձակութեան շնորհիւ, պսակուեց արժանաւոր մահով։

Անտիպասի, սկզբում դէպի Յովհաննէսը ցոյց տուած ներողամտութիւնը չէր կարող երկարատև լինել։ Այն խօսակցութիւնների ժամանակ, որ Յովհաննէսը ունենում էր չորրորդապետի հետ, քրիստոնէական աւանդութեան համաձայն, անընդհատ կշտամբում էր նրան, ասելով որ ապօրինի էր նրա ամուսնութիւնը և առաջարկում էր բաժանուել Հերովդիադայից։ Սրանից յետոյ հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ Հերովդէս Մեծի թոռը այնչափ ատելութիւն էր տածում դէպի այդ ինքնակոչ խորհրդականը․ նա Յովհաննիսին ոչնչացնելու համար յարմար առիթ էր որոնում։

Հերովդիադայի նենգամիտ ձգտումներին մասնակից էր և նրա դուստր Սալոմէն, որ ծնուած՝ առաջին ամուսնութիւնից, մօր նման հպարտ էր ու հեշտասէր։ Այդ տարին (հաւանօրէն 30-րդը) Անտիպասը իր ծննդեան օրն անց էր կացնում Մաքերոնում։ Այդ ամրոցում Հերովդէս Մեծը հրամայել էր կառուցանել մի հոյակապ պալատ, ուր չորրորդապետը յաճախ էր ապրում։ Այդ առիթով պալատում նա խընճոյք էր տալիս։ Խնճոյքի ժամանակ Սալոմէն պարեց այն քնքոյշ պարերից մէկը, որոնք ամօթալի չէին միայն այն աշխարհիկ անձերի համար, որոնք ապրում էին Սուրիայում։ Անտիպասը Սալոմէի պարից սքանչացած՝ հարցրեց նրան թէ

ինչո՞վ է ցանկանում վարձատրուել։ Սալոմէն՝ իր մօր դըրդմամբ՝ պատասխանեց․ «Յովհաննիսի գլուխը դրուած այս սկուտեղի վրայ»։ Անտիպասը այլայլուեց, բայց կատարեց խօսքը։ Պահակն առաւ սկուտեղը, գնաց բանտարկեալի մօտ, գլխատեց նրան և գլուխը դրած սկուտեղի վրայ, բերեց։

Յովհաննէսի աշակերտները վերցրին նրա մարմինը ու հողին յանձնեցին։ Ժողովուրդը խիստ անբաւական էր։ Վեց տարի յետոյ, երբ Հարետը յարձակուեց Անտիպասի վրայ Մաքերոնը գրաւելու և իր դստեր վրէժը լուծելու համար, և յաղթեց նրան—ժողովուրդը այդ պարտութիւնը համարեց որպէս պատիժ Յովհաննիսի մահուան։

Յովհաննիսի մահուան լուրը հաղորդեցին Յիսուսին նրա աշակերտները։ Այն խօսքերի շնորհիւ, որ Մկրտիչ ուղղեց Յիսուսին, սերտ կապ հաստատուեց երկու դպրոցների միջև։ Վախենալով Անտիպասի չարութիւնից, Յիսուս քաշուեց անապատը։ Նրան հետևեցին շատ անձինք։ Շնորհիւ իրենց չափազանց ժուժկալութեան՝ սրբերի այդ բազմութիւնը կարողացաւ պահպանել իր գոյութիւնը այնտեղ, իսկ այդ բանը բնականաբար համարուեց հրաշք։ Այդ դէպքից յետոյ Յիսուսը Յովհաննիսի մասին խօսում էր միշտ յուզուած։ Նա ճոռապէս ասում էր, որ Յովհաննէսը բարձր է մարգարէներից, որ Օրէնքն ու հին մարգարէները նշանակութիւն ունէին միայն մինչև նրա յայտնուիլը․ Նա եկաւ քանդեց նախորդների յայտնութիւնը ճիշտ այնպէս, ինչպէս կը վերջանայ իր առաքելութիւնը երկնքի թագաւորութեան հաստատուելուց յետոյ։ Մի խօսքով Յիսուս Յովհաննիսին համարեց այն օղակը, որ Հին ուխտի թագաւորութիւնը միացնում է Նոր ուխտին։

Մաղաքիա մարգարէն, որի կարծիքը վայելում էր մեծ հեղինակութիւն, խոր համոզմամբ նախագուշակեց, որ Մեսիայից առաջ պիտի գար մէկը, աշխարհը նախապատրաստելու կատարեալ վերածնութեան համար, և պիտի լինէր Աստուծոյ ընտրեալի ռահվիրան, նախակարապետը։ Ժողովրդի կարծիքով դա պիտի լինէր Եղիա մարգարէն, որը ընդհանրացած հաւատքի համաձայն, շուտով պիտի իջնէր երկնքից, ուր համբարձել էր կենդանի, ապաշխարութեամբ ժո-

ժողովուրդը հաշտեցնելու Աստուծոյ հետ ու այդ մեծ դէպքին նախապատրաստելու համար։ Ոմանց կարծիքով Եղիայի հետ պիտի գար և Ենովք նահապետը, որին, վերջին երկու դարերում, վերագրում էին մեծ սրբութիւն. կամ Երեմիա մարգարէն՝ որ, որպէս ժողովրդի բարի հանճարը, անընդհատ աղօթում էր Աստուծոյ աթոռի մօտ Իսրայէլի փրկութեան համար։ Այս երկու հին մարգարէների գաղափարը, որոնք յարութիւն պիտի առնէին ու պիտի լինէին Մեսիայի կարապետները, զարմանալի նմանութեամբ կրկնուած է պարսկական վարդապետութեան մէջ, մինչև այն աստիճան, որ այդ նմանութեան հիման վրայ կարելի է եզրակացնել, թէ հրէաների յիշեալ գաղափարը սկիզբն է առել Պարսկաստանում։ Այսպէս թէ այնպէս Յիսուսի ժամանակ այդ գաղափարը համարւում էր մեսիական ակնկալութեան անբաժանելի մասը։ Կարծւում էր, որ այդ երկու հաւատարիմ վկաների աշխարհ գալը ապաշխարութեան հանդերձներով, նախերգանքն է այն մեծ ողբերգութեան, որ պիտի զարմացնէ ողջ աշխարհը։

Հասկանալի է, որ Յիսուս ու իր աշակերտները ենթակայ լինելով այդ գաղափարներին, չէին կարող կասկածել Յովհաննէս Մկրտչի առաքելութեան մասին։ Երբ դպիրները առարկում էին նրանց դէմ, թէ Մեսիայի գալստեան մասին խօսք չի կարող լինել, որովհետև դեռ Եղիան չի եկել, նրանք պատասխանում էին. «Եղիան եկել է, նա յարութիւն է առել Յովհաննիսի կերպարանքի տակ»։ Յովհաննէսը իր կենցաղով ու իր ընդդիմութեամբ դէպի քաղաքական իշխանութիւնը, յիշեցնում էր Եղիային, Իսրայէլի հին պատմութեան այդ անձնաւորութիւնը։ Յիսուս թւում էր իր նախորդի ծառայութիւնները ու արժանիքները։ Ասում էր, որ մարդոց որդիների մէջ նրանից բարձր ոչ ոք չի եղել և եռանդով դատապարտում էր փարիսեցիներին, որ չէին մկրտուել նրանից ու չէին հետևել նրա քարոզութեանը։

Յիսուսի աշակերտները հաւատարիմ էին իրենց ուսուցչի այդ հայեացքին։ Քրիստոնէութեան առաջին սերունդը Յովհաննիսի յիշատակին յարգանքով էր վերաբերւում։ Մինչև անգամ նրան համարեցին Յիսուսի ազգականը։ Յետագայում նրա մկրտութիւնը համարուեց աւետարանի պատմու-

թեան առաջին ու անհրաժեշտ եղելութիւնը։ Յովսէփի որդու առաքելութիւնը հաստատելու համար այն հեղինակաւոր վկայութիւնն էին առաջ բերում, թէ Յովհաննէսը առաջին հայեացքից իսկ Յիսուսին Մեսիա անուանեց. իրեն ոչ միայն ճանաչեց Յիսուսից ստոր, այլ և «նրա կօշիկը վերցնելու անարժան» և որպէս թէ սկզբում չի կամեցել նրան մկրտել, ասելով՝ որ ինքը պիտի մկրտուի Յիսուսից։ Այս բոլոր չափազանցութիւնները ինքն ըստ ինքեան ջրւում են այն փաստով, որ նա իր կեանքի վերջին օրերում Յիսուսի մօտ ուղարկում է դեսպաններ, տեղեկանալու համար թէ նա՞ է արդեօք Մեսիան։ Քրիստոնէական աւանդութեան մէջ Յովհաննէսը բռնել է այնպիսի տեղ, որ իսկապէս համապատասխանում է նրա մատուցած ծառայութեանը,—խստակեաց նախակարապետը, ապաշխարութեան վշտոտ քարոզիչը՝ փեսայի գալուց առաջ. մի մարգարէ, որ Աստուծոյ թագաւորութեան գալուստը յայտարարեց և մեռաւ, նախքան այդ թագաւորութեան իրականացումը տեսնելը։ Քրիստոնէութեան նախնական շրջանի այդ հսկան, այդ պահեցողը, որ կերակրւում էր մորեխով ու վայրի մեղրով, անարդարութեան այդ խստասիրտ ըմբերանողը այն դառնութիւնն էր, որ մարդոց շրթունքները նախապատրաստեց Աստուծոյ թագաւորութեան քաղցրութիւնը ճաշակելու համար։ Նրա գլխատումով բացուեց քրիստոնէական մարտիրոսագրութիւնը և նա եղաւ մարդկային գիտակցութեան վերածնութեան առաջին վկան։ Նա հակառակորդ էր աշխարհային վայելքների և այդ պատճառով աշխարհի մարդիկ չկարողացան նրա հետ ապրել և նրա այլանդակուած դիակը ընկնելով քրիստոնէութեան շեմքին, ընդգծեց այն արիւնոտ ճանապարհը, որով պիտի ընթանային բազմաթիւ քրիստոնեայ նահատակներ։

Յովհաննիսի մահով չընդհատուեց նրա դպրոցի գոյութիւնը։ Որոշ ժամանակ այդ դպրոցը իր գոյութիւնը պահպանեց քրիստոնէութիւնից առանձին, բայց նրա հետ համերաշխ։ Երկու ուսուցիչների մահից շատ յետոյ էլ գործադրւում էր Յովհաննիսի մկրտութիւնը։ Կային մարդիկ, որ պատկանում էին միաժամանակ այդ երկու դպրոցին, ինչպէս Ապողոսը, սբ. Պօղոսի հակառակորդը (մօտ 50 թուակա-

նին) և Եփեսոսի քրիստոնէաների մեծ մասը։

Յովսէփը (53 Թ.) յարեց Բանու անապատականի դպրոցին, որ շատ նման էր Յովհաննէս Մկրտչին և հաւանական է, որ այդ դպրոցի հիմնադիրը լինէր վերջինիս աշակերտներից մէկը։ Այդ Բանուն ապրում էր անապատում, մարմինը ծածկում էր տերևներով, կերակրւում էր բացառապէս բուսեղէններով ու վայրի պտուղներով և յաճախ, գիշեր-ցերեկ՝ մեղքերից սրբուելու նպատակով՝ մկրտւում էր սառը ջրով։ Յակովբոսը որ կոչւում էր «Տեառնեղբայր» (անունների նոյնութեան պատճառով անձնաւորութիւնները կարող էին շփոթել), վարում էր նոյնպիսի կեանք։ Յետագայում՝ առաջին դարի վերջերում՝ բապտիստները (Յովհաննիսի հետեւողները) քրիստոնէաների հետ կռիւ էին մղում. այդ նկատելի էր մանաւանդ Փոքր Ասիայում։ Յովհաննիսի իսկական դպրոցը մասամբ խառնուեց քրիստոնէութեան հետ և մասամբ էլ դարձաւ քրիստոնէական մի աղանդ ու աննըկատելիօրէն անհետացաւ։ Յովհաննէսը զգում էր, որ ապագան իրան չի պատկանելու։ Եթէ Քրիստոսի վերաբերմամբ հակառակորդի դիրք բռնած լինէր, այժմ մոռացուած ու կորած կը լինէր արդէն ի թիւս իր ժամանակի բազմաթիւ հերձուածների։ Մինչդեռ զոհ բերելով իր պատուասիրութիւնը տիրացաւ փառքի ու բացառիկ դիրք գրաւեց մարդկային կրօնների պատմութեան մէջ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Առաջին փորձը Երուսաղէմում

Զատկի տօնին Յիսուս գրեթէ ամէն տարի գնում էր Երուսաղէմ։ Յայտնի չէ իւրաքանչիւր ճանապարհորդութեան մանրամասնութիւնը, որովհետև համատես աւետարանիչները չեն յիշատակում, իսկ չորրորդ աւետարանի հաղորդածը բաւական մութ է։ Յիսուսի՝ մայրաքաղաքն այցելելու դէպքերից ամենանշանաւորը պատահել է, ինչպէս կարծւում է, 31 Թուականին, անկասկած, Յովհաննիսի մահից յետոյ։ Այդ ուղևորութեան ժամանակ նրա հետ էին իր աշակերտների մեծ մասը։ Թէպէտ Յիսուս ուխտագնացութեան առանձին նշանակութիւնն չէր տալիս, բայց յօժարուեց կատարել. չէր կամենում վիրաւորել մովսիսականների հասարակական կարծիքը, որովհետև նրանց հետ դեռևս չէր խզել իր կապը վերջնականապէս։ Բացի դրանից՝ այդ ուխտագնացութիւնները էական նշանակութիւն ունէին իր նպատակների համար։ Նա արդէն հասկացել էր, որ առաջնակարգ դեր խաղալու համար ինքը պարտաւոր էր Գալիլիայից հեռանալ ու մովսիսականութիւնը յաղթահարել՝ հէնց նրա օրրանում՝ Երուսաղիմում։

Գալիլիական փոքրիկ համայնքը իրան օտար էր զգում Երուսաղէմում։ Երուսաղէմը այն ժամանակ նոյնն էր ինչ որ այժմ, այսինքն բծախնդրութեան, վէճերի, ատելութեան ու մտաւոր ոչնչութեան հայրենիքը։ Մոլեռանդութիւնը այդտեղ հասել էր ծայրայեղութեան։ Գրեթէ ամէն օր ծագում էին կրօնական խառնակութիւններ։ Իշխանութեան ղեկը փարիսեցիների ձեռքին էր. միակ գիտութիւնը օրէնքի ուսումնասիրութիւնն էր. այդ ուսումնասիրութիւնը մղել էին մինչև

ամենաչնչին մանրամասնութիւնները, հասցրել զուտ տառակերութեան: Մտաւոր զարգացմանը չէր կարող նպաստել այդ բացառապէս ծիսական-աստուածաբանական գիտութիւնը: Ստացուեց մի վարդապետութիւն բոլորովին նըման մահմեդական ֆակիրների վարդապետութեան, որ շարունակ մէջիտի շուրջն է պտտւում, բայց որի արդիւնքը ժամանակի կորուստն է և ոյժերի վատնումն, առանց մազաչափ անգամ նպաստելու մարդկանց մտաւոր յառաջադիմութեանը: Մեր ժամանակի հոգեւորականների աստուածաբանական չոր կրթութիւնը չի կարող գաղափար տալ այդ դրութեան մասին, որովհետև մտաւոր Վերածնութիւնը դասաւանդութեան բոլոր, նոյնիսկ ամենայամառ սխոլաստիկներին հաղորդեց որոշ այնպիսի գրական և մեթոդիքական արժանաւորութիւններ, որ մինչև անգամ սքոլաստիկան սովորեց ընդունել քիչ թէ շատ օգտաւէտ ձև: Մովսիսական դպրի կամ գիտնականի վարդապետութիւնը՝ բարբարոսական, անպայման անհեթեթ, ու զուրկ էր որևէ բարոյական հիմունքից: Ի լրումն այս ամենի ծիծաղելի գոռոզութիւն էր առաջ բերում այն բոլոր անձերի մէջ, որոնք ճիգ են գործ դրել իւրացնելու համար այդ գիտութիւնը: Հպարտանալով իր կեղծ գիտութեամբ, որի վրայ այնչափ աշխատանք էր թափել, մովսիսական դըպիրը նոյնպիսի արհամարհանքով էր վերաբերւում դէպի յունական գիտութիւնները, ինչպէս այժմ մահմեդական դէտունը՝ եւրոպական քաղաքակրթութեանը և կամ հին դպրոցի կաթոլիկ աստուածաբանը՝ դէպի աշխարհիկ գիտութիւնները: Այդ սքոլաստիք քաղաքակրթութեան բնորոշ գիծն է կազմում այն, որ նրանք փակում են մտքի ճանապարհը գեղեցկի առաջ ու յարգանք են ներշնչում միայն դէպի այն անմիտ աշխատութիւնները, որոնց վրայ մաշել են իրենց ամբողջ կեանքը և այդ պարապմունքն են համարում ամենաարժանաւորն ու պատուաբերը:

Այդ սարսափելի աշխարհը չէր կարող սիրելի լինել պարզամիտ հիւսիսային իսրայէլացիների զգայուն սրտին: Այդ պառակտումը աւելի ևս զօրանում էր այն արհամարհանքից որ ցոյց էին տալիս Երուսաղէմի բնակիչները դէպի գալիլեացիները: Գեղեցիկ տաճարում, որ նրանց ըղձանքի առար-

կան էր, նրանք միայն վիրաւորանքի էին հանդիպում: Ուխտաւորների սաղմոսի այս տողը թէ՝ «Ես գերադասեցի Աստուծոյ տան դրան մօտ լինել», կարծէք թէ առանձնապէս գրուած լինէր նրանց համար: Քահանան՝ նրանց միամիտ ջերմեռանդութիւնը տեսնելով՝ իր շրթունքների վրայ ընդգըծում էր մի արհամարհական ժպիտ, ճիշտ այնպէս՝ ինչպէս մի ժամանակ իտալական հոգեւորականները, որ ընտելացած՝ սրբութիւններին, սառնութեամբ ու հեգնանքով էին վերաբերւում հեռուից եկած ուխտաւորի ջերմ հաւատին: Գալիլիացիք խօսում էին աղաւաղուած տեղական բարբառով. նրանց արտասանութիւնը անկանոն էր, տարբեր շեշտեր ունէր, որ ծիծաղ էր յարուցանում ու թիւրիմացութիւնների պատճառ դառնում: Հաւատի հարցերում նրանց տգէտ էին համարում և ոչ ուղղափառ. այնպէս որ՝ «Գալիլիացու չափ յիմար» դարձուածքը առածի կարգ էր անցել: Ենթադրում էին (և իրաւունք ունէին) որ նրանց արիւնը մաքուր հրէական արիւն չէ և համոզուած էին, որ Գալիլիայից մարգարէ չի կարող դուրս գալ: Դէպի Հրէաստանի սահմանները մղուած ու Մովսիսականութիւնից վտարուած գալիլիացիների միակ մխիթարութիւնն էին կազմում Եսայի մարգարէի հետևեալ բաւական վատ մեկնաբանուած խօսքերը. «Երկիր Զաբուղոնի ու երկիր Նեփթաղիմայ, ծովափի վրայ գտնուող ճանապարհ, հեթանոսների Գալիլիա. խաւարում խարխափող ժողովուրդը պայծառ լոյս տեսաւ. մթութեան մէջ եղողների համար արև ծագեց»: Յիսուսի հայրենի քաղաքի վարկն արդէն բոլորովին ընկած էր: Ասում են, որ՝ «ի՞նչ լաւ բան կարող է դուրս գալ Նազարէթից» դարձուածքը ժողովրդի մէջ ընդհանրացել էր:

Երուսաղէմի շրջակայքում բնութեան անհամեմատ աղքատութիւնը նպաստում էր Յիսուսի ատելութեան զօրեղացման: Այնտեղ հովիտներն անջրդի էին, հողը չոր ու քարքարոտ: Մեռեալ ծովի դաշտը միայն չափազանց տխուր տեսք ունի. մնացեալ տեղերը բոլորովին միօրինակ են: Դիտողի ուշադրութիւնը գրաւում է միմիայն Միզպա սարը նրա

յիշողութեան մէջ վերարտադրելով Իսրայէլի պատմութեան հետ կապուած դէպքերը։

Յիսուսի ժամանակ Երուսաղէմի ճարտարապետութիւնը համարեա նոյն ոճն ունէր, ինչ այժմ։ Նրա մէջ չկային հին արձաններ, որովհետև մինչև Ասմոնեանների հարստութիւնը հրէաները գրեթէ ոչ մի գեղարուեստ չունէին։ Յովհաննէս Հերկանը սկսեց զարդարել Երուսաղէմը, իսկ Հերովդէս Մեծը նրան դարձրեց Արևելքի ամենաշքեղ քաղաքներից մէկը։ Հերովդէսի շինութիւնները իրենց հոյակապութեամբ, արուեստի կատարելութեամբ ու նիւթի գեղեցկութեամբ մրցում էին անտիք աշխարհի ամենակատարեալ շէնքերի հետ։ Այդ ժամանակ Երուսաղէմի շրջակայքը զարդարուեց բազմաթիւ ուշագրաւ գերեզմաններով։ Այս յուշարձանները յունական ոճով էին կառուցուած և հրէական սկզբունքներին ու սովորութիւններին յարմարեցրած։

Քանդակագործութեան կենդանակերպ զարդարանքները, որ, չնայած օրինապահների ընդդիմադրութեան, Հերովդէսը յաճախ համարձակւում էր խառնել զարդանկարների մէջ, բոլորովին բացակայում էին այդ արձաններում. նրանց փոխարինում էին բուսական զարդարանքները։ Այդ քարաշէն գերեզմաններում կարծես վերածնուած էր Պաղեստինի ու Փիւնիկէի հին ազգաբնակութեան շինութիւնների ձևը՝ փորուած միապաղաղ ժայռերում. այդ գերեզմանների ճարտարապետութիւնը մի տարօրինակ խառնուրդ էր յունական գեղարուեստի և այրաբնակ (տրօգլոդիտական) ոճի։ Յիսուս, որ ճարտարապետական արուեստի արտադրութիւնները համարում էր փառասիրութեան արտայայտութիւն, շատ անբարեհաճ էր դէպի այդ արձանները։ Նրա բացարձակ հոգեպաշտութիւնը, այն հաստատ համոզմունքը, թէ հին աշխարհի զարդարանքները, բոլորն էլ, պէտք է խորտակուեն, նրա հետաքրքրութիւնը սահմանափակում է միայն հոգեկան շրջանակով։

Յիսուսի ժամանակ տաճարը դեռ բոլորովին նոր էր կառուցուած, արտաքին զարդարանքները դեռ վերջացրած չէին։ Հերովդէսը տաճարի վերաշինութիւնը սկսել էր քրիստոնէական թուից 20-21 տարի առաջ, նպատակ ունենալով

նրա ոճը համաձայնեցնել իր միւս շինութիւնների ճարտարապետութեան ոճին։ Տաճարի ներքին մասի շինութիւնը աւարտուեց 18 ամսում, կամարակապ ու սիւնազարդ սրահները 8 տարում, իսկ երկրորդական մասերի շինութիւնը աւելի դանդաղ էր գնում ու աւարտուեց Երուսաղէմի գրաւումից փոքր ինչ առաջ։ Այս աշխատանքները, հաւանօրէն անհաճութիւն էին պատճառում Յիսուսին։ Կարծես տաճարի երկարատև գոյութեան գաղափարը հեգնում էր Յիսուսի մօտալուտ գալուստը։ Անհաւատներից ու մոլեռանդներից աւելի հեռատես լինելով, նա գուշակեց, որ այդ հոյակապ շինութիւնները երկար չէին կարող ապրել։

Ընդհանուր առմամբ, տաճարը սքանչելի ու տպաւորիչ տեսք ունէր. արդի տաճարը՝ չնայած իր գեղեցկութեան՝ նրա շքեղութիւնը չունի։ Նրան շրջապատող բակերն ու կամարակապ սրահները հանդիսանում էին բազմութեան համար ամենօրեայ ժողովատեղի։ Այդ ահագին տարածութիւնը թէ տաճար էր, թէ հրապարակ (ֆորում), թէ դատարան և թէ համալսարան։ Այդտեղ տեղի էին ունենում հրէական դպրոցների կրօնական վիճաբանութիւնները, այդտեղ էին կատարւում եկեղեցական դասաւանդութիւնը, բոլոր վէճերն ու քաղաքացիական դատավարութիւնը. մի խօսքով՝ նա ամբողջ ազգի գործունէութեան կենտրոնատեղին էր։ Այնտեղ մղւում էին շարունակ փքուն ընդդիմախօսութիւններ. նա ազատ ասպարէզ էր մանաւանդ գիտնական վիճաբանութիւնների համար, որոնք խճճուած էին իմաստակութիւններով, սոփեստութիւններով ու վարպետութեամբ տրուած հարցերով։ Այդպիսով, տաճարը շատ էր նմանում մահմեդականների մզկիթներին։ Հռովմայեցիները, որ այդ ժամանակ մեծ յարգանքով էին վերաբերւում դէպի օտար կրօնները, թոյլ չէին տալիս իրանց ոտ կոխել նրանց սրբավայրերը. զանազան տեղերում կային յունարէն ու լատիներէն մակագրութիւններ, որոնք մատնանշում էին թէ մինչև որտեղ կարող է մուտք գործել ոչ-հրէան։ Բայց Անտոնիոսի աշտարակը, որ հռովմէական զօրքերի սպայախմբի կենտրոնատեղին (շտաբը) էր, աւելի բարձր էր տաճարի պարսպից և այնտեղից կարելի էր տեսնել բոլոր անցած դարձածը տաճարում։ Ու-

տիկանական իշխանութիւնը, տաճարում, հրէաների ձեռքին էր. նա մի առանձին պետի հսկողութեան տակ էր, որ հրամայում էր բանալ կամ փակել դռները, արգելում էր մտնել յաճախ, բոլոր նրանց, որոնք գալիս էին կամ անմաքուր կօշիկներով, իրենց ճանապարհը կարճելու համար և կամ բեռնաւորուած: Առանձնապէս հետևում էին, որ տաճարը ոտ չը կոխի այն մարդը, որ օրէնքով նկատւում էր անմաքուր: Կանանց համար կային առաջին գաւթի կենտրոնում առանձին տեղեր, որ շրջապատուած էին տախտակորմով: Երուսաղէմում Յիսուս ամբողջ օրերով տաճարից դուրս չէր գալիս: Տօներին այդ քաղաքում ժողովւում էր ահագին բազմութիւն: Ուխտաւորները խումբ-խումբ, 10 կամ 20-ական մարդուց բաղկացած, լցւում էին բոլոր բնակարանները և խռնւում էին իրար վրայ՝ արևելքին սիրելի՝ անկարգութեամբ: Յիսուս կորչում էր այդ ամբոխի մէջ, իսկ նրան շրջապատող գալիլիացիները բոլորովին աննկատելի էին մնում: Գուցէ նա զգում էր, որ ինքը գտնւում է հակառակորդների բանակում և հետևաբար ենթակայ պիտի լինի արհամարհանքի: Նրան զայրոյթ էր պատճառում այն ամենը, ինչ տեսնում էր: Տաճարը, ինչպէս և առհասարակ այն բոլոր աղօթատները, ուր մեծ բազմութիւն էր յաճախում, շատ քիչ բան ունէր գրաւիչ: Ծիսական արարողութիւնները կատարւում էին մի շարք անախորժ մանրամասնութիւններով. տեղի էր ունենում մինչև անգամ առևտուր, որի համար տաճարի սրբազան գաւթում կառուցուած էին խանութներ: Այդ խանութներում վաճառւում էին զոհաբերուող կենդանիները. նոյն տեղում գտնւում էին և լումայափոխների կրպակները: Երբեմն կարելի էր կարծել, որ գտնւում էք շուկայում: Տաճարի ստորին պաշտօնեաները իրենց սպասարկութիւնը կատարում էին հաւանօրէն նոյն գռեհիկ անհաւատութեամբ, որ յատուկ է բոլոր ժամանակի ստորին հոգևորականութեան: Այս անբարիշտ ու անփոյթ վերաբերմունքը դէպի սրբազան իրերը վիրաւորում էր Յիսուսի կրօնական զգացումը, որ երբեմն հասնում էր մինչև բծախնդրութեան: Նա ասում էր. «Աղօթատունը աւազականոց էք շինել»: Պատմում են, որ մի անգամ անկարող լինելով իր զայրոյթը զսպել, խարազանով ծեծեց այդ փերեզակներին ու շուռ տուեց նրանց սեղանները: Տաճարը, առհասարակ, սիրելի չէր նրան: Այն պաշ-

տամունքը, որ Յիսուս կամենում էր մատուցանել իր Հօրը, հեռի էր այդ տեսարաններից, որ յատուկ են միայն սպանդանոցին: Նա ատում էր մովսիսականութեան այս բոլոր հին հաստատութիւնները և ստիպուած լինելով ենթարկուել նրանց, խիստ նեղւում էր: Հէնց այդ պատճառով էլ քրիստոնէութեան նախնական ժամանակներում տաճարը կամ նրա տեղը յարգում էին միայն հրէայ քրիստոնեաները: Իսկապէս նոր մարդիկ զզւանք էին զգում դէպի այդ հնադարեան սրբութիւնը: Կոստանդիանոսն ու առաջին քրիստոնեայ կայսրները ձեռք չը տուին Ադրիանոսի կռապաշտական շէնքերին: Եւ միայն Յուլիանոսի նման քրիստոնէութեան թշնամիները մտաբերեցին այդ տեղերը: Երբ Օմարը Երուսաղէմ մտաւ, տաճարի նախագաւիթը դիտմամբ պղծեցին ի նշան ատելութեան՝ դէպի հրէաները: Միայն Իսլամը, որ մի տեսակ վերածնուած Մովսիսականութիւն էր, պատշաճաւոր յարգանք մատուցեց տաճարին: Այդ հիմնարկութիւնը միշտ դել է հակաքրիստոնէական:

Մովսիսականների հպարտութիւնը կրկնապատկեց Յիսուսի անբաւականութիւնը և նա չհանդուրժեց Երուսաղէմի կեանքին: Որքան բարձր գաղափարներ էին ծագում Իսրայէլի մէջ, այնքան ընկնում էր նրա հոգևորականութիւնը: Սինագոգների հաստատումից յետոյ օրէնքի մեկնաբանողն ու գիտնականը աւելի մեծ յարգանք էին վայելում, քան քահանան: Քահանաները բնակւում էր միմիայն Երուսաղէմում և նրանց գործունէութիւնը սահմանափակւում էր այնտեղ ծիսակատարութեամբ միայն, ինչպէս Ֆրանսիայի ծխական քահանաները, որ զուրկ են քարոզ խօսելու իրաւունքից. այդ պատճառով էլ չպիտի զարմանալ, որ նրանցից բարձր էր դասւում սինագոգի քարոզիչը, մեկնաբանը (կադուխտ), սոֆերը կամ դպիրը, չնայած որ դրանք, բոլորն էլ՝ աշխարհականներ էին: Յայտնի Թալմուտը հեղինակողների շարքում քահանայ չկար — դրանք գիտնականներ էին, այն ժամանակուայ ըմբռնողութեամբ: Թէպէտև Երուսաղէմի քահանայապետները մեծ նշանակութիւն ունէին ժողովրդի աչքում, բայց նրանք երբէք գլուխ չեն անցել կրօնական շարժ-

ման։ Քահանայապետը, որի յարգը ընկել էր Հերովդէս Մեծի շնորհիւ, հետզհետէ դառնում էր հռովմէական պաշտօնեայ, որին յաճախ փոխում էին, որպէսզի որոշ անձերի միջոց տան օգտուելու այդ պաշտօնի արտօնութիւններով։ Փարիսեցիների, զիլոտների, խիստ օրինապահների հակառակ, քահանաները, ամենքն էլ սադուկեցի էին, այսինքն, անդամ այն անհաւատ ազնուականութեան, որ առաջ էր եկել տաճարում և ապրում էր ծիսակատարութեան հասոյթներով, բայց ամեն կրօնական խնդիր դատարկաբանութիւն էր համարում։ Քահանայական դասակարգը այնքան օտար էր ազգային զգացման ու ժողովրդի մէջ տիրող կրօնական շարժումներին, որ «սադուկեցի» բառը, որ յատկացնում էին մի ժամանակ միայն Սադոկ քրմի սերունդին, վերջերում դարձաւ «Նիւթապաշտ» և «եպիկուրեան» բառերի հոմանիշը։

Հերովդէս Մեծի թագաւորութիւնից սկսած մի աւելի կորստաբեր հանգամանք անբարոյականացնում էր բարձրաստիճան քրմական դասակարգը։ Հերովդէսը սիրահարուեց ալեքսանդրացի մի ինչ որ Բօէտի որդու՝ Սիմէօնի դստեր վրայ։ Ցանկանալով ամուսնանալ նրա հետ (մօտաւորապէս 28 Թ. Ք. ա.) և կամենալով իր աներոջը ազնուացնել ու հաւասարացնել իրեն, տուեց նրան քահանայապետութիւնը։ Երեսուն տարի շարունակ այդ ստոր ցեղը վայելում էր քահանայապետական պաշտօնը։ Սերտ կապուած լինելով արքայական տան հետ, Արքեղայոսի գահընկէց լինելուց յետոյ, նա կորցրեց քահանայապետութիւնը, իսկ երբ Հերովդէս Ագրիպպասը կարճ ժամանակով վերականգնեց Հերովդէս Մեծի բոլոր սովորութիւնները, այդ ցեղը իր կորցրածը նորից ձեռք բերեց (42 Թ. Ք. յետոյ)։ Այսպիսով առաջ եկաւ Բօէտուզիմ անունով մի նոր ազնուականութիւն, որ բոլորովին աշխարհական էր և անհաւատ, մի հոգևոր ազնուականութիւն, որ համարեա թէ խառնուեց սադուկեցիներին։ Այսպիսով տաճարի շուրջը կազմուեց «հռովմէական պալատականների» նման մի շրջան, որ իր գոյութիւնը քաղաքականութեամբ էր պահպանում, մինչև անգամ վախենում ու խոյս էր տալիս աւելորդ ջերմեռանդութիւնից և ամենևին չէր հետաքրքրւում ոչ սրբերով և ոչ բարենորոգիչներով, որովհետև կերակրւում

էր հնամոլութեամբ։ Այս քահանայ-եպիկուրեանները չունէին փարիսեցիների եռանդը, այլ աւելի շատ ձգտում էին անգործութեան. և ահա հէնց դրանց բարոյական անհոգութիւնն ու սառը անհաւատութիւնն էր, որ զայրացնում էր Յիսուսին։ Չնայած իրենց կատարեալ հակադրութեան, փարիսեցիներն ու քահանաները հաւասարապէս ատելի էին Յիսուսին. բայց որովհետև օտարական էր ու յարգ չունէր, երկար ժամանակ ստիպուած եղաւ թագցնել այդ անբաւականութիւնը և հաղորդել միայն իր աշակերտների մտերիմ խմբակին։

Յիսուս աշխատում էր իր մտքերը տարածել Երուսաղէմում նախքան իր վերջին այցելութիւնը Երուսաղէմ, որ ամենից երկարատև էր և որը վերջացաւ իր մահով։ Ինքը քարոզում էր. խօսում էին նրա մասին, պատմում էին նրա կատարած մի քանի գործերը, որոնց հրաշք էին համարում։ Բայց, այնուամենայնիւ, նա չէր կարողացել ոչ եկեղեցի և ոչ աշակերտների շրջան ստեղծել այնտեղ։ Սքանչելի վարդապետը, որ ներում էր ամեն բան և մարդկանցից պահանջում՝ միմիայն սէր, ընդունելութիւն չէր կարող գտնել դատարկ վիճաբանութիւնների ու հնացած զոհաբերութիւնների այդ սրբավայրում։ Նա հաստատեց միայն մի քանի լաւ կապեր, որոնք վերջերում օգտակար եղան իրեն։ Յայտնի չէ թէ արդեօք նա ծանօթացաւ հէնց այդ ժամանակ Բեթանիայի այն ընտանիքի հետ, որ մխիթարում էր նրան վերջին ամիսներում կրած նեղութիւնների միջոցին։ Գուցէ հէնց այդ ժամանակ սկսեց նա իր յարաբերութիւնները Մարկոսի մօր, Մարիամի հետ, որի տան մէջ մի քանի ամիս յետոյ տեղի ունեցաւ առաքեալների ժողովը, նոյն Մարկոսի մասնակցութեամբ։ Նմանապէս աւելի վաղ գրաւեց հարուստ փարիսեցի Նիկոդիմոսի ուշադրութիւնը, որ անդամ էր Սինեդրիոնի ու մեծ յարգանք էր վայելում Երուսաղէմում։ Այդ մարդը, որ, ինչպէս երևում է, ազնիւ էր և բարեխիղճ՝ համակրում էր երիտասարդ գալիլիացուն։ Չկամենալով վարկաբեկ անել իրան, նա գիշերով եկաւ Յիսուսի մօտ ու երկար ժամանակ խօսեց նրա հետ։ Անկասկած Յիսուս նրա վրայ լաւ տպաւորութիւն էր գործել, որովհետև վերջերում նա պաշտպանում

էր Յիսուսին իր պաշտօնակիցների շրջանում։ Նրա մահից յետոյ Նիկոդիմոսը քրիստոնեայ չդարձաւ, որովհետև կարծում էր, թէ իր գրաւած դիրքի պատճառով անյարմար կը լինի մասնակցել մի յեղափոխական շարժման, որի գործողների մէջ դիրք ունեցող մարդիկ չկային։ Բայց նա մտերմաբար էր վերաբերւում դէպի Յիսուս ու աշխատում էր օգտակար լինել նրան, չնայած որ անկարող եղաւ բեկանել տալ այն մահուան դատավճիռը, որ մօտ ժամանակներում պիտի կայանար։

Ինչ վերաբերում է իր ժամանակի յայտնի գիտնականներին, ինչպէս երևում է, Յիսուս յարաբերութիւն չունէր նրանց հետ։ Հիլլէլն ու Շամմային արդէն մեռած էին։ Այդ ժամանակ ամենամեծ հեղինակութիւնը վայելում էր Գամաղիէլը, որ Հիլլէլի թոռն էր։ Ազատամիտ ու աշխարհիկ մարդ՝ հակուած էր դէպի աշխարհական ուսումը, և շնորհիւ բարձր դասակարգի մէջ ունեցած կապերին, չէր հանդիպում ընդդիմութեան։ Հակառակ խստակեաց փարիսեցիների, որոնք շրջում էին գլխին սաւան ծածկած և կամ փակ աչքերով, նա նայում էր ոչ միայն կանանց, այլև նոյնիսկ հեթանոսներին։ Հրէից պատմութիւնը. ի նկատի առնելով նրա կապերը արքունիքի հետ, ներում է ոչ միայն այդ, այլև այն՝ որ նա յունարէն գիտէր։ Ասում են, որ Յիսուսի մահից յետոյ նա նպաստաւոր կարծիքներ է յայտնել նոր հերձուածի մասին։ Սուրբ Պօղոսը նրա դպրոցիցն էր։ Շատ հաւանական է, որ Յիսուս երբէք եղած չէ այդ դպրոցում։

Միակ միտքը, որ Յիսուս յղացաւ Երուսաղէմում, և որ հետզհետէ նրա մէջ ամրանում էր, այն էր, որ պէտք է բոլորովին բաժանուել հին մովսիսականութիւնից։ Նա բացարձակապէս աւելորդ էր համարում զոհաբերութիւնը, որ իրեն զզւանք էր պատճառում, կամենում էր ոչնչացնել մեծամիտ ու անբարիշտ հոգևորականութիւնը, և առհասարակ Օրէնքը։ Այդ րոպէից նա դարձաւ մովսիսականութեան ոչ թէ վերանորոգիչը, այլ քանդողը։ Մովսիսականութեան կողմնակիցներից ոմանք այդ ժամանակ արդէն յայտարարել էին թէ Մեսիան նոր օրէնք պիտի տայ և այդ օրէնքը պիտի վերաբերէ ողջ մարդկութեանը։ Եսէացիները, որ գրեթէ հրէայ չէին, թւում է թէ անտարբեր էին նոյնպէս դէպի տաճարն ու Մով-

սէսի օրէնքները։ Միայն Յիսուսն էր առաջինը, որ պնդեց թէ իրենից՝ աւելի ճիշտը Յովհաննէսից՝ յետոյ, ոչնչացած է հին օրէնքը։ Իսկ եթէ երբեմն գործ էր դնում աւելի համեստ դարձուածքներ, այդ էլ այն պատճառով էր, որ չէր կամենում շատ խիստ վերաբերուել դէպի ընդհանրացած նախապաշարումները։ Իսկ երբ ստիպւում էր իր միտքը լիովին արտայայտել, նա քողը վերցնում էր ու բացարձակապէս յայտնում, որ Օրէնքը այլևս չունի նշանակութիւն։ Այդ բանը ապացուցանելու համար նա անում էր զօրեղ համեմատութիւններ։ «Ոչ ոք հին շորին չի դնում նոր կարկատան»։ «Նոր գինին չեն ածում փտած տկերի մէջ»։ Ահա թէ ինչումն է կայանում Յիսուսի՝ իբրև նորի ուսուցչի ու հիմնադրի՝ հերոսութիւնը։ Հին տաճարը իր մեծամիտ մակագրութիւններով արգելում էր հեթանոսների մուտքը։ Յիսուս այդ չէ ընդունում։ Այդ նեղ անողոք ու խիստ օրէնքը կարող էր պիտանի լինել միայն Աբրահամի որդիներին։ Նա կատաղի թշնամի էր ցեղական խտրութեան և սկզբում ուժգնօրէն մարտնչում էր նրա՛ դէմ։ Ուրիշ խօսքով Յիսուս այլևս հրէայ չէ։ Նա բառի ամենավեհ նշանակութեամբ յեղափոխիչ է. նա հրաւիրում է ողջ մարդկութիւնը հիմնելու մի նոր կրօն, որի գլխաւոր անկիւնաքարը պիտի կազմէր այն սկզբունքը, որ բոլոր մարդիկ Աստուծոյ որդի են։ Նա պաշտպանում է ո՛չ թէ հրէայի, այլ մարդու իրաւունքները, յայտարարում է ո՛չ թէ հրէական, այլ համամարդկային կրօն. ազատութիւն է տալիս ո՛չ թէ հրէային, այլ ամբողջ մարդկութեանը։ Օ՜, որքա՜ն, որքա՜ն հեռու է այս բանը Յուդայ Գալիլեացու ու Մատթէոս Մարգալոտի սկզբունքներից, որոնք յեղափոխում էին ժողովուրդը Օրէնքի անունով։ Վերջապէս հաստատուեց համամարդկային մի կրօն, որի հիմքը ո՛չ թէ արենակցական կապն է, այլ զգացումը։ Մովսիսի Օրէնքը յետ մնաց. ուրեմն այլևս հարկ չկայ տաճարի. նա դատապարտուած է կորստի։

ԳԼՈՒԽ ԺԳ

Յիսուսի վերաբերմունքը դէպի կռապաշտներն ու սամարացիները

Վերոյիշեալ սկզբունքներին նայելով՝ Յիսուս մերժում
էր ամէն մի կրօն, որ սրտից չէ բղխում։ Նա ոխերիմ թըշ-
նամի էր կեղծ բարեպաշտների բազմաթիւ արարողութիւն-
ներին, ինչպէս և այն ծէսերին ու խստակեցութեանը, որ բը-
ծախնդիրների կարծիքով փրկութեան միակ ճանապարհն է
համարւում։ Նա պահքին նշանակութիւն չէր տալիս և ներո-
ղամտութիւնը բարձր էր դասում զոհաբերութիւնից։ Սէր
առ Աստուած, ողորմածութիւն, փոխադարձ ներում—այս է
ամբողջապէս նրա հաւատի հանգանակը։ Ոչ մի կրօնական
սկզբունքի մէջ քրմական դասակարգը մոռացութեան չէ
տրուած այնչափ, որչափ Յիսուսի վարդապետութեան մէջ։
Քահանայի պաշտօնը պահանջում է, որ նա մեծ նշանակու-
թիւն տայ հասարակական ծիսակատարութիւններին, որով-
հետև այդ արարողութիւնները իր ձեռքով են կատարւելու
անպատճառ։ Նա երբեք չի առաջարկում միայնակ աղօթել,
որովհետև այդ դէպքում ինքը անգործ կմնար։ Ի զուր կը
լինէր մեր ջանքը, եթէ Աւետարանում որոնէինք որևէ ծի-
սակատարութիւն, որ Յիսուսից պատուիրագրած լինէր։ Նրա
համար մկրտութիւնն էլ երկրորդական նշանակութիւն ու-
նի. իսկ ինչ վերաբերում է աղօթքին՝ նա միայն մի պայ-
ման է դնում. աղօթքը մաքուր սրտից պիտի բղխի։ Ինչպէս
յաճախ վարւում են փոքրոգի մարդիկ, որոնք, երկնքի ար-
քայութիւնը վաստակելու համար, փոխանակ ցոյց տալու
ճշմարիտ սէր դէպի բարին, բաւականանում էին Յիսուսին
պատուելով ու «րաբբի, րաբբի» կանչելով։ Նա այդպիսիներ-

րին յետ էր մղում, ասելով, որ իր կրօնը բարի գործ է պա-
հանջում։ Շատ անգամ նա առաջ էր բերում Եսայի մարգա-
րէի հետևեալ խօսքերը. «Այս ժողովուրդը ինձ պաշտում է
շրթունքներով. նրա սիրտը ինձանից հեռացած է»։

Փարիսեցիների հետ ունեցած անբաւականութեան ու
ընդդիմադրութեան գլխաւոր պատճառը եղել է շաբաթը
պահելու հարցը։

Այս հինաւուրց օգտակար օրէնքը պատճառ դարձաւ
կազուիստների ողորմելի ու անմիտ վէճերին ու առիթ հան-
դիսացաւ բազմաթիւ սնահաւատութիւնների։

Հաւատացած էին, որ բնութիւնն էլ շաբաթ է պահում.
բոլոր ընդմիջուող աղբիւրները «շաբաթեան» էին համար-
ւում։ Եւ Յիսուս ամենից աւելի սիրում էր վիճաբանել իր
հակառակորդների հետ այդ հարցի մասին։ Նա բացարձա-
կապէս շաբաթը չէր պահում, իսկ երբ դրա համար յանդի-
մանում էին, պատասխանում էր նուրբ հեգնութիւններով։
Աւելի մեծ իրաւամբ Յիսուս ատում էր այն անհամար ա-
րարողութիւնները, որոնք աւանդութեան շնորհիւ խմբուել
էին օրէնքի շուրջը և այդ պատճառով էլ բծախնդիրների
սրտին աւելի մօտ էին։ Նա կատաղի թշնամի էր լուացման
ու սուրբ և անսուրբ իրերի մանրակրկիտ ընտրողութեան։
Նա ասում էր. «Ձեր հոգին կարող էք լուանալ». «Մարդուս
պղծում է ոչ թէ այն, ինչ մտնում է բերանը, այլ ինչ սըր-
տիցն է բղխում»։ Նա իր բոլոր հարուածները ուղղում էր
փարիսեցիների դէմ. նրանք էին այդ կեղծաւորութիւնների
քարոզողը։ Յիսուս նրանց էր մեղադրում։ Յիսուս մեղադրում
էր, որ աւելի խստացնում են օրէնքի պահանջները և այդ-
պիսով բաց են անում մարդկանց առաջ մեղքի նորանոր ճա-
նապարհներ. «Կոյրերի կոյր առաջնորդներ, —ասում էր նա
—չէ՞ որ երբ կոյրին կոյրն է ման ածում, այդ դէպքում եր-
կուսն էլ միասին փոսն են գահավիժում»։ «Իժի ծնունդ-
ներ, ինչպէս կարող էք բարի բան ասել, երբ ինքներդ չար
էք։» Աւելացնում էր նա. «Այն առածը թէ շրթունքները
սրտի թարգմանն են, հերքւում է ձեր օրինակով»։

Յիսուս հեթանոսներին այնչափ լաւ չէր ճանաչում, որ-
պէսզի նրանց էլ դարձի բերելու յոյսով մի հիմնական օրէնք

հաստատէր: Գալիլիայում ապրում էին բազմաթիւ հեթանոսներ. բայց, եթէ կարելի է այդպէս ասել, այնտեղ չկար կեղծ աստուածների կազմակերպուած պաշտամունք: Յիսուսը այդպիսի պաշտամունք կարող էր տեսնել իր ամբողջ փայլով միայն Տիւրոսում, Սիդոնում, Փիլիպպեան-Կեսարիայում և Դեկապոլիսում (Տասնաքաղաք): Նա այդ պաշտամունքի վրայ համարեա ուշադրութիւն չէր դարձնում: Յիսուսի խօսքերից ոչ մէկի մէջ չէք գտնի հրէական այդ ժամանակի ձանձրալի տառակերութիւնը, այն կրքոտ յարձակումները կռապաշտութեան դէմ, որ յատուկ է մովսիսականներին Աղէքսանդրի ժամանակից սկսած, և որոնցով լիքն է «Իմաստնոց Գիրքը»: Հեթանոսների դէմ Յիսուս զայրանում էր ոչ թէ նրանց կռապաշտութեան, այլ ստրկական զգացմունքի պատճառով: Երիտասարդ հրէայ-ժողովրդապետը այդ կողմից բոլորովին նմանում է Յուդայ Գոլոնացուն, որ ուրիշ տէր չէր ընդունում, բացի Աստուծուց: Ահա թէ ինչու նա իր զգացումները անպատուած էր համարում, երբ իշխաններին տուում էին պատիւներ և երբեմն էլ կեղծ տիտղոսներ: Հէնց այդ պատճառով էլ հեթանոսներին հանդիպելիս՝ նա մեծ մասամբ զիջողաբար էր վերաբերւում: Երբեմն էլ թւում էր, թէ Յիսուս իր յոյսը աւելի նրանց վրայ է դրել, քան թէ հրէաների: Աստուծոյ թագաւորութեան ճանապարհը նրանց համար էլ բաց կը լինի: «Երբ խաղողի տէրը գայ ինչպէս կը վարուի այս մշակների հետ: Այդ չարագործներին մահուան կը դատապարտէ, ու խաղողը կը յանձնէ այնպիսի մարդկանց, որոնք իր ժամանակին պտուղ կը տան»: Մանաւանդ Յիսուս պարտաւոր էր այդ հայեացքն ունենալ, որովհետև հրէաների կարծիքով Մեսիայի գալստեան ամենաճշմարիտ նշանն էր հեթանոսների դարձը: Նրա աստուածային թագաւորութեան մէջ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ միասին պիտի բազմեն և աշխարհի ամեն ծայրերից եկած մարդիկ, իսկ օրինաւոր ժառանգները պիտի զրկուեն: Թէպէտև այն խրատների մէջ, որ տալիս էր նա իր աշակերտներին, յաճախ հակառակ տրամադրութիւն էր նկատւում. ըստ երևոյթին նա առաջարկում է քարոզել ու փրկել միայն ուղղափառ հրէաներին, իսկ հեթանոսների մասին խօսում է

բոլորովին նախապաշարուած հրէայի նման: Չպիտի մոռանալ, որ Յիսուսի աշակերտները, որոնց սահմանափակ մտածողութիւնը անկարող էր ըմբռնել այդ անտարբեր վերաբերմունքը դէպի Աբրահամի սերունդը, աղաւաղած կը լինեն ուսուցչի պատուէրները ու համաձայնեցրած իրենց սեպհական հայեացքներին: Բացի դրանից կարող է պատահել, որ ինքը՝ Յիսուս էլ մի քանի անգամ փոխած լինի իր վերաբերմունքը դէպի հեթանոսները: Չէ՞ որ այդ միևնոյն բանը արեց և Մուհամմէդը. հրէաների մասին նա Ղուրանում երբեմն շատ նպաստաւոր և երբեմն էլ չափազանց խիստ կարծիքներ է յայտնում, նայած թէ յոյս ունի՞ արդեօք նրանց գրաւելու իր վարդապետութեան կողմը:

Եւ իսկապէս, ըստ աւանդութեան, Յիսուս հաւատացեալներդ անելուգո րծում երկու բոլորովին հակառակ սկզբունքների էր հետևում և իւրաքանչիւրը առանձին գործադրում. «Ով ձեզ հակառակ չէ, նա ձեզ հետ է» և՝ «Ով ինձ հետ չէ, նա իմ դէմ է»: Կատաղի կռիւը միշտ այդ հետևանքներին է բերում մարդկանց:

Անկասկած Յիսուսի աշակերտների թւում կային շատ այնպիսի անձեր, որոնց հրէաները «հելլէն» էին անուանում: Այդ խօսքը Պաղեստինում գործ էր ածւում բազմաթիւ նշանակութիւններով: Երբեմն կռապաշտ էր նշանակում. երբեմն այնպիսի հրէայ, որ խօսում է յունարէն և ապրում՝ հեթանոսների մէջ, երբեմն էլ այնպիսի հեթանոս, որ մովսիսական կրօնն է ընդունել: Երևի Յիսուս աւելի յարգուած էր այս վերջին կարգի հելլէններից:

Մովսիսականութիւն ընդունածները բազմաթիւ աստիճանների էին բաժանւում և հաւատափոխները միշտ դասւում էին հրէայ ծնուածներից ստոր: Այն հաւատափոխները, որոնց մասին այժմ խօսում ենք, պատկանում էին «դրան մօտի» կամ «Աստուծուց վախեցողների դասին և ենթակայ էին ոչ թէ Մովսէսի, այլ Նոյի օրէնքներին: Անկասկած այս նուաստացած դրութիւնն էր պատճառը, որ նրանք մօտեցան Յիսուսին ու գրաւեցին նրա բարի տրամադրութիւնը:

Նա այդպէս վերաբերւում էր և դէպի սամարացիները: Կղզիացած լինելով երկու այնպիսի նահանգների մէջ, որ-

տեղ Մովսիսական կրօնն է տիրապետում (Հրէաստանն ու Գալիլիան) Սամարիան Պաղեստինի մէջ ներս ցցուած սեպի տեսք ունէր։ Այնտեղ դեռ պահպանւում էր Գարիզիմ լերան հին պաշտամունքը, որ Երուսաղէմական պաշտամունքի ազգակիցն ու ախոյեանն էր։ Դա մի խղճալի հերձուած էր, որ չունէր ոչ ստեղծագործող հանճար և ոչ մովսիսականութեան յաջող կազմակերպութիւնը։ Երուսաղէմականները նրանց հետ չափազանց կոպտաբար էին վարւում։ Այդ հերձուածը հեթանոսութեան կարգն էին դասում ու ատելութեամբ էին վերաբերւում դէպի նրա հետևողները։ Տարօրինակ հակադրութեամբ Յիսուս բարեհաճ էր դէպի սամարացիները և յաճախ նոյնիսկ բարձր էր դասում նրանց ուղղափառ հրէաներից։ Իսկ եթէ երբեմն, ըստ երևոյթին, արգելում էր իր աշակերտներին գնալ նրանց մէջ քարոզելու, և պատուիրում է Աւետարանը տալ ճշմարիտ հրէաներին, երևի այդ կարգադրութիւնը, անկասկած, պիտի վերագրել մի որոշ դէպքի ու յայտնի հանգամանքի, բայց ոչ թէ ընդունել այն իբրև մի բացարձակ պատուէր, ինչպէս առաքեալներն էին ըմբռնել վերջերում։ Թէպէտև մի քանի անգամ սամարացիները նրան վատ ընդունելութիւն ցոյց տուին, որովհետև կարծում էին թէ նա էլ միւս հրէաների նման վարակուած է դէպի իրենց աննպաստ նախապաշարումներով։ Մեր օրերում էլ ամէն մի մահմեդական իւրաքանչիւր նոյնիսկ ազատամիտ եւրոպացու իր թշնամին է նկատում, որովհետև նրան մոլեռանդ քրիստոնեայ է համարում։ Յիսուս հեշտութեամբ խոյս էր տալիս այդպիսի թիւրիմացութիւններից։ Նա կարողացաւ բարձր կանգնել այդ բոլոր նախապաշարումներից։ Սիւքեմում ունեցաւ բազմաթիւ աշակերտներ և այնտեղ մնաց երկու օրից ոչ պակաս։ Մի օրինակով Յիսուս ցոյց է տալիս, որ միայն սամարացին է բոլորից աւելի երախտագէտ ու կարեկից։ Նրա ամենագեղեցիկ առակներից մէկը Երիքովի ճանապարհին վիրաւորուած մարդու առակն է։ Այդ մարդու մօտով անցնում է քահանան, տեսնում է վիրաւորեալին ու իր ճանապարհը շարունակում։ Յետոյ անցնում է ղևտացին, որը նմանապէս կանգ չէ առնում։ Նրան խղճում է միայն սամարացին. նա մօտենում է, նրա վէրքերի վրայ իւղ է ածում ու կապում։ Այստեղից Յիսուս եզրակացնում է, որ մարդկանց միջև սերտ եղբայրական կապ հաստատւում է ոչ թէ հաւատով, այլ գթութեամբ։ «Մերձաւոր» բառը, որ մովսիսականութեան հասկացողութեամբ հաւատակից էր նշանակում, Յիսուս առհասարակ մարդ էր ըմբռնում, ինչ հերձուածի ու կրօնի էլ պատկանելու լինէր նա, միայն թէ կարեկից լինէր դէպի իր նմանը։ Կատարեալ եղբայրութիւն իր ամենալայն մտքով, ահա թէ ինչով է ներշնչուած նրա ամբողջ վարդապետութիւնը։

Այս մտքերը, որ Յիսուսին զբաղեցնում էին Երուսաղէմից դուրս գալու ժամանակ, գեղեցիկ կերպով նկարագրուած են նրա վերադարձի պատմութիւններից մէկում, որը մինչև հիմա էլ մնացել է։ Երուսաղէմից Գալիլիա տանող ճանապարհը անցնում է Սիւքեմից կէս ժամաչափ հեռու մի հովտով, որ տարածւում է Էբալ ու Գարիզիմ լեռների միջով։ Մովսիսական ուխտաւորները այս ճանապարհից խոյս էին տալիս և գերադասում էին աւելի մեծ շրջան անել ու Պերէայով անցնել, քան սամարացիներից վիրաւորանք կրել և կամ նրանցից որևէ բան խնդրել։ Մովսիսականներին արգելուած էր նրանց հետ կերուխում անել։ Կազուիստներից ոմանք անհերքելի ճշմարտութիւն էին համարում այն միտքը թէ՝ «սամարացուց ստացած հացի մի կտորը ու խոզի միսը միևնոյն են»։ Այս ճանապարհով ուղևորուելիս՝ սովորաբար իրենց հետ պաշար էին տանում, բայց այնուամենայնիւ սակաւ էր պատահում որ խուսափէին կռուից ու վիրաւորանքից։ Յիսուս համամիտ չէր այդ բարոյախօսների դէպի սամարացիները քարոզած թշնամական վերաբերմունքի և վախի նկատմամբ։ Եւ այժմ անցնելով այդ ճանապարհով և հասնելով այն տեղը, ուր ձախակողմից Սիւքեմի հովիտն է երևում, նա յոգնութիւն զգաց և նստեց ջրհորի մօտ հանգստանալու։ Սամարացիները թէ հին և թէ այդ ժամանակներում սովորութիւն ունէին իրենց հովտի զանազան կէտերին նահապետական անուններ տալ։ Այն ջրհորը, ուր մօտ նստեց Յիսուս՝ կոչւում էր Յակոբի ջրհոր։ Նրանց կարծիքով այդ ջրհորը Յակոբը տուել էր իր որդուն, Յովսէփին։ Հաւանօրէն այդ այն ջրհորն է, որ այժմ Բիր-Եակուբ է անուանւում։ Յիսուսի ա-

շակերտները ուղղուեցին դէպի հովիտը պաշար բերելու։ Յիսուս նստել էր հորի մօտ, Գարիզիմ լերան դիմաց։ Կէսօրի մօտերքին էր։ Սիւքեմից եկաւ մի կին ջուր տանելու։ Յիսուս ջուր խնդրեց և մեծ զարմանք պատճառեց, որովհետև հրէաները ոչ մի յարաբերութիւն չէին անում սամարացիների հետ։ Յիսուսի հետ խօսելով, կինը համոզուեց, որ նա մարգարէ է և կարծելով, որ իրենց կրօնը պիտի դատապարտէ, ասաց. «Տէր, մեր հայրերը այս լերան վրայ էին երկրպագում Աստուծուն, մինչդեռ դուք ասում էք, թէ միակ տեղը Երուսաղէմն է»։ Յիսուս պատասխանեց. «Հաւատա ինձ, որ կը գայ ժամանակ, երբ ոչ Երուսաղէմում և ոչ այս լերան վրայ կ՛երկրպագեն Աստուծուն, այլ Աստուծոյ ճշմարիտ երկրպագողները կը պաշտեն նրան հոգով և ճշմարտութեամբ»։

Այդ օրը, երբ այս ասում էր, նա Աստուծոյ որդի էր։ Նա առաջին անգամ արտասանեց այն խօսքը, որի վրայ յետագայում պիտի հաստատուէին յաւիտենական կրօնի հիմքերը։ Նա սկիզբ դրեց այն մաքուր պաշտամունքին, որը կապուած չէր ո՛չ տեղի և ո՛չ ժամանակի հետ, և որին պիտի հետևեն բոլոր ազնիւ հոգիները յաւիտեանս յաւիտենից։ Այդ օրը նրա կրօնը դարձաւ ոչ միայն ողջ մարդկութեան կրօն, այլ և բացարձակ կրօն. և եթէ միւս մոլորակների վրայ էլ մտքով ու բարոյական զգացումով օժտուած մարդիկ կան, նրանց կրօնն էլ չի տարբերուի այն կրօնից, որ Յիսուս յայտարարեց Յակոբի ջրհորի մօտ։ Մարդկութիւնը նրան դեռ չէ իւրացրել, չի կարողացել իւրացնել. իդէալը մատչելի է լինում մի վայրկեան միայն։ Յիսուսի խօսքը մայլ գիշերում փայլատակող կայծին է նման։ 18 դար անցաւ մինչև մարդկութիւնը (ի՞նչ եմ ասում—նրա ամենաչընչին մասը) ընտելացաւ այդ կուրացնող լոյսին։ Բայց կը գայ ժամանակ, երբ կայծակի փայլը ցերեկուայ լոյսի կը վերափոխուի ու մարդկութիւնը, մի կարգ թիւրիմացութիւնների մէջ խարխափելուց յետոյ, վերջ ի վերջոյ կրկին կը վերադառնայ Յիսուսի խօսքին, որ մարդկութեան հաւատի ու յոյսի անմահ արտայայտութիւնն է։

ԳԼՈՒԽ ԺԳ

Յիսուսի մասին կազմուած առասպելի ծագումը, նրա անձնական գաղափարը իր գերնական դերի մասին

Յիսուս վերադարձաւ Գալիլիա, հրաժարուած՝ մովսիսականութիւնից ու լի յեղափոխական ոգևորութեամբ։ Այժմ արդէն նրա գաղափարները վերջնականապէս կազմակերպուել ու պարզուել էին։ Փոխանակ արծարծելու իր մարգարէական գործունէութեան առաջին շրջանի միամիտ աֆորիզմները, որ մասամբ փոխ էր առել հին րաբբիների ասացուածներից, և տարածելու երկրորդ շրջանի բարձր բարոյական սկզբունքները, նա նւիրւում է բոլորովին որոշ քաղաքական գործունէութեան։ Հին օրէնքը պիտի քանդուէր, և այդ անողը միայն ինքն էր լինելու։ Մեսիան արդէն եկել էր, և ինքն էր այդ Մեսիան։ Աստուծոյ թագաւորութիւնը շուտով պիտի յայտարարուէր և այդ յայտարարումը պիտի լինէր նմանապէս իր ձեռքով։ Նա լաւ գիտէր, որ պիտի զոհ գնար իր համարձակութեանը, բայց չէ՞ որ Աստուծոյ թագաւորութիւնը առանց զոհողութեան չի կարելի նուաճել. այդ թագաւորութիւնը պիտի հաստատուէր մի կարգ պատահարներից ու զոհաբերութիւններից յետոյ։ Բայց մարդու որդին կրկին կը գայ իր մահից յետոյ, այս անգամ փառքով պսակուած, հրեշտակների դասերով շրջապատուած. և բոլոր նրանք, որոնք չեն ընդունել նրան, կը դատապարտուեն։

Այս մտքի համարձակութիւնը մեզ չպիտի զարմացնէ. Յիսուս վաղուց էր ընդունում իր և Աստուծոյ յարաբերութիւնը իբրև հօր և որդու յարաբերութիւն։ Եթէ այդ համարձակ մտքերը ուրիշն արտայայտած լինէր, պիտի վերագրէինք ծայրայեղ մեծամտութեան. բայց Յիսուսի մասին այդ չի կարելի ասել։ Դաւթի որդին նրա ընդունած առա-

ջին տիտղոսն էր. շատ հաւանական է, որ Յիսուս չէ մասնակցել այն միամիտ աշխատանքներին, որով կամենում էին ապացուցանել Նրա այդ անունը կրելու իրաւունքը։ Երևի այդ ժամանակ Դաւթի ցեղը վաղուց էր ընդհատուել։ Ոչ Ասմոնեանները, որ քահանայապետական ցեղից էին, ոչ Հերովդէսը և ոչ էլ հռովմայեցիները մի վայրկեան անգամ մըտքով չէին անցկացնում, թէ իրենցից ոչ հեռու, մի որևէ տեղ կարող է գոյութիւն ունենալ հին թագաւորական տոհմին պատկանող որևէ մարդ։ Բայց, Ասմոնեանների ցեղը ընդհատուելուց յետոյ, ամենքը ոգևորուեցին միևնոյն երազով, թէ կը գայ հին թագաւորական սերունդից մէկը ու իր ժողովրդի փոխարէն վրէժխնդիր կը լինի Նրա թշնամիներից։

Բոլորը հաւատացած էին, թէ Մեսիան Դաւթի որդի պիտի լինի և պիտի ծնուի Բեթղեհէմում։ Յիսուսի նախնական կարծիքը այդ չէր։ Նրա երկնային թագաւորութիւնը կապուած չէր Դաւթի մասին կազմուած այն յիշողութիւնների հետ, որոնք այդ ժամանակ զբաղեցնում էին հրէայ ժողովուրդը։ Նա իրան համարում էր Աստուծոյ և ոչ թէ Դաւթի որդի։ Այն երկնային թագաւորութիւնը և այն ազատութիւնը, որոնց վրայ նա մտածում էր, բոլորովին այլ բան էին։ Բայց, չնայած դրան, նա տեղի տուեց ընդհանուրի համոզմանը։ «Յիսուս Մեսիա է» մտքի անմիջական հետևանքը եղաւ և «Յիսուս Դաւթի որդի է» կարծիքը։ Նա թոյլատրեց իրան այդպէս կոչել, որովհետև առանց այդ կոչման յաջողութիւն չէր կարող գտնել։ Իսկ վերջերում այդ կոչումը նոյնիսկ նրան բաւականութիւն էր պատճառում. այդ երևում է այն հանգամանքից, որ երբ իրան դիմում էին այդ կոչումով, նա աւելի մեծ հաճութեամբ էր գործում հրաշքներ։ Թէ այս և թէ ուրիշ շատ հանգամանքներում, Յիսուս յաճախ խոնարհւում էր ընդհանրացած այնպիսի կարծիքների առաջ, որոնց ինքը համամիտ չէր։ Իր «Աստուծոյ թագաւորութեան» սկզբունքին կցեց ամեն բան, ինչ որ կարող էր սրտեր վառել և երևակայութիւններ գրգռել։ Այսպէս, օրինակ, նա ընդունեց Յովհաննէսի մկրտութիւնը, թէպէտև, ինչպէս տեսանք, ինքը այդ մկրտութեանը նշանակութիւն չէր տալիս։

Այստեղ արդէն մի նոր դժուարութիւն ծագեց. ամեն-

քը գիտէին, որ Յիսուս ծնուել է Նազարէթում։ Յայտնի չէ, սակայն, թէ Յիսուս հերքե՞լ է արդեօք այդ բանը։ Գուցէ Գալիլիայում, որտեղ այնքան էլ տարածուած չէր այն կարծիքը թէ Մեսիան Բեթղեհեմում պիտի ծնուի, դրա համար էլ ոչ ոք էր այդ մասին առարկում։ Մանաւանդ որ, գաղափարական գալիլիացու կարծիքով, «Դաւթի որդի» տիտղոսին արժանի կը լինէր ամեն հրէայ, որ կաշխատէր վերականգնել իր ազգի փառքը ու Իսրայէլի երջանկագոյն օրերը։ Կարելի էր ենթադրել, որ Յիսուս իր լռութեամբ հաւանութիւն է տուել այն կեղծ տոհմագրութեանը, որ կազմել էին նրա հետևողները, ապացուցանելու համար, որ Յիսուս թագաւորական տոհմից է։ Ծանօթ էր արդեօք այն առասպելներին, որ հնարուեցին ապացուցանելու համար, թէ նա ծնուած է Բեթղեհէմում և կամ այն կերպին, որով այդ առասպելները կապել էին կայսերական փոխանորդ (լեգատ) Կվիրինիոսի հրամանով կատարուող մարդահամարի հետ։ Ոչ ոք չգիտէ այդ։ Այն անճշտութիւններն ու հակասութիւնները, որ պատահում են նրա տոհմաբանութեան մէջ, մեզ ենթադրել են տալիս, որ դրանք ժողովրդական ստեղծագործութեան արդիւնք են, կատարուել են զանազան տեղերում, և, նրանցից ոչ մէկը Յիսուսի թելադրածը չէ։ Նա իրան երբէք չէր անուանում Դաւթի որդի։ Նրա աշակերտները, որոնք աւելի անզարգացած էին, քան թէ ինքը, յաճախ նրա իր մասին ասածները չափազանցում էին։ Իսկ շատ յաճախ նա տեղեկութիւն անգամ չէր ունենում նրանց վարմունքի մասին. չէր իմանում իր աշակերտների արածները։ Պէտք է աւելացնենք և այն, որ առաջին 3 տարում մի շարք քրիստոնէական հերձուածներ յամառօրէն մերժում էին Յիսուսի թագաւորական ծագումը ու այդ ծննդաբանութիւնների հարազատութիւնը։

Այսպիսով նրա մասին կազմուած առասպելը արդիւնք էր մի առանձին համաձայնութեան, որ կայացել էր նրա կենդանութեան ժամանակ, նրան շրջապատողների միջև։ Պատմութիւնը չէ յիշում ոչ մի մեծ իրողութիւն, որի շուրջը կազմուած չլինէին զանազան առասպելներ և Յիսուս, եթէ կամենար էլ, չէր կարող կանգնեցնել ժողովրդի այդ տեսակ

ստեղծագործութիւնը։ Գուցէ հետազօտողի խորաթափանց աչքը հէնց այդ ժամանակին վերագրի սկզբնաւորութիւնը այն բոլոր զրոյցների, որոնց մէջ նրան գերբնական ծագում է տրւում։ Այդ ծագման գաղափարը կարող էր առաջ գալ հնումը շատ տարածուած այն մտքի ազդեցութեան տակ, թէ անբնական մարդը չի կարող ծնուել բնական ճանապարհով. կամ, գուցէ սրանով կամենում էին նրա ծնունդը համաձայնեցնել Եսայի մարգարէի գործի այն թիւր ըմբռնուած գլխի հետ, ուր, ըստ նրանց մեկնութեան, ասուած էր, թէ Մեսիան պիտի ծնուէր կոյսից։ Վերջապէս դա կարող էր հետեւանք լինել և՛ այն հասկացողութեան, թէ «Աստուծոյ հոգին մարմնանալով մարդկային էութեան մէջ, պտղաբերելու սկզբնապատճառ է դառնում»։ Գուցէ հէնց այդ ժամանակ Յիսուսի մանկութեան մասին պատում էին շատ առասպելներ, որոնց նպատակն էր ապացուցանել, թէ՝ Մեսիայի մասին եղած բոլոր մարգարէութիւնները Յիսուսի կեանքում կատարուած են։ Դեռ ևս մանկութիւնից դնում են նրան յարաբերութեան մէջ իր ժամանակի ականաւոր անձերի՝ Հերովդէս Մեծի, Յովհաննէս Մկրտչի ու երկու ծերունիների՝ Աննայի ու Սիմէոնի հետ, որոնք իրենց մահից յետոյ արդարների կարգը դասուեցին։ Այդ բոլորը գլխաւորապէս հիմնուած էին խեղաթիւրուած իրողութիւնների վրայ և ապացուցւում էին կասկածելի ժամանակագրութեամբ։ Բայց նրանք լի էին մի ջերմ ու ազնիւ զգացումով, որ յատուկ է ժողովրդական ստեղծագործութեանը և դրա շնորհիւ էլ լրացնում էին քարոզների կատարածը։ Այդ բացատրութիւնները սկսեցին աւելի տարածուել Յիսուսի մահից յետոյ. Նրա կենդանութեան ժամանակ էլ պատում էին և ամեն տեղ հանդիպում՝ բարեպաշտական հաւատքի ու միամիտ հիացմունքի։

Կասկած չկայ, որ Յիսուս երբեք չէր մտածում իրեն յայտարարել իբրև մարմնացած Աստուած։ Այդ գաղափարը յատուկ չէ հրէական մտածողութեանը. համատես աւետարանիչների մէջ ոչ մի տեղ այդպիսի բան չենք գտնի, միայն չորրորդ աւետարանում գտնում ենք այնպիսի տեղեր, որոնց շնորհիւ մեր մէջ կարող էր թեթև կասկած ծագել յօգուտ այդ գաղափարի. բայց այդ տեղերն էլ հեռու էին Յի-

սուսի մտքի արտայայտութիւնը լինելուց։ Երբեմն աւետարանը թողնում է այն տպաւորութիւնը, թէ Յիսուսը ձեռք է առել միջոցներ այդպիսի կարծիքների տարածման դէմ։ Մինչև անգամ չորրորդ աւետարանում ասուած է, թէ սուտ է հրէաների այն մեղադրանքը, որ Յիսուս իրան յայտարարում է Աստուած կամ Աստուծուն հաւասար։ Այդ աւետարանի խօսքով, Յիսուս բացարձակապէս ասում է, որ ինքը Հօրից ստորադաս է։ Մի այլ տեղում խոստովանում է, թէ Հայրը իրան ամեն բան չէ յայտնել։ Նա իրան համարում էր սովորական մարդից բարձր, բայց միևնոյն ժամանակ պնդում էր, որ անսահման հեռաւորութիւն կայ նրա և իր Հօր մէջ։ Նա Աստուծոյ որդի է, բայց չէ՞ որ բոլոր մարդիկ էլ Աստուծոյ որդի են կամ կարող են դառնալ մեծ կամ փոքր չափով։ Ամեն օր մարդիկ Աստուծուն պիտի Հայր անուանեն, բոլոր յարութիւն առնողները Աստուծոյ որդի պիտի լինեն։ Հին կտակարանի մէջ տրւում է աստուածային ծագումն և՛ այնպիսի մարդոց, որոնք շատ հեռու էին Աստուծոյ հաւասար համարուելուց։ Նոր ուխտի մէջ «Որդի» բառը հասկացւում է ամենալայն մտքով։ Բացի դրանից, Յիսուսի պատկերացրած «մարդ» գաղափարը աւելի բարձր է դէիզմի[1]) կազմած նոյն գաղափարից։ Համաձայն այն բանաստեղծական մտապատկերի, որ Յիսուս կազմել էր ողջ բնութեան մասին, տիեզերքը համակուած է մի հոգով. մարդու հոգին Աստուծոյ հոգին է. Աստուած բնակւում է մարդոց մէջ և մարդկանցով, իսկ մարդն էլ՝ իր կարգին՝ Աստուծոյ մէջ և Աստուծով։ Յիսուսի բարձրագոյն իդէալիզմը արգելում էր նրան իր անձի մասին որևէ գաղափար կազմել։ Նա և իր Հայրը մի են, Հայրը—ինքն է։ Նա ապրում է իր աշակերտների մէջ և ամեն տեղ նրանց հետ է. նա իր աշակերտների հետ մի ամբողջութիւն է կազմում, ճիշտ այնպէս, ինչպէս ինքն ու իր Հայրը։ Նրա համար գոյութիւն ունի գաղափարը, որը ամեն բան է, իսկ այն նիւթը, որ մարդկանց տարբերում է միմեանցից, ոչինչ է։

Այսպիսով «Աստուծոյ որդի» կամ պարզապէս «որդի»

[1]) Ժէ դարի մի փիլիսոփայութիւն, որ ամեն բան ենթարկում էր բանականութեան քննադատութեանը։ Ծ. Թ.

բառը Յիսուսի մասին սկսեց գործածուել նոյն մտքով, ինչ մտքով գործածւում էր «մարդու որդի» բառը իբրև հոմանիշ «Մեսիայի», միայն այն տարբերութեամբ, որ երբ ինքը իրան «մարդու որդի» էր անուանում, այլևս «Աստուծոյ որդի» բառերը չէր գործ դնում։ «Մարդու որդին» Նրա դատաւորական տիտղոսն է, իսկ «Աստուծոյ որդի» կոչումը նշան էր Նրա մասնակցութեան՝ բարձրագոյն տնօրինութիւններում, ինչպէս և Նրա ամենակարողութեան։ Այդ կարողութիւնը անսահման է։ Նրա Հայրը իրան ամենակարող է դարձրել։ Նա իշխանութիւն ունի վերացնելու նոյնիսկ շաբաթը։ Ոչ ոք Հօրը չի կարող ճանաչել առանց իր միջնորդութեան։ Հայրը իրան տուել է դատելու իրաւունք։ Բնութիւնը իր իշխանութեան տակ է, բայց նա ենթարկւում է և՛ այն ամեն մարդոց իշխանութեան, որոնք հաւատում և աղօթում են։ Հաւատքն ամենազօր է։ Պիտի նկատել, որ ո՛չ ինքը և ո՛չ իր աշակերտները գաղափար չունէին բնական օրէնքների մասին, որոնք գծում են կարելիութեան սահմանը։

Ներկայ եղողները գոհանում էին Աստուծուց, որ՝ «Նա տալիս է մարդկանց այդպիսի իշխանութիւն»։ Նա մեղքեր է արձակում. բարձր է Դաւթից, Աբրահամից, Սողոմոնից և մարգարէներից։ Մեզ յայտնի չէ, թէ ինչ չափով և ինչ ձևով արտայայտուեց այդ կարծիքը։ Յիսուսի մասին խօսելիս՝ չպիտի դատել մեր պայմաններով։ Իր աշակերտների ծայրայեղ հիացումով գրաւուեց և՛ ինքը։ Պարզ է, որ «րաբբի» կոչումը, որ մի ժամանակ Նրան բաւականութիւն էր տալիս, հիմա Նրան թոյլ էր թւում և մինչև անգամ այժմ Նա չէր գոհանում մարգարէ կամ Աստուծոյ առաքեալ տիտղոսով։ Նա սկսեց ցոյց տալ իրան մի գերընական էակ, մի այնպիսի արարած, որ Աստուծոյ հետ գտնւում է մի ուրիշ, աւելի բարձր, յարաբերութեան մէջ։ Բայց նկատենք, որ Յիսուսի կրօնական սկզբունքը չէր ճանաչում «գերընական», «գերմարդկային» բառերը, որոնք առնուած են մեր՝ գաղափարներով աղքատ՝ աստուածաբանութիւնից։ Նրա կարծիքով բնութիւնն ու մարդկային յառաջադիմութիւնը չէին կազմում մի շրջան, որ դուրս է Աստուծոյ ազդեցութիւնից, չէին ներկայացնում այն ողորմելի իրականութիւ-

նը, որ ենթակայ է որոշ, խիստ ու անփոփոխ օրէնքների։ Նրա համար գերընականը գոյութիւն չունէր, որովհետև չէր բաժանում բնութիւնը միւս իրերից։ Արբած անսահման սիրով՝ Նա մոռանում էր այն ծանր շղթաները, որով կաշկանդուած էր մարդկային գերուած ուղեղը։ Մտքի համարձակ թռիչքով Նա անցնում է այն անդունդը, որ մարդկային ուղեղի անձկութեան պատճառով կազմուել էր նրանց ու Աստուծոյ միջև և որը անանցանելի էր մարդկանց մեծամասնութեան համար։

Մտացածին սքոլաստիկայի ճշգրտութիւնը յատուկ չէր այդ ժամանակին։ Մեր նկարագրած գաղափարների ամբողջութիւնը ստեղծեց Յիսուսի աշակերտների գլխում մի այնպիսի աստուածաբանական անկարգ սիստեմ, որ Աստուծոյ որդին, որը մի տեսակ երկրորդ Աստուած էր նրանց կարծիքով, գործում էր բոլորովին մարդու նման։ Նրան փորձում են. շատ բան չէ իմանում. իր հայեացքները փոխում է, մռայլւում, յուսահատւում է. Հօրը խնդրում է, որ փորձանքներից ազատէ իրան. հպատակւում է Աստուծուն, ինչպէս որդին՝ հօրը։ Նա, որին վիճակուած էր աշխարհս դատել, չգիտէր նոյնիսկ դատելու օրը. զգուշութիւններ է ձեռք առնում իրան փրկելու համար։ Նրա ծննդից անմիջապէս յետոյ, Նրան փրկում են այս աշխարհի զօրեղների ձեռքից, որոնք կամենում էին Նրան սպանել։ Եւ այսպէս վերաբերւում է այն մարդը, որը Աստուծոյ առաքեալն է և վայելում է Նրա առանձին հովանաւորութիւնը։ Աւելորդ է այստեղ որոնել տրամաբանութիւն կամ հետևողականութիւն։ Հակասութիւնների պատճառը նախ այն է՝ որ Յիսուս անհրաժեշտ համարեց հաւատ ներշնչել դէպի ինքը և երկրորդ՝ աշակերտների խանդավառութիւնը։ Դանիէլի ու Ենովքի գրքերով գրաւուողների համար Նա մարդու որդի էր. հաւատացեալ հրէաների, Եսայի ու Միքիայ մարգարէների յայտնութիւններով հետաքրքրողների համար՝ Դաւթի որդի. իսկ աշակերտները Նրան համարում էին Աստուծոյ որդի, կամ աւելի կարճ՝ Որդի։ Կային մարդիկ էլ, որ Նրան համարում էին Յովհաննէս Մկրտիչը՝ յարութիւն առած. այդ կարծիքի դէմ Յիսուսի աշակերտներն անգամ չէին բողոքում։ Վերջապէս ոմանք Նրան համարում էին Եղիայ կամ Երեմիա, որոնք ամբոխի կար-

ծիքով պիտի դուրս գային գերեզմաններից Մեսիայի ճանապարհը հարթելու նպատակով։

Այդ ժամանակներում հրաշքները համարւում էին Աստուծուց առաքեալի անհրաժեշտ նշանն ու մարգարէական կոչումն ունենալու ապացոյցը։ Եղիայի ու Եղիսէի առասպելները լի էին հրաշքներով։ Հաւատացած էին, որ Մեսիան բազմաթիւ հրաշքներ պիտի գործէ։ Այդ ժամանակ ողջ հին աշխարհը, բացի Յունական գիտնական դպրոցներից ու նրանց Հռովմում բնակւող հետևողներից, հաւատում էր հրաշագործութեան. իսկ ինքը Յիսուս ոչ միայն հաւատում էր, այլ նոյն իսկ ոչ մի գաղափար չունէր տիեզերքի բնական ընթացքի ու բնութիւնը կառավարող օրէնքների մասին։ Նա այդ կողմից չէր տարբերւում իր ժամանակակիցներից։ Ընդհակառակը, նա խորապէս հաւատացած էր, որ մարդս կարող է, հաւատքի ու աղօթքի միջոցով իրան հըպատակեցնել բնութիւնը։ Հրաշք գործելու ընդունակութիւնը համարւում էր աստուածային առանձին տուրք, որով Աստուած վարձատրում էր մարդկանց, և դա ամենևին զարմանք չէր յարուցանում։

Շնորհիւ Յիսուսի ժողովրդական հռչակի, թէ նրա մահից առաջ և թէ յետոյ, նրան վերագրուած հրաշքների թիւը անհամեմատ աւելացաւ։ Այն բոլոր հրաշքները, որ Յիսուս վերագրում էր իրան՝ բժշկութեան դէպքեր էին։ Հրէաստանում այդ ժամանակ բժշկութիւնը գտնւում էր մօտաւորապէս նոյն դրութեան մէջ, ինչ՝ այսօր, արևելքում, այսինքն՝ գիտութիւն չէր, և թողնուած էր իւրաքանչիւրի բարեհայեցողութեան։ Բժշկական գիտութիւնը, որ հիմնուած էր Յունաստանում 5 դար Յիսուսից առաջ, նրա ժամանակ Պաղեստինում յայտնի չէր։ Երբ բժշկութիւնը այդ դրութեան մէջ էր, հռչակաւոր մարդու հիւանդի մօտ գտնուելը, նրա հետ մեղմ վերաբերուելն ու բժշկւելու յոյս ներշնչելը շատ անգամ ամենալաւ դեղի ազդեցութիւնն էին անում։ Ո՞վ կարող է պնդել, որ, իհարկէ բացի խեղանդամութեան դէպքերից, հրապուրիչ անձնաւորութեան ազդեցութիւնը աւելի մեծ դեր չէ խաղում, քան դեղատան բոլոր ճարերը։ Այսպիսի անձի ներկայութեան պատճառած հաճոյքն արդէն բուժում

է մարդկանց։ Այդ անձը տալիս է միայն այն՝ ինչ որ կարող է. մի ժպիտ, յոյս, և այդ ամենը զուր չեն անցնում։ Յիսուս, ինչպէս իր հայրենակիցները, ամենևին գաղափար չունէր գործնական բժշկութեան մասին. Նա, ինչպէս ամենքը, հաւատացած էր, որ կարելի է բժշկել կրօնական արարողութիւններ կատարելով, և այդ հայեացքը անհիմն չէր։ Հիւանդութիւնը համարւում էին մեղքի պատիժ կամ սատանայի գործ, բայց ոչ թէ ֆիզիքական պատճառներից առաջացած մի երևոյթ և այդպիսի հանգամանքում ամենալաւ բժիշկը պիտի լինէր մի սուրբ մարդ, որ օժտուած է գերբնական ոյժով։ Բժշկութիւնը համարւում էր մի բարոյական գործ։ Եւ Յիսուս, որ իր մէջ զգում էր հոգեկան մեծ ոյժ, բնականաբար իրան օժտուած պիտի համարէր և՛ բժշկելու ընդունակութեամբ։ Համոզուելով, որ հէնց շորը հիւանդին կպաւ կամ ձեռքը նրա գլխի վրայ դրուեց թէ ոչ հիւանդը թեթևութիւն է զգում, նա, ի հարկէ, անխղճութիւն կը համարէր տանջուածներին զրկել այդ օգնութիւնից։ Հիւանդների բժշկութիւնը համարւում էր Աստուծոյ թագաւորութեան հաստատման նշաններից մէկը և կապուած էր աղքատների ազատագրութեան հարցի հետ։ Այդ ամենը նշան էր այն մեծ յեղաշրջման, որով պիտի դարմանուէին բոլոր տկարութիւններն ու չարիքները։

Յիսուս շատ յաճախ դևեր էր հանում։ Ոչ միայն Հրէաստանը, այլև ամբողջ աշխարհը համոզուած էր, որ դևերը տիրանում են որոշ մարդկանց մարմնին ու նրանց ստիպում՝ գործել իրենց կամքի դէմ։ Լուսնոտութիւնը, հոգեկան ու նեարդային հիւանդութիւնները, որոնց ընթացքում հիւանդը ուշքից գնում է, այն աղետները, որոնց պատճառը տեսանելի չէ, օրինակ խլութիւնը, համրութիւնը՝ բացատրւում էին այդ կերպով։ Հրէաստանում այդ ժամանակ կային բազմաթիւ խելագարներ, որ հաւանօրէն հետևանք էին մտքերի գերազանց գրգռուած դրութեան։ Այդ խելագարները բնակւում էին այրերում (որ շինուած էին իբրև գամբարան, բայց լքուած էին), որ դատարկապորտ մարդկանց սովորական պատսպարանն էր և ազատ թափառում էին, ինչպէս և այժմ։ Յիսուս մեծ ազդեցութիւն ունէր այդ դժբաղդների վրայ,

Նրանց բժշկութեան մասին բազմաթիւ տարօրինակ պատմութիւններ էին շրջում, որոնց մէջ պարզ նշմարւում է ժամանակի դիւրահաւատութիւնը: Չպէտք է դժուարութիւնները չափազանցել: Այդ օրգանական խանգարումները, որ անուանում էին դիւահարութիւն, յաճախ բաւական թեթև էին լինում: Մեր ժամանակ Սուրիայում արտակարգ մարդկանց էլ անուանում են խելագար կամ դիւահար: Այդպիսի դէպքում մի քաղցր խօսքը բաւական է դևերին հալածելու համար: Հաւանօրէն այդ նոյն միջոցին էր դիմում և՛ Յիսուս: Այդ արարքները խրախուսւում էին ժամանակի մարդկանց կատարեալ միամտութեամբ ու ոգևորութեամբ: Շատերն աշխատեցին Յիսուսի անունից օգտուել ապստամբութիւն առաջ բերելու նպատակով, բայց Յիսուսի գործունէութիւնը կրում էր աւելի բարոյական, քան քաղաքական ուղղութիւն, այդ պատճառով էլ նա չարաւ այդ սխալը: Նրա թագաւորութիւնը սահմանափակւում էր այդ պարզամիտ, երեխայամիտ ամբոխի շրջանով, որ խմբուել էր նրա շուրջը ու գրաւուել՝ հոգու միևնոյն թարմութեամբ ու երկնային բարիքները ճաշակելու միևնոյն յոյսով:

ԳԼՈՒԽ ԺԸ

Յիսուսի գաղափարները Աստուծոյ թագաւորութեան մասին վերջնականապէս ձևակերպուած

Պէտք է ենթադրել, որ Յիսուսի գործունէութեան վերջին շրջանը տևեց մօտ 18 ամիս, այսինքն սկսած նրա 31 թուականի Պասէքի տօնին կատարած ճանապարհորդութիւնից, մինչև 32 թուականի Տաղաւարահարաց տօնի ճանապարհորդութիւնը: Այդ ժամանակամիջոցին Յիսուսի գլխում ոչ մի նոր միտք ծագեց· բայց· նրա գաղափարները աւելի արծարծուեցին, երևան եկան աւելի մեծ թափով ու զօրութեամբ:

Առաջին օրից սկսած Յիսուսի հիմնական միտքն էր Աստուծոյ թագաւորութեան հաստատումը: Բայց Աստուծոյ այդ թագաւորութիւնը, ինչպէս արդէն ասել ենք, Յիսուս ըստ երևոյթին տարբեր ձևով էր ըմբռնում: Երբեմն նա նրմանւում էր ժողովրդապետի, որ պարզապէս ձգտում է հաստատելու խեղճերի ու զրկուածների իշխանութիւն: Մի այլ տեղ Աստուծոյ թագաւորութիւնը ներկայանում է բառացի իրականացումը Դանիէլի և Ենովքի տեսիլների: Վերջապէս, աւելի յաճախ, Յիսուս մեկնում է Աստուծոյ թագաւորութիւնը իբրև հոգու թագաւորութիւն, և մօտալուտ ազատութիւնը՝ հոգու ազատութիւն: Եւ այդ դէպքում նրա մտքերը համապատասխանում են այն յեղաշրջման, որ նա իրապէս կատարեց. այսինքն հաստատեց մի նոր աստուածպաշտութիւն, որ աւելի ազնիւ էր, քան մովսիսական աստուածպաշտութիւնը: Այդ մտքերը Յիսուսի գիտակցութեան մէջ, ըստ երևոյթին, գոյութիւն ունէին միաժամանակ: Բայց, յամենայն դէպս, առաջինը՝ այսինքն հասարակական, սօցիալական յեղափոխութեան ձգտումը նրան զբաղեցնում էր աւելի պա-

կաս չափով։ Երկիրը, երկրային հարստութիւններն ու նիւթական կարողութիւնը նրա կարծիքով արժանի չէին ուշադրութեան։ Նա փառասիրութեան չէր ձգտում։ Միայն, երբեմն, իրերի բնական ընթացքով, նրա կրօնական սկզբունքները կարծես ուզում էին սոցիալականի վերափոխուել։ Մարդիկ երբեմն նրան առաջարկում էին դատաւոր հանդիսանալ նիւթական շահի խնդիրներում։ Յիսուս զայրոյթով մերժում էր այդ առաջարկները, վիրաւորական համարելով։ Նուիրուելով իր երկնային իդէալին, Յիսուս միշտ աղքատ էր ապրում և արհամարհում էր երկրաւոր բարիքները։

Ինչ վերաբերում է Աստուծոյ թագաւորութեան միւս երկու գաղափարներին, նրանք Յիսուսի համար միատեսակ արժէք ունէին։ Եթէ նրա ձգտումը լինէր միայն սպասել աշխարհի մօտալուտ վախճանին ու նախապատրաստուել այդ դէպքի համար, նա Յովհաննէս Մկրտչից բարձր չէր լինի։ Եւ այդ դէպքում նրա քարոզը կը սահմանափակուէր հետեւեալ մտքերով. հրաժարուել աշխարհից, որ շուտով պիտի կործանուէր, հետզհետէ առանձնանալ, ձգտել այն թագաւորութեան, որ մօտենում էր։ Բայց Յիսուսի քարոզները աւելի լայն թռիչք ունէին. նա կամենում էր ոչ միայն կորստի մատնել հինը, այլև ստեղծել մարդկային հասարակական նոր կազմ։ Եթէ Եղիան կամ Երեմիան յարութիւն առնէին և նախապատրաստէին մարդկանց աշխարհի վախճանի համար, նրանք անկարող կը լինէին քարոզելու այն՝ ինչ քարոզում էր Յիսուս։ Այս է ողջ ճշմարտութիւնը և դրա համար է, որ աշխարհի ենթադրական վախճանի գաղափարը դարձաւ մի յաւիտենական գաղափար, որ մղում է մարդկութիւնը դէպի ազատութիւն։ Յիսուս, ինքը յաճախ իր քարոզներին այնպիսի ուղղութիւն էր դրոշմում, որ ամենևին չէր համապատասխանում Աստուծոյ իրական թագաւորութեան թէօրիային։ Նա յայտարարում էր, որ Աստուծոյ թագաւորութիւնը արդէն իրագործուել է և ամեն մարդ նրան կրում է իր մէջ, և եթէ արժանի է, կարող է վայելել. որ այդ թագաւորութիւնը ամեն ոք անպայման կարող է իր մէջ հաստատել, տածելով դէպի մերձաւորը անկեղծ զգացմունքներ։ Ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ

մի բարիք, իրերի մի աւելի լաւ կարգաւորում, քան թէ գոյութիւն ունէր այն ժամանակ, արդարութեան տիրապետութիւնը, որ ամեն հաւատացող իր ոյժերի չափով պիտի աշխատէր հիմնել, կամ թէ, հոգու ազատութիւնը, բուդդայական «ազատութեան» նման մի բան, որ արդիւնք էր ինքնամոռացութեան։ Այս ճշմարտութիւնները, որ մեր կարծիքով վերացական են, Յիսուսի համար կենդանի ու իրական էին։ Նրա գիտակցութեան մէջ ամեն բան էական է ու շօշափելի։ Յիսուս մի այնպիսի մարդ էր, որ ամենամեծ հաւատքով էր վերաբերւում դէպի իդէալի իրականացումը։

Մի մտածէք, որ այս ամենը միայն աչքառու, բարեհաճ բացատրութիւններ են, հնարուած՝ փրկելու համար մեր մեծ ուսուցչի փառքը այն խիստ հարուածից, որ հասցրել է իրականութիւնը նրա երազներին։ Օ՜, ոչ. Յիսուս, բոլոր մեծ վերանորոգիչների նման լինելով երազող, միևնոյն ժամանակ իր նպատակների իրագործումը անհամեմատ աւելի մօտ էր թւում իրան, քան թէ էր իրապէս։ Նա գաղափար չունէր, թէ որքան դանդաղ է գնում մարդկային յառաջդիմութիւնը և այդ պատճառով կամենում էր մի օրում իրագործել այն՝ ինչ որ արդէն 18 դար գոյութիւն ունի և դեռ ևս չէ իրականացել վերջնականապէս։ Բայց Աստուծոյ ճշմարիտ թագաւորութիւնը, որ ամեն մարդու դարձնում է և՛ թագաւոր, և՛ քահանայ, ծառ է դառել ինչպէս մանանեխի սերմը և ողջ աշխարհին ստուեր է տալիս, և որի ճիւղերի տակ թռչունները բոյն են շինում։ Այդ թագաւորութիւնն էր, որ ըմբռնում, ըղձում ու հաստատում էր Յիսուս։

Վերջին դատաստանի կեղծ, սառն ու անիրագործելի գաղափարի հետ միասին նա հաստատեց Աստուծոյ իսկական քաղաքը, ճշմարիտ վերածնութիւնը և արտասանեց լեռան քարոզը, որ մի ներբող էր ուղղուած թոյլերին ու ճնշուածներին, սէր՝ դէպի ժողովուրդն ու աղքատները և կոչ՝ հոգով հեզերի, սրտով արդարների և միամիտների բոլոր ոտնակոխ արուած իրաւունքների վերականգման համար։ Այդ վերականգնումը նա՝ ինչպէս ճշմարիտ արուեստագէտ, նկարագրեց բարձր գեղարուեստական ներկերով։ Մեզանից իւրաքանչիւրը նրան է պատական այն՝ ինչ որ ունի լաւա-

գոյն իր մէջ։ Ներողամիտ լինենք, ուրեմն, դէպի այն երազը. որի համաձայն նա ինքը պիտի գայ երկրորդ անգամ ամպերի մէջ, մեծ փառքով շրջապատուած։ Շատ կարելի է, որ այս սխալը արդիւնք է աւելի նրան շրջապատողների՝ քան թէ իր երևակայութեան. բայց եթէ, նոյնիսկ, ինքն էլ հաւատում էր այդ երազին, ինչպէս հաւատում էին ուրիշները, դա մեզ համար միևնոյն է, բաւական է, որ այդ երազը նրան ոյժ պարգևեց դիմաւորելու մահը և առաջ տանելու համար կեանքի կռիւը. առանց այդ երազին գուցէ նա տոկալ չկարողանար։

Իւրացնելով իր ժամանակին ու ցեղին յատուկ ցնորքները, Յիսուս նրանց վերափոխեց մեծ ճշմարտութիւնների։ Նա, անկասկած, Աստուծոյ Թագաւորութիւնը համարում էր մի իրողութիւն, որ շուտով պիտի կատարուէր երկնքում։ Բայց միևնոյն ժամանակ նա այդ Թագաւորութիւնը ըմբռնում էր բացառապէս իբրև հոգու Թագաւորութիւն, արտայայտութիւն ազատ որդիական զգացման, որ առաքինի մարդը պիտի զգար իր Հօր գրկում։ Ահա, թէ ինչ եղանակով հիմնուեց մաքուր, առանց տաճարի, առանց քահանաների ու արարողութիւնների այդ կրօնը և ինչպէս զարգացաւ այն համայնքի բարոյական հասկացողութիւնը, որ ղեկավարուած էր արդարասէր մարդկանց խղճով ու կամքով։ Ահա թէ ինչ էր ստեղծուել ապրելու համար և ինչ էր իրապէս ապրում։ Երբ, մի ամբողջ դար իզուր սպասելուց յետոյ, ի դերև ելաւ աշխարհի մօտալուտ իրական վախճանի հաւատքը, այն ժամանակ երևան եկաւ Աստուծոյ Թագաւորութեան ճշմարիտ գաղափարը։ Յայտնուեցին նորանոր նպատակայարմար բացատրութիւններ և շղարշեցին, քօղարկեցին Աստուծոյ այն նիւթական Թագաւորութիւնը, որ չէր կամենում գալ։ Մի քանի յետամնաց, ուշացած աղքատներ, որ առաջին աշակերտների մէջ ծագած յոյսը դեռ պահել էին իրենց մէջ հերետիկոս համարուեցին (էբիոնիտները, հազարամեաները) և կորան քրիստոնէութեան տականքների հետ։ Մարդկութիւնը Աստուծոյ Թագաւորութեան մասին կազմեց մի այլ գաղափար։ Յիսուսի մտքերի մէջ գտնուող ճշմարտութեան մասը յաղող հանդիսացաւ ընդդէմ այն ցնորքի, որ

պղտորում էր նրան։

Խիստ չլինենք դէպի այդ ցնորքը, որ միայն մի կոպիտ կեղևի դեր էր կատարում այն արքայազն միջուկի համար, որով այժմ կերակրւում ենք։ Աստուծոյ երևակայական Թագաւորութիւնը, անվերջ որոնումը աստուածային քաղաքի, որի վրայ քրիստոնէութիւնը խորհում էր շարունակ իր երկարամեայ կեանքի ընթացքում, մի վեհ ու բընազդական ձգտում էր դէպի մարդկային հասարակական մի ապագայ կամակերպութիւն, որ ոգևորում էր բոլոր վերանորոգիչներին, յայտնութեան բոլոր յամառ հետևողներին, սկսած՝ Յովակիմ Ֆլորից, մինչև մեր ժամանակի իւրաքանչիւր բողոքողը։ Կամբերի անընական լարումը հետևանք էր մի կատարեալ մարդկային ընկերութիւն ստեղծելու ապարդիւն ցանկութեան և այդ լարումը ճշմարիտ քրիստոնէին դարձրեց իրականութեան հետ մարտնչող մի հսկայ։ Երբ մարդկութեանը յայտարարուեց առաջին անգամ, որ նրա բնակած մոլորակը պիտի ոչնչանայ, նա, մահուանը դիմաւորող ժպտադէմ մանկան նման, անձնատուր եղաւ մի այնպիսի բուռն հրճուանքի, որի նմանը երբեք չէր զգացել։ Բայց ծերանալով, աշխարհը նորից կապուեց կեանքին։ Գալիլիացի անբիծ հոգիների երկար սպասած ողորմութեան օրը արդէն համարւում էր ցասման օր, մռայլ Միջին Դարերում. «Dies irae, dies illa»։ Եւ չնայած դրան՝ Աստուծոյ Թագաւորութեան գաղափարը բարբարոսների շրջանումն էլ արդիւնաբեր եղաւ։ Հակառակ եկեղեցու աւատականութեան, զանազան հերձուածները, կրօնական միաբանութիւններն ու մանաւոր սուրբերը շարունակ աւետարանի անունով բողոքում էին աշխարհի անարդարութիւնների դէմ։ Մինչև անգամ մեր շփոթ ժամանակում, երբ չկան այլևս Յիսուսի գործի ճշմարիտ շարունակողներ, բացի նրանցից, որոնք ըստ երևոյթին մերժում են այդ գործը, —հիմա էլ, հասարակութեան իդէալական կազմակերպութեան գաղափարները, որ այնքան նմանում են քրիստոնէութեան նախնական հերձուածների ձգտումներին և որոշ չափով հանդիսանում են միայն իբրև նոյն գաղափարի զարգացումը,— դա, այդ գործը, այն մեծ ծառի ճիւղերից մէկն է, որի վրայ փթթում է ապագայի իւ-

րաքանչիւր գաղափար և որի համար Աստուծոյ Թագաւորութիւնը միշտ պիտի ծառայէ իբրև ճիւղ և արմատ։ Բայց մեր ժամանակի «սօցիալիստական» փորձերը, որ կոպիտ նիւթապաշտութեան դրօշմ են կրում և ձգտում են դէպի անիրագործելին, այսինքն հաստատելու ընդհանուրի երջանկութիւնը տնտեսագիտական և քաղաքական միջոցներով, անպտուղ կը մնան մինչև որ չը ղեկավարուեն Յիսուսի իսկական ոգով, այսինքն, բացարձակ գաղափարականութեամբ. մինչև որ չգիտակցեն, թէ երկրի վրայ իշխելու համար պիտի, նախ և առաջ, հրաժարուել ամեն մի երկրային բանից։

Միւս կողմից «Աստուծոյ Թագաւորութիւն» դարձուածքը, հազուագիւտ պարզութեամբ, արտայայտում է հոգու պահանջը, լրացնելու երկրաւոր կեանքի պակասաւոր կողմերը և վարձատրելու ներկայ կեանքի զրկանքները։ Ո՞վ գիտէ, գուցէ միլիոնաւոր դարերից յետոյ միայն, մարդկային գիտութիւնը հասնի տիեզերքի կատարեալ ըմբռնողութեան և դրա հետ միասին արթնանայ այն՝ ինչ կենսունակ էր անցեալում։ Միլլիոնաւոր դարերտևող քունը, յամենայն դէպս, աւելի երկարատև չէ, քան մի ժամուայ քունը։ Այդ տեսութեան համաձայն, Յիսուս իրաւունք ունէր յայտարարելու աշխարհի վերջնական վերանորոգումը։ Նա հաւատացած էր, որ բարոյական ու առաքինի մարդիկ կը վարձատրուեն, որ կը գայ մի օր, երբ ազնիւ աղքատը կը դատէ աշխարհը և, որ այդ օրը Յիսուսի իդէալական պատկերից կամաչեն թեթևամիտ, անառաքինի կամ եսասէր մարդիկ, որ չեն կարողացել հասնել Նրան։ Այսպիսով Յիսուսի սիրած խօսքը դարձեալ երևան է գալիս իր յաւիտենական գեղեցկութեամբ։ Մարգարէական բարձր ոգևորութեան ժամանակ Նրա մէջ ծագեց այդ անորոշ, բայց վեհ միտքը, որը ամփոփում է զանազան կարգի ճշմարտութիւններ։

ԳԼՈՒԽ ԺԶ

Յիսուս հիմնում է եկեղեցին։

Այն նոյն ժամանակ, երբ Յիսուս ամենից աւելի զբաղուած էր աշխարհի վախճանի գաղափարով (յայտնութեան գաղափարներով), բացառիկ հաստատամտութեամբ հիմք դրեց այն եկեղեցուն, որ պիտի շարունակուէր. և դա լաւագոյն ապացոյցն էր, որ վերոյիշեալ գաղափարները երբեք, Յիսուսի կարծիքով, առաջնակարգ դեր չեն խաղացել։ Կասկած չկայ, որ իր հետևորդների միջից ինքն անձամբ ընտրել էր նրանց, որոնք աչքի են ընկել «առաքեալ» կամ «տասներկուք» անունով, որովհետև նոյնիսկ Նրա մահուան յաջորդ օրը առանձին խումբ են կազմում ու ընտրութիւններ կատարելով լրացնում՝ իրենց միջից պակասած անդամներին։ Դրանք էին Յովնանի երկու որդիները, Զեբեդիայի երկու որդիները, Կղէոպայի որդի Յակոբոսը, Փիլիպպոսը, Նաթանայէլ Բար-տոլման (Բարդուղիմէոս), Թովմասը, Ալփիայի որդի Ղևին կամ Մատթէոսը, Սիմէոն Զիլոտը, Թադէոսը կամ Ղեբէոսը և Իսկարովտացի (Կերիոտացի) Յուդան։ Գուցէ ընտրեալների թիւը կապ ունէր Իսրայէլի 12 ցեղերի հետ։ Յամենայն դէպս դրանք, այդ 12-ն էին մենաշնորհուածները, որոնց մէջ Պետրոսը եղբայրական առաջնութիւն էր վայելում և որոնց Յիսուս յանձնեց իր վարդապետութեան տարածումը։ Այս ամենը դեռ չէ ապացուցանում, որ առաջ է եկել մի հոգևոր կազմակերպուած դաս։ Տասներկուսի մեզ հասած անուանացուցակները պարունակում են շատ անճշդութիւններ ու հակասութիւններ. նշանակուածներից երկուսը կամ երեքը բոլորովին անյայտ են մնացել։ Միայն յայտնի է, որ նրանցից երկուսը՝ Պետրոսն ու Փիլիպպոսը ամուսնացած են եղել և զաւակներ՝ ունեցել։

Անկասկած Յիսուսը «տասներկուսին» խորհուրդներ էր յայտնում և արգելում՝ միւսներին հաղորդել: Երբեմն էլ կարծես մտադրում էր իրեն խորհրդաւոր կերպարանք տալ ու իր վարդապետութեան տարածումը յետաձգել մինչև իր մահը, յայտնել իր իսկական ծրագրներն ու մտքերը միայն իր աշակերտներին, ու յանձնարարել նրանց յետոյ այդ մտքերը տարածելու աշխարհում: «Ինչ որ ձեզ ասում եմ խաւարի մէջ, դուք ասացէք լոյսի մէջ և ինչ որ ձեր ականջին եմ ասում, դուք քարոզեցէք տանիքների վրայից»: Հաւանօրէն կարելի է ասել, որ նա քարոզում էր առաքեալներին առանձին սկզբունքներ, նրանց բացատրում էր շատ առակներ, որոնք մութ էին մնում միւսների համար: Այն ժամանակի գիտնականները իրենց զրոյցների մէջ գործ էին դնում անորոշ դարձուածքներ ու գաղափարները միացնում էին ինքնատիպ կապակցութեամբ, ինչպէս այդ նկատւում է Պիրկէ-Աբոտի ասացուածներից: Յիսուս մտերիմներին բացատրում էր այն ամենը՝ ինչ իր առակների կամ բարոյախօսութիւնների մէջ թւում էր տարօրինակ, դուրս ձգելով նրանց միջից այն բազմաթիւ փոխաբերութիւնները, որոնք մթնեցնում էին նրանց միտքը: Այդ բացատրութիւններից մի քանիսը պահպանուել են խնամքով:

Թէև առաքեալները քարոզում էին Յիսուսի կենդանութեանը, բայց երբեք նրանից չէին հեռանում: Այդ ժամանակ նրանք բաւականանում էին քարոզելով, որ մօտեցել է երկնքի թագաւորութիւնը: Նրանք շրջում էին քաղաքից քաղաք, հիւրընկալւում էին, կամ, աւելի ճիշտն ասած՝ իրենք խնդրում էին հիւրասիրութիւն, որ այդ ժամանակ սովորական էր: Արևելքում հիւրը մեծ հեղինակութիւն է վայելում. նա տանտիրոջից աւելի մեծ ազդեցութիւն ունի. տանտէրը միշտ խորին հաւատքով է վերաբերւում դէպի հիւրը: Նոր գաղափարներ տարածելու համար շատ զօրեղ միջոց էր քարոզել այդպէս, ընտանիքների մէջ: Հիւրը ընտանիքի առջև բաց է անում թագնուած գանձը, նա այդպիսով վճարում է հիւրասիրութեան փոխարէնը. յետոյ մի մտերմական ու սիրալիր խօսակցութիւն է տեղի ունենում և ողջ ընտանիքն արդէն զգածւում է ու դարձի գալիս: Առանց արևելեան այդ հիւրասիրութեան, անկարող կը լինէինք բացատրել քրիստոնէութեան ծաւալումը: Յիսուս, որ սիրում էր հին բարի սովորութիւնները, խորհուրդ էր տալիս իր աշակերտներին առանց քաշուելու օգտուել այդ իրաւունքով, որը մեծ քաղաքներում, հաւանօրէն, սկսել էր վերանալ, որովհետև հիւրանոցներ կային: «Աշխատողը արժանի է վարձատրութեան», ասում էր նա: Մի տուն մտնելով, նրանք այնտեղ պիտի մնային, ուտէին, խմէին ինչ որ առաջարկուէր, մինչև որ իրենց առաքելութիւնը կը վերջանար:

Յիսուս ցանկանում էր, որ հետևելով իր օրինակին, «բարի համբաւի» կարապետներն էլ իրենց քարոզութիւնը դուրեկան դարձնէին ազնիւ ու քաղաքավարի վարմունքով: Նա կամենում էր, որ աշակերտները ներս մտնելիս ողջունէին՝ սելամ կամ խաղաղութիւն մաղթելով: Սելամը արևելքում, թէ այն ժամանակ և թէ այժմ, կրօնակիցների ողջոյն է. շատերը քաշւում էին այդպէս ողջունելուց, որովհետև չգիտէին թէ դիմացինը ինչ դաւանութեան է պատկանում: «Ոչինչ, մի քաշուէք, ասում էր Յիսուս, —եթէ ոչոք այդ տան մէջ արժանի չի լինի ձեր խաղաղութեանը, նա ձեզ կը վերադառնայ»: Եւ իսկապէս Աստուծոյ թագաւորութեան առաքեալներին երբեմն վատ էին ընդունում ու նրանք գալիս, Յիսուսին գանգատւում էին. Յիսուս աշխատում էր նրանց հանգստացնել: Առաքեալներից ոմանք, համոզուած իրենց ուսուցչի ամենակարողութեանը՝ զայրանում էին այդ չափազանց ներողամիտ վերաբերմունքի դէմ: Զեբեդիայի որդիքը առաջարկում էին, որ Յիսուս երկնքից կրակ իջեցնէ այդ անհիւրընկալ տների վրայ: Յիսուս այդ զայրոյթն ընդունում էր իր նուրբ հեգնութեամբ և նրանց լռեցնում էր հետևեալ խօսքերով. «Ես եկայ մարդկանց հոգիները ոչ թէ կորցնելու, այլ փրկելու նպատակով»:

Եկեղեցու սաղմը արդէն սկսւում էր կազմակերպուել: Մարդկային միացեալ ոյժի բեղմնաւոր գաղափարը, ըստ երևոյթին, պատկանում է Յիսուսին: Գրաւուած իր այն մաքուր-գաղափարական սկզբունքով, թէ մի քանի մարդոց համախմբումով կազմւում է սիրոյ վրայ հիմնուած մի միութիւն, նա յայտարարեց, որ ամեն անգամ, երբ կը ժողովուեն մի

քանի մարդիկ իր անունով, ինքը նրանց մէջ կը լինի: Նա եկեղեցուն իրաւունք է տալիս կապելու և արձակելու, մեղքեր թողնելու, մեղաւորին խոստովանեցնելու և նրան աղօթքի յորդորելու, հաւատացած լինելով՝ որ աղօթքը ընդունելի կը լինի: Այս խօսքերից շատերը, հաւանական է, վերագրուել են Յիսուսին այն նպատակով, որ հող պատրաստեն մի հաւաքական ու ուժեղ կազմի համար, որով յետոյ կարողանային փոխարինել Յիսուսի իշխանութիւնը: Ցամենայն դէպս, միայն Յիսուսի մահից յետոյ առաջացան առանձին եկեղեցական կազմակերպութիւններ, և պիտի նկատել, որ նրանց առաջին կազմութիւնը անպայման նման է սինագոգների կազմութեան: Շատ անձեր, որոնք չափազանց սիրում էին Յիսուսին, ինչպէս, օրինակ, Յովսէփ Արեմաթացին, Մարիամ Մագթաղենացին, Նիկոդիմոսը,—չմտան ոչ մի եկեղեցական համայնքի մէջ և բաւականացան պահպանելով Յիսուսի մասին ունեցած իրենց քնքոյշ ու յարգալից յիշողութիւնները:

Աւելորդ է կանգ առնել այն հանգամանքի վրայ, որ Յիսուս բոլորովին հեռու էր կրօնական օրէնքների մի ժողովածու հեղինակելու մտքից: Ոչ միայն չը հեղինակեց, այլ նոյնիսկ, այդ նոր աղանդի ոգին միանգամայն ժխտում էր սրբազան գրքի հեղինակութիւնը: Այդ ժամանակ մարդիկ զգում էին, որ իրանք ապրում են վերջին և ամենամեծ աղէտի նախօրեակում: Մեսիան եկաւ ոչնչացնելու Օրէնքն ու Մարգարէները և ոչ թէ նոր օրէնքներ ու գրքեր հրատարակելու: Այս հիման վրայ առաքեալների ժամանակ գրուած աշխատութիւնները, բացի Յովհաննու Յայտնութիւնից, որ մասամբ քրիստոնէութեան շրջանի միակ արտադրութիւնն էր, պատահական գործեր էին և յաւակնութիւն չունէին համարուելու կատարեալ դաւանաբանական օրինագրքեր: Սկզբում աւետարանները ունէին մասնաւոր բնաւորութիւն ու նշանակութիւն և աւելի ցած էին դասւում, քան աւանդութիւնները:

Բայց միթէ այդ աղանդը չունէր սրբազան ծէս, խորհուրդ կամ հերձուածողների միութեան համար մի ընդհանուր նշան: Այո, ունէր մի նշան, որ բոլորի ասելով տուել

էր Յիսուս: Յիսուսի սիրած գաղափարներից մէկն էլ այն էր, թէ ինքը հաց է, մի նոր հաց, որ բարձր է մանանայից և որով պիտի ապրէ ողջ մարդկութիւնը: Երբեմն այս մտքին, որ հաղորդութեան հիմքը դարձաւ, Յիսուս տալիս էր տարօրինապէս իրական կերպարանք: Մի անգամ Կափառնայումի սինագոգում Յիսուս բացագանչեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում, որ ոչ թէ Մովսէսը ձեզ երկնքից հաց տուաւ, այլ իսկական հացը տալիս է իմ Հայրը», և յետոյ աւելացրեց. «Ես եմ կեանքի հացը. ինձ մօտ եկողը չի քաղցի և ինձ հաւատացողը երբէք չի ծարաւի», և դա պատճառ դարձաւ շատ աշակերտների հեռանալուն: Հաւանօրէն, այս խօսքերը վերաբերում էին այն սովորութեան, որ հաստատուել էր հերձուածողների ընդհանուր հացկերոյթի ժամանակ: Առաքելական աւանդութիւնը այդ բանը տարբեր է պատմում երևի՝ այդ պատճառով էլ նա այնքան պարզ չէ: Առաջին երեք աւետարանները նկարագրում են մի խորհրդաւոր սրբագործութիւն, որ հիմք եղաւ խորհրդի հաստատման և այդ հաստատումը վերագրուեց վերջին գիշերին: Բայց Յովհաննէսը, որ մեզ հաղորդել է Կափառնայումի սինագոգում պատահած դէպքը, այդ սրբագործութեան վերաբերմամբ խօսք անգամ չէ ասում, թէպէտև վերջին խորհրդաւոր ընթրիքի մասին երկար է խօսում: Մի այլ տեղ ասւում է, որ Յիսուսին ճանաչեցին շնորհիւ այն բանի, որ նա առաւ հացը ու կտրեց մի այնպիսի շարժումով և ձևով, որ նրան շրջապատողների կարծիքով, յատուկ էր միայն Յիսուսին: Նրա մահից յետոյ էլ, աշակերտները երկիւղածութեամբ պատկերացնում էին Յիսուսին, նստած՝ սեղանի գլխին խօսակցելիս և հացը ձեռքին բռնած՝ կտրտելիս ու բաժանելիս ներկայ եղողներին: Թւում է, թէ այդ նրա սովորութիւններից մէկն էր և այդ րոպէներում նա չափազանց սիրալիր ու զգածուած էր լինում: Նիւթական մանրամասնութիւններից մէկն էլ այն էր, որ սեղանի վրայ անպայման պիտի լինէր ձուկը (պերճախօս ապացոյց, որ այդ ծէսը ծնունդ առաւ Տիբերական լճի ափին), որ և դարձաւ խորհուրդի անբաժանելի մասը և կազմում էր խորհրդաւոր ընթրիքի մտապատկերի անհրաժեշտ մանրամասնութիւնը:

Այդ նոր համայնքի հաւաքական կեանքի ամենաու-
րախ րոպէները հացկերոյթի ժամանակ էին։ Այդ ժամանակ
հանդիպում էին նրանք միմեանց. ուսուցիչը իւրաքանչիւրի
հետ խօսում էր առանձին ու վարում զուարթ ու հմայիչ խօ-
սակցութիւն։ Յիսուսին սիրելի էին այս վայրկեանները, և
նա՝ տեսնելով իր հոգևոր ընտանիքը ժողովուած իր շուրջը՝
հրճւում էր։ Հրէաների մէջ սովորութիւն կար, որ ճաշի
սկզբին տան մեծը առնում էր հացը, օրհնում, կոտրա-
տում ու բաժանում սեղանակիցներին։ Գինին նոյնպէս օրհ-
նում էին։ Եսէացիների և բժիշկների համար ճաշի այդ սո-
վորութիւնը ծէսի նշանակութիւն ու կարևորութիւն ստա-
ցաւ, զարգանալով նոյն ձևով, որով զարգացաւ յետոյ քրիս-
տոնէական խորհուրդը։ Նոյն հացից ուտելը համարւում էր
նշան սեղանակիցների հոգեկան հաղորդակցութեան, նրանց
մէջ ընդհանուր կապի։ Յիսուս չափազանց եռանդուն դար-
ձուածքներով աշխատում էր հաստատուն պահել այդ հայեաց-
քը. այդ դարձուածքները յետոյ ընդունեցին և պահպանեցին
բառացի նշանակութեամբ։ Յիսուս իր հայեացքներով իդէա-
լիստ էր, իսկ նրանց արտայայտութեան ժամանակ ռէալիստ։
Կամենալով ասել, որ հաւատացեալը ապրում է իրանով, որ
ինքը Յիսուսն է ամբողջովին (իր մարմինը, արիւնն ու հո-
գին) ճշմարիտ-հաւատացեալի կեանքը, նա ասում էր ա-
շակերտներին. «Ես ձեր կերակուրն եմ», որ եթէ փոխաբե-
րական մտքով ասէինք, կը լինէր. «Իմ մարմինը ձեր կերա-
կուրն է, իմ արիւնը՝ ձեր ըմպելիքը»։ Յիսուսի խօսակցու-
թեան այն առանձնայատուկ ձևը, որով սիրում էր շօշափե-
լի դարձնել իր միտքը, աւելի հեռու տարաւ նրան։ Ճաշի
ժամանակ կերակուրը ցոյց տալով՝ ասում էր. «ահա ես»,
ցոյց տալով հացը՝ ասում էր. «սա է իմ մարմինը», յետոյ
առնելով գինին աւելացնում էր. «սա է իմ արիւնը», ինչ
որ նշանակում էր՝ «Ես եմ ձեր կերակուրը»։

Այս միստիք արարողութիւնը դեռ Յիսուսի կենդանու-
թեան ժամանակ ունէր մեծ նշանակութիւն։ Հաւանօրէն
հաստատուել էր Երուսաղէմի վերջին ճանապարհորդութիւ-
նից շատ առաջ, և աւելի շուտ՝ արդիւնք էր Յիսուսի ամբողջ
վարդապետութեան, քան թէ մի ծէսի։ Յիսուսի մահից յե-

տոյ այդ ծէսը դարձաւ քրիստոնէական համայնքների մեծ
նշանը, ուստի նրա ծագումը վերագրեցին Փրկչի կեանքի
ամենափառաւոր վայրկեանին։ Գինին և հացը օրհնելու ա-
րարողութիւնը համարեցին «հրաժեշտ»-ի նշան, որ տուաւ
Յիսուս իր աշակերտներին, նախ քան կեանքից բաժանուե-
լը։ Այդ խորհուրդը կատարելիս նրանց առաջ պատկերանում
էր Յիսուս այն մաքուր հոգեպաշտական, սպիրիտուալիստա-
կան հայեացքով, որ ունէր նա հոգիների գոյութեան մասին
և որի հիման վրայ ասում էր, թէ երբ նրանք իր անունով
ժողովւում են, ինքը անձամբ նրանց մէջ է և դա աշա-
կերտներին իրաւունք էր տալիս այդպէս մտածել։ Յիսուսի
ծայրայեղ ոգևորութեան մէջ գաղափարն այն աստիճան
իշխում էր միւս բոլոր բաների վրայ, որ մարմինը այլևս ո-
չինչ նշանակութիւն չունէր։ Մարդիկ երբ միմեանց սիրում
են, երբ ապրում են միասին, դառնում են մի ամբողջու-
թիւն։ Ի՞նչպէս կարող էր Յիսուս իր աշակերտների հետ
մի ամբողջութիւն չկազմել։ Աշակերտները իւրացրին նրա
վերոյիշեալ դարձուածքները։ Նրանք, որ երկար տարիներ
ապրել են նրա հետ, տեսել են հացը և յետոյ բաժակը «այն
սուրբ ու պաշտելի ձեռքերում», երբ նա իր մարմինը ա-
ռաջարկում էր իբրև կերակուր, նրան էին ուտում ու խը-
մում. նա դարձել էր իսկական Զատիկը, իսկ հին Զատիկը
նրա արիւնով ջնջուեց։ Մեր սահմանափակ ու որոշ լե-
զուով, ուր խօսքի բառացի նշանակութիւնը բոլորովին տար-
բերւում է փոխաբերութիւնից, անկարելի է զգացնել տալ
բնորոշ գծերը այդ ոճի՝ որի հիմնական տարբերութիւնը այն
է, որ նա փոխաբերութեանը կամ աւելի լաւ է ասել, գա-
ղափարին տալիս է կատարեալ իրականութիւն։

ԳԼՈՒԽ ԺԷ

Յիսուսի հակառակորդները

Իր գործունէութեան առաջին շրջանում, Յիսուս, ինչպէս տեսանք, մեծ արգելքների չը հանդիպեց։ Շնորհիւ Գալիլիայում թագաւորող կատարեալ ազատութեան, նոյնպէս և զանազան տեղերում առաջ եկող ուսուցիչների, Յիսուս ծանօթ էր միայն մարդկանց մի շատ սահմանափակ շրջանի համար։ Բայց, սկսած այն րոպէից, երբ նա ոտ կոխեց հրաշագործութիւնների փայլուն շրջանը ու յաջողութիւն գտաւ հասարակութեան մէջ, նրա գլխի վրայ սկսեց պտտել փորձանքը։ Անտիպասը նրան երբէք չէր նեղում, չնայած՝ որ Յիսուս յաճախ նրա մասին շատ խիստ էր խօսում։ Չորրորդապետի մշտական բնակավայրը՝ Տիբերիադան, գտնըւում էր Յէսուսի քարոզութեան շրջանից մի կամ երկու մըղոն հեռու։ Լսելով Յիսուսի հրաշագործութիւնների մասին և, իհարկէ, ճարպիկ խաբեբայութիւններ համարելով նրանց, ցանկութիւն յայտնեց տեսնել, որովհետև անհաւատներն այդ ժամանակ սաստիկ հետաքրքրւում էին այդպիսի ձեռնածութիւններով։ Յիսուս, իր սովորութեան համաձայն, հըրաժարուեց նրան գոհացնել, որովհետև առհասարակ շատ զգոյշ էր դէպի այն անհաւատները, որոնք կամենում էին զուարճանալ իրանով. Նա միայն աշխատում էր իր կողմը գրաւել հասարակ ամբոխը. հասարակ մարդկանց համար նա ունէր առանձին միջոցներ, որ կարելի էր գործ դնել միմիայն նրանց վերաբերմամբ։

Մի անգամ լուր տարածուեց, որ Յիսուս Յովհաննէս-

Մկրտիչն է, որ յարութիւն է առել։ Անտիպասը չփոթուեց ու անհանգստութիւն զգաց։ Նոր մարգարէին իր շրջանից հեռացնելու նպատակով դիմեց մի խորամանկութեան։ Փարիսեցիները եկան Յիսուսի մօտ և իբրև թէ կարեկցելով, յայտնեցին, որ Անտիպասը կամենում է մահուան դատապարտել նրան։ Որքան որ Յիսուս միամիտ էր, այնուամենայնիւ գուշակեց թակարդը ու չուզեց հեռանալ։ Յիսուսի խաղաղասէր վարքն ու ժողովուրդին չը գրգռելը վերջ ի վերջոյ չորրորդապետին հանգստացրին ու ցրեցին Յիսուսին սպառնացող վտանգը։

Չի կարելի պնդել, որ նոր վարդապետութիւնը Գալիլիայի բոլոր քաղաքներում գտել էր միակերպ ու յաջող ընդունելութիւն։ Ոչ միայն Նազարէթն էր շարունակում հրաժարուել այն մարդուց, որը յետոյ պիտի լինէր իր հռչակողը, ոչ միայն Յիսուսի հարազատ եղբայրները հաստատ էին իրենց անհաւատութեան մէջ, այլ մինչև անգամ դարձի չեկաւ նոյնիսկ մի մասը լճափնեայ այն քաղաքներից, որոնք աւելի համակրանք էին ցոյց տալիս դէպի Յիսուսի վարդապետութիւնը։ Նա յաճախ գանգատւում էր մարդոց անհաւատութեան ու քարասրտութեան դէմ։ Թէպէտ բնական էր ու թոյլատրելի, որ քարոզիչը այդ դէպքում մի փոքր չափազանցութեան հասած լինէր և նմանուած Յովհաննէս Մկրտչին, բայց պարզ է, որ Աստուծոյ թագաւորութեանը հաւատացել է երկրի շատ փոքր մասը։ «Վա՜յ քեզ Քորազին, վա՜յ քեզ Բէթսայիդա, որովհետև եթէ Տիւրոսում ու Սիդոնում գործուէին այն հրաշքները, որ ձեր մէջ են գործուել, նրանք վաղուց գլուխներին մոխիր ցանելով կապաշխարէին. բայց իմացէք, որ դատաստանի օրը տիւրոսցիների ու սիդոնցիների համար աւելի ուրախալի կը լինի, քան թէ ձեզ համար։ Եւ դու Կափառնայում, որ երկինք ես հասել, կը գահավիժուես դժոխք, որովհետև եթէ Սոդոմումն անգամ կատարուէին այն հրաշքները, որ քո մէջ են կատարուել, նա մինչև այսօր էլ անվնաս կը մնար։ Բայց ճշմարիտ եմ ասում, Սոդոմն աւելի ուրախ կը լինի, քան թէ դու»։

«Սաբայի թագուհին դուրս կը գայ դատելու այս ցեղը ու կը դատապարտէ նրան, որովհետև նա աշխարհի ծայրից

հկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու, իսկ այստեղ կայ Սողոմոնից էլ մեծը։ Նինուէցիները կելնեն դատելու այս ցեղը և կը դատապարտեն, որովհետև նրանք Յովնանի քարոզութեամբ ապաշխարեցին, իսկ այստեղ կայ Յովնանից էլ մեծը»։ Թափառական կեանքը, որ սկզբում իր հաճոյքներով գրաւում էր Յիսուսին, հետզհետէ տաղտակալի դարձաւ. «Աղուէսներն ունեն իրենց որջը, ասում էր նա, երկնքի թռչունները իրենց բոյները, իսկ մարդու որդին տեղ չունի իր գլուխը դնելու համար»։ Նա թերահաւատներին մեղադրում էր, թէ նրանք ժխտում են ակներև իրողութիւնները և ասում էր, որ նոյնիսկ այն րոպէին, երբ մարդու որդին շրջապատուած իր փառքով երևայ երկնքում, դարձեալ կը գտնուին չհաւատացողներ։

Յիսուսի գաղափարների տարածմանը ամենամեծ արգելք հանդիսանում էին ուղղափառ հրէաները, մանաւանդ նրանց ներկայացուցիչ փարիսեցիները։ Յիսուս հետզհետէ հեռանում էր հին օրէնքից, մինչդեռ փարիսեցիները այդ օրէնքի կեանքն ու հոգին էին կազմում։ Թէպէտ այդ կուսակցութեան կենտրոնը Երուսաղէմն էր, բայց նա ունէր իր ներկայացուցիչները և՛ Գալիլիայում։ Դրանք առհասարակ նեղ աշխարհահայեացքի տէր մարդիկ էին, մեծ նշանակութիւն էին տալիս արտաքինին ու ձևական աստուածպաշտութեանը, ինքնաբաւական, ինքնավստահ՝ ու լի էին ատելութեամբ դէպի ուրիշները։ Նրանց արտաքին ձևերը այնքան ծիծաղելի էին, որ ծաղր էին յարուցանում նոյնիսկ իրենց յարգողների շրջանում։ Իբրև ապացոյց դրան, այն ածականները՝ որ տալիս էր նրանց ամբոխը և որոնք յաճախ ծաղրանկարային (карикатурный) էին։ Օրինակ՝ «Ծուռտ փարիսեցի» (նիկֆի) անուանում էին այն մարդկանց, որոնք մտացիր ու անուշադիր քայլում էին փողոցներով ու ոտքերը զարկում քարերին. «Արիւնաներկ ճակատով փարիսեցի» (կեցայի),—որոնք ման էին գալիս փակ աչքերով, որպէսզի կանանց չը տեսնեն և յաճախ պատերին էին ընդհարւում, դրա համար էլ նրանց ճակատը միշտ արիւնոտ էր լինում. «Թակ փարիսեցի» (մէդուկիա),— որոնք թակի կոթի նման կռացած էին. «հաստատթիկն փարիսեցի», (շիկմի)—որոնք ման էին

գալիս բարձրացրած ուսերով, կարծես թէ ուսերի վրայ կըրելիս լինէին օրէնքի ողջ ծանրութիւնը. «էլ ինչ անեմ. ամեն բան արդէն արել եմ՝ փարիսեցի»— որոնք որոնում էին օրէնքի մէջ կատարելու մի նոր պատուէր և, վերջապէս «շպարուած փարիսեցի»— այն մարդկանց, որոնց արտաքին ջերմեռանդութիւնը միայն կեղծաւորութեան հետևանք էր։ Իսկապէս նրանց ցուցադրուած ջերմեռանդութեան տակ, յաճախ թաքնուած էր լինում նրանց բարոյական անկումը։ Չընայած սրան՝ նրանք ամբոխը մոլորեցնում էին։ Ամբոխի բնազդը, որ առհասարակ անսխալական է լինում, երբեմն, մասնաւոր դէպքերում մեծ սխալներ է գործում։ Այն՝ ինչ որ նա յարգում է այդ կեղծ բարեպաշտների մէջ, ինքն ըստ ինքեան գեղեցիկ է և արժանի յարգանքի, բայց ժողովուրդը այնքան էլ խորագէտ չէ, որ կարողանայ կեղծ սըրբութիւնը տարբերել իսկականից։ Ուրեմն հեշտ կարելի է գուշակել, թէ ինչ խոր ատելութիւն պիտի ծագէր այդ մարդկանց և Յիսուսի մէջ, մանաւանդ այդ դիւրազգած մթնոլորտում։ Յիսուս քարոզում էր միայն սրտի կրօնը, մինչդեռ փարիսեցիների կրօնը հիմնուած էր բացառապէս ծիսակատարութեան վրայ։ Յիսուս որոնում էր հեզերի ու բոլոր լքուածների բարեկամութիւնը, ինչ որ փարիսեցիների կարծիքով մի վիրաւորանք էր կրօնքի դէմ։ Փարիսեցին իրան համարում էր անսխալ ու անբիծ. մոլեռանդութեամբ համոզուած էր, որ ինքը արդարացի է. սինագոգում բռնում էր առաջին կարգերը, փողոցներումն էր աղօթում, ողորմութիւնը տալիս էր «փող հնչեցնելով» և շրջելիս աջ ու ձախ էր նայում, որպէսզի բարևներ ընդունի։ Յիսուս պնդում էր, որ ամեն մարդ ահ ու դողով պէտք է սպասէ Աստուծոյ դատաստանին։ Փարիսեցիների կրօնական վնասակար ուղղութիւնը տիրապետում էր անսահմանօրէն։ Թէ Յիսուսից առաջ և թէ նրա ժամանակ, շատերը քարոզեցին չափազանց վեհ սկզբունքներ, բոլորովին նման աւետարանական վարդապետութիւններին. դրանց թւումն էին Սիրաքի որդի Յիսուսը, որին կարելի էր համարել Նազարեթցի Յիսուսի իսկական նախորդը. Գամաղիէլը, Անտիգոն-Սոկօն և մանաւանդ հեզ ու ազնիւ Հիլլելը։ Բայց այդ բարի սերմերը խեղդուեցին. օրինակ՝ Հիլլելի յայ-

տարարած սքանչելի ճշմարտութիւնները, որ օրէնքի հիմքը միայն արդարութիւնն էր համարում. Սիրաքի որդի Յիսուսի այն կարծիքը, թէ ամենալաւ ծիսակատարութիւնը բարիք անելն է: Դրանք բոլորն էլ ենթարկուեցին մոռացութեան ու անէծքի: Այդ ամենի տեղը բռնեցին Շամայի նեղ ու միակողմանի սկզբունքները: Օրէնքը մեկնաբանելու ու հաստատելու պատրուակով հնարուեցան բազմաթիւ ծիսակատարութիւններ, որոնցով խեղդեցին օրէնքի էական մասը: Յիսուսի կռիւը պաշտօնական կեղծաւորութեան դէմ շարունակւում էր: Մաքրակրօն-վերանորոգիչը սովորաբար աշխատում է պահպանել «սուրբ գրքի» ամենաէական մասը. հիմնական գրուածքների տեսակէտից քննադատում է այն տարածուած աստուածաբանական գաղափարները, որոնք հաղորդուել են սերունդից սերունդ: Նոյն ձեւով վարուեցին յետոյ կարայիմները հրէաների մէջ, իսկ բողոքականները քրիստոնէաների մէջ: Յիսուսի գործողութիւնը աւելի արմատական էր. նա տապարը իջեցրեց Մովսէսի վարդապետութեան արմատին, թէպէտև տեսնում ենք յաճախ, որ հին ուխտից ապացոյցներ է բերում, այդ էլ միայն այն դէպքում, երբ կամենում էր ջրել փարիսեցիների կեղծ աւանդութիւնները: Բայց Յիսուս գլխաւորապէս դիմում էր մարդկային խղճին և մի հարուածով ոչնչացնում թէ գրքի ասածը և թէ նրանց պատճառաբանութիւնները: Նա փարիսեցիներին պարզ ցոյց էր տալիս, որ նրանք իրենց աւանդութիւնների շնորհիւ բոլորովին դէմ են գնացել Մովսէսի օրէնքին, բայց, միևնոյն ժամանակ, Յիսուս երբեք չէր մտածում ղեկավարուել Մովսէսի օրէնքներով: Նրա նպատակն էր դիմել առաջ և ոչ թէ յետ: Յիսուս եղաւ ոչ թէ օրէնքի վերանորոգիչը, այլ մի նոր համամարդկային կրօնի հիմնադիրը:

Փարիսեցիների ու Յիսուսի միջև տեղի ունեցող վիճաբանութիւններին առիթ էին հանդիսանում գլխաւորապէս այն արտաքին ծիսակատարութիւնները, որ մտել էին գործածութեան մէջ աւանդութեան միջոցով և որոնց չէին հետևում ոչ Յիսուս, և ոչ իր աշակերտները: Փարիսեցիները այդ պատճառով խիստ դատափետում էին նրան: Երբ ճաշում էր նրանց հետ և չէր կատարում սովորական լուացում-

ները իր դէմ էր գրգռում նրանց զայրոյթը: «Տուէք ողորմութիւն, ասում էր նա, և ամեն բան ձեզ համար մաքուր կը լինի»: Յիսուսի զգայուն, տպաւորուող հոգին վրդովւում էր այն ինքնավստահութիւնից, որով փարիսեցիները վերաբերւում էին դէպի կրօնական խնդիրները, ինչպէս և նրանց սին ջերմեռանդութիւնից, որ ձգտում էր առաջնութեան ու պատիւների և ոչ թէ հոգու ազնուացման: Մի սքանչելի առակով, Յիսուս, շատ գրաւիչ ու իրական ձևով, արտայայտեց այդ միտքը:

«Երկու մարդ մտան տաճար աղօթելու. նրանցից մէկը փարիսեցի էր, միւսը մաքսաւոր: Փարիսեցին առանձին կանգնած՝ այսպէս էր աղօթում. «Շնորհակալ եմ քեզանից, Աստուած, ու ես ուրիշների նման յափշտակող, անիրաւ կամ շնացող չեմ, ինչպէս այս մաքսաւորն է. շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և իմ բոլոր ստացուածքների տասանորդն եմ տալիս»: Իսկ մաքսաւորը հեռու կանգնած չէր համարձակւում երկինք բարձրացնել աչքերը, այլ իր կուրծքն էր ծեծում ու ասում. «Աստուած, ներիր մեղաւորիս»: Ասում եմ ձեզ, որ վերջինը վերադարձաւ տուն աւելի արդար, քան առաջինը»:

Այս ընդհարման հետևանքը եղաւ այն ատելութիւնը, որ ծագեց նրանց մէջ որը և միայն մահը կարող էր ջնջել: Յովհաննէս Մկրտչի դէմ էլ ծագել էր նոյն թշնամութիւնը, բայց Երուսաղէմի ազնուականները նրան ատելով հանդերձ ամբոխին չէին արգելում մարգարէ համարել նրան: Այս անգամ արդէն կռիւը մահացու էր: Աշխարհ էր եկել մի նոր միտք, որ սպառնում էր ոչնչացնել ամբողջ անցեալը: Յովհաննէս Մկրտիչը հրէայ էր մինչև ոսկրների ծուծը, իսկ Յիսուսի մէջ հրէական շատ քիչ բան կար: Յիսուս միշտ և ամեն բանում դիմում էր մարդկանց բարոյական նրբազգածութեանը: Փարիսեցիները աշխատեցին նրան կորցնել դեռևս Գալիլիայում, գործադրելով այն միջոցը, որը յաջողութիւն գտաւ յետոյ Երուսաղէմում: Նրանք աշխատում էին իրենց վիճաբանութիւններով գրաւել նոր կազմակերպուող քաղաքական կարգերի կուսակիցների ուշադրութիւնը: Գալիլիայում Յիսուս յաջողութեամբ խոյս էր տալիս այդ ցան-

ցերից, մանաւանդ, որ Անտիպասի Թուլութիւնն էլ այդտեղ նպաստաւոր դեր էր խաղում. այդ պատճառով էլ ի դերեւ ելան նրանց ջանքերը։ Յետոյ Յիսուս ինքը դիմեց դէպի վտանգը։ Նա շատ լաւ էր հասկանում, որ Գալիլիայում իր գործունէութիւնը չէր կարող սահմանափակ չլինել. բուն Հրէաստանը կարծես ձգում էր նրան իր կողմը. նա կամենում էր Թափել իր վերջին ճիգերը հպատակեցնելու այդ խռովայոյզ քաղաքը, կարծես կամենում էր արդարացնել այն առակը, թէ մարգարէն չպիտի մեռնի Երուսաղէմից դուրս։

ԳԼՈՒԽ ԺԸ

Յիսուսի վերջին ուղեւորութիւնը Երուսաղէմ։

Վաղուց Յիսուսի սիրտը ճնշում էր այն նախազգացումը, թէ իրեն սպառնում է մի մեծ փորձանք։ Որոշ ժամանակ, որ տեւեց մօտաւորապէս 18 ամիս, նա խոյս էր տալիս ուխտագնացութիւնից դէպի Երուսաղէմ։ 32 Թուականի Տաղաւարահարաց տօնին (մեր ընդունած հաշուով) նրա ազգականները, որ Թշնամաբար էին տրամադրուած դէպի նա եւ դեռ ես չէին հաւատում նրան, Յիսուսին հրաւիրեցին իրենց մօտ։ Յովհաննէս աւետարանիչը զգուշութեամբ անց է կացնում այն միտքը, թէ այդ հրաւէրի տակ Թաքնուած էր ծրագիր՝ կորստեան մատնել Յիսուսին։ «Ցոյց տուր քեզ աշխարհին, ասում էին նրանք. այդպիսի բաները ծածուկ չեն անում։ Գնա Հրէաստան եւ այնտեղ նոյնպէս ցոյց տուր քո ոյժը»։ Յիսուս, դաւադրութիւն նշմարելով, սկզբում հրաժարուեց, իսկ յետոյ, երբ ուխտաւորների կարաւանը ուղեւորուեց, նա էլ գնաց Երուսաղէմ բոլորից ծածուկ ու համարեա միայնակ։ Սա վերջին հրաժեշտն էր Գալիլիային։ Տաղաւարահարաց տօնը այդ տարի զուգադիպում էր աշնանային գիշերահաւասարին։ Մինչեւ իր օրհասական վախճանը մնում էր 6 ամիս։ Այս ժամանակամիջոցին նա չհանդիպեց իր հիւսիսային ազգականներին։ Անցան սովորական ու խաղաղ ժամանակները. այժմ քայլ առ քայլ պիտի ընթանանք այն Թախծալի ճանապարհով, որ հետզհետէ Յիսուսին տանում է դէպի մահուան տանջանքները։

Աշակերտներն ու հետեւող կանայք, որոնք ծառայում էին նրան, նորից Յիսուսին գտան Հրէաստանում։ Բայց այժմ իր շուրջը կատարուող երեւոյթները բոլորովին փոփոխուեցին։ Յիսուս Երուսաղէմում օտարական էր։ Նա զգում էր,

որ կանգնած է ընդդիմադրութեան մի պարսպի առաջ, որի վրայով չի կարող անցնել։ Նա հալածւում էր փարիսեցիներից։ Փոխանակ անսահման հաւատի՝ երիտասարդ բնաւորութիւնների այդ բաղդաւոր առանձնայատկութեան, որով այնչափ օժտուած էին գալիլիացիները. փոխանակ այն հեզ ու բարի ազգաբնակութեան, որին անծանօթ էին տարակոյսն ու ընդդիմախօսութիւնը (որ միշտ հետևանք է լինում անհաւատութեան ու հակառակ տրամադրութեան), նա այստեղ իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում էր յամառ անհաւատութեան, անհաւատութիւն՝ որի վրայ չէին ներգործում հիւսիսում յաջողութեամբ գործադրուող միջոցները։ Յիսուսի աշակերտներն էլ, արհամարհւում էին՝ իբրև գալիլիացիներ։ Նիկոդիմոսը, որ Յիսուսի նախորդ ուխտագնացութիւններից մէկի ժամանակ, գիշերով, նրա հետ ունեցել էր մի գաղտնի խօսակցութիւն, այս անգամ աշխատելով նրան պաշտպանել սինեդրիոնում, անախորժ ընդդիմադրութեան հանդիպեց. «Միթէ դու էլ գալիլիացու հետևողներից ես. քննիր սուրբ գիրքը, տես, մարգարէ կարող է գալ Գալիլիայից»։

Քաղաքը, ինչպէս ասացինք, Յիսուսին դուր չեկաւ։ Մինչև այդ ժամանակ նա միշտ խոյս էր տալիս մեծ կենտրոններից, իր գործի համար նպաստաւոր համարելով մանր քաղաքներն ու գիւղերը։ Առաքեալներին տուած խորհուրդների մեծ մասը բացարձակապէս անգործադրելի էին մնում մանր ցեղերից ու հասարակ շրջաններից դուրս։ Գաղափար չունենալով բարձր շրջանի մասին ու ընտելացած՝ իր գալիլիական հեզահամբոյր կոմմունիզմին, նա շարունակ, հակառակ իր կամքին, այնպիսի պարզամիտ վարմունք էր ունենում, որ չէր կարող տարօրինակ չթուալ։ Նրա երևակայութիւնը, նրա սէրը դէպի բնութիւնը կարծես սահմանափակ էին դարձել այդ պատերի մէջ։ Ճշմարիտ կրօնը ծնունդ պիտի առնէ ոչ թէ քաղաքների ժխորում, այլ դաշտերի խաղաղ անշարժութեան ու անդորրութեան մէջ։

Քահանաների ամբարտաւանութեան պատճառով, նա չէր ախորժում տաճար մտնել։ Մի անգամ նրա աշակերտներից ոմանք, որոնք աւելի լաւ ծանօթ էին Երուսաղէմին, նրանց

ուշադրութիւնը կամեցան դարձնել տաճարի շինուածքի գեղեցկութեան, նրա վրայ գործադրուած նիւթերի ազնուութեան ու այն նուէրների վրայ, որ տրւում էին ուխտի ժամանակ։ «Տեսնո՞ւմ էք այս ամենը, ասաց նրանց Յիսուս։ Ճշմարիտ եմ ասում, որ այստեղ քար քարի վրայ չի մնայ։» Եւ նա ոչինչ չգտաւ ուրախանալու կամ զարմանալու, բացի այն այրի կնոջից, որ այդ ժամանակ անցաւ նրանց մօտով ու գանձարանի մէջ ձգեց մի լումա։ «Սա ամենից շատ ձգեց, ասաց նա, որովհետև ամենքը տալիս են իրենց աւելորդից, իսկ սա տուաւ իր չքաւորութիւնից»։ Երուսաղէմում կատարուող ամեն երևոյթ քննադատելու այս սովորութիւնը՝ քիչ տուող աղքատի գովաբանումը ու շատ տուող հարուստի նուաստացումը, հարուստ քահանաների դատապարտումը, որ նրանք ոչինչ չեն անում ժողովրդի բարօրութեան համար, այդ ամենը բնականաբար գրգռեց նրա դէմ քահանայական դասակարգը։ Տաճարը, յետադէմ ազնուականութեան այդ կենտրոնավայրը, ինչպէս և նրան փոխարինող մահմեդական հարէմը (haram), այնպիսի մի տեղ էր ներկայացնում, ուր ոչ մի յեղափոխութիւն չէր կարող թափանցել։ Այնուամենայնիւ, նա հրէական կեանքի սիրտն էր, այն կէտը՝ ուր պիտի տեղի ունենար կեանքի ու մահուան կռիւը։ Այս բարձրութեան վրայ Յիսուս անկասկած աւելի մեծ տանջանքներ է կրել, քան Գողգոթայում։ Նա օրերն անց էր կացնում կծու վիճաբանութիւններով, կանոնական օրէնքների մասին տաղտկալի խօսակցութիւններով ու Սուրբ Գրքի մեկնութիւններով. նրա բարոյական արժանաւորութիւնները այդ վիճաբանութիւնների ժամանակ ոչ մի առաւելութիւն չէին տալիս, այլ ընդհակառակը նրա համար ստեղծում էին մի նուաստ դրութիւն։

Բայց այս անհանգիստ կեանքի մէջ էլ Յիսուսի բարի ու զգայուն սիրտը կարողացաւ ստեղծել իր համար խորին հեզութեան ու խաղաղութեան մի ապաստան։ Ցերեկները անցկացնելով տաճարում վիճաբանութիւններով, գիշերները իջնում էր Կեդրոնի հովիտը ու հանգստանում մի երկրագործական ընկերութեան այգում (որ հաւանօրէն ձէթ էր արդիւնաբերում), որ կոչւում էր Գեթսեմանի պարտէզ

և որը ծառայում էր որպէս հանրային զբօսարան, իսկ յետոյ գիշերում էր Ելէօնի լերան վրայ, որ նշմարւում է քաղաքի արևելեան հորիզոնում։ Սա Երուսաղէմի միակ տեղն էր, որ ներկայացնում էր զուարթ, կանաչազարդ տեսարան։ Գիւղերի ագարակները կամ Բեթաղիայի, Գեթսեմանի ու Բեթանիայի շուրջը անհագին տարածութիւն ծածկուած էր ձիթենիներով, արմաւենիներով ու թզենիներով։ Ելէօնի կատարին կային երկու եղևնիներ, որոնք երկար տարիներ մնացել էին հրէաների յիշողութեան մէջ, ամբողջ աշխարհում ցրւելուց յետոյ։ Այդ եղևնիների ճիւղերի մէջ էին ապաստանում աղաւնիների անհագին երամներ, իսկ նրանց հովանու տակ տեղի էին ունենում փոքրիկ տօնավաճառներ։ Այս ամբողջ շրջանը Յիսուսի ու իր աշակերտների կենտրոնատեղին էր. այդտեղ նրանց ծանօթ էր ամեն դաշտ ու ամեն տուն։

Յիսուսին սիրելի էր առանձնապէս Բեթանիա գիւղը, ուր անց էր կացնում նա իր ժամանակի մեծ մասը, որովհետև այդ գիւղը ընկած էր լերան գլխին և թեքւում էր դէպի այն զառիվայրը, որ նայում էր Մեռեալ Ծովի ու Յորդանանի կողմը և գտնւում էր Երուսաղէմից կէս ժամաչափ հեռու։ Յիսուս այնտեղ ծանօթացաւ մի ընտանիքի հետ, որ կազմուած էր երեք անդամից, երկու քրոջից և մի եղբօրից, որի բարեկամութիւնը Յիսուսի համար մեծ սփոփանք էր։ Երկու քոյրերից մէկը՝ Մարթան, շատ սիրալիր էր, բարի ու ամեն րոպէ պատրաստ ծառայելու ու օգնելու. միւսը՝ Մարիամը, ընդհակառակը Յիսուսին դուր եկաւ իր երազող բնաւորութեամբ ու չափազանց զարգացած մտաւոր թռիչքով։ Յաճախ, Յիսուսի ոտների մօտ նստած՝ նա մոռանում էր իր առօրեայ պարտականութիւնները։ Այն ժամանակ նրա քոյրը, որի վրայ ընկնում էր ամբողջ գործը, համեստօրէն գանգատւում էր։ Յիսուս նրան պատասխանում էր. «Մարթա, Մարթա, դու մտածում ու հոգ ես տանում շատ բանի մասին, մինչդեռ հարկաւորը միայն մէկն է։ Մարիամը իր համար ընտրել է ամենալաւ բաժինը, որը նրանից չի կարելի խլել»։ Մի ոմն Սիմէոն Բորոտ, որին պատկանում էր այդ տունը, հաւանօրէն Մարիամի ու Մարթայի եղբայրն էր կամ

գոնէ այդ ընտանիքի մի անդամը։ Այստեղ շրջապատուած յարգանքով ու բարեկամութեամբ, Յիսուս մոռանում էր իր հասարակական գործունէութեան անյաջողութիւններն ու հիասթափութիւնը։ Այս անկիւնում նա գտնում էր հոգեկան հանգիստ այն ճղճիմ ընդդիմախօսութիւններից ու հալածանքներից, որ ստիպուած կրում էր փարիսեցիների ու դպիրների կողմից։ Յաճախ նա նստում էր Ելէօնի կատարին և նրա աչքի առաջ տարածւում էին Մօրէա լեռան, տաճարի հրապարակների ու փայլուն տանիքների հեռապատկերը։ Այդ տեսարանը հիացմունք էր պատճառում օտարականներին, մանաւանդ վերջալոյսին, երբ սրբազան լեռը, որպէս ձիւնի ու ոսկու մի զանգուած, աչք էր շլացնում։ Բայց այդ տեսարանը, որ միւս իսրայէլացիների մէջ ուրախութեան զգացումներ էր զարթեցնում, Յիսուսի մէջ յարուցանում էր խորին վշտի զգացում և թունաւորում՝ տեսարանի տպաւորութիւնը։ «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ հալածում էիր մարգարէներին ու քարկոծում քեզ մօտ ուղարկածներին,—աղաղակեց նա, մի անգամ, այդպիսի դառնացած րոպէներից մէկում,—քանի՜ անգամ ցանկացայ քո որդիներին ժողովել, ինչպէս թռչունը ժողովում է ձագերին իր թևերի տակ, բայց դու չկամեցար։»

Չնայած դրան՝ այստեղ էլ, ինչպէս Գալիլիայում, նրա վարդապետութիւնը յուզեց բազմաթիւ բարի սրտեր։ Բայց այնքան մեծ էր տիրապետող կրօնի ոյժն ու ճնշումը, որ շատ քիչերը համարձակուեցին բանալ իրենց սիրտը. վախ էին զգում, որ մի րոպէ գալիլիացու դպրոցին պատկանելով իրենց վարկը ընկնի երուսաղէմցիների աչքում։ Նրանց կարող էին սինագոգից արտաքսել, իսկ կրօնամոլների ու սնապարծների շրջանի համար դա սարսափելի պատիժ էր։ Բացի դրանից՝ համայնքից արտաքսուելով՝ նրանք զրկւում էին և իրենց ստացուածքից։ Հրէութիւնից հրաժարուելով, մարդիկ հռովմայեցի չէին դառնում, այլ մնում էին անպաշտպան՝ աստուածպետական ամենախիստ ու դաժան օրէնքների հարուածների տակ։ Մի անգամ տաճարի ստորին պաշտօնեաները, որ լսել էին Յիսուսի քարոզներից մէկը, ու սքանչացել, եկան և իրենց տպաւորութիւնները հաղորդեցին քահա-

նաներին։ «Հաւատացե՞լ է նրան, արդեօք, իշխաններից կամ փարիսեցիներից մէկը, պատասխանեցին նրանք, իսկ այդ ժողովուրդը, որ օրէնքը չը գիտէ, թող անիծուած լինի»։ Այսպիսով Յիսուս Երուսաղէմում համարւում էր իբրև մի գաւառացի, որ յարգուած էր միայն գաւառացիներից, իսկ ազնուականութիւնը նրան մերժում էր։ Վաղուց ի վեր այդտեղ այնքան ժողովրդապետներ են եղել, որ այդ մէկի աւելանալը առանձին ուշադրութիւն չը գրաւեց։ Նա Երուսաղէմում զուրկ էր հմայքից. այդ քաղաքում շատ աւելի հաստատուն էին աւետարանի ոգուն հակառակ, ցեղային ու հերձուածական նախապաշարումները։

Այս նոր երկրում, անհրաժեշտութիւնից դրդուած, Յիսուսի խօսակցութեան ձևը բոլորովին փոխուեց։ Նրա սքանչելի քարոզները, որ ազդում էին գլխաւորապէս վառ երևակայութեան, մաքուր բարոյականի ու զգացմունքի տէր անձանց վրայ, այստեղ խփւում էին ապառաժի։ Իսկ ինքը, որ այն դիւթիչ, փոքրիկ լճի ափին իրեն այնչափ լաւ էր զգում, այստեղ երես առ երես հանդիպելով այդ բծախնդիրներին, նեղւում էր ու վատ տրամադրւում։ Նրա՝ անդադար իր մասին՝ արտասանած ճառերը տխրութեամբ համակուած էին։ Նա պիտի դառնար իմաստակ, օրէնսգէտ, մեկնաբան ու աստուածաբան։ Նրա հմայիչ քարոզները դարձան վիճաբանողի փքուն ֆրազներ, լի սքոլաստիկական անվերջ բառախաղերով։ Նրա ներդաշնակ հանճարը բթացաւ Օրէնքից ու Մարգարէներից յիշատակուած անմիտ պատճառաբանութիւններով, որոնց մէջ հաճելի չէր տեսնել նրան յարձակողական դիրքում։ Նա վիրաւորական գիջողութեամբ թոյլ էր տալիս իր հակառակորդներին ենթարկել իրան չարամիտ փորձի, քննութեան։ Բայց մեծ մասամբ նա շատ նուրբ կերպով պատասխանում էր իր դէմ յարուցուած դժուարութիւններին։ Նրա պատասխանները յաճախ խորամանկ էին։ Ինչպէս երևում է, նա պարզում է տարակուսանքները, յետոյ դիտմամբ աւելի խճճում։ Եթէ նրա պատճառաբանութիւնները քննենք արիստոտէլեան տրամաբանութեան տեսակէտից, շատ թոյլ կը գտնենք։ Բայց, երբ նրա դիւթիչ ու աննման հոգին իր համար ճանապարհ էր գտնում, այն ժամանակ հըն-

չում էր արդէն փառքի խնկական բոլէն։ Մի անգամ, կամենալով շփոթել, բերին նրա մօտ մի կին, որին մեղադրում էին անառակութեան մէջ ու հարցրին թէ ինչպէս պէտք է վարուել այդ կնոջ հետ։ Յիսուսի հիանալի պատասխանը յայտնի է։ Աշխարհիկ մարդու նուրբ հեգնութիւնը միացած աստուածային բարութեան հետ, ուրիշ, աւելի յաջող պատասխան չէր կարող գտնել։ Բայց յիմարները չեն կարող տանել այդ պատասխանը, որովհետև նա կրում է և՛ բարոյական բարձրութեան և՛ խելքի կնիքը։ Արտասանելով այս խօսքերը՝ «Ձեզանից ով անմեղ է, թո՛ղ գցէ առաջին քարը», խօսքեր լի գեղեցկութեամբ, ճշմարտութեամբ ու մաքրութեամբ, Յիսուս խոցեց կեղծաւորութեան սիրտը և հէնց այդ հարուածով իր մահուան դատավճիռը կարդաց։

Եւ իսկապէս, եթէ չլինէր այն մոլեգնութիւնը, որ ծնունել էր վիրաւորուած, դառնացած ինքնասիրութիւնից Յիսուս գուցէ կարողանար էլի երկար աչքի չընկնել, յետոյ կորչել միայն այն սարսափելի փոթորկի մէջ, որ սպառնում էր ոչնչացնել ողջ հրէայ ժողովուրդը։ Բարձր հոգևորականութիւնն ու սադուկեցիները աւելի արհամարանք էին զգում դէպի նա, քան ատելութիւն։ Քահանայական ազնուական տոհմերը, ինչպէս Բօէթուզիմները, Աննայի ընտանիքը կատաղում էին միայն այն դէպքում, երբ խանգարւում էր իրենց հանգստութիւնը։ Յիսուսի դէմ խիստ մարտնչողները նրանք չէին։ Պաշտօնական հոգևորականութեանը, որ սերտ կապուած էր կառավարութեան հետ ու միայն նրանով էր կլանուած, ժողովրդի այդ մոլեռանդ շարժումները անհասկանալի էին։ Բայց փարիսեցի բուրժուազիան, հարուստ դասակարգը, ինչպէս և անհամար դպիրները, որոնք ապրում էին «աւանդութիւնների» գիտութեամբ, աղմուկ բարձրացրին, որովհետև նոր ուսուցչի վարդապետութիւնը իսկապէս սպառնում էր նրանց շահերին ու նախապաշարումներին։

Փարիսեցիների ամենաեռանդուն ջանքերից մէկն էր Յիսուսին մղել դէպի քաղաքական հարցերը, ու հռչակել նրան Յուդայ Գօլոնացու հետևող։ Տակտիկան շատ խորամանկ էր. պէտք էր ունենալ Յիսուսի նուրբ թափանցողութիւնը, չապստամբելու հռովմէական իշխանութեան դէմ,

չնայած, որ յայտարարել էր Աստուծոյ Թագաւորութեան մօտալուտ գալուստը: Եւ ահա վճռեցին պոկել երկդիմութեան այդ քողը ու ստիպել նրան արտայայտուելու: Մի անգամ մի խումբ փարիսեցիներ և «հերովդեան» կոչուող քաղաքագէտներ (հաւանօրէն Բօէտուզիմները) մօտեցան Յիսուսին ու դիմակաւորուած՝ կրօնական եռանդով՝ հարցրին. «Վարդապետ, գիտենք որ դու ճշմարիտ ես և ուսուցանում ես Աստուծոյ իսկական ճանապարհը — և չես մտածում շողոքորթել ոչ ոքի, որովհետև ոչ մի անձնաւորութեան վրայ ուշադրութիւն չես դարձնում: Ուրեմն ասա, ինչպէ՞ս ես կարծում: Պէտք է կայսրին հարկ տալ թէ՞ ոչ»: Նրանք ակնկալում էին մի այնպիսի պատասխան, որով կարողանային մատնել նրան իսկոյն Պիղատոսի ձեռքը: Յիսուսի պատասխանը զարմանք պատճառեց: Նա հրամայեց տալ կայսեր պատկերը կրող մի դրամ և ասաց. «Տուէք կայսրինը կայսրին, իսկ Աստուծունը՝ Աստուծուն»: Խորամիտ խօսքեր, որ վճռեցին քրիստոնէութեան ապագան: Խօսքեր, որ լի էին հոգեպաշտութեամբ ու հրաշալի արդարասիրութեամբ, որ հոգևոր իշխանութիւնը բաժանեցին աշխարհական իշխանութիւնից ու ստեղծեցին իսկական լիբերալիզմի, ազատամտութեան ու ճշմարիտ քաղաքակրթութեան սկզբունքները:

Նրա հեզ ու խորաթափանց հանճարը նրան ներշնչեց գերազանցօրէն գրաւիչ ճառեր, որ արտասանեց, երբ առանձնացաւ իր աշակերտների հետ. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով փարախը դռնով չէ մտնում, նա գող ու աւազակ է: Իսկ դռնով մտնողը ոչխարների իսկական հովիւն է: Ոչխարները լսում են իրենց հովուի կոչը, նա նրանց կանչում է իրենց անուններով ու դուրս տանում: Երբ դուրս է տանում, գնում է նրանց առաջից, իսկ ոչխարները հետևում են նրան, որովհետև ճանաչում են նրա ձայնը: Բայց գողը գալիս է միայն գողանալու, սպանելու և ոչնչացնելու նպատակով: Իսկ վարձկանը հովիւ չէ, որովհետև ոչխարները իրը չեն. երբ տեսնում է գայլի մօտենալը, թողնում է հօտը ու փախչում: Ես բարի հովիւ եմ, ճանաչում եմ իմերին և իմերն էլ ինձ են ճանաչում և ես կեանքս դնում եմ նրանց համար»: Նա իր ճառերի մէջ յաճախ է յեղյեղում

այն միտքը, թէ մարդկութեան ճգնաժամը մօտենում է իր վախճանին. «Երբ թզենին ծածկւում է մանր ընձիւղներով ու քնքոյշ տերևներով, իմացէք որ մօտենում է ամառը: Բարձրացրէք ձեր աչքերը ու նայեցէք հասկերին, թէ որքան սպիտակել են ու հասունացել: Հունձքի ժամանակը մօտեցել է»:

Ամեն անգամ, երբ հարց էր լինում կեղծաւորութեան դէմ մարտնչելու, երևան էր գալիս նրա հզօր պերճախօսութիւնը: «Մովսէսի աթոռի վրայ նստան դպիրներն ու փարիսեցիները. ինչ որ նրանք հրամայում են, պահեցէք ու կատարեցէք, բայց նրանց օրինակին մի հետևէք, որովհետև նրանք ասում են ու չեն կատարում: Ծանր ու դժուարակիր բեռներն են կապում ու դնում մարդկանց ուսերին, բայց իրենք մատով անգամ չեն ուզում շարժել: Նրանց բոլոր գործերը ցոյցի համար է. ընդարձակում են իրենց գրապանակները, շրջում են երկար հագուստներով, ճակատների վրայ կրում են լայն ժապաւէններ*) ու մեծացնում իրենց հագուստի քղանցքները: Սիրում են նոյնպէս ընթրիքներում առաջին տեղն ու ժողովարաններում առաջին աթոռները գրաւել: Սիրում են մարդկանցից ողջունուել ու րաբբի, րաբբի կոչուել: Վա՜յ նրանց: Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ, կեղծաւորներ, որ մարդկանց առաջ փակեցիք երկնքի արքայութեան դռները, որովհետև ոչ դուք էք մտնում և ոչ էլ ուրիշներին էք ներս թողնում: Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ, կեղծաւորներ, որ ուտում էք այրիների տները, իսկ յետոյ կեղծաւորութեամբ երկար աղօթում. հէնց դրա համար դուք աւելի մեծ պատիժ կը կրէք: Վա՜յ ձեզ, որ ծով ու ցամաք էք շրջում, որպէս զի մէկին դարձի բերէք, իսկ երբ յաջողում էք, նրան շինում էք գեհենի որդի: Վա՜յ ձեզ, որ ծածկուած էք այն գերեզմանների նման, որոնց վրայ մարդիկ ման են գալիս, բայց ներսը չեն տեսնում:

«Կոյրեր ու անմիտներ տալիս էք տասանորդ անանուխից, սամիթից ու չամանից, բայց մոռանում էք Օրէնքի ծանր կողմերը՝ դատաստանը, ողորմութիւնն ու հաւատքը,—այս

---

*) Մետաղէ նշաններ կամ մագաղաթէ ժապաւէններ Օրէնքից մակագրութիւններով, որ կրում էին ջերմեռանդ մովսիսականները իրենց ճակատի կամ ձախ թևի վրայ:

պէտք է անել և այն չմոռանալ: Կոյր առաջնորդներ, որ մժեղները քամում էք, իսկ ուղտերը կուլ տալիս, վա՜յ ձեզ:

«Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ, կեղծաւորներ, որ նմանում էք ծեփած*) գերեզմանների, որոնք արտաքուստ գեղեցիկ են երևում, բայց ներքուստ լի են մեռելների ոսկրներով ու ամեն տեսակ պղծութիւններով: Այդպէս էլ դուք, արտաքուստ մարդկանց արդար էք երևում, իսկ ներքուստ լի էք կեղծաւորութեամբ ու անօրէնութեամբ:

«Վա՜յ ձեզ, դպիրներ ու փարիսեցիներ, կեղծաւորներ, որ մարգարէների համար շինում էք գերեզմաններ, արդարների յուշարձանները զարդարում էք ու ասում. «Եթէ ապրէինք մեր հայրերի ժամանակ չէինք մասնակցի մարգարէների սպանման գործին»: Ուրեմն ինքներդ վկայում էք, որ դուք մարգարէասպանների որդիներ էք: Ուրեմն շարունակեցէք ձեր հայրերի սկսած գործը: Աստուածային իմաստութիւնն ասում է. «Ես ուղարկում եմ ձեզ մօտ մարգարէներ, իմաստուններ ու գիտնականներ. դուք մի քանիսին կըսպանէք ու կը խաչէք, միւսներին կը ծեծէք ձեր ժողովարաններում ու կը հալածէք քաղաքից քաղաք, որպէս զի ձեր վզին ընկնի բոլոր արդար արիւնը, որ թափուել է երկրի վրայ, սկսած անմեղ Աբէլից, մինչև Բարաքիայի որդի Զաքարիայի արիւնը, որին սպանեցիք տաճարի ու զոհարանի մէջտեղում»: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ ամենը կը կատարուի այս ազգի գլխին»:

Յիսուսի այն սարսափելի սկզբունքը, որով Աստուծոյ թագաւորութիւնը հեթանոսներինն է և այն գաղափարը, որ այդ թագաւորութիւնը տրւում է ուրիշներին, որովհետև նրանք, որոնց նա խոստացուած էր չկամեցան ընդունել, խիստ սպառնալիք էր՝ ուղղուած՝ ազնուականութեանը. իսկ Աստուծոյ Որդի տիտղոսը, որ նա բացարձակապէս տալիս էր իրեն, իր կենդանի առակներում, ուր իր թշնամիները երևան էին գալիս իբրև Աստծուց ուղարկուածների սպանիչներ, —այս ամենը արհամարհանք էր, ուղղուած՝ պաշտօնական մովսիսականներին: Այն համարձակ կոչը, որով նա դիմում էր ճըն-

*) Սովորութիւն կար գերեզմանները ծածկել սպիտակ կրով, որպէսզի մօտեցողները չը պղծուեն, որովհետև նրանք պիղծ էին համարւում.

շուածներին, աւելի գրաւիչ էր: Նա յայտարարեց, որ եկել է լոյս պարգևելու կոյրերին և կուրացնելու նրանց, որոնք կարծում են թէ տեսնում են: Մի անգամ տաճարի դէմ խիստ վրդովուած ժամանակ, նրա բերանից դուրս թռան հետևեալ անզգոյշ խօսքերը. «Ես կը քանդեմ այս ձեռակերտ տաճարը ու երեք օրում կը կառուցանեմ մի ուրիշ, անձեռագործ տաճար»: Յայտնի չէ, թէ Յիսուս ինչ էր կամենում ասել այդ խօսքերով, որոնց նրա աշակերտները այլաբանական նշանակութիւն տուին: Դրանք յետագայում պէտք է ծառայեն իբրև մեղադրութեան նիւթ Յիսուսին մահուան դատապարտելու և Գողգոթայի վրայ, հոգևարքի տաջանքների ժամանակ, պիտի ղօղան նրա ականջներում: Այս գրգռիչ վէճերը միշտ փոթորիկ էին առաջ բերում: Փարիսեցիները նրա վրայ քարեր էին շպրտում և այս դէպքում նրանք համարւում էին իբրև գործադրողներ օրէնքի, որ հրամայում էր քարկոծել իւրաքանչիւր մարգարէի առանց նրան ականջ դնելու, թէկուզ հրաշքներ գործէր, քանի որ նա ժողովրդին կամենում է մոլորեցնել իր նախկին կրօնից: Ուրիշ հանգամանքներում նրան անուանում էին խելագար, դիւահար, սամարացի և մինչև անգամ սպանելու փորձեր էին անում: Աշխատում էին յիշել նրա խօսքերը, որ յետոյ ենթարկեն աստուածպետական անողոք օրէնքներին որոնց, հռովմէական տիրապետութիւնը դեռ չէր ոչնչացրել:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

Յիսուսի թշնամիների արարքները։

Յիսուս աշունն ու ձմրան մի մասը անցրեց Երուսաղէմում, ուր այդ ժամանակ այնտեղ բաւականին ցուրտ է անում։ Նա սովորաբար շրջում էր Սողոմոնի սիւնազարդ ու կամարակապ սրահում։ Այդ սրահը հին տաճարի միակ մնացորդն էր և բաղկանում էր երկու միջանցքներից, որ կազմում էին երկու կարգ սիւներ ու այն պատը, որ կառուցուած էր Կեդրոնի հովտի կողմը։ Դրսի հետ հաղորդակցութիւնը պահպանւում էր Սուէզի դռներով, որոնց հետքերը մինչև հիմա էլ մնացել են «Ոսկեզօծ դռներ» կոչուած տեղում։ Հովտի միւս կողմը զարդարուած էր հոյակապ շիրիմներով։ Այնտեղ այժմ նշմարուող յիշատակարաններից մի քանիսը երևի կառուցուած են եղել ի պատիւ մարգարէների, որոնց մտաբերելով, Յիսուս նստած այդ սրահում, շանթեր էր թափում իշխող դասակարգի գլխին, որ իր կեղծաւորութիւնն ու փառասիրութիւնը կամեցել է թաքցնել այս հոյակապ դամբարանների ետևում։ Դեկտեմբերի վերջերում Երուսաղէմը տօնում էր Յուդայ Մակաբէից նշանակուած այն հանդէսը, որ կատարւում էր ի յիշատակ տաճարի մաքրագործման, Անտիոքոս Եպիփանի ձեռքով պղծուելուց յետոյ։ Այդ տօնը կոչւում էր «ճրագների տօն», որովհետև բոլոր տներում մի շաբաթ շարունակ լապտերները վառ էին պահում։ Յետոյ Յիսուս ճանապարհորդեց Պիրէա և Յորդանանի ափերը, այսինքն այն երկիրները, ուր ճանապարհորդել էր մի քանի տարի առաջ, երբ հետևում էր Յովհաննէսի դպրոցին ու ինքն էլ մկրտութիւն կատարում։ Այդ տեղում, մանաւանդ Երիքովում, Յիսուս մի փոքր սփոփուեց։ Այդ քաղաքը, արդեօք

Նրա համար որ գտնւում էր մեծ վաճառաշահ ճանապարհի
վրայ, թէ՞ իր լաւ մշակուած ու անուշաբոյր այգիների պատ-
ճառով՝ ունէր բաւական մեծ մաքսատուն։ Մաքսապետ Զա-
քէոսը, որ մի հարուստ մարդ էր, կամեցաւ Յիսուսին տես-
նել։ Որովհետև կարճահասակ էր, բարձրացաւ ճանապարհին
բուսած այն թզենու վրայ, որի մօտով Յիսուս պիտի անց-
նէր։ Յիսուս զգածուած այդ բարձրաստիճան պաշտօնէի
պարզասրտութիւնից, ցանկութիւն յայտնեց նրա մօտ իջե-
ւանելու, առանց ուշադրութիւն դարձնելու, որ դրանով կա-
րող էր իր դէմ գրգռել օրինապահներին։ Եւ իսկապէս այդ
դէպքը մեծ տրտունջ առաջացրեց։ Մեկնելիս նա յայտնեց,
որ իր հիւրընկալը Աբրահամի բարի զաւակն է. կարծես ուղ-
ղափառների բարկութիւնը գագաթնակէտին հասցնելու հա-
մար Զաքէոսը սուրբերի կարգը դասուեց։ Ասում են, նա իր
ստացուածքների կէսը բաժանեց աղքատներին ու արեց չորս
անգամ աւելի բարիք, քան առաջ չարիք էր հասցրել։ Բացի
սրանից՝ Յիսուսի ուրախութիւնը ուրիշ պատճառ էլ ունէր։
Քաղաքից դուրս գալու ժամանակ Բարդիմէոս անունով մի
աղքատ Յիսուսի ետևից կանչեց. «Դաւթի որդի» և մեծ ուրա-
խութիւն պատճառեց նրան, չնայած՝ որ աղքատին իսկոյն լը-
ռեցրին։ Կարծես թէ այդ երկրում, որը շատ բանով նմանում
էր հիւսիսային նահանգներին, վերսկսուեցին գալիլիական
հրաշագործութիւնները։ Երիքովի սքանչելի օազիսը, որ այդ
ժամանակ ջրառատ էր, պէտք է Սիրիայի ամենագեղատե-
սիլ անկիւններից մէկը լինէր։ Յովսէփ խիստ գրաւուած՝ թէ
այդ տեղով և թէ Գալիլիայով, երկուսն էլ «Աստուածային
երկիր» էր անուանում։

Յիսուս, կատարելով իր ուխտագնացութիւնը դէպի իր
քարոզութիւնների այդ որրանը, վերադարձաւ սիրած տեղը՝
Բեթանիա։ Այդ ժամանակ նրա թշնամիների կատաղութիւ-
նը հասել էր գագաթնակէտին։ Այդ ժամանակ է, որ կազ-
մուեց քահանայապետների ու իշխանների խորհուրդը, երբ
բացարձակապէս դրուեց այն հարցը, թէ «կարո՞ղ են Մով-
սիսականութիւնն ու Յիսուսը միասին ապրել»։ Այսպիսի
հարց դնել՝ նշանակում էր և վճռել այդ հարցը, որովհետև,
առանց մարգարէանալու, ինչպէս կարծում էր աւետարանիչը,

քահանայապետը պիտի կարդար իր արիւնոտ դատավճիռը. «Աւելի լաւ է մի մարդ կորչի, քան թէ ամբողջ ժողովուրդը»:

Այդ տարի քահանայապետը՝ ինչպէս ասում է չորրորդ աւետարանիչը, որ մեծ ճշտութեամբ նկարագրում է, թէ ինչ աստիճան ստորացած էր այդ ժամանակ բարձր հոգեւորականութիւնը՝ Յովսէփ Կայափան էր, նշանակուած՝ Վալերիոս Գրատի ձեռքով և բոլորովին նուիրուած՝ հռովմէական շահերին: Երբ Երուսաղէմը սկսեց կախումն ունենալ պրոկուրատորներից, քահանայապետական պաշտօնը դարձաւ նշանակովի ու համարեա ամեն տարի քահանայապետը պաշտօնանկ էր լինում: Չնայած դրան՝ Կայափան մնաց միւսներից երկար: Նա իր պաշտօնում հաստատուեց 25 թուին, իսկ պաշտօնանկ եղաւ 36 թուականին: Նրա բնաւորութիւնը մեզ անյայտ է: Մի քանի հանգամանքներ մեզ թոյլատրում են կարծել, որ նրա իշխանութիւնը միայն անուանական էր: Նրա հետ միասին և նրանից աւելի ազդեցիկ միշտ տեսնում ենք մի այլ անձնաւորութիւն, որ մեր նկարագրած վճռական րոպէին խաղաց առաջնակարգ դեր: Դա Կայափայի աները՝ Քանանը, կամ Աննան էր, Սէփի որդին, պաշտօնանկ նախկին քահանայապետը, որը չնայած քահանայապետական պաշտօնի փոփոխականութեան, պահպանել էր իր ազդեցութիւնը: Քանանը իր քահանայապետութիւնը ստացել էր փոխանորդ Կվիրինիոսից, մեր դարեշրջանի 7-րդ թուականին, և կորցրել՝ 14-րդ թուականին, Տիբերիոսի թագաւորութեան ժամանակ: Բայց նա վայելում էր մեծ յարգանք: Չնայած՝ որ զրկուած էր քահանայապետական պաշտօնից, նրան էլի անուանում էին քահանայապետ և խորհրդակցում նրա հետ բոլոր նշանաւոր դէպքերում: Յիսուն տարի, համարեա, քահանայապետական պաշտօնը մնաց նրա տոհմի ձեռքին. նրա հինգ որդիները միմեանց ետեւից ստանձնեցին այդ պաշտօնը, եթէ չհաշուենք Կայափան, որ նրա փեսան էր: Սա մի տեսակ «քահանայապետական ընտանիք էր», որովհետեւ այդ պաշտօնը ժառանգաբար անցնում էր նրա անդամներից մէկի կամ միւսի ձեռքը: Այս ընտանիքի ձեռքն ընկան նոյնպէս տաճարի չաղ պաշտօնները: Այդ տոհմի հետ փոփոխակի մի ուրիշ տոհմ էլ էր ստանձնում քահանայական պաշտօնները.

դա Բօէտուզի տոհմն էր: Բայց Բօէտուզիմները, որ իրենց յաջողութիւնը ձեռք էին ձգել անարժան միջոցներով, անհամեմատ քիչ էին յարգուած միջին դասակարգից: Այսպիսով Քանանը հանդիսանում էր քահանայական կուսակցութեան պարագլուխը: Կայափան առանց նրան ոչինչ չէր անում. այն աստիճան, որ նրանց անունները միասին էին դնում, իսկ երբեմն էլ Քանանի անունը աւելի առաջ: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ երբ հոգեւոր իշխանները ամեն տարի փոփոխւում էին, ու բոլորովին կախուած էին պրոկուրատորների քմահաճոյքից, մեծ ազդեցութիւն պիտի ունենար մի ծեր հոգեւորական, որը լաւ ծանօթ էր աւանդութեանը, իր կեանքում ունեցել էր մի շարք յաջողութիւններ և այնչափ համակրութիւն էր վայելում, որ կարողանում էր իշխանութիւնը փոխանցել ընտանիքին ու ստորադրեալներին: Նա, ինչպէս և տաճարի ամբողջ ազնուականութիւնը սադուկեցի էին, որ ինչպէս Յովսէփն ասում է՝ «խստասիրտ դատավճիռներ կարդացող մի աղանդ էր»: Նրա բոլոր որդիները մոլեգին հալածիչներ էին: Նրանցից մինը՝ Քանանը, հրամայեց քարկոծել Յակոբոս տեառնեղբօրը. այդ սպանութեան մանրամասնութիւնները որոշ չափով նմանում էին Յիսուսի սպանմանը: Այդ տոհմը աչքի էր ընկնում իր ամբարտաւանութեամբ, անզգամութեամբ ու անգթութեամբ: Ունէր և մի այնպիսի արհամարհոտ ու մռայլ չարութիւն, որ յատուկ էր առհասարակ հրէական քաղաքականութեան: Հետեւաբար այնուհետեւ կատարուող դէպքերի պատասխանատուութիւնը ընկնում էր Քանանի ու նրա ազգականների վրայ: Քանանն էր (կամ աւելի ճիշտը, նրա կուսակցութիւնը) որ սպանեց Յիսուսին: Քանանն էր այդ անգութ ողբերգութեան գլխաւոր դերակատարը և մարդկութեան անէծքների ամբողջ ծանրութիւնը պիտի ընկնի աւելի շուտ նրա, քան թէ Պիղատոսի վրայ: Աւետարանիչն ասում է, որ այն ճակատագրական խօսքերը, որոնցով Յիսուս մահուան դատապարտուեց, դուրս եկան Կայափայի բերանից: Այդ ժամանակ կարծում էին, որ քահանայապետը որոշ մարգարէական ընդունակութիւն ունի և այդ պատճառով նրա արտասանած խօսքերը*) քրիստոնեաների

*) Աւելի լաւ է մի մարդ կորչի, քան թէ ամբողջ ժողովուրդը:

աչքում խորիմաստ ու մարգարէական երեւացին։ Այս խօսքերը ում բերանից էլ դուրս գային, արտայայտում էին ամբողջ հոգեւորական կուսակցութեան կարծիքը։ Այս կուսակցութիւնը հակառակ էր ժողովրդական խառովութիւններին։ Նա աշխատում էր զսպել կրօնականների խանդավառութիւնը, որովհետեւ խելամտօրէն նկատում էր, որ նրանք իրենց բորբոքող քարոզներով ամբողջ ազգը պիտի մատնէին կորստեան։ Թէպէտ Յիսուսի առաջ բերած ալեկոծումը աշխարհային անցողական բնաւորութիւն չէր կրում, բայց քահանաները վախենում էին, որ մի գուցէ նրա շնորհիւ հռովմէական լուծը աւելի հաստատուի, ու տաճարը, որ նրանց փառքի ու հարստութեան աղբիւրն էր, կործանուի։ Ի հարկէ Երուսաղէմի կործանումը, որ տեղի ունեցաւ 37 տարի յետոյ, հետեւանք էր աւելի շուտ ուրիշ պատճառների, քան թէ նորածին քրիստոնէութեան։ Այդ պատճառները ծընուել էին նոյն Երուսաղէմում, բայց ոչ թէ Գալիլիայում։ Չնայած դրան՝ քահանաների պատճառաբանութիւնը հիմնաւոր էր, և անհաւանական է, որ նրա տակ թագնուած լինի անբարեխղճութիւնը։ Ղեկավարուելով հին քաղաքական գործիչների ընդունած սկզբունքով՝ Քանանն ու Կայափան իրաւունք ունէին ասելու, թէ՝ «աւելի լաւ է մի մարդ կորչի, քան թէ ամբողջ ժողովուրդը»։ Որքան որ էլ այս դատողութիւնը մեզ համար զզուելի լինի, դա է եղել սակայն մարդկութեան ծագումից ի վեր բոլոր պահպանողական կուսակցութիւնների մտածման ձեւը։ «Կարգի» (ես այստեղ վերցնում եմ նեղ և սահմանափակ իմաստով) կուսակցութիւնը միշտ եղել է նոյնը։ Կարծելով, որ կառավարութեան ամենալաւ գործն է ժողովրդական շարժումների զսպումը, նրանք իրենց պարտքն են համարում օրինական սպանութիւններ կատարելով՝ արիւնահեղ ապստամբութիւնների առաջն առնել և այդ բանը համարում են մեծ ազգասիրութիւն։ Նրանք ամենեւին չեն մտածում ապագայի մասին, չեն ըմբռնում, որ արգելքներ դնելով նոր հոսանքների առաջ, իզուր փորձում են խեղդել այն գաղափարը, որին՝ վաղ թէ ուշ՝ վիճակուած է յաղթանակել։ Յիսուսի մահը մէկն էր այդ քաղաքականութեան հարիւրաւոր դէպքերից։ Թէպէտ Յիսուսի առեղծած շարժումը զուտ

հոգեկան էր, բայց այնուամենայնիւ շարժում էր։ Եւ հէնց այդ պատճառով էլ կարգի կուսակիցները, համոզուած՝ որ մարդկութեան ամենաէական ձգտումն է չթոյլատրել իր մէջ որեւէ ալեկոծում, պիտի խոչընդոտ հանդիսանային նոր աշխարհայեցողութեան։ Ո՛չ մի նոյնանման օրինակ այնքան պերճախօսութեամբ չէ ապացուցել, թէ ո՛րքան նրանք շեղուել են իրենց նպատակից իրենց վարմունքով։ Եթէ Յիսուս հալածանքի չենթարկուէր, նա անկարելիի դէմ կատաղի կռիւ մղելով կը ջլատէր իր բոլոր ոյժերը։ Մինչդեռ նրա թշնամիների անմիտ ատելութիւնը նպաստեց նրա գործի յաջողութեան ու ցոյց տուեց նրա աստուածային յատկանիշը։ Յիսուսի մահուան դատավճիռը կայացաւ փետրուար ամսին կամ մարտի սկզբում։ Բայց նա որոշ ժամանակ խոյս տուաւ։ Նա քաշուեց Բեթէլի կողմերը մի անյայտ քաղաք, որ Եփրոն էր կոչւում և հեռու էր Երուսաղէմից մի օրով։ Այնտեղ նա իր աշակերտների հետ մնաց մի քանի շաբաթ, սպասելով որ փոթորիկը հանդարտի։ Այդ ժամանակ արդէն հրաման էր արձակուած ձերբակալել նրան, հէնց որ Երուսաղէմ մտնի։ Վրայ հասաւ Պասէքի տօնը և նրանք յոյս ունէին, որ Յիսուս, համաձայն իր սովորութեան, կըգայ Երուսաղէմ այդ տօնը կատարելու։

Գ Լ Ո Ւ Խ Ի

Յիսուսի վերջին շաբաթը։

Եւ իսկապէս Յիսուս իր աշակերտներով գնաց Երուսաղէմ վերջին անգամ տեսնելու այդ անհաւատարիմ քաղաքը։ Նրա մտերիմները տածում էին փայլուն յոյսեր։ Երուսաղէմ մտնելուց ամենքը հաւատացած էին, որ Աստուծոյ Թագաւորութիւնը այնտեղ էլ կը հաստատուի։ Մարդկանց ամբարշտութիւնը իր գագաթնակէտին էր հասել և դա նշան էր, որ մօտ է աշխարհի վախճանը։ Այդ հաւատը այնքան էր ամրացել նրանց մէջ, որ վիճաբանում էին այն առաջնակարգ տեղերի մասին, որ պիտի գրաւէին այդ Թագաւորութեան մէջ։ Ասում են, որ Սալօմէն այդ րոպէն էր ընտրել իր երկու զաւակների համար մարդու որդու աջ և ձախ կողմերում տեղ խնդրելու։ Իսկ ուսուցիչը, ընդհակառակը, պաշարուած էր ուրիշ մտքերով։ Երբեմն նա կատաղի զայրոյթ էր զգում իր թշնամիների դէմ։ Նա պատմում է բարձր ծագում ունեցող մարդու առակը, որը գնում է մի հեռու երկիր թագ ստանալու և վերադառնալու։ Հէնց որ գնում է, ժողովուրդը չի կամենում, որ նա թագաւորէ։ Երբ թագաւորը վերադառնում է, հրամայում է՝ բերել իր մօտ նրանց, որոնք իրան չէին ուզում, ու սպանել։ Մի այլ անգամ նա համարձակօրէն ջրում է իր աշակերտների երազները։ Երբ անցնում էին Երուսաղէմի հիւսիսային կողմից, մի քարքարոտ ճանապարհով, Յիսուս մտախոհ գնում էր աշկերտների խմբի առաջից։ Ամենքը լուռ նայում էին նրա վրայ, չկամենալով իրանց հարց ու փորձով վշտացնել նրան։ Շատ անգամ էր խօսել իր ապագայ տանջանքների մասին, բայց աշակերտները տհաճութեամբ էին լսել։ Այժմ նա նորից սկսեց խօսել ու չծածկելով իր նախազգացումները, ա-

սում էր, որ մօտ է ժամանակը, երբ ինքը մահուան կը դատապարտուի։ Դա ամբողջ խմբի համար մեծ դժբաղդութիւն էր։ Աշակերտներն արդէն սպասում էին տեսնել նրան ամպերի մէջ։ Արդէն նրանք ուրախ աղաղակել էին. «Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը»։ Ահա թէ ինչու Յիսուսի նկարագրած արիւնոտ պատկերը նրանց չափազանց շփոթում էր։ Ամեն քայլափոխում նրանց երազկոտ երևակայութեան մէջ Աստուծոյ թագաւորութիւնը մէկ մօտենում էր, մէկ հեռանում։ Իսկ Յիսուս հետզհետէ աւելի էր համոզւում, որ ինքը պիտի մեռնի ու իր մահով աշխարհը փրկէ։ Հետզհետէ նա իր աշակերտների համար դառնում էր անըմբռնելի։ Սովորաբար գալիս էին Երուսաղէմ Պասէքից մի քանի օր առաջ, որպէսզի ժամանակ ունենան տօնի համար պատրաստութիւններ տեսնելու։ Յիսուս եկաւ ամենից ուշ և մի րոպէ նրա թշնամիները զգացին, որ իրենք խաբուել են, յուսալով նրան Երուսաղէմում բռնել։ Տօնից 6 օր առաջ (օրը շաբաթ էր, Նիսանի 8-ին —մարտի 28-ին) նա վերջապէս հասաւ Բեթանիա, մտաւ Ղազարոսի, Մարթայի, Մարիամի կամ Սիմէօն Բորոտի տունը։ Նրան ընդունեցին մեծ շքով։ Սիմէօն Բորոտը խնճոյքի էր հրաւիրել այն անձանց, որոնք ցանկութիւն էին յայտնել տեսնել Յիսուսին։ Ըստ սովորականին ծառայում էր Մարթան։ Փառաւոր ընդունելութիւն ցոյց տուին, կամենալով դրանով ընկճել հիւրերի սառնասրտութիւնը և ընդգծել հիւրի բարձր արժանաւորութիւնը։ Մարիամը, հացկերոյթին աւելի շքեղ տեսք տալու համար, ճաշի ժամանակ ներս մտաւ անուշահոտ իւղի մի սրուակով, և օծեց Յիսուսի ոտները։ Յետոյ կոտրեց սրուակը, հետևելով այն հին սովորութեան, որի համաձայն պատուաւոր հիւրի համար գործածած իրը կոտրում էին։ Վերջապէս իր երկրպագութիւնը հասցնելով մի այնպիսի աստիճանի, որի նմանը դեռ չէր տեսնուած, նա տարածուեց Յիսուսի ոտների մօտ ու սրբեց նրանց իր երկայն մազերով։ Տունը լցուեց անուշ բուրմունքով ու մեծ բաւականութիւն պատճառեց ամենքին, բացի Յուդայ Իսկարովտացուց։ Անայողութեան սովորած հոգևոր համայնքի համար դա մեծ շռայլութիւն էր։ Գանձարանի ագահ պահապանը իսկոյն հաշուել էր թէ ինչ գումա-

րի կարելի էր ծախել իւղը և թէ որքան արդիւնք կը բերէր աղքատների գանձանակին: Յիսուսին անբաւականութիւն պատճառեց Յուդայի այդ վարմունքը, որով նա աղքատներին իրենից աւելի բարձր էր դասում: Նա սիրում էր փառաւորուել, որովհետև դա ծառայում էր իր նպատակներին ու հաստատում իր «Դաւթի որդի» տիտղոսը: Այդ պատճառով էլ, երբ յիշատակեցին աղքատների մասին, նա՝ բաւական վրդովուած՝ պատասխանեց. «Աղքատները միշտ ձեզ հետ կը լինեն, իսկ ես չեմ լինի»: Բուռն ոգևորութեան ազդեցութեան տակ, Յիսուս անմահութիւն խոստացաւ այն կնոջը, որ այդպիսի ծանր րոպէում ցոյց տուեց իր անձնուիրութիւնը: Հետևեալ օրը (Նիսանի 9-ին, կիրակի) Յիսուս դուրս եկաւ Բեթանիայից ու գնաց Երուսաղէմ: Հասնելով Ձիթենեաց լեռան գլուխը, այն կէտը, որտեղից ճանապարհը ծռւում է ու Երուսաղէմն երևում, ասում են, լաց եղաւ Երուսաղէմի վրայ ու ուղղեց նրան իր վերջին կոչը: Իջնելով սարից, Երուսաղէմի դռներից մի քանի քայլ հեռու՝ այն տեղում, որ գտնւում է քաղաքի արևելեան պատի դիմաց և կոչւում՝ Բեթաղիա,—երևի այնտեղ աճող թզենիների պատճառով,—նա մի անգամ էլ զգաց մարդկային ուրախութիւն: Լուր տարածուեց, որ նա Երուսաղէմումն է: Տօնի պատճառով Երուսաղէմ եկած գալիլիացիները ցնծացին ու նրա համար մի յաղթական ցոյց պատրաստեցին: Բերին մի էշ, իր քուռակով, ինչպէս ընդունուած էր: Գալիլիացիները կենդանու մէջքին փռեցին իրենց ամենալաւ հագուստները, ու Յիսուսին նստեցրին: Միևնոյն ժամանակ միւսները իրենց հագուստները տարածում էին գետնին վրայ ու ճանապարհը ծածկում կանաչ ոստերով: Նրա առաջից ու ետևից գնացող ամբոխը՝ արմաւենու ճիւղերը ձեռքին՝ աղաղակում էր. «Օվսաննա Դաւթի որդուն, օրհնուած է Տիրոջ անունով եկողը»: Մի քանիսը մինչև անգամ անուանում էին նրան Իսրայէլի թագաւոր: «Րաբբի, հրամայիր դրանց, որ լռեն»: «Եթէ սրանք լռեն, քարերը կաղաղակեն» պատասխանեց Յիսուս ու մտաւ քաղաք: Երուսաղէմացիք Յիսուսին շատ քիչ էին ճանաչում ու հարցնում էին՝ «ով է դա»: Նրանց պատասխանում էին, թէ դա Յիսուսն է, Գալիլիայի

Նազարէթ քաղաքացի մարգարէն»: Երուսաղէմն ունէր մօտ 50.000 բնակիչ: Սովորաբար, մի որևէ՝ փոքր ի շատէ աչքի ընկնող՝ երևոյթ, ինչպէս, օրինակ մի հռչակաւոր օտարականի մուտքը կամ մի խումբ գաւառացիների այցելութիւնը և կամ քաղաքի հրապարակներում տեղի ունեցած որևէ յուզմունքի լուր անմիջապէս բերնէբերան շրջում ու ծաւալվում էր: Բայց տօներին այնտեղ խռնւում էր չափազանց մեծ բազմութիւն: Այդ օրերում Երուսաղէմը օտարականներինն էր: Առհասարակ մեծ յուզմունքներ տեղի էին ունենում այս վերջինների մէջ: Յիսուսով խիստ հետաքրքրւում ու նրան անհամբեր սպասում էին մանաւանդ նորադարձները, որ խօսում էին յունարէն և տօների պատճառով ժողովուել էին Երուսաղէմ: Նրանք դիմեցին Յիսուսի աշակերտներին. բայց այդ մասին ոչինչ յայտնի չէ, Յիսուս, ըստ սովորականին գիշերելու գնաց իր սիրելի Բեթանիա գիւղը: Հետևեալ երեք օրը, (երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի) նա այդ նոյն եղանակով մտնում էր Երուսաղէմ, իսկ արևի խոնարհելուց յետոյ ուղևորւում էր կամ Բեթանիա և կամ այն ագարակները, որ գտնւում էին Ձիթենեաց լեռների արևմտեան փէշերի վրայ, ուր նոյնպէս շատ բարեկամներ ունէին:

Այդ վերջին օրերում մի խորին վիշտ համակեց Յիսուսի սիրտը, որ սովորաբար այնքան պայծառ ու զուարթ էր: Նրա մասին եղած բոլոր պատմութիւնները միաբերան վկայում են, որ Յիսուս բանտարկութիւնից առաջ ունեցել է խռովայոյզ վայրկեաններ և զգացել է վրդովմունք ու թախիծ: Ոմանք ասում էին, թէ նա յանկարծակի աղաղակել է. «Իմ հոգին այժմ խռովուած է, Հայր, հեռացրու այս բաժակը»: Մի քանիսին թւում էր, թէ այդ ժամանակ երկնքից ձայն լսուեց, իսկ միւսները ասելով՝ հրեշտակներն իջան երկնքից նրան մխիթարելու: Մի այլ, աւելի շատ տարածուած կարծիքով, այդ բանը տեղի ունեցաւ Գեթսեմանի պարտէզում: Ասում են, Յիսուս հեռացաւ իր քնած աշակերտներից մի «քարընկէց», առնելով իր հետ միայն Կեփասին և Զեբեդիայի երկու որդիներին: Այստեղ նա երեսի վրայ տարածուեց գետնին ու սկսեց աղօթել: Նրա հոգին լի էր մահացու թախիծով, տանջւում էր սարսափելի վշտով. բայց վերջ ի վերջոյ յաղ-

թող հանդիսացաւ Աստուծոյ կամքին հպատակումը: Մղուած այն բնազդից, որով յաճախ ղեկավարւում էին համատես աւետարանիչները, երբ խմբագրում էին իրենց գործը և աշխատում տանել միևնոյն պայմանական ճանապարհով կամ ձգտում էին աւելի մեծ տպաւորութիւն թողնել ընթերցողների վրայ, Նրանք այս տեսարանը վերագրում են Յիսուսի կեանքի վերջին գիշերուան, այսինքն Նրա բանտարկման րոպէին: Եթէ այս տեսակէտը ճշմարիտ լինէր, այն ժամանակ անկարելի էր բացատրել թէ ինչո՞ւ Յովհաննէսը, որ այդ ողբերգական իրողութեան ամենամօտ վկան էր, այդ բանը չի պատմում իր աշակերտներին և ինչո՞ւ չորրորդ աւետարանի հեղինակը չի յիշատակել այդ դէպքը, այդ գիշերուայ իր բաւական ընդարձակ նկարագրութեան մէջ: Միակ բանը, որ կարելի էր հաւաստիօրէն պնդել, այն է, որ վերջին օրերը Յիսուս խիստ նեղւում էր իր առաքելութեան ծանրութեան տակ: Մի վայրկեան նրանում արթնացաւ մարդկային բնութիւնը: Գուցէ նա սկսեց կասկածել իր գործի յաջողութեան վրայ: Նրան տիրապետեցին ահն ու կասկածը և վհատութիւն ծնեցրին նրա մէջ, որ աւելի վատ է, քան մահը: Երբ մէկը որևէ մեծ գաղափարի զոհաբերում է իր հանգիստն ու կեանքի բարիքներից օգտուելու օրինական իրաւունքը, չի կարող առանց տխրութեան, առանց վշտի դիմաւորել մահը, երբ նա փշրւում է ամեն յոյս: Գուցէ այդ րոպէն Նրա հոգում զարթնել էին սրտաշարժ, սրտաճմլիկ յիշողութիւններ, որ ունենում են ամենաուժեղ մարդիկն անգամ: Մտաբերեց արդեօք Գալիլիայի աղբիւրների վճիտ կարկաչիւնը, որոնք այնքան զովութիւն էին պարգևում, որթերն ու թզենիները, որոնց տակ նա հանգչում էր յաճախ, կամ այն ջահել օրիորդները, որոնց սիրուն մասնակից էր գտնուել գուցէ և ինքը: Անիծո՞ւմ էր արդեօք իր անողոք բաղդը, որ զրկեց Նրան այն ամբողջ երջանկութիւնից, որ մատչելի է միւս անհատներին: Արդեօք չափսոսա՞ց, որ ինքը օժտուած է այդքան վեհ հոգով. լաց չեղա՞ւ, որ զոհ է իր սեփհական արժանիքներին. որ չէ մնացել Նազարէթում իբրև մի հասարակ հիւսն: Այդ ամենը մեզ համար հանելուկ է: Նրա ներքին կռիւը հաւանօրէն ծածուկ մնաց իր աշակերտներից: Նրանք առանց

որևէ բան հասկանալու, իրենց միամիտ ենթադրութիւններով լրացրին այն՝ ինչ որ ուսուցչի հոգում իրենց համար հանելուկ էր մնացել: Հաւաստի է միայն այն, որ Նրա աստուածային էութիւնը շուտով յաղթող հանդիսացաւ: Նա դեռ միջոց ունէր մահից խոյս տալու, բայց չկամեցաւ: Կրկին գրաւուեց իր գործի սիրով: Վճռեց քամել բաժակը մինչև մրուրը: Այդ րոպէից Յիսուս նորից վճռապէս գտաւ ինքն իրան: Մնաց միայն կրքերի անփոխարինելի հերոսը, խղճի ազատութեան իրաւունքի հիմնադիրը, կատարելութեան գերագոյն տիպարը, որի հարևանցի յիշողութիւնն անգամ ըսփոփում ու զօրացնում է տանջուող հոգիներին:

Բեթաղիայի յաղթական գնացքը, գաւառացիների այն յանդգնութիւնը, որ Երուսաղէմի դռների մօտ տօնում էին իրենց Թագաւոր՝ Մեսիայի գալուստը, վերջնականապէս գրգռեց փարիսեցիներին ու հոգևոր ազնուականութեանը: Չորեքշաբթի (Նիսանի 12-ին) կազմուեց Յովսէփ Կայափայի մօտ մի նոր ժողով: Վճռեցին անմիջապէս բանտարկել Յիսուսին: Նրանց կարգադրութիւնները կրում էին պահպանողական ու կարգապահական ոգի: Աշխատում էին խոյս տալ աղմուկից: Որովհետև այդ տարի Պասէքի տօնը սկսւում էր շաբաթ երեկոյից և տօնին ժողովուրդը խռնւում, կուտակւում էր և խիստ լարուած դրութեան մէջ լինում, ուստի վճռեցին Յիսուսին բռնել նախ քան տօնը: Յիսուս այնչափ ժողովրդականութիւն ունէր, որ պէտք էր զգուշանալ ապստամբութիւնից: Ըստ սովորականին, այն ժողովրդական տօնախմբութիւնների ժամանակ, որոնց մասնակցում էր ամբողջ ազգը, նախ քան սկսուելը տեղի էին ունենում հոգևորական հեղինակութեան դէմ կռուող անձնաւորութիւնների մի շարք սպանութիւններ, մի տեսակ աւտօ-դա-ֆէ, որի նպատակն էր կրօնական սարսափ ներշնչել ամբոխին: Չնայած դրան՝ ցանկալի չէր, որ այդ տեսարանները տեղի ունենային տօնի ժամանակ: Այդ պատճառով կարգադրուած էր կալանաւորել Նրան յաջորդ առաւօտը, այսինքն հինգշաբթի օրը: Վճռուած էր նոյնպէս չկալանաւորել Նրան տաճարում, ուր ամեն օր լինում էր, այլ հետևել ու բռնել մի խուլ տեղում: Քահանայապետների գործակալները հարց

ու փորձ էին անում աշակերտներին, յուսալով նրանցից հարկաւոր տեղեկութիւններն ստանալ, օգուտ քաղելով նրանց միամտութիւնից ու բացբերանութիւնից։ Նրանք իրենց որոնածը գտան Յուդայ Իսկարովտացու մէջ։ Բոլորովին անհասկանալի պատճառներով, այս դժբաղդը մատնեց իր ուսուցչին, տուեց բոլոր հարկաւոր ցուցումները և մինչև անգամ համաձայնուեց առաջնորդել Յիսուսին կալանաւորող խմբակը։ Վերջին մանրամասնութիւնը այնքան քստմնելի է, որ դժուար է հաւատալ։ Այդ մարդու յիմարութեան ու չարամտութեան մասին քրիստոնէական աւանդութեան մէջ պահպանուած այդ սարսափելի յիշատակութիւնը, անկասկած, չափազանցրած է։ Մինչև այդ րոպէին Յուդան նոյնպիսի աշակերտ էր, ինչպէս միւսները,—մինչև անգամ կրում էր առաքեալ անունը, գործում էր հրաշքներ, ու հալածում դևերի։ Աւանդութիւնը, որ միշտ գոյները թանձրացնում է, հաստատում է, որ խորհրդաւոր ընթրիքին մասնակցում էին Յիսուսի 11 սուրբ և մի նզովուած աշակերտները։ Բայց իրականութեան մէջ այդպիսի բացարձակ տարբերութիւն չէ դրւում։ Շահասիրութիւնը, որին վերագրում են համատեսները այդ ոճիրը, չի կարող համարուել բաւարար բացատրութիւն. անընական է, որ մի մարդ, որի ձեռքին մի ժամանակ դրամարկղն էր և որը կարող էր իր մեծի մահով կորցնել այդ իրաւունքը, իր պաշտօնի առաւելութիւնը փոխէր մի չնչին գումարի հետ։ Գուցէ պատճառը Յուդայի ինքնասիրութիւնն էր, որը վիրաւորել էր Յիսուս Բեթանիայի հացկերոյթի ժամանակ, նրան ուղղած նկատողութիւնով։ Բայց այդ էլ բաւարար չէ։ Չորրորդ աւետարանիչը նրան ընդունում է իբրև խաբեբայ և հէնց սկզբից չհաւատացող. այդ բոլորովին անհաւանական է։ Աւելի շուտ նա ղեկավարուել է նախանձի զգացումով կամ անձնական անհամաձայնութիւնների դրդմամբ։ Դէպի Յուդան ամենամեծ ատելութիւնը ցոյց է տալիս Յովհաննէս աւետարանիչը և այդ երևոյթը մի փոքր լոյս է սփռում մեր ենթադրութիւնների վրայ։ Յուդան լինելով նուազ մաքրասիրտ, քան միւսները, աննկատելիօրէն կարող էր տոգորուել իր պաշտօնին յատուկ նեղ հայեացքներով։ Պատասխանատու պաշտօն վարող

մարդկանց յատուկ տարօրինակութեամբ, նա երևի դրամարկղի շահերը գերադասում էր այն գործից, որի համար այդ դրամարկղը գոյութիւն ունէր։ Նրա հոգում տնտեսը սպանել էր առաքեալին։ Բեթանիայում Յուդայի բերանից դուրս թռած բացագանչութիւնը թոյլ էր տալիս ենթադրել, որ Յիսուս շատ թանգ էր նստում իր հոգևոր ընտանիքի վրայ։ Անկասկած Յուդայի այդ բծախնդիր խնայողութիւնը փոքրիկ համայնքում յաճախ պատճառ է դարձել և՛ ուրիշ թիւրիմացութիւնների։

Այդ րոպէն այնքան վեհութիւն է պարունակում, որ նրա իւրաքանչիւր վայրկեանը դարագլուխ է կազմում մարդկային պատմութեան մէջ։ Մենք հասանք մինչև հինգշաբթի Նիսանի 13-ը (ապրիլի 2-ը)։ Հետևեալ օրը, երեկոյեան, Պասէքի տօնն էր. այդ տօնը սկսւում էր ընթրիքով, որի ժամանակ ուտում էին գառը։ Տօնը տևում էր 7 օր, որի ընթացքում բաղարջ էին ուտում։ Այդ տօնի առաջին և վերջին օրերը աւելի հանդիսաւոր էին։ Աշակերտները արդէն պատրաստութիւն էին տեսնում տօնի համար։ Իսկ ինչ վերաբերում է Յիսուսին, կարելի է ենթադրել, որ նա գիտէր թէ Յուդան պիտի մատնէր իրան և թէ ինչ է պատրաստւում իր համար։ Երեկոյեան նա վերջին ընթրիքն էր անում իր աշակերտների հետ։ Դա զատկի տօնի ծիսական ընթրիքը չէր, ինչպէս յետոյ ենթադրեցին մի օր սխալուելով։ Բայց նոր եկեղեցու համար հինգշաբթի օրուայ ընթրիքը եղաւ իսկական Պասէք, նշան նոր ուխտի։ Իւրաքանչիւր աշակերտ պահեց թանկագին յիշողութիւններ Յիսուսի և բազմաթիւ սրտաշարժ մանրամասնութիւններ այդ ընթրիքի մասին, որը դարձաւ քրիստոնէական ջերմեռանդութեան անկիւնաքարն ու շատ արդիւնաւոր հաստատութիւնների սկզբնապատճառը։

Անկասկած այդ րոպէին Յիսուսի սիրտը լի էր քնքոյշ սիրով դէպի իր փոքրիկ եկեղեցին։ Յիսուսի պայծառ ու ուժեղ հոգին չէր ճնշւում իր մռայլ նախազգացումներից։ Նա իւրաքանչիւր բարեկամի համար գտնում էր մի քաղցր խօսք. իսկ նրանցից դէպի երկուսը՝ Յովհաննէսն ու Պետրոսը՝ ցոյց էր տալիս առանձին քնքշութիւն։ Յովհաննէսը

ընկողմանած էր Յիսուսի կողքին, նստարանի վրայ և նրա գլուխը հանգստանում էր ուսուցչի կրծքին: Ընթրիքի վերջերում քիչ մնաց, որ Յիսուս բանար իր սրտի վրայ ծանրացող գաղտնիքը: «Ճշմարիտն են ասում, ասաց նա, ձեզանից մէկը ինձ պիտի մատնի»: Այդ խօսքերը խոր վիշտ պատճառեցին նրան շրջապատող միամիտ մարդկանց. Նրանք միմեանց երես նայեցին ու ամէն մէկը հարց էր տալիս. «Միթէ՞ ես եմ»: Յուդան էլ ներկայ էր. դուցէ Յիսուս, որ որոշ ժամանակից ի վեր հիմք ունէր կասկածով վերաբերուելու դէպի նա, կամենում էր մի ապացոյց գտնել նրա շփոթութեամբ կամ խոստովանութեամբ: Բայց անհաւատարիմ աշակերտը չշփոթուեց. ասում են, նա մինչև անգամ համարձակուեց միւսների նման հարց տալ. «միթէ՞ ես եմ, րաբբի:»

Նեղւում էր ի միջի այլոց և բարի ու ճշմարտասէր Պետրոսը: Նա նշան տուեց Յովհաննէսին, որ աշխատի ուսուցչից տեղեկանալ, թէ ում է ակնարկում: Յովհաննէսը, որ կարող էր ուսուցչի հետ խօսել այնպէս, որ միւսները չլսէին, խնդրեց Յիսուսից պարզել իր խօսքերը: Յիսուս, որ միայն կասկածներ ունէր, չէր ցանկանում անուն տալ: Նա միայն ասաց Յովհաննէսին, որ հետևէ, թէ ինքը ում կը տայ արգանակի մէջ թրջած հացի պատառը և միևնոյն ժամանակ, թրջելով հացը, տուեց Յուդային: Այդ իմացան միայն Յովհաննէսն ու Պետրոսը: Յիսուս սկսեց խօսել Յուդայի հետ դառն յանդիմանութեամբ, բայց ներկայ եղողները չհասկացան: Նրանք կարծեցին, որ Յիսուս կարգադրութիւններ էր անում միւս օրուայ տօնի համար: Յետոյ Յուդան դուրս գնաց:

Այդ ընթրքի ժամանակ ոչ ոք մի առանձին բան չնկատեց, բացի այն կասկածներից, որ արտայայտել էր Յիսուս իր աշակերտներին, որոնք միայն կիսով չափ էին հասկացել: Բայց Յիսուսի մահից յետոյ այդ երեկոյին սկսեցին վերագրել առանձին հանդիսաւոր նշանակութիւն և հաւատացեալների երևակայութիւնը նրան տուեց միստիք գոյն: Յիշողութեան մէջ միշտ աւելի լաւ է պահպանւում սիրելի անձնաւորութեան վերջին րոպէի պատկերը: Իբրև հետևանք անխուսա-

փելի պատրանքի, նրա խօսքերին տուին, նրա մահից յետոյ, այն նշանակութիւնը, որ չունէին: Երբեմն երկար տարիների յիշողութիւնները վերագրւում են մի քանի ժամուայ: Աշակերտների մեծ մասը այդ գիշերից յետոյ այլևս չէր տեսել ուսուցչին: Դա հրաժեշտի ընթրիքն էր: Այդ ընթրիքի ժամանակ, ինչպէս և ուրիշ շատ հացկերոյթներում, Յիսուս կատարեց իր խորհրդաւոր ծէսը՝ հացի բաշխումը: Եկեղեցու հաստատման առաջին տարիներում կարծեցին, որ այդ հացկերոյթը տեղի է ունեցել Պասէքի օրը, և դա Պասէքի ընթրիքն է եղել և ուստի, բնականաբար ծագեց այն միտքը, թէ խորհրդի հաստատումը տեղի է ունեցել միայն այդ վերջին րոպէում: Առաջնորդուելով այն կարծիքից, թէ Յիսուս ճշտութեամբ գիտեցել է իր մահուան րոպէն, աշակերտները պիտի ենթադրէին, որ նա իր ամենանշանաւոր գործերը թողել է վերջին ժամերին: Բացի դրանից՝ առաջին քրիստոնէաների հիմնական գաղափարներից մէկն էլ այն էր, որ Յիսուսի մահը այն զոհաբերութիւնն է, որ պիտի փոխարինէր հին օրէնքի բոլոր զոհերը: Այդ պատճառով «խորհրդաւոր ընթրիքը», մշտապէս ընդունուեց, որ տեղի է ունեցել «չարչարանաց» նախորդ օրը և այդ ընթրիքը համարուեց գլխաւորապէս իբրև զոհաբերութիւն և հիմնական պայման նոր միութեան և նշան այն արեան, որ թափուել է մարդկութիւնը փրկելու համար:

Հացն ու գինին՝ մահուան հետ միացած՝ ներկայացնում են Նոր Ուխտի նշանը, որ տուեց Յիսուս իր տանջանքներով և որը պիտի յիշեցնէր Յիսուսի զոհաբերումը մինչև նրա երկրորդ գալուստը:

Յիսուսի կեանքի վերջին րոպէների յուշերը լի են խորին սիրով, համերաշխութեամբ, գթասրտութեամբ ու փոխադարձ յարգանքով: Քրիստոնէական աւանդութիւնը այդ սրբազան րոպէին է վերագրում Յիսուսի եկեղեցական միութեան հաստատումը և իսկապէս այդ միութեամբ են համակուած նրա բոլոր քարոզները և փոխաբերական նկարագրութիւնները: «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, ասում էր նա, սիրեցէք միմեանց, ինչպէս ես սիրեցի ձեզ: Եթէ դուք միմեանց սիրէք, կապացուցանէք, որ իմ աշակերտներն էք: Ես

ձեզ ստրուկ չեմ կոչում, որովհետև ստրուկը չը գիտէ թէ ինչ է անում իր տէրը. այլ անուանում եմ բարեկամ, որովհետև ձեզ հաղորդեցի այն ամենը, ինչ լսել էի իմ Հօրից։ Միայն այս եմ պատուիրում, սիրեցէք միմեանց»։ Այդ ժամանակ աշակերտների մէջ նորից ծագեց վիճաբանութիւն ու երկպառակութիւն առաջնութեան մասին։ Յիսուս նկատեց, որ եթէ ինքը՝ ուսուցիչ իր աշակերտներին ծառայում էր, ևս առաւել աշակերտները պիտի ծառայէին ու հպատակուէին միմեանց։ Ոմանց ասելով, Յիսուս, գինին խմելով ասաց. «Ես այլևս չեմ խմելու խաղողի հիւթը, մինչև այն օրը, երբ ձեզ հետ կը խմեմ Աստուծոյ Թագաւորութեան մէջ նոր գինին»։ Միւսների ասելով՝ նա իր աշակերտներին խոստացաւ մօտ ապագայում փառք երկնքում, ուր նրանք պիտի բազմէին իր աջ ու ձախ կողմերում գահերի վրայ։

Ընթրիքից յետոյ, Յիսուսի նախազգացումները, ըստ երևոյթին, վարակեցին և իր աշակերտներին։ Ամենքը զգում էին, որ ուսուցչին սպառնում է մի լուրջ վտանգ և այդ կրիտիքական վայրկեանը մօտենում է։ Մի րոպէ Յիսուս վճռեց զգուշութիւններ ձեռք առնել ու խօսք բացեց սրերի մասին։ Ներկայ եղողների մօտ կար երկու սուր։ «Բաւական է», ասաց նա, և էլ այդ մասին չխօսեց։ Նա լաւ էր տեսնում, որ այդ երկչոտ գաւառացիները չեն կարող դիմադրել Երուսաղէմի իշխանաւորներին։ Տաքարիւն ու ինքնավստահ՝ Պետրոսը երդուեց, որ Յիսուսի ետևից կերթայ դէպի բանտ ու կախաղան։ Յիսուսը՝ խորաթափանց՝ յայտնեց իր կասկածը։ Ըստ աւանդութեան, որի աղբիւրը երևի Պետրոսն է, Յիսուս ասաց, որ մինչև աքաղաղի կանչելը իրան կուրանայ։ Ամենքը, ինչպէս և Պետրոսը, երդուեցին, որ նրան չեն լքի։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յիսուսի բանտարկութիւնն ու դատումը

Արդէն կէս գիշեր էր, երբ նրանք դուրս եկան վերնատնից։ Յիսուս, ըստ սովորութեան, անցաւ Կեդրոնի հովիտը և իր աշակերտների հետ ուղղուեց դէպի Գեթսեմանի պարտէզը, որ գտնւում էր Ձիթենեաց լեռան ստորոտում։ Նա այնտեղ նստեց։ Օժտուած անհամեմատ աւելի զօրեղ հոգով, քան իր բարեկամները, նա արթուն մնաց ու սկսեց աղօթել։ Աշակերտները նրա շուրջը քնած էին։ Յանկարծ երևացին սպառազէն մարդիկ, ջահերով։ Տաճարի պահապաններն էին, զինուած փայտերով, ոստիկանական պահակախմբի նման մի բան, որ գտնւում էր քահանաների իշխանութեան տակ։ Նրանց հետևում էր հռովմէական զօրախումբը, զինուած՝ սրերով։ Կալանաւորելու հրամանը արձակել էին քահանայապետերն ու սինեդրիոնը։ Յուդան, որ լաւ էր իմանում Յիսուսի սովորութիւնները, մատնացոյց էր արել այդ տեղը, ուր հաւանօրէն կարելի էր կալանաւորել նրան աւելի հեշտութեամբ։ Նախնական բոլոր աւանդութիւնները միաբերան վկայում են, որ Յուդան ինքն էր առաջնորդում այդ խմբին, իսկ ոմանց ասելով՝ նա իր մատնութիւնը հասցրեց այն աստիճանին, որ համբուրեց Յիսուսին։ Այսպէս թէ այնպէս, հաւաստին միայն այն է, որ աշակերտները սկզբում ընդդիմացան։ Պետրոսը, ինչպէս պատմում են, հանեց դաշոյնը ու վիրաւորեց քահանայապետի ծառաներից մէկի, Մաղքոսի, ականջը։ Յիսուս հանդարտեցրեց իր աշակերտներին ու անձնատուր եղաւ։ Աշակերտները, որ հետևողական գործունէութեան անընդունակ էին, մանաւանդ մի զօրեղ իշխանութեան դէմ, փախուստ տուին ու ցրուեցին։ Ուսուցչին հետևեցին միայն Պետրոսն ու Յովհաննէսը։ Իսկ հեռուից նրան հետև-

ւում էր մի երիտասարդ, թեթև հագնուած,—գուցէ Մարկոսը։ Երբ կամենում էին ձերբակալել, նա փախաւ թողնելով պահակների ձեռքում իր ծածկոցը, որի մէջ փաթաթուած էր։ Քահանայապետները վճռեցին Յիսուսի գործը վարել համաձայն գոյութիւն ունեցող օրէնքների։ Յիսուսի թշնամիների ծրագիրն էր՝ մեղադրել նրան վկաների ցուցումով և իր անձնական խոստովանութեամբ, որ «Աստուծուն հայհոյել է», Մովսիսական օրէնքը անարգել, և Օրէնքի հիման վրայ դատապարտել նրան մահուան ու վճիռը ներկայացնելով Պիղատոսին, հաստատել տալ։ Հոգևոր իշխանութիւնը, ինչպէս տեսանք, իրապէս Աննայի կամ Քանանի ձեռքին էր։ Ձերբակալման հրամանն էլ, երևի, նա էր արձակել։ Յիսուսին նախ բերին այս ազդեցիկ անձնաւորութեան մօտ։ Աննան սկսեց հարց ու փորձ անել նրա վարդապետութեան և աշակերտների մասին։ Յիսուս արդարացի հպարտութեամբ հրաժարուեց տալ երկար-բարակ բացատրութիւններ։ Նա հիմնուելով այն բանի վրայ, որ իր քարոզութիւնները միշտ եղել են հրապարակով, յայտարարեց, որ իր վարդապետութիւնը երբէք չի եղել ծածուկ և առաջարկեց նախկին քահանայապետին հարց ու փորձ անել այն անձերին, որոնք իրան ունկնդրել են։ Սա մի շատ բնական պատասխան էր, բայց քահանայապետին այնքան պատիւ ու յարգանք էին շռայլում, որ այս պատասխանը նրան շրջապատողներին յանդուգն թուեցաւ, և ասում են, որ մէկը՝ Յիսուսին ապտակեց այդ պատասխանի համար։

Պետրոսն ու Յովհաննէսը Յիսուսին հետևեցին մինչև Աննայի բնակարանը։ Յովհաննէս, որ այդ տան մէջ ծանօթներ ունէր, հեշտութեամբ ներս ընդունուեց, բայց Պետրոսին արգելեցին մուտքի մօտ և դռնապանուհին ներս առաւ նրան միայն Յովհաննէսի խնդիրքով։ Ցուրտ գիշեր էր. Պետրոսը մնաց նախասենեակում ու մօտեցաւ խարոյկին, որի շուրջը տաքանում էին ծառաները։ Շուտով հասկացան, որ նա Յիսուսի աշակերտներից է։ Գալիլիական շեշտը մատնեց խեղճին. ամեն կողմից հարցեր տեղացին ծառաները, որոնցից մէկը Մաղքոսի ազգականն էր և տեսել էր նրան Գեթսեմանի պարտէզում։ Պետրոսը երեք անգամ ուրացաւ Յի-

սուսին, պնդելով՝ որ երբէք նրա հետ գործ չէ ունեցել։ Նա ենթադրում էր, որ Յիսուս իրան չի լսի, և չէր կարողանում ըմբռնել, թէ որքան մեծ դաւաճանութիւն էր իր այդ փոքրոգի ստախօսութիւնը։ Բայց լինելով ի բնէ ազնիւ, շուտով հասկացաւ իր սխալը։ Մի պատահական դիպուած, — աքաղաղի կանչը, նրան յիշեցրեց Յիսուսի խօսքերը։ Խորապէս զգածուելով դուրս եկաւ ու դառնապէս լաց եղաւ։

Թէպէտև այդ սպանման դատավճռի իսկական պատճառն ու յանցաւորը Աննան էր, բայց նա ինքը, անձամբ այդպիսի դատավճիռ կայացնելու իրաւունք չունէր. նա Յիսուսին ուղարկեց Կայիափայի մօտ, որը պաշտօնական քահանայապետն էր։ Լինելով իր աներոջ ձեռքին մի կոյր գործիք, նա, ի հարկէ, վճիռը հաստատեց։ Նրա մօտ ժողովուած էր սինեդրիոնը։ Սկսուեց գործի քննութիւնը։ Դուրս եկան մի քանի վկաներ, նախօրօք պայմանաւորուած։ Վկաներից երկուսը հաստատեցին Յիսուսի իրապէս արտասանած այս ճակատագրական խօսքերը. «Ես կը քանդեմ Աստուծոյ տաճարը ու երեք օրում նորից կը շինեմ»։ Մովսիսական օրէնքով հայհոյել տաճարին՝ նշանակում էր հայհոյել Աստուծուն։ Յիսուս լուռ էր և ոչինչ չը կամեցաւ առարկել այդ մեղադրութեան դէմ։ Եթէ հաւատանք աւանդութեան, իբր քահանայապետը նրան երդումով խոստովանեցրել է, թէ ինքն է արդեօք Մեսիան, Աստուծոյ որդին։ Որպէս թէ Յիսուս խոստովանել է և մինչև անգամ ժողովի առաջ յայտարարել երկնային թագաւորութեան մօտալուտ գալուստը։ Բայց մահուան նախապատրաստուած Յիսուսի հոգեկան ոյժը այնքան մեծ էր, որ դժուար թէ նա նուաստացնէր իրան այդպիսի յայտարարութիւններով։ Աւելի հաւանական է, որ այստեղ էլ, ինչպէս և Աննայի մօտ, նա լռութիւն պահպանեց։ Նա սովորաբար այդպէս էր կեանքի վերջին րոպէներում։ Դատավճիռը կայացել էր. սպասում էին մի առիթի։ Յիսուսին յայտնի էր այդ բանը, ուստի չէր աշխատում պաշտպանել իրան։ Ուղղափառ մովսիսականութեան տեսակէտով նա իսկապէս Աստծուն հայհոյող և գոյութիւն ունեցող պաշտամունքը քանդող էր, իսկ այդպիսի յանցանքների համար, Օրէնքի համաձայն, մահուան պատիժ էին. տա-

Լիս։ Ժողովը միաձայն արձակեց մահուան դատավճիռը։

Ժողովի անդամներից ոմանք, որ ներքնապէս Յիսուսի կողմն էին, բացակայել էին և կամ ձեռնպահ մնացել։ Բոլոր վաղեմի ազնուականութիւններին յատուկ կամայականութեան պատճառով դատաւորները երկար չմտածեցին իրենց վճռի հետևանքների վրայ։ Այդ ժամանակ մարդկային կեանքը զոհաբերւում էր շատ հեշտ։ Անկասկած սինեդրիոնի անդամների մտքովն անգամ չէր անցնում, որ ապագայ սերունդը, զայրացած՝ նախահայրերի այդպիսի թեթևամիտ անփութութեամբ կայացրած դատավճռի համար հաշիւ պիտի պահանջէր նրանց որդիներից։

Սինեդրիոնը իրաւունք չունէր կատար ածելու մահուան դատավճիռը։ Բայց շնորհիւ այն անկարգութեան, որ այդ ժամանակ թագաւորում էր Հրէաստանի վարչութեան մէջ, Յիսուս կարող էր համարուել արդէն դատապարտուած։ Գիշերուայ մի մասը Նա անցկացրեց ռամիկ ամբոխի շրջանում, որ անխնայ ծաղրում էր Նրան։

Հետևեալ առաւօտը ժողովուեցին քահանայապետներն ու ծերերը։ Անհրաժեշտ էր, որ Պիղատոսը հաստատէր սինեդրիոնի դատավճիռը։ Հռովմայեցիների գրաւումից յետոյ պրօկուրատորը ստորադասւում էր կայսերական փոխանորդին և չունէր իշխանութիւն քաղաքացիների մահուան ու կեանքի վրայ։ Բայց Յիսուս հռովմէական քաղաքացի չէր. բաւական էր միայն նահանգապետի հաստատութիւնը, որ կայացած դատավճիռը օրէնքի ոյժ ստանար։ Հռովմայեցիները ստիպուեցան Մովսիսական օրէնքին որոշ պաշտպանութիւն ցոյց տալ. միշտ այդպէս է լինում, երբ որևէ քաղաքական իշխանութիւն նուաճում է մի որևէ ազգ, որի քաղաքական ու կրօնական օրէնքները խառն են ու շաղկապուած։ Հռովմէական օրէնքները չէին գործադրւում հրէաների վերաբերմամբ, այլ նրանք ենթարկւում էին այն կանոնական (եկեղեցական) օրէնքներին, որ արձանագրուած են Թալմուտի մէջ, ճիշտ այնպէս, ինչպէս Ալժիրի արաբները մինչև հիմա էլ կառավարւում են Իսլամի օրէնքներով։ Հռովմայեցիները կրօնական հարցերում չեզոքութիւն պահպանելով հանդերձ, շատ յաճախ հաստատում էին, կրօնական յանցանքների վերաբերմամբ

տրուած դատավճիռները։ Նոյն դրութեան մէջ էին և Հնդկաստանի սրբազան քաղաքները անգլիական տիրապետութեան ժամանակ։ Յովսէփ պատմագիրը պնդում է (թէպէտև կասկածելի է), որ եթէ մի հռովմայեցի մտնում էր տաճարի այն սրահները, ուր մակագրութեամբ արգելուած էր հեթանոսների, կռապաշտների մուտքը, կառավարութիւնը յանձնում էր նրան հրէաների ձեռքը, որպէսզի մահուան դատապարտեն։

Քահանաների ծառաները կապեցին Յիսուսին ու տարան Պրետորիա, Հերովդէսի նախկին պալատը, որ կպած էր Անտոնիոսի աշտարակին։ Այդ այն առաւօտն էր, երբ պիտի ուտէին զատկական գառը (ուրբաթ Նիսանի 14—ապրիլի 3)։ Հրէաները Պրետորիա մտնելով՝ կը պղծուէին ու այլևս չէին կարող ճաշակել սրբազան ընթրիքը. ուստի մնացին դուրսը։ Պիղատոս, որին յայտնել էին հրէաների գալուստը, դուրս եկաւ պատշգամբը կամ բեմը, որ գտնւում էր բաց երկնքի տակ, Գաբբաթոյ կոչուած տեղում։ Երբ իմացաւ դատավճիռը, յայտնեց իր դժգոհութիւնը, որ իրեն խառնել են այդ գործում։ Յետոյ Յիսուսի հետ առանձնացաւ Պրետորիայում։ Այդտեղ նրանց մէջ տեղի ունեցաւ մի խօսակցութիւն, որի մանրամասնութիւնները մեզ չեն հասել, որովհետև կատարուել է առանց վկայի և ուրեմն, ոչ ոք չէր կարող հաղորդել մեզ։ Բայց այդ խօսակցութեան ընդհանուր բնոյթը, կարծես, յաջողութեամբ գուշակել է չորրորդ աւետարանիչը։ Գոնէ նրա խօսքերը մեծ մասամբ համաձայնում են պատմութեան մեզ տուած տեղեկութիւնների հետ։ Պրոկուրատոր Պոնտին, որ կոչւում էր Պիլատ (Պիղատոս), որովհետև ինքը, կամ իր նախահայրերը վարձատրուել էին pilum-ով*), մինչև այդ ժամանակ որևէ յարաբերութիւն չէր ունեցել նորածին հերձուածի հետ։ Լինելով անտարբեր դէպի հրէից ներքին երկպառակութիւնները, նա հերձուածողների շարժումները համարում էր արդիւնք սանձարձակ երևակայութեան ու անզուսպ մոլորութիւնների։ Առհասարակ նա ատում էր հրէաներին։ Բայց վերջիններս աւելի էին ատում Նրան. համարում էին անգութ, գոռոզ, դիւրագրգիռ ու մեղադրում՝ անհաւանական ոճիրների մէջ։

*) Մի տեսակ զէնք։ Ծ. Թ.

Իբրև ժողովրդական մեծ խմորումների կենտրոն, Երուսաղէմը խռովայոյզ էր։ Օտարականների համար այնտեղ կեանքն անտանելի էր։ Մոլեռանդները կարծում էին, որ նոր պրօկուրատորը հաստատապէս վճռել է ոչնչացնել Հրէից Օրէնքը։ Նրանց նեղ կրօնամոլութիւնն ու անհամբերող ոգին գրգռում էր նոյնիսկ ամենասովորական հռովմայեցոց յատուկ արդարասիրութեան ու քաղաքացիական բարեկեցութեան զգացումները։ Պիղատոսի՝ մեզ յայտնի՝ կարգադրութիւնները ցոյց են տալիս, որ նա եղել է ընդունակ կառավարիչ։ Սկզբում, իր պարտաւորութիւնները կատարելու ժամանակ նրա և իր իշխանութեան տակ գտնուող ազգաբնակութեան միջև տեղի էին ունենում թիւրիմացութիւններ։ Նա այդ թիւրիմացութիւնները վճռում էր սաստիկ կոպտութեամբ, բայց արդար կերպով։ Հրէաներին, երևի, յետամնաց էր համարում և նրանց մասին խորհում էր այնպէս, ինչպէս մեր ժամանակի ազատամիտ պրեֆեկտը՝ Սարրին Բրըտանէի բնակիչների մասին, երբ նրանք ապստամբութիւն էին ծագեցնում մի նոր ճանապարհի շինութեան, կամ մի նոր դպրոցի բացման առիթով։ Երկրի բարօրութեան համար նրա կազմած լաւագոյն ծրագիրները՝ հասարակաց աշխատանքներին վերաբերեալ, միշտ բաղխւում էին Մովսիսական Օրէնքին, իբրև մի անխախտ պատնէշի։ Օրէնքի շնորհիւ կեանքը դրուել էր այնպիսի շրջանակներում, որոնք անկարելի էին դարձրել որևէ փոփոխութիւն կամ յառաջադիմութիւն։ Հռովմէական նոյնիսկ ամենաօգտակար հաստատութիւնները հրէաներին ներշնչում էին ատելութիւն։ Աւելի մեծ յուզում առաջ բերեց այն հանգամանքը, որ Պիղատոս հրամայեց իր պաշտօնատեղի առաջ, որը գտնւում էր տաճարին կից, կախել երկու նշանագրոշմ վահաններ։ Սկզբում պրօկուրատորը ուշադրութիւն չը դարձրեց հրէաների այդ բծախնդրութեան վրայ, բայց յետոյ սկսեց գործ դնել արիւնոտ ճնշումներ, որի պատճառով պաշտօնանկ արուեց։ Շնորհիւ այն փորձառութեան, որ ձեռք բերեց բազմաթիւ ընդհարումներից յետոյ, նա սկսեց աւելի զգոյշ վերաբերուել դէպի այս անընկճելի ժողովուրդը, որը իշխանաւորներից վրէժ էր հանում հարկադրելով նրանց դիմել

ամենածայրայեղ միջոցների։ Պիղատոս խիստ տհաճութեամբ եկաւ այն համոզման, որ այս նոր գործում էլ ստիպուած է ստանձնել մի անսիրտ դեր ի նպաստ իր համար ատելի Օրէնքի։ Նա գիտէր նոյնպէս, որ կրօնամոլները աշխարհական իշխանութիւնից պահանջելով գործադրել որևէ միջոց, ապագայում բոլոր պատասխանատուութիւնը պիտի ձգէին այդ նոյն իշխանութեան վրայ, և մինչև անգամ պիտի մեղադրէին նրան։ Իսկ դա ծայրայեղ անարդարութիւն էր, որովհետև այդպիսի դէպքերում մեղաւորը դրդողն է։

Հետևաբար Պիղատոս աշխատում էր փրկել Յիսուսին։ Գուցէ նրա վրայ ազդել էր մեղադրեալի անդորրութիւնը։ Ըստ աւանդութեան, Յիսուսի պաշտպան էր հանդիսացել Պիղատոսի կինը, որը իբր թէ նրա մասին մի սքանչելի երազ էր տեսել, ինչ որ շատ էլ հաւանական չէ։ Գուցէ նա տեսել էր նրբակազմ գալիլիացուն պալատի այն պատուհանից, որ նայում էր դէպի տաճարի գաւիթը։ Իսկ յետոյ տեսել է երազում այդ նոյն երիտասարդին՝ մահուան ճիրաններում։ Ակներև է միայն այն, որ Պիղատոս պաշտպանում էր Յիսուսին։ Նա բարեհաճ հարցեր էր տալիս, որպէսզի կարողանար գտնել մի որևէ միջոց նրան փրկելու։

Յիսուս երբէք իրան չէ անուանել «Հրէից Թագաւոր», բայց նրա թշնամիները դիտմամբ այդ ամբաստանութիւնն արին, որպէսզի աւելի հեշտութեամբ կարողանան հասնել իրենց նպատակին։ Այդ պատճառով էլ Յիսուսին յայտարարեցին խառնակիչ և ապստամբ։ Դրանից աւելի անարդար մեղադրանք չէր կարող լինել, որովհետև Յիսուս միշտ հռովմէական կայսրութիւնը ճանաչում էր իբրև օրինաւոր իշխանութիւն։ Բայց կրօնամոլ ու յետադէմ կուսակցութիւնը զրպարտութիւնների առաջ կանգ չէր առնում։ Յիսուսի վարդապետութիւնը տարբեր եղանակով էին բացատրում. նրան համարում էին Յուդայ Գոլոնացու աշակերտ և պնդում, թէ Յիսուս արգելում էր կայսեր հարկ վճարել։ Պիղատոսը հարց տուեց, թէ արդեօք նա համարում է իրան «Հրէից Թագաւոր»։ Յիսուս իր մտքերը չծածկեց։ Այստեղ արդէն կորստեան պատճառ դարձաւ հէնց իր այլաբանական ոճը, որի մէջ էր իր ույժը և որի շնորհիւ պիտի ամրապըն-

դուէր Յիսուսի թագաւորութիւնը, իր մահից յետոյ: Յիսուս իբրև իդէալիստ, որը չէ բաժանում նիւթը հոգուց և զինուած իր խօսքով՝ երկաթի սրով՝ ըստ Յայտնութեան չէր կարող բոլորովին հանգիստ թողնել երկրաւոր իշխանաւորին: Եթէ հաւատանք չորրորդ աւետարանչին, Յիսուս խոստովանեց՝ իր թագաւոր լինելը, բայց և միևնոյն ժամանակ աւելացրեց. «Իմ թագաւորութիւնը այս աշխարհում չէ»: Յետոյ բացատրեց, թէ ինչ էր հասկանում թագաւորութիւն բառով, թէ իր թագաւորութիւնը ճշմարտութիւնն է, և թէ ինքը եկել է աշխարհում ճշմարտութիւնը հռչակելու: Պիղատոս այս բարձրագոյն իդէալիզմից բան չէր հասկանում և Յիսուս նրան թւում էր մի անվտանգ երազող: Այդ ժամանակ հռովմայեցիները չունէին հաւատորսական (прозелитическій) կրօնագիտութիւն ու փիլիսոփայութիւն, և ճշմարտութեան նուիրուելը համարում էին ցնորք:

Այդ վիճաբանութիւնները նրանց թւում էին տաղտկալի ու անմիտ, չէին նկատում, թէ որքան վտանգաւոր են այդ նոր գաղափարների ծիլերը կայսրութեան համար և աւելորդ էին համարում այդպիսի դէպքերում դիմել բռնութեան: Նրանք աւելի անբաւական էին այն մարդկանցից, որոնք այդպիսի դատարկ բաների համար ստիպում էին մարդ սպանել: Քսան տարի անց՝ Գալլիոնը հրէաների վերաբերմամբ հետևում էր այդ նոյն քաղաքականութեանը: Մինչև Երուսաղէմի կործանումը, Հրէաստանի վարչական ըսկըզբունքն էր, ամենևին չը խառնուել հրէից աղանդաւորների միմեանց դէմ մղած վէճերի մէջ:

Որպէսզի Պիղատոսը հաշտեցնէ իր սեպհական զգացմունքը այդ մոլեռանդ ժողովրդի պահանջների հետ, ժողովուրդ՝ որի ճնշումը նա շարունակ զգում էր, դիմեց հետևեալ միջոցին: Սովորաբար ի պատիւ Պասէքի տօնի, ներումն էր շնորհւում բանտարկեալներից մէկին, որին ժողովուրդը՝ ինքն առաջարկում էր: Ի նկատի ունենալով, որ Յիսուս դատապարտուել է միայն քահանաների դաւերի շնորհիւ, Պիղատոսը փորձեց այդ սովորութիւնը գործադրել յօգուտ Յիսուսի: Նա նորից բարձրացաւ ամբիոն ու առաջարկեց ժողովրդին, որ նա արձակէ «Հրէից թագաւորին»: Առաջար-

կութեան այդ ձևը կրում էր հեգնանքի նշոյլ և միևնոյն ժամանակ ապացուցանում էր, որ պրօկուրատորը լայն հայեացքների տէր մարդ է: Քահանաներին այդ բանը կասկածներ ներշնչեց: Նրանք դիմեցին վճռական միջոցի. որպէսզի չանցնի Պիղատոսի առաջարկութիւնը, ամբոխին թելադրեցին մի այլ բանտարկեալի անուն, որը Երուսաղէմում մեծ ժողովրդականութիւն էր վայելում: Տարօրինակ զուգադիպութեամբ նրան էլ Յիսուս էին կոչում, միայն մականունը Բար-Րաբբա կամ Բարաբբա էր: Դա մի մարդ էր՝ ամենքին յայտնի և բանտարկուել էր մի արիւնահեղ ապստամբութեան ժամանակ, իբրև մարդասպան: Իսկոյն միահամուռ աղաղակ բարձրացաւ. «Ազատիր ոչ թէ այդ Յիսուսին, այլ Յիսուս Բարաբբային»:

Դրութիւնը հետզհետէ դժուարանում էր: Պիղատոս երկիւղ էր կրում վտանգուելուց, ցոյց տալով մեծ պաշտպանութիւն դէպի այն բանտարկեալը, որ կոչւում էր «Հրէից թագաւոր»: Մանաւանդ որ մոլեռանդութիւնը ստիպում է միշտ իշխանաւորներին իր խօսքը զանց չանել: Պիղատոս անհրաժեշտ համարեց զիջանել ժողովրդի պահանջներին, բայց դեռ աշխատում էր անմեղ արիւն չթափել, իրան ատելի այդ ժողովրդին գոհացնելու համար. նա փորձում էր կատակի ձև տալ իրողութեանը:

Կարծես ծաղրելու համար Յիսուսին տուած փքուն տիտղոսը. Պիղատոս հրամայեց ծեծել նրան: Սովորաբար, խաչելուց առաջ, ծեծում էին: Կամ գուցէ Պիղատոս կամենում էր ցոյց տալ, որ դատավճիռը իրագործում է, յուսալով, որ ամբոխը կարող է բաւականանալ միմիայն նախնական պատիժներով: Այդ ժամանակ, բոլոր պատմուածների համաձայն, տեղի ունեցաւ մի քստմնելի տեսարան: Զինուորները Յիսուսին հագցրին ծիրանի, գլխին դրին փշեայ պսակ և ձեռքը տուին մի գաւազան: Այդ դրութեամբ դուրս բերին նրան ամբիոն, ժողովրդի առջև. զինուորները առանձին առանձին մօտենում էին, հարուածում, իսկ յետոյ ծունկ չոքելով՝ աղաղակում էին. «Ուրախացիր, Հրէից թագաւոր»: Ոմանք էլ թքում էին ու փայտով հարուածում նրա գլխին: Անհասկանալի է, թէ ինչպէս պատուասէր հռովմայեցին թոյլ

էր տալիս նրան այդպիսի ամօթաբեր վարմունք։ Նրաև պրոկուրատորը իր ձեռքի տակ ունէր բացառապէս վարձկան զօրք։ Հռոմէական քաղաքացին, լեգէոնները այդչափ չէր կարող տարանալ։

Թուցէ Պիղատոս այդ եղանակով կամենում էր պատասխանատուութիւնից ազատուել, յուսալով միաժամանակ Յիսուսին փրկել սպառնացող վտանգից և գոհացնել ատելի ամբոխը, ողբերգութիւնը փոխելով կատակերգութեան։ Կարծես կամենում էր ցոյց տալ, որ այդ գործը արժանի չէ ուրիշ ելքի։ Եթէ այդ էր նրա ձգտումը, նպատակին չհասաւ։ Յուզմունքը սաստկացաւ ու փոխուեց կատաղեալ ապստամբութեան։ Ամեն կողմից աղաղակում էին. «Խաչիր դրան, խաչիր դրան»։ Քահանաները ընդունելով հետզհետէ սպառնական շեշտ, յայտարարեցին, որ եթէ այդ Աստուած հայհոյողին չըսպանեն, Օրէնքը մեծ փորձանքի կը հանդիպի։ Պիղատոս տեսաւ, որ Յիսուսին փրկելու համար անհրաժեշտ է դիմել արինահեղ միջոցների։ Բայց նա ժամանակ վաստակելու դիտաւորութեամբ մի փորձ էլ արեց։ Մտաւ Պրետորիա, իմացաւ թէ որտեղացի է Յիսուս. Նրա գլխաւոր նպատակն էր ազատուել պատասխանատուութիւնից։ Մի աւանդութեան համաձայն, նա մինչև անգամ Յիսուսին ուղարկեց Անտիպասի մօտ, որը այդ ժամանակ գտնւում էր Երուսաղէմում։ Յիսուս ամենևին ուշադրութիւն չէր դարձնում իր օգտին կատարուած այս փորձերի վրայ։ Ինչպէս Կայափայի մօտ, նմանապէս և այստեղ, նա խոր լռութիւն էր պահպանում, ինչ որ շատ զարմացնում էր Պիղատոսին։ Փողոցում հետզհետէ շփոթը դառնում էր սպառնական։ Պիղատոսին սկսեցին մեղադրել, որ անփոյթ է դէպի կայսեր թշնամու արարքները։ Հռոմէական տիրապետութեան ամենակատաղի թշնամիները՝ դարձան Տիբերիոսի անձնուէր հպատակներ, միայն թէ կարողանային խիստ նեղադիր պրոկուրատորին մեղադրել, որ նա անպատւում է կայսերական մեծութիւնը։ «Այստեղ ուրիշ թագաւոր չկայ, բացի կայսրից. ով իրան թագաւոր է անւանում նա, կայսեր թշնամին է»։ Թուլամորթ Պիղատոսը չկարողացաւ դիմադրել մինչև վերջը։ Նա արդէն երևակայում էր, որ միմեանց ետևից գանգատներ են գնում

Հռոմ և մեղադրում՝ որ ինքը պաշտպան է Տիբերիոսի թշնամիների։ Հրէաներն արդէն գանգատուել էին, և երկու դրօշմանիշ վահանների դէպքի մասին բաւարարութիւն էին ստացել։ Պիղատոս երկիւղ էր կրում պաշտօնանկ լինելուց։ Նա վերջապէս զիջեց հրէաների պահանջներին, այդ գործի ամբողջ պատասխանատուութիւնը ձգելով նրանց վրայ, իսկ իր վրայ առնելով ապագայ սերունդի անէծքը։ Քրիստոնեայ պատմագիրների ասելով, հրէաները Պիղատոսի խօսքերին հաւանութիւն տուին հետևեալ բացագանչութեամբ. «Թող դրա արիւնը ընկնի մեր և մեր սերունդի վզին»։

Իսկապէս արտասանուե՞լ են այդ խօսքերը։ Մեզ կարող է այդ կասկածելի երևալ։ Բայց այդ նախադասութիւնը պարունակում է իր մէջ պատմական ճշմարտութիւն։ Եթէ դատենք հռոմայեցիների Հրէաստանում բռնած դիրքով, Պիղատոսը այլ կերպ չէր կարող վարուել։ Քանի՜ քանի՜ այդպիսի դատավճիռներ է կորզել կրօնական այդ անհամբերող տարրը քաղաքական իշխանութիւնից։ Սպանիական թագաւորը, որ իր մոլեռանդ հոգևորականութեան պահանջով խարոյկի է մատնել իր հարիւրաւոր հպատակներին, աւելի դատապարտելի է, քան Պիղատոսը։ Այդ թագաւորը աւելի լայն իշխանութիւն ունէր, քան թէ հռոմէական իշխանութիւնը՝ 32 թուականին Երուսաղէմում։ Երբ քաղաքական իշխանութիւնը ենթարկուելով հոգևորականութեան ազդեցութեանը՝ խառնակութիւն է սերմանում իր երկրում, նա դրանով ապացուցանում է իր տկարութիւնը. Թող ուրեմն այդ կողմից որև է անմեղ կառավարութիւն՝ առաջինը՝ քարկոծէ Պիղատոսին։ Այն «աշխարհական իշխանութիւնը», որի ետև թագնուած են հոգևորականութեան խստութիւնները, մեղադրելի չէ։ Ով իր ծառաների միջոցով արիւն է թափում, իրաւունք չունի պնդելու թէ ինքը արիւնից խորշում է։

Ուրեմն Յիսուսին մահուան դատապարտեցին ո՛չ թէ Տիբերիոսը կամ Պիղատոսը, այլ մովսիսական հին կուսակցութիւնը, Մովսէսի Օրէնքը։ Մեր ներկայ հասկացողութեամբ որդիները պատասխանատու չեն հայրերի յանցանքների համար։ Ամեն մարդ պատասխանատու է մարդկութեան բարոյական դատաստանի առաջ միայն իր գործերի համար. Հե-

տեսակէս ամէն մի հրէայ, որ մինչև այսօր էլ պատժւում է Յիսուսի խաչման պատճառով, իրաւունք ունի բողոքելու. նա կարող էր մի Սիմէոն Կիւրենացի լինել, նա կարող էր չձայնակցել «խաչիր դրան» աղաղակին: Բայց պատասխանատուութեան ենթարկւում են ազգերն, ինչպէս մասնաւոր անհատները. և եթէ որևէ ազգ կատարել է մի ոճիր, այն ժամանակ Յիսուսի սպանումն էլ պէտք է ոճրագործութիւն համարուի: Այդ պատիժը «օրինական» էր նրա համար, որ բղխում էր մի օրէնքից, որը ազգի հոգին էր: Մովսէսի օրէնքը իր նախնական դրութեամբ. մահուան էր դատապարտում բոլոր նրանց, որոնք փորձում էին յեղաշրջել ընդունւած աստուածապաշտութիւնը: Եւ Յիսուս անկասկած կըռւում էր այդ կրօնի դէմ, ու սպառնում կործանել այն: Հըրէաները այդ բանը պարզապէս ու բարեխղճաբար խոստովանուեցին Պիղատոսին. «Մենք ունինք մի օրէնք, որով նա պիտի սպանուի, որովհետև իրան անուանում է Աստուծոյ որդի»: Այդ պղուկի Օրէնքը հնազարեան, խիստ օրէնք էր և այն հերոսը, որ պիտի փորձէր փոխել այդ օրէնքը, պիտի ընկնէր մահացու հարուածների տակ.

Աւաղ. հարկաւոր եղաւ ամբողջ ԺԸ դար, մինչև որ նրա թափած արիւնը արդիւնաւէտ դարձաւ: Դարեր շարունակ Յիսուսի անունով տանջել են ու մահուան դատապարտել նոյնպիսի ազնիւ մտածողների, ինչպիսին էր Յիսուս: Դեռ ևս այժմ էլ իրանց քրիստոնեայ անուանող երկիրները խիստ պատիժներ են նշանակում կրօնական համոզմունքների համար: Ի հարկէ դրա համար Յիսուս պատասխանատու չէ: Նա չէր կարող նախատեսել, որ այլանդակ երևակայութիւն ունեցող ցեղերը իրան կընդունեն իբրև մի սարսափելի Մոլոխ, որ կարօտում է մարդկային խորոված մսի: Քրիստոնէութիւնը եղել է անհամբերող, բայց առհասարակ անհամբերողութիւնը բացառապէս քրիստոնէութեան յատկանիշը չէ. դա աւելի շուտ Մովսիսականութեան յատկանիշն է, որովհետև Մովսիսականութիւնն էր, որ առաջինը կրօնի մէջ մտցրեց անպայման բացարձակութեան (միապետութեան) հասկացողութիւնը և այն սկզբունքը, թէ իւրաքանչիւր վերանորոգիչ, նոյնիսկ եթէ նա իր վարդապետութեան ճշմարտութիւ-

նը ապացուցանելու համար հրաշքներ գործէ, պիտի քարկոծուի առանց դատուելու: Կրօնական հարցերում բռնութիւնը յատուկ էր և՛ կռապաշտութեան: Բայց եթէ կռապաշտութիւնն էլ ունենար այդպիսի օրէնք, ինչպէս կարող էր քըրիստոնէութիւն ընդունել: Հետևապէս Հնգամատեանը կանոնական տեսքի առաջին օրինագիրքն է: Մովսիսականութիւնը տուաւ դաւանանքի, սկզբունքների անյողդողդութեան առաջին օրինակը ու կրօնը զինեց սրով: Բայց միթէ քրիստոնէութիւնը աւելի հետևողական չէր լինի, եթէ փոխանակ հրէաներին հալածելու իր կոյր ատելութեամբ, մոռացութեան տար ու չղեկավարուէր այն օրէնքով, որով Յիսուս մահուան դատապարտուեց: Այն ժամանակ նա արժանի կը լինէր մարդկութեան շնորհակալութեանը:

ԳԼՈՒԽ ԺԲ

Յիսուսի մահը

Թէպէտև Յիսուսի թշնամիները մահուան դատապարտեցին նրան բացառապէս կրօնական պատճառներից դրդուած, բայց Պրետորիայում գերադաս համարեցին մեղադրել նրան իբրև քաղաքական յանցագործ. այլապէս թերահաւատ Պիղատոսը չէր վաւերացնի կրօնի դէմ քարոզելու ամբաստանութեամբ նրանց կայացրած մահուան դատավճիռը։ Եւ հէնց այդ պատճառով էլ ստիպեցին ժողովրդին, որ նա պահանջէ խաչ հանել Յիսուսին։ Սպանութեան այդ ձևը հրէական չէր. եթէ Յիսուսին կամենային պատժել Մովսէսի օրէնքով, պիտի քարկոծէին նրան։ Խաչ հանելը պատժի հռովմէական եղանակն էր, որ գործադրւում էր միայն ստրուկների վերաբերմամբ և այդ էլ այն դէպքում, երբ սպանութիւնը պիտի կատարուէր ամենանախատական կերպով։ Այդպէս պատժւում էին աւազակները, կողոպտիչները և այն հասարակ անձինք, որոնց հռովմայեցիները չէին կամենում արժանացնել սրով մահուան։ Յիսուս սպանուեց ոչ իբրև հիմնադիր մի սխալ վարդապետութեան, այլ իբրև մի երևակայական «Հրէից թագաւոր»։ Դրա համար էլ դատավճիռը իրագործուեց հռովմայեցիների ձեռքով։ Այդ ժամանակ հռովմէական զինուորները, գոնէ քաղաքական բնաւորութիւն կրող սպանութիւնների ժամանակ, կատարում էին դահճի դեր։ Յիսուս յանձնուեց մի վարձկան զօրախմբի՝ հարիւրապետի ղեկավարութեամբ և պարտաւորուեց կրել այն բոլոր սարսափելի տանջանքները, որ մուտք էին գործել Հրէաստան այդ նոր աշխարհակալների անգութ սովորութիւնների հետևանքով։ Նրան հագցրին իր նախկին հագուստը։ Զօրախումբը արդէն ունէր էլի երկու մահուան դատապարտուած աւազակներ։ Երբեք դատապարտեալներին միացրին ու գնացքը ուղղուեց դէպի պատժավայրը։

Այդ տեղը կոչւում էր Գողգոթա և գտնւում էր Երուսաղէմից դուրս, բայց պարսպից ոչ հեռու։ «Գողգոթա» բառը համանիշ է «գանգ» բառին, և հաւանօրէն նշանակում էր բուսականութիւնից զուրկ, գանգի նման լերկ բլուր։ Երևի գտնւում էր քաղաքի հիւսիսային կամ հիւսիս-արևմտեան կողմերում, մի խորդ ու բորդ բարձրավանդակի վրայ, որ ընկած էր Կեդրոն և Հիննոմ հովիտների ու քաղաքային պարսպի մէջտեղ։ Այդ վայրը չափազանց անդուրեկան էր, մանաւանդ մեծ քաղաքի հարևանութեան շնորհիւ։ Ուստի անհիմն է այն կարծիքը, թէ Գողգոթան այն տեղն էր, որին քրիստոնեաները երկրպագում էին, սկսած Կոստանդիանոսից։ Այժմեան Գողգոթան գտնւում է քաղաքի կենտրոնին շատ մօտիկ և, հետևապէս, Յիսուսի ժամանակ քաղաքի պարսպից դուրս չէր կարող գտնուել։

Իւրաքանչիւր դատապարտեալ ինքը պիտի տանէր իր պատժի գործիքը։ Յիսուս լինելով աւելի թուլակազմ, քան միւս երկու դատապարտեալները, չկարողացաւ իր խաչը տեղ հասցնել։ Ճանապարհին հանդիպեց մի մարդ՝ Սիմէոն Կիւրենացի անունով, որ վերադառնում էր դաշտից։ Զօրախումբը, օտարազգի զօրքին յատուկ կոպտութեամբ, ստիպեց նրան կրել խաչը։ Գուցէ այդ դէպքում զինուորները օգտուեցին բանի աշխատեցնելու իրենց իրաւունքով, որովհետև հռովմայեցիների համար անվայել էր կրել նախատալից խաչը։ Սիմէոնը հաւանաբար յետոյ դարձաւ անդամ քրիստոնեայ համայնքի։ Նրա երկու որդիները, Աղէքսանդրն ու Ռուփը այդ համայնքում մեծ հռչակ էին վայելում։ Կարելի է որ հէնց այդ Սիմէոնը իբրև վկայ պատմել է Յիսուսի մահուան շատ մանրամասնութիւնները։ Այդ ժամանակ Յիսուսի մօտ իր աշակերտներից ոչ մէկը չկար։

Վերջապէս հասան պատժի տեղը։ Հրէական սովորութեան համաձայն դատապարտեալներին ըմպեցնում էին զանազան անուշահոտ համեմունքներով պատրաստուած գինի. դա արբեցնող խմիչք էր, որ կարեկցաբար տրւում էր դատապարտեալին, նրան թմրեցնելու նպատակով։ Երևի այդ գինին

բերում էին Երուսաղէմի կանայք, դժբաղդների համար պատժի վերջին ժամին. եթէ կանայք չէին գալիս, գինին գնւում էր հասարակաց հաշուով: Յիսուս՝ շրթունքները կըպցնելով բաժակին, հրաժարուեց խմել: Նրա վսեմ հոգին պահանջ չէր զգում հասարակ դատապարտեալների այդ ողորմելի սփոփանքին: Նա գերադասեց կեանքից բաժանուել պայծառ գիտակցութեամբ, սպասելով ու կանչելով ցանկալի մահը: Յիսուսի հագուստը հանեցին ու խաչի վրայ մեխեցին նրան: Խաչը կազմուած էր T տառի ձևով միմեանց մեխած երկու գերաններից:

Խաչը կարճ էր, այնպէս որ դատապարտեալի ոտքերը դիպչում էին գետնին: Նախ կանգնեցնում էին խաչը, յետոյ դատապարտեալին ամրացնում նրա վրայ, գամելով ձեռքերից: Իսկ ոտները երբեմն մեխում, երբեմն էլ չուանով էին կապում: Խաչի մէջտեղից մեխում էին մի ձող, որ անցնում էր ոտքերի միջով, որոնց համար ծառայում էր իբրև յենարան: Առանց այդ յենարանի՝ ծանրութիւնից ձեռքերը կը պատառոտուէին ու մարմինը կընկնէր գետին: Երբեմն էլ նոյն նպատակով ոտքերի տակ գամւում էր մի հորիզոնական տախտակ:

Յիսուս սարսափելի տանջանքներն զգաց մինչև վերջը: Նրա երկու կողմում խաչեցին երկու աւազակների: Հագուստները սովորաբար վերցնում էին զինուորները և վիճակ գցելով բաժանում միմեանց մէջ. իսկ յետոյ խաչի ստորոտին նստած՝ հսկում էին: Աւանդութեան համաձայն, Յիսուս արտասանեց հետևեալ խօսքերը. «Հայր, ներիր սրանց, որովհետև չգիտեն, թէ ինչ են անում»: Այդ խօսքերը, եթէ նրա բերանում չեն եղել, սրտում անպատճառ եղել են: Հռովմայեցիների սովորութեան համաձայն, Յիսուսի գլխի վերև գամեցին մի տախտակ, որի վրայ երեք լեզուներով՝ հրէերէն, յունարէն ու լատիներէն, մակագրուած էր. «Հրէից Թագաւոր»: Այս մակագրութիւնը պարունակում էր դէպի հրէայ ազգը արհամարհանք ու հեգնութիւն: Բազմաթիւ անցորդները կարդալով այդ մակագրութիւնը անպատուած էին զգում իրենց: Քահանաները Պիղատոսին նկատեցին, որ այդ մակագրութիւնը պէտք է փոխել և այնպէս դարձնել, որ

հասկացուի, թէ ինքն էր իրեն հրէից թագաւոր անուանում: Բայց Պիղատոսը, որ արդէն ձանձրացել էր այդ գործից, հրաժարուեց որևէ փոփոխութիւն մտցնել:

Յիսուսի աշակերտները փախուստ տուին: Մի աւանդութիւն ասում է, որ Յովհաննէսը երկար ժամանակ մնաց խաչի մօտ կանգնած: Բայց, հաւանականաբար, Յիսուսի գալիլիացի հաւատարիմ ընկերուհիները, որոնք նրա հետ եկել էին Երուսաղէմ ու շարունակ ծառայում էին նրան, չըթողին Յիսուսին: Մարիամ Կղէոպան, Մարիամ Մագթաղինացին, Յովհաննա Կուզացին, Սալոմէն և մի քանի ուրիշներ նրանից աչք չէին հեռացնում: Եթէ հաւատանք չորրորդ աւետարանչին, Յիսուսի մայր Մարիամը նոյնպէս գտնւում էր խաչի մօտ և Յիսուս միասին տեսնելով իր սիրելի մօրն ու սիրելի աշակերտին, ասաց. «Ահա քո որդին»: Անհասկանալի է մնում, թէ ինչպէս համատես աւետարանիչները՝ թուելով միւս կանանց, Մարիամի անունը չյիշատակեցին, մանաւանդ եթէ նրա ներկայութիւնը այնպիսի մեծ դեր խաղաց: Դժուար թէ Յիսուսի ուժեղ հոգին ընդունակ լինէր գրաւուելու անձնական զգացմունքներով այն ժամին, երբ բոլորովին տարուել էր իր գործով ու ապրում էր միմիայն մարդկութեան համար:

Բացի կանանց այս փոքրիկ խմբակից, որոնք հեռուից իրենց հայեացքներով մխիթարում էին Յիսուսին, նրա աչքի առաջ պատկերանում էին միայն մարդկային ստորութիւնն ու բթամտութիւնը: Անցորդները նրան վիրաւորում էին: Չորս կողմից նրա վրայ անմիտ ծաղր էին տեղում և նրա յուսահատ աղաղակներից զգուելի բառախաղեր կազմում: «Սա՝ նա է, որ իրեն Աստուծոյ որդի է անուանում. եթէ սա Հօրը հարկաւոր է, թող փրկէ սրան». «Ուրիշներին փրկում էր, իսկ ինքն իրեն անկարող է փրկել», ասում էին միւսները. «Եթէ Իսրայէլի թագաւորն է, թող իջնի խաչից և մենք նրան կը հաւատանք»: Ոմանք էլ ասում էին. «Տաճարը քանդող ու երեք օրում շինող, փրկիր քեզ, տեսնենք»: Մի քանիսն էլ, որ տարտամօրէն ծանօթ էին նրա յայտնութեան հաւատալիքների հետ, կարծելով, որ նա Եղիային օգնութեան է կանչում, ասում էին. «Տեսնենք կը գայ

Եղիան նրան փրկելու»: Նրան հայհոյում ու ծաղրում էին մինչև անգամ երկու կողքին խաչուած աւազակները: Երկինքը թխպոտ էր, երկիրը, ինչպէս Երուսաղէմի ամբողջ շրջակայքում, չոր էր ու մռայլ: Ոմանց ասելով՝ մի վայրկեան Յիսուս թուլացաւ. իր Հօր պատկերը կորաւ Նրա տեսողութեան առաջից. նա վհատութիւն զգաց, ինչ որ հազար անգամ աւելի սարսափելի է, քան ֆիզիքական տանջանքները: Նա տեսաւ մարդկանց ապերախտութիւնը. զուցէ զղջաց, որ տանջանքներ է կրել այդ չնչին ու խղճալի ցեղի համար, և աղաղակեց. «Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ինչու թողիր ինձ»: Բայց աստուածային կամքը նորից յաղթող հանդիսացաւ: Եւ, հետզհետէ, որքան մարմինը մեռնում էր, հոգին զօրանում ու պայծառանում էր ու վերադառնում իր երկնային աղբիւրը:

Նա նորից զգաց իր առաքելութեան բարձր նշանակութիւնը, ու իր մահուան մէջ տեսաւ աշխարհի փրկութիւնը: Նրա շուրջը փռուող զզուելի տեսարանը այլևս նրան չէր զբաղեցնում. իր Հօր հետ խորապէս միաւորուելով՝ խաչի վրայ սկսեց ապրել այն աստուածային կեանքը, որը նա յաւիտեան դրաւեց մարդկանց սրտերում, սկսած այդ րոպէից:

Խաչելութեան անգթութիւնը կայանում էր նրանում, որ դատապարտեալները հոգևարքի մէջ ապրում էին երեք կամ չորս օր: Ձեռքերի վէրքերից արիւնհոսութիւնը իսկոյն դադարում էր և մահ չէր պատճառում: Մահուան պատճառ էր դառնում միայն մարմնի անբնական դիրքը. խանգարւում էր արեան կանոնաւոր շրջանառութիւնը և սարսափելի ցաւեր առաջացնում գլխում եւ սրտում, իսկ յետոյ անդամները փետանում էին: Պնդակազմ խաչուածները կարողանում էին նոյնիսկ քնել, և մեռնում էին միայն քաղցից: Սկզբներում այդ անգութ պատժի նպատակն է եղել ոչ թէ սպանել իսկոյն դատապարտուած ստրուկին, այլ խեղել նրա մի որևէ անդամը, ենթարկել նրան ընդ երկար անպատուութեան, միայն գամելով ձեռքերը, որոնց չկարողացաւ լաւ գործադրութիւն տալ, ու թողնել այդպէս, որ նա փտի փայտի վրայ: Յիսուսի նրբակազմութիւնը փրկեց նրան այդ

դանդաղ տանջանքներից: Նա տանջւում էր սաստիկ ծարաւից, որ խաչուածի տանջանքներից մէկն էր և պատահում էր այն դէպքում, երբ տեղի էր ունենում յորդ արիւնհոսութիւն: Նա ջուր խնդրեց: Այնտեղ կար միայն մի սրուակ, լի հռովմայեցի զինուորների սովորական խմիչքով, որ կոչւում էր «rosca»: Զինուորները պարտաւոր էին ամեն տեղ իրենց հետ տանել այդ խմիչքը, ինչպէս և խաչելու արարողութեան ժամանակ: Զինուորներից մինը սպունգը թրջեց այդ խմիչքի մէջ, կապեց ձողի ծայրին ու մօտեցրեց Յիսուսի շրթունքներին. Յիսուս ծծեց: Արևելքում կարծում էին, որ երբ խմեցնում էին խաչուածին կամ ցցի վրայ բարձրացրածին, իսկոյն վրայ էր հասնում մահը: Շատերը կարծում էին, որ Յիսուս վախճանուել է քացախը խմելուց անմիջապէս յետոյ: Շատ աւելի հաւանական է, որ Նրա մահը տեղի է ունեցել երեք ժամից յետոյ, և առաջացել է սրտի կաթուածից և կամ սրտի շրջանի անօթներից մէկի յանկարծական պայթումից: Մահից մի քանի րոպէ առաջ Նրա ձայնը զօրեղ էր հնչում: Յանկարծ սարսափելի աղաղակ արձակեց, ուր ոմանք կարծեցին լսել հետևեալը. «Հա՛յր, քեզ եմ յանձնում իմ հոգին»: Միւսները, որոնք իրենց ուշքը կենտրոնացրել էին մարգարէութիւնների կատարման վրայ, լսեցին միայն մի խօսք. «Կատարուած է»: Գլուխը ընկաւ կրծքին և հոգին աւանդեց:

Հանգստացի՛ր այսուհետև քո փառքում, ազնիւ ուսուցիչ: Քո գործը վերջացած է. քո աստուածային լինելը ապացուցուած: Մի՛ վախենար, որ քո ջանքերով ստեղծուածը կարողանայ կորչել որևէ սխալմունքից: Այսուհետև, աշխարհային սնոտի յարձակումների համար անմատչելի, դու քո աստուածային հանգստի բարձրութիւնից կը դիտես քո գործերի անվախճան հետևանքները: Մի քանի ժամուայ տանջանքի գնով, որը նոյնիսկ քո վեհ հոգու վրայ չազդեց, դու անմահութիւն ձեռք բերիր: Հազարաւոր տարիներ աշխարհս կոգևորուի քեզանով: Մեր հակասութիւնները ըմբերանող, դու կը լինիս այն դրօշը, որի շուրջը պիտի տեղի ունենան ամենաարիւնահեղ կռիւները: Քո անունը, որ հազար անգամ աւելի սիրելի ու հզօր դարձաւ քո մահից յե-

տոյ, քան թէ էր քո երկնային կարճատեւ գոյութեան ժամանակ, կը լինի մարդկութեան համար մի անկինաքար, որին տեղից շարժելը կը նշանակէր խախտել հէնց տիեզերքի հիմքերը։ Քո և Աստուծոյ միջև տարբերութիւն չի լինիլ։ Յաղթահարեցիր մահը, տիրիր ուրեմն քո թագաւորութեանը, ուր պիտի դիմէ քո գծած արքայական ճանապարհով, երկրպագուների անհամար բազմութիւնը։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յիսուսի վարդապետութեան հիմնական բնոյթը

Ինչպէս տեսանք, Յիսուս, իր գործունէութեան ընթացքում երբէք դուրս չեկաւ հրէական շրջանակից։ Չնայած՝ որ դրդուած կարեկցութեան զգացումից դէպի անարգուածները՝ նա խոստացաւ տեղ տալ Աստուծոյ թագաւորութեան մէջ և հեթանոսներին, չնայած՝ որ շատ անգամ էր ճանապարհորդել դէպի հեթանոս երկիրները և երկու կամ երեք անգամ դարձացրել իր շրջապատողներին դէպի կռապաշտները արտայայտած իր բարեհաճ տրամադրութեամբ, այնուամենայնիւ, կարելի է ասել, որ նրա ամբողջ կեանքը անցել է այն փոքրիկ երկրում, ուր ինքը ծնուել է։ Յունական ու հռոմէական երկիրները նրա մասին գաղափար չունէին. նրա անունը աշխարհական հեղինակները յիշատակում են միայն հարիւր տարի յետոյ, այն էլ ոչ թէ ուղղակի կերպով, այլ նկարագրելով նրա վարդապետութեան առաջացրած խռովութիւնները կամ նրա աշակերտների կրած հալածանքները։ Հրէաների մէջ անգամ նրա գործած տպաւորութիւնը երկար չտեւեց։ Փիլոնը, որ վախճանուեց մօտ 50 թուականին, կասկած անգամ չունէր նրա գոյութեան մասին։ Յովսէփը, որ ծնուել էր 37 թուին, իսկ իր աշխատութիւնը գրել՝ դարի վերջերում, իբրև մի երկրորդական դէպք յիշատակում է միայն և մի քանի տողով նկարագրում նրա խաչումը. իսկ երբ թւում է իր ժամանակի հերձուածները, նա նոյնիսկ մոռանում է քրիստոնէութիւնը։ Միւս կողմից Միշնայում չենք գտնում նոր վարդապետութեան հետքն անգամ, իսկ երկու Գեմարները, ուր յիշուած է քրիստոնէութեան հիմնադրի անունը, հեղինակուել են ոչ վաղ, քան IV կամ V դարը։

Յիսուսի գործի էական մասն այն էր, որ նա ժողո-

վեց իր շուրջը աշակերտների մի խումբ, ներշնչեց նրանց անսահման սէր դէպի ինքը, և նրանց հոգիներում ձգեց իր վարդապետութեան սերմերը։ Սէր ներշնչել այն աստիճան, որ «իր մահից յետոյ ևս չդադարէին սիրելուց»,—սա էր Յիսուսի մեծ գործը, որ ամենից շատ զարմացնում էր իր ժամանակակիցներին։ Նրա վարդապետութիւնը այնքան քիչ դաւանաբանական բան ունէր, որ իր մտքին անգամ չի անցել գրի առնել կամ յանձնարարել մէկին գրելու։ Աշակերտում էին Յիսուսին ոչ թէ նրա համար, որ հաւատում էին այսինչ կամ այնինչ բանին, այլ այն պատճառով՝ որ կապւում էին նրա հետ ու սիրում նրան։ Նրանից մնացել են միայն մի քանի ասացուածներ, որ տուել են նրա ունկնդիրները իրենց յիշողութիւնից և գլխաւորապէս նրա բարոյական պատկերն ու թողած տպաւորութիւնը։ Յիսուս դաւանութեան ու խորհուրդների հիմնադիր չէր, այլ հիմնադիր՝ մի նոր աշխարհի, համակուած նոր ոգով։ Քրիստոնէական շատ քիչ բան կար, մի կողմից՝ յունական եկեղեցու ուսուցիչների մէջ, որոնք, սկսած IV դարից, քրիստոնէութիւնը մղում էին դէպի մետաֆիզիքական վիճաբանութիւնները՝ և միւս կողմից՝ միջնադարեան լատինական սքոլաստիկներ, որոնք աշխատում էին աւետարանից քաղել հսկայ «Սումմայի» հազարաւոր կէտերը։ Սկզբներում քրիստոնեայ լինել՝ նշանակում էր յարել Յիսուսին, երկնքի թագաւորութեան արժանանալու համար։

Այսպիսով հասկանալի է դառնում, թէ ինչպէս քրիստոնէութիւնը, իր բացառիկ վիճակի շնորհիւ. դեռ այժմ էլ, ԺԸ դարի վերջերում. ունի համաշխարհային ու յաւիտենական կրօնի բնոյթ։ Դրա պատճառն այն է, որ Յիսուսի կրօնը շատ բաներով հանդիսանում է իբրև մի ամբողջական, աւարտած գործ։

Յիսուս յայտարարեց, որ ամեն մարդ իրաւունք ունի մասնակցելու Աստուծոյ թագաւորութեանը. շնորհիւ նրան՝ ազատ խիղճը չենթարկուելով կառավարչական օրէնքներին, ձեռք բերեց մի նոր ոյժ՝ հոգու տիրապետութիւնը։ Այս հոգեւոր իշխանութիւնը յաճախ է դաւաճանել իր սկզբնական հիմունքներին. դարեր շարունակ եպիսկոպոսները իշխաններ էին,

ֆակ պապը՝ թագաւոր։ Հոգու այս կեղծ տիրապետութիւնը շատ անգամ է դարձել սարսափելի բռնապետութիւն, և անձնական շահերի համար տանջանքների ու խարոյկի մատնել մարդկանց. բայց կը գայ մի օր, երբ հոգևորը բաժանուելով մարմնաւորից կարտադրէ իր արգասիքները. այն ժամանակ հոգևորը կը կոչուի՝ ոչ թէ «իշխանութիւն», այլ «ազատութիւն»։ Քրիստոնէութիւնը, որ ծնունդ է առել ժողովրդական և շրջանում, յարգուած ու սիրելի է եղել նոյն ժողովրդից, սկզբներում. նա այնպիսի ինքնատեղծ բնոյթ է կրում, որ երբէք չի ջնջուի։ Նա յեղափոխական շարժման առաջին յաղթանակն էր, ժողովրդի զգացմունքի տիրապետութիւնը, սրտով հեզերի փառաւորումը և գեղեցկի երկրպագումը այնպէս, ինչպէս ժողովուրդն էր հասկանում։ Հին ազնուականութեան ամրոցի մէջ Յիսուս մի խրամատ բացեց, մի ճանապարհ, որով կարելի էր դուրս գալ այնտեղից։

Եւ իսկապէս քաղաքական իշխանութեան վրայ ընկաւ Յիսուսի մահուան ամբողջ պատասխանատուութիւնը, չնայած՝ որ այդ իշխանութիւնը մեղաւոր չէր (նա միայն ստորագրեց կայացած դատավճիռը, այն էլ հակառակ իր կամքի)։ Ներկայ գտնուելով Գողգոթայում պատժի ժամանակ, կառավարութիւնը հասցրեց իրան ամենամեծ հարուածը։ Ծնուեց ու ծաւալուեց մի նախատալից առասպել, ուր կառավարութիւնը զզուելի դեր է կատարում. դատապարտեալը արդարանում է, իսկ դատաւորներն ու պահապանները ոտնակոխ են անում ակներև ճշմարտութիւնը։ «Չարչարանքի» քստմնելի պատմութիւնը տարածուեց ամբողջ աշխարհի մէջ հազարաւոր ձեւափոխութիւններով. ցոյց տուեց թէ ինչպէս հռոմէական քաջ արծիւը արդարացնում է մարդասպանութիւններից ամենաանարդարը, զինւորները կատարում են այդ դատավճիռը, իսկ կառավարութիւնը ստորագրում է նրա տակ։

Սա մի մահացու հարուած էր աշխարհիս բոլոր իշխանաւորներին։ Այնուհետև էլ նրանցից ո՞րը կարող էր իրան անսխալ համարել, երբ իւրաքանչիւրի խղճի վրայ ծանրանում է Գեթսեմանի սխալը։

Քրիստոնէութիւնն իբրև արդիւնք բացառապէս հոգեւոր

անմիջական զարգացման, հէնց սկզբնաւորութիւնից հրաժարուելով դաւանաբանական շրջանակներից, երբեք դար շարունակ կռիւ մղելով խղճի ազատութեան համար, և չնայած իր անկմանը՝ վերջին ժամանակներում, դեռ այժմ էլ վայելում է իր նշանաւոր ծագման պտուղները: Վերանորոգուելու համար բաւական է, որ նա վերադառնայ աւետարանի մտքերին: Աստուծոյ թագաւորութիւնը այնպէս, ինչպէս մենք ենք հասկանում, շատ է տարբերւում ամպերի մէջ Յիսուսի այն գերբնական երևումից, որ պատկերացնում էին առաջին քրիստոնեաները: Բայց այն զգացումը, որը Յիսուս աշխարհ բերաւ, մեր զգացումն էր: Նրա բարձրագոյն գաղափարականութիւնը ինքնամոռացութեան ու առաքինի կեանքի իդէալն է: Նա ստեղծեց մաքուր հոգիների մի երկինք, ուր ապրում է այն, ինչ որ երկրի վրայ իզուր ենք որոնում՝ Աստուծոյ որդիների կատարեալ ազնուութիւնը, կատարեալ սրբութիւնը, կատարեալ հրաժարումը աշխարհային կեղտից—վերջապէս այն ազատութիւնը, որ մեր գրական հասարակութիւնը համարում է անկարելի և որը կատարեալ է լինում միայն մտքի շրջանում: Յիսուս հանդիսանում է մեծ ուսուցիչը այն անձանց, որոնք ապաստան են որոնում այդ իդէալական դրախտում: Նա առաջինը յայտարարեց հոգու թագաւորութիւնը. նա գոնէ առաջինն էր որ իր գործով հռչակեց. «Իմ թագաւորութիւնը այս աշխարհում չէ»: Ի հարկէ նա է ճշմարիտ կրօնի հիմնադիրը: Նրանից յետոյ մնում է միայն գաղափարն ընդարձակել ու ծաւալել:

Այսպիսով «քրիստոնէութիւնը» դարձաւ հոմանիշ «կրօնի». Եւ կրօնի վերաբերմամբ այն ամենը՝ ինչ դուրս է այս մեծ և սքանչելի քրիստոնէական սկզբունքներից, կը մնայ անպտուղ: Յիսուսը հիմնադիր է մարդկային կրօնի, ճիշտ այնպէս, ինչպէս Սոկրատը—փիլիսոփայութեան և Արիստոտէլը—գիտութեան: Փիլիսոփայութիւնը գոյութիւն ունէր մինչև Սոկրատը և գիտութիւնը՝ մինչև Արիստոտէլը: Սոկրատից ու Արիստոտէլից յետոյ գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը արին մեծ քայլեր. բայց ամեն բան հիմնուած էր նրանց կառուցած հիմքերի վրայ: Այդպէս էլ մինչև Յիսուս

կրօնի գաղափարը ենթարկուել է բազմաթիւ փոփոխութիւնների, բայց Յիսուսից յետոյ է, որ նա տարել է մեծ յաղթութիւններ. չնայած դրան՝ մարդկութիւնը չի բարձրացել և երբէք չի կարող բարձրանալ աւելի վեր քան այն հիմնական հասկացողութիւնները, որ հաստատել էր Յիսուս: Նա հաստատեց այն եղանակը, որով պիտի ճանաչուի ճշմարիտ կրօնը: Յիսուսի կրօնը անսահման է: Եկեղեցին ունեցել է իր շրջաններն ու փուլերը (ֆազերը): Նա երբեմն սահմանափակուել է որոշ խորհուրդներով, որոնք ունեցել են կամ պիտի ունենան իրենց որոշ զարաշրջանները. մինչդեռ Յիսուս հիմնեց բացարձակ կրօնը, որ ոչինչ չի բացառում և ոչինչ չի որոշում, բացի զգացումից:

Աւելորդ է աւետարանի մէջ որոնել աստուածաբանական հիմքեր: Բոլոր կրօնները Յիսուսի գաղափարների խեղաթիւրումն են. ճիշտ այնպէս, ինչպէս միջնադարեան սքոլաստիկները յայտարարելով որ Արիստոտէլն է ամբողջացած գիտութեան միակ հիմնադիրը, հէնց դրանով աղաւաղում էին Արիստոտէլի մտքերը: Եթէ Արիստոտէլը ներկայ լինէր այդ դպրոցի վիճաբանութիւններին, նա կը հերքէր այդ նեղ վարդապետութիւնը: Նա կողմնակից կը լինէր առաջադէմ կուսակցութեան՝ ընդդէմ այն պահպանողականների, որոնք քօղարկւում էին իր հեղինակութեամբ. նա կը ծափահարէր իր հակառակորդներին: Ճիշտ այդպէս էլ, եթէ Յիսուս երևար մեր մէջ, նա իրեն աշակերտ կը ճանաչէր ոչ թէ նրանց, որ ձգտում են իր միտքը սահմանափակել «Քրիստոնէականի» (կատեխիզիս) մի քանի նախադասութիւնների մէջ, այլ նրանց, որոնք շարունակում են իր գործը:

Իւրաքանչիւր մեծ սկզբնաւորութիւնների ժամանակ յաւիտենական փառքը միշտ պատկանում է նրան, ով դրաւ առաջին քարը: Գուցէ մեր ժամանակի բնագիտութեան ու օդերևութաբանութեան ձեռնարկներից և ոչ մէկում ոչ մի խօսք չգտնենք Արիստոտէլի՝ այդ գիտութիւնների մասին՝ յայտնած գաղափարներից. բայց այնուամենայնիւ Արիստոտէլը մնում է հիմնադիր բնագիտութեան: Որքան էլ որ կրօնական սկզբունքները փոփոխութիւններ կրեն, այնուամենայնիւ Յիսուս կը մնայ յաւէտ իբրև հիմնադիր մաքուր

զգացման պաշտամունքի և ոչինչ չի կարող բարձր լինել, քան լերան քարոզը։ Ոչ մի յեղափոխութիւն չի կարող մեզ ստիպել խզելու մեր կապը այն բանական ու բարոյական մեծ ընտանիքի հետ. որի գլխին փայլում է Յիսուսի անունը։ Այդ տեսակէտից մենք մնում ենք քրիստոնեայ մինչև անգամ այն դէպքում, երբ ոչ մի կէտում համաձայն չենք քրիստոնէական աւանդութեան հետ։

Կրօնի հիմնադրութեան այդ մեծ գործը անձամբ Յիսուսի ձեռքով է կատարուել։ Այդչափ պաշտուած լինելու համար պէտք լինել պաշտուելու արժանի։ Սէրը չի կարող առաջ գալ, եթէ չկայ մի անհատ, որ ընդունակ է այդ ըղձացումը առաջ բերելու. և եթէ մենք Յիսուսի մասին ոչ մի տեղեկութիւն չունենայինք, բացի այն անսահման սէրից դէպի ինքը, որ նա ներշնչել է իր շրջապատողներին, մենք բացարձակապէս կարող էինք պնդել, որ նա եղել է վեհ և մաքուր անձնաւորութիւն։

Քրիստոնէական առաջին սերնդի հաւատը, խանդավառութիւնն ու հաստատակամութիւնը կարելի է բացատրել միայն նրանով, որ այդ շարժումը հիմնուել է մի հսկայական հոգի ունեցող մարդու ձեռքով։ Մեր քաղաքակրթութիւնը, որ կառավարւում է մանրակրկիտ քաղաքական օրէնքներով, չի կարող մեզ տալ ոչ մի գաղափար, թէ ինչ նշանակութիւն ունէր այն ժամանակ մարդը, երբ իւրաքանչիւր անհատի ինքնուրոյնութիւնը կատարելապէս ազատ էր զարգանում։ Ենթադրենք, որ մեր մայրաքաղաքներից մէկի հարևան քարահանքում ապրում է մի ճգնաւոր, որը երբեմնապէս պատռելով պահակների շարքերը, մտնում է թագաւորական պալատը ու հրամայողական ձայնով յայտարարում թագաւորին, որ յեղափոխութիւնը մօտենում է և այդ յեղափոխութեան դրդիչը ինքն է։ Այս միտքն անգամ մեր դէմքի վրայ ժպիտ է յարուցանում։ Մինչդեռ այդպէս էր Եղիա մարգարէն։ Մեր ժամանակի Եղիա—Թէզբիտը Թիւյլըրիի բակն անգամ ոտ չէր կոխի։ Յիսուսի քարոզութիւնն ու ազատ գործունէութիւնը Գալիլիայում նմանապէս չեն համապատասխանում այն հասարակական, սոցիալական պայմաններին, որոնց մենք ընտելացել ենք։

Նրանք չէին նեղւում մեր պայմանադրական քաղաքավարութիւնից, չէին ստացել մեր այն միակերպ դաստիարակութիւնը, որը մեզ աւելի նրբազգաց է դարձնում, բայց և միևնոյն ժամանակ սահմանափակում է մեր անհատականութիւնը. այդ ամբողջական բնաւորութիւնները գործում էին զարմանալի եռանդով։ Նրանց ներկայացնում ենք իբրև հերոսական շրջանի հսկաներ, որ իրապէս գոյութիւն չեն ունեցել։ Ի՜նչ մեծ սխալ մեր կողմից։ Այդ մարդիկը մեր եղբայրներն էին, նոյն հասակի. մեզ նման էին զգում ու մեզ նման մտածում։ Բայց Աստուծոյ շունչը ազատ ողողում էր նրանց. մինչդեռ մեր մէջ նա կաշկանդուած է երկաթէ շղթաներով այն ողորմելի հասարակութեան, որ դատապարտուած է անխուսափելի միջակութեան։

Ուրեմն դնենք Յիսուսի անձնաւորութիւնը մարդկային մեծութիւնների ամենաբարձր կէտում։ Թող մեզ չմոլորեցնէ չափազանց անհաւատութիւնը դէպի այն առասպելը, որ շարունակ մեզ գերբնականի աշխարհն է պատկերացնում։ Ֆրանցիսկոս Ասսիզացու կեանքն էլ հրաշքների մի շարք է ներկայացնում։ Բայց ո՞վ է երբևիցէ կասկածել նրա գոյութեան կամ կատարած դերի մասին։ Չպնդենք, որ քրիստոնէութեան հիմնադրութեան փառքը պատկանում է առաջին քրիստոնեաների խմբին և ոչ թէ այն անձին, որին այդ առասպելը աստուածացնում է։ Մարդկանց անհաւասարութիւնը աւելի Արևելքում է նկատելի, քան մեզ մօտ։ Այնտեղ մենք յաճախ կը տեսնենք, որ համատարած չարութեան միջավայրում ծնւում են այնպիսի բնաւորութիւններ, որոնց վեհութիւնը մեզ զմայլեցնում է։ Յիսուսի կերպարանքը ամենևին իր աշակերտների ստեղծագործութիւնը չէ, այլ նոյնիսկ ամէն բանով բարձր է իր աշակերտներից։ Աշակերտները, բացի Պօղոսից՝ և գուցէ, Յովհաննէսից, զուրկ էին ձեռներէցութիւնից ու տաղանդից։ Նոյնիսկ սուրբ Պօղոսին չի կարելի համեմատել Յիսուսի հետ. իսկ ինչ վերաբերում է Յովհաննէսին, նա իր Յայտնութեան մէջ միայն Յիսուսի բանաստեղծութեամբ է ոգևորւում։ Եւ այս պատճառներով էլ աւետարանը անհամեմատ բարձր է Նոր ուխտի միւս բոլոր գրքերից։ Այդ նոյն պատճառով մարդ կա-

տրանելապէս հիասթափւում է, երբ Յիսուսի պատմութիւնից անցնում է առաքեալների պատմութեան։ Իրենք աւետարանիչները, որ տալիս են մեզ Յիսուսի պատկերը, այնքան ցած են իրենց նկարագրած անձնաւորութիւնից, որ շարունակ խեղաթիւրում են, որովհետև չեն կարողանում նոյն բարձրութեան վրայ կանգնել։ Նրանց հեղինակութիւնները լի են խառնուրդներով ու հակասութիւններով։ Իւրաքանչիւր տողում աչքի է զարնւում աստուածային գեղեցկութիւնը՝ աղաւաղուած՝ խմբագրողների կողմից, որոնք նրան չհասկանալով, դնում են իրենց սեպհական մտքերը այն գաղափարների տեղ, որոնք միայն կիսով չափ են մատչելի իրենց ըմբռնողութեան։ Առհասարակ Յիսուսի կենսագիրները ամենևին չեն գեղեցկացրել նրա բնաւորութիւնը, այլ ընդհակառակը պակասեցրել են նրա արժանիքները։ Քննադատութիւնը, որպէս զի ստանայ իրական պատկերը, պէտք է դուրս ձգէ մի շարք թիւրիմացութիւններ, որ առաջ են եկել Յիսուսի աշակերտների մտքի անձկութեան պատճառով։ Նրանք ներկայացրել են Յիսուսին այնպէս, ինչպէս իրենք են ըմբռնել. իսկ յաճախ էլ ցանկանալով բարձրացնել նրան, իրապէս ստորացրել են։

Գուցէ աւելի արդարացի կը լինէր, եթէ ասէինք, որ Յիսուս ամեն ինչ պարտական է հրէութեան, որ նրա վեհութիւնը հրէական ժողովրդի վեհութիւնն է։ Ոչ ոք իմ չափ տրամադրուած չէ բարձրացնել այս միակ ազգը, որ կարծես առանձին ընդունակութիւն ունի միացնելու իր մէջ բարու և չարի ծայրայեղութիւնները։ Անկասկած Յիսուսի վարդապետութիւնը ծնունդ է առել մովսիսականութիւնից. բայց այնպէս, ինչպէս Սոկրատը՝ սոփեստների դպրոցից, Լուտերը՝ Միջին Դարից, Լամընէն՝ կաթոլիկութիւնից և Ռուսսօն՝ ԺԸ դարից։ Մարդը միշտ իր դարի ու ցեղի ծնունդն է, նոյնիսկ այն դէպքում, երբ գնում է ընդդէմ իր ցեղի ու իր դարի։ Յիսուս ոչ միայն Մովսիսականութեան շարունակողը չդարձաւ, այլև նրա գլխաւոր գործը եղաւ խզել իր կապը մովսիսականութեան հետ։ Եթէ այդ տեսակէտից Յիսուսի մտքերը կասկածների տեղիք են տալիս, քրիստոնէութիւնը նրանից յետոյ ցրում է այդ կասկածները։ Քրիստոնէութիւնը հետզհետէ աւելի ու աւելի է հեռանում մովսիսականութիւնից։ Նա կատարելագործւելու համար պիտի մօտենայ Յիսուսին, և ոչ թէ մովսիսականութեան։ Այսպիսով Յիսուսի, իբրև կրօնի հիմնադրի, ինքնուրոյնութիւնը մնում է անխախտ. նրա փառքին մասնակից չէ իր գործակիցներից ոչ մէկը։ Նպաստաւոր հանգամանքները, անկասկած, մեծ դեր խաղացին այդ հիանալի յեղափոխութեան յաջողացման համար. բայց հանգամանքները նպաստում են միայն բարի ու արդարացի գործունէութեանը։ Մարդկային յառաջադիմութեան իւրաքանչիւր ճիւղը—գեղարուեստը, բանաստեղծութիւնը, կրօնը—դարերի ընթացքում հանդիպում է այնպիսի բարեյաջող ժամանակաշրջանների, երբ նա առանց դժուարութեան, մի տեսակ բաղդի բերման մղումով, հասնում է կատարելութեան։ Ոչ մի մտաւոր աշխատանք չի կարող ստեղծել մի այնպիսի կատարեալ գործ, ինչպիսին այդ րոպէներում ստեղծում է բնութիւնը, շնորհիւ հանճարների ոգևորութեան։ Յիսուսի դարը կրօնի համար արեց այն, ինչ Յունաստանի ծաղկած ժամանակները գեղարուեստի ու գրականութեան համար։ Այդ ժամանակներում Հրէաստանը գտնւում էր մտաւոր ու բարոյական մի այնպիսի արտասովոր դրութեան մէջ, որի նմանը մարդկութիւնը երբէք չէ տեսել։ Դա հէնց մէկն էր այն աստուածային վայրկեաններից, երբ հազարաւոր ծածուկ ոյժեր համախմբուելով ինքնաբերաբար՝ ծնունդ են տալիս վեհ ստեղծագործութիւնների, երբ բարձր մտքերը հանդիպում են հիացման ու համակրանքի հեղեղների։ Աշխարհը ազատուելով փոքրիկ հասարակապետական քաղաքների բռնութիւնից, մեծ ազատութիւն էր վայելում։ Հռովմէական բռնակալութիւնը դեռ չէր կարողացել ցոյց տալ իր սպանիչ ազդեցութիւնը, մանաւանդ որ տիրապետութեան հեռաւոր կէտերում նրա ազդեցութիւնը աւելի թոյլ էր։ Այն ժամանակներում գոյութիւն չունէին մեր մանր նախապաշարմունքները, որոնք հոգու վրայ աւելի կորստաբեր ազդեցութիւն են գործում, քան այն տանջանքները, որ այն ժամանակ գոյութիւն ունէին։ Երեք տարի շարունակ Յիսուս անց էր կացնում այնպիսի մի կեանք, որի համար մեր ժամանակա-

կից կատարելութիւնը նրան հարիւր անգամ դատի կենթարկէր: Հէնց միայն այն օրէնքը, որով առանց համապատասխան իրաւունքի արգելւում է բժշկութիւնը, բաւական էր, որ վերջ դնէր նրա փառքին: Միւս կողմից՝ Հերովդէսի տոհմը, որ հէնց սկզբից անհաւատ էր, անուշադիր էր դէպի կրօնական շարժումները: Եթէ լինէր Ասմոնեանների ժամանակ, հաւանօրէն Յիսուս կը բանտարկուէր իր գործունէութեան հէնց առաջին քայլին: Հասարակական այդպիսի դրութեան ժամանակ վտանգի էր ենթարկւում միմիայն վերանորոգիչների կեանքը. բայց նրանց համար, որոնք գործում են յօգուտ ապագայի, մահը հանդիսանում է իբրև մի ցանկալի բան: Մի րոպէ երևակայեցէք, որ Յիսուս ստիպուած լինէր իր աստուածայնութեան ծանրութիւնը քաշ տալ մինչև իր 60 կամ 70 տարին, հետզհետէ կորցնելով իր աստուածային կրակն ու հետզհետէ մաշուելով: Բայց նախախնամութեան ընտրեալները ամէն բանում յաջողութիւն են գտնում: Նրանք գնում են դէպի փառքը ներքին անյաղթելի մղումով ու արտաքին հանգամանքների ճակատագրական ընթացքով:

Այդ վեհ անձնաւորութիւնը, որ մինչև հիմա էլ վարում է մարդկութեան բաղդը, թող թոյլատրուի մեզ անուանել՝ աստուածային, ոչ այն մտքով, որ Յիսուս իր մէջ ժողովել էր բոլոր աստուածային յատկութիւնները կամ Աստուած էր, այլ այն մտքով, որ նրա շնորհիւ մարդկային ազգը աստուածայինի ճանապարհով գործեց ամենամեծ յառաջադիմութիւնը: Մարդկութիւնը, առհասարակ, չնչին էակների մի համախմբութիւն է նոյնքան եսասէր, որքան չորքոտանիները (և մի փոքր էլ աւելի, որովհետև նրանց եսասիրութիւնը աւելի գիտակից է քան վերջիններինը): Եւ այդ ստոր, գռեհիկ միակերպութեան միջից բարձրանում են դէպի երկինք սիւներ, որոնք մարդկային նպատակների վեհութիւնն են վկայում: Յիսուս ամենաբարձրն է այն սիւներից, որոնք մարդուն ցոյց են տալիս, թէ որտեղից են գալիս մարդիկ և ուր պիտի դիմեն: Նրա մէջ կենտրոնացել է այն ամենը, ինչ որ կայ մարդկային բնութեան մէջ ամենալաւ և ամենավեհ: Նա անսխալ չէր, բայց կարողանում էր զսպել իր այն բոլոր

կրքերը, որոնց դէմ մենք շարունակ կռիւ ենք մղում: Տիրոջ ոչ մի հրեշտակը չէր օգնում նրան, այլ միայն իր խիղճը. ոչ մի դև չէր գայթակղեցնում, բացի այն դևերից, որոնք բնակւում են մեզանից իւրաքանչիւրի սրտում: Ինչպէս որ կորած են մեզ համար նրա բարձր արժանաւորութիւնները. նրա աշակերտների անըմբռնողութեան պատճառով,—այնպէս էլ հաւանօրէն ծածուկ են մնացել մեզանից նրա շատ պակասութիւնները: Բայց մարդկանցից ոչ ոք համամարդկային շահերը այնքան բարձր չէ դասել սնոտի աշխարհից, որքան նա: Բոլորովին նուիրուած գաղափարին, նա ամեն բան ստորադասեց նրան, այնքան՝ որ տիեզերքը իր կեանքի վերջին օրերում, այլևս իր համար գոյութիւն չունէր: Նա նուաճեց երկինքը հէնց իր այդ հերոսական կամքի ուժգին ցնցումներով: Աշխարհս բացի Սակիա—Մունիից ոչ ոքի չի ճանաչում, որ այնպէս անդարձ կերպով հրաժարուած լինի ընտանեկան երջանկութիւնից, այս աշխարհի բոլոր բաւականութիւններից ու վաղանցուկ հոգսերից, ինչպէս Յիսուս: Նա ապրում էր միայն իր Հօրով, իր աստուածային կոչումով, ու այն համոզումով, որ պիտի իրականացնէ իր այդ նպատակը:

Ուրեմն ծունկ չոքենք այդ կիսաստուածների առաջ, մենք, այս աշխարհի բոլոր զաւակները, որ դատապարտուած ենք տկարութեան և ոչ միայն այնպիսի աշխատանքի՝ որի պտուղները չենք վայելում, այլև մեր ցանած սերմերի ծիլերն անգամ չենք կարողանում տեսնել: Նրանց տրուած էր, ինչ մեզ չէ տրուած. ստեղծել, հիմնել, գործել: Կը ծնուի՞ արդեօք երբևիցէ այդպիսի մի մեծ անհատ, թէ՞ աշխարհս պիտի բաւականանայ հետևելով այն շաւղին, որ գծել են հին դարաշրջանների այդ համարձակ ստեղծագործողները: Ով գիտէ:

Ինչ էլ որ լինի ապագան, Յիսուսին չէ գերազանցելու: Յիսուսի պաշտամունքը կը մնայ յաւիտենապէս երիտասարդ, նրա յիշատակը միշտ արցունքներ կը խլէ մեր աչքերից: Նրա տանջանքները կը մորմոքեն լաւագոյն սրտերը: Բոլոր դարերում մարդկանց որդիների մէջ չի լինի աւելի մեծ, քան Յիսուս:

ՀՀ Ազգային գրադարան
NL0160155